ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2025
N 2 (61)

Գիտական պարբերական
Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ **Աշոտ Հայրապետյան** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:
Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա, հեռախոս՝ 557660
ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրապարակված է 01.12.2025թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Արդարադատության նախարար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ:

Աշոտ Հայրապետյան – Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դեցենտ, գլխավոր խմբագիր:

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախկին դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ժորա Ջհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Աշխեն Սողոմոնյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ:

Ռաֆիկ Գրիգորյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, «Սիգմա լո գրուպ» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր:

Գևորգ Բաղդասարյան- Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Տիգրան Մարկոսյան - Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Սրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ:

Մուշեղ Բաբայան- Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Անի Մութաֆյան- Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ:

Օտարերկրյա անդամներ

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Եվգենի Բարաշ – Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր,Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Հենրիկ Լինդեբրոգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Վաղիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 ԱՐՓԻ ԼԱԶԱՐՅԱՆ
Խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատազրկման դատապարտված անձանց պաշտպանության միջազգային-իրավական երաշխիքները

12 ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐԻԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ
Կատարողների իրավունքների միջազգային իրավական շրջանակը՝ Հռոմի կոնվենցիայից մինչև Պեկինի պայմանագիր

21 ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշ հիմնահարցեր

33 ՖԻԼԻԱՆԱ ԲԵԼԼՈՒՅԱՆ
Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական սանկցիաները

43 ԱՆԱՀԻՏ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
Քրեական պատասխանատվությունը համակարգչային սաբոտաժի (ներգաղթուլի) համար

58 ԱՐԵԳ ՅՈԼՉՅԱՆ
Ոչ պատշաճ վարութային վարքագիծը որպես դատավարական սանկցիայի կիրառման հիմք

68 ՎԻՐԱՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Ողորկափող հրազենը որպես քաղաքացիական զենքի տեսակ. քրեաիրավական որակման որոշ հիմնախնդիրներ

80 ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ օրենսդրությամբ

87 ՄԵԼԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով գույքի արգելադրման հետ կապված որոշ իրավական խնդիրներ

96 ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրները

105 ԱՆԱՀԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Դատական նորմաստեղծության հայեցակարգի շուրջ

109 ՖԻԼԻԱՆԱ ԲԵԼԼՈՒՅԱՆ
Միջազգային տնտեսական հարաբերություններում տնտեսական սանկցիաների կիրառման տեսական և գործնական առումները

122 ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Անձեռնամխելիություն» իրավական հասկացության պատմաիրավական զարգացման ասպեկտը

132 ՎԱՀԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ազգային ժողովի կայուն մեծամասնության հիմնախնդիրը որպես խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման երաշխիք

139 ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու անձնական կյանքի պաշտպանության իրավունքի իրացման համատեքստում

152 ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի օբյեկտային նախադրյալները

162 ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Արդար դատաքննության իրավունքը՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համատեքստում

172 ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Էկոլոգիական հանցագործությունների դեմ պայքարի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քրեաիրավական քաղաքականության շրջանակում

180 SHUSHAN GHUKASYAN
ARPINE HOVHANNISYAN
The need for the improvement of the legal framework in the context of ensuring the effectiveness of charitable organizations' activities

ԱՐՓԻ ԼԱԶԱՐՅԱՆ
Արարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության, քրեական և քրեադատավարական օրենսդրության մշակման բաժնի պետ,
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակով սահմանված է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, իսկ ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս սկզբունքի արմատները գալիս են միջազգային իրավունքից, քանզի մի շարք միջազգային-իրավական ակտերում, որոնք առավելապես վերաբերելի են մարդու հիմնական իրավունքների պաշտպանությանը՝ ընդգծված է խոշտանգման արգելքի սկզբունքը: Ազատությունից զրկված և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք՝ իրենց կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված, խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման այլ ձևերի տեսանկյունից գտնվում են առավել խոցելի իրավիճակում, ուստի միջազգային մակարդակում ընդունված սկզբունքների ներպետական օրենսդրության դաշտում ամրագրելն ու դրանք կյանքի կոչելը ժողովրդավարական պետության կարևոր ցուցիչներից են: Հոդվածում վերլուծել ենք, խոշտանգման վերաբերյալ միջազգային-իրավական կարգավորումները և դրանք համեմատել՝ ներպետական օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հետ, առավել մեծ ուշադրություն սևեռելով անազատության մեջ պահվող անձանց իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև վեր ենք հանել այն խնդիրները, որոնք մեր կարծիքով, ենթական են լուծման և առաջարկել դրանց լուծման համար անհրաժեշտ որոշակի լուծումներ:

***Հիմնաբառեր**- քրեակատարողական, դատապարտյալ, խոշտանգում, պահման պայմաններ:*

Հոդվածի մեթոդաբանությունը. Հոդվածը հիմնականում հիմնված է դիալեկտիկայի ճանաչողության մեթոդի վրա և արտահայտում է առկա միջազգային-իրավական ակտերի, ներպետական օրենսդրական կարգավորումների և դրանց գործնական կիրառության համեմատական վերլուծությունը: Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են նաև համեմատահիրավական և այլ մեթոդներ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում. Խորհրդային միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը սկսեց ձևավորվել որպես ժողովրդավարական և իրավական պետություն, որի ճանապարհի կարևոր քայլերից էր միջազգային ինտեգրման ակտիվ գործընթացը և որպես սկզբնակետ՝ միջազգային կառույցների անդամակցությունը: Հայաստանը նս հետևեց միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին և օրենսդրական մակարդակում ամրագրեց, որ հանցանք կատարած անձի վրա անօրինական ազդեցության մեթոդները ենթակա են վերացման: Միջազգային մակարդակում հստակ ամրագրված է մի սկզբունք՝ խոշտանգումների արգելքը, որը կրում է բացարձակ բնույթ (jus cogens): Այդ հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) դեռ 1996 թվականին Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով՝ նշելով, որ անգամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարելիս արգելված են խոշտանգումները, դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը: Սաադին ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ ահաբեկչության վտանգը չի կարող կասկածի տակ դնել այս արգելքի բացարձակ լինելու հանգամանքը[1]:

Տեսական գրականության մեջ առկա է տեսակետ, որ խոշտանգման արգելքի սկզբունքին վերաբերելի միջազգային-իրավական ակտերը սկզբունքորեն կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խմբի աղբյուրները կազմում են այն միջազգային փաստաթղթերը, որոնք պարունակում են խոշտանգումների և դրան հավասարեցված այլ գործողությունների կիրառման ֆորմալ-իրավական

www.arabajournal.com

արգելքներ: Երկրորդ խմբին դասվում են այն ակտերը, որոնք պարունակում են ընթացակարգային նորմեր խոշտանգման և դրան հավասարեցված այլ գործողությունների կիրառման դեպքում պետության արձագանքի անհրաժեշտ երաշխիքների սահմանման, ինչպես նաև միջազգային վերահսկողության գործիքների ներդրման մասին: Եվ վերջապես երրորդ խումբը կազմում են այն փաստաթղթերը, որոնք պարունակում են ինստիտուցիոնալ երաշխիքների խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում[2]:

Խոշտանգման արգելքի սկզբունքը ձևակերպված է մի շարք միջազգային-իրավական ակտերում, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ նաև՝ ՄԱԿ) կողմից ընդունված Մարդու իրավունքների միջազգային բիլլը[3], որը հրապարակվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին՝ որպես մարդու հիմնական իրավունքների հռչակագիր, սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, որն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (xxi) բանաձևով և ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին[4], սահմանելով գրեթե նույնական ձևակերպում խոշտանգման արգելքի մասով հավելում է, որ ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Թեև վերը նշված երկու փաստաթղթերում էլ սահմանվում են խոշտանգման արգելքի վերաբերյալ դրույթներ, սակայն նշված հարցն առավել մանրամասն կարգավորելու նպատակով՝ ՄԱԿ-ի շրջանակներում 1984 թվականի դեկտեմբերի 10-ին Գլխավոր ասամբլեայի կողմից՝ « ոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին» հռչակագրի հիման վրա ընդունվեց՝ միջազգային-իրավական փաստաթուղթը՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից[5]:

Կոնվենցիան սահմանում է, որ «խոշտանգում» եզրույթի նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված ձևակերպումն առաջին անգամ ամրագրել է «խոշտանգում» հասկացությունը կոնվենցիոն մակարդակում, միաժամանակ սահմանելով, որ այս հասկացությունը չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց:

Քննարկվող կոնվենցիայի մանրամասն ուսումնասիրության արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական սկզբունքները, որոնք այն ամրագրում է.

- այն վավերացրած պետությունները պարտավորություն են ստանձնում իրենց երկրներում արգելել խոշտանգումը,
- խոշտանգման դեպքերի հայտնաբերման դեպքում պարտադիր պատժել այդպիսի արարք կատարած անձանց,
- հստակ սահմանում է, որ ցանկացած դեպքում ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում,
- ստեղծվում է Խոշտանգումների դեմ կոմիտե, որը հետևում է մասնակից պետություններում խոշտանգման արգելքի պահպանման գործընթացին:

Ուշագրավ է այն փաստը, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ապահովի, որ խոշտանգումների արգելմանը վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին ընդգրկվեն իրավակիրառող մարմինների վերապատրաստման ծրագրերում, այդ թվում՝ այն անձանց, ովքեր կարող են ներգրավված լինել ձերբակալության, կալանավորման կամ բանտարկության ցանկացած ձևի ենթարկված անձանց կալանքի տակ պահելու, հարցաքննելու կամ նրանց հետ վարվեցողության մեջ:

Հարկ է առանձնացնել նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան, որը ընդունվել է 1987 թվականին Ստրասբուրգում: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 10-ից:

Սույն կոնվենցիայի կարևորությունը կայա-

նում է նրանում, որ դրա հիման վրա ստեղծվեց Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ նաև՝ ԽԿԿ):

ԽԿԿ-ն այցելությունների միջոցով ուսումնասիրում է ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ անհրաժեշտության դեպքում խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով: ԽԿԿ-ի պատվիրակություններն օգտվում են ազատազրկման վայրեր անսահմանափակ այցելության և նման վայրերում անարգել տեղաշարժվելու իրավունքից: Նրանք կարող են անխոչընդոտ զրուցել ազատազրկված անձանց հետ և ազատորեն շփվել ցանկացած անձի հետ, ով կարող է տեղեկատվություն տրամադրել վերջիններիս վերաբերյալ:

Խոշտանգման դեմ արդյունավետ պայքարի համար սակայն, անհրաժեշտ է, որ միջազգային-իրավական փաստաթղթերով սահմանված սկզբունքները ներառված լինեն ներպետական օրենսդրության մեջ և կիրառվեն գործնականում: Այսպիսով, Քրեական նոր օրենսգրքի 196-րդ 1-ին մասով սահմանվել է քրեական պատասխանատվություն ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեական ուժեղ տառապանք պատճառելու համար: Հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեական ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները(...)»: Համանման իրավակարգավորում նախատեսված էր նաև քրեական նախկին օրենսգրքի 119-րդ հոդվածով:

Անդրադառնալով ֆիզիկական ուժեղ ցավի և հոգեական ուժեղ տառապանքի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ «(…) «ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեական ուժեղ տառապանքի» տարրի բովանդակության գնահատման չափանիշների որոշակիացումը շարունակում է մնալ արդիական ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակում, մասնավորապես՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածում և փոխկապակցված միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, այդ թվում՝ Եվրոպական կոնվենցիայի ժամանակակից մեկնաբանություններում: Այս առումով հարկ է նշել, որ հենց ֆիզիկական ցավի ու հոգեական տառապանքի ուժգնության աստիճանն է այն հիմնական չափանիշը վատ վերաբերմունքի դրսևորման ձևերը տարբերակելու և համապատասխան քրեաիրավական գնահատական տալու համար:

Միավորված ազգերի կազմակերպության՝ խոշտանգումների վերաբերյալ զեկույցում նշվում է, որ «հոգեբանական խոշտանգումը» պետք է մեկնաբանվի՝ ներառելով բոլոր այն մեթոդները, միջոցները և հանգամանքները, որոնք միտված են կամ նախատեսված են ուժեղ հոգեբանական ցավ կամ տառապանք նպատակասլացորեն հասցնելու համար՝ առանց ուժեղ ֆիզիկական ցավի կամ տառապանքի պատճառման կամ դրա ազդեցության օգտագործման: Իսկ «ֆիզիկական խոշտանգումը» պետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի բոլոր մեթոդները, միջոցները և միջավայրերը, որոնք միտված են կամ նախատեսված են ուժեղ ֆիզիկական ցավ կամ տառապանք առաջացնելու համար՝ անկախ հոգեկան ցավի կամ տառապանքի զուգահեռ պատճառումից:»[6]:

Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում խոշտանգման համար, սահմանելով այն որպես՝ պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության հիման վրա կարող ենք նշել, որ ներպետական իրավական կարգավորումների մակարդակում խոշտանգումը սահմանված է որպես հանցակազմ, որը ենթադրում է որոշակի հատուկ նպատակ, սակայն այս առումով հատկանշական է նաև այն, որ դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող ակտերի մեծ մասն՝ անազատության մեջ պահվող անձանց իրավունքների պաշտպանության, իսկ առավելապես արժանապատիվ վերաբերմունքի և խոշտանգման արգելքի հարցը քննարկելիս ուշադրություն են դարձնում մի շարք այլ հանգամանքերի, օրինակ՝ դատապարտյալի առանձին պահմանը: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները», որը հայտնի է նաև «Նելսոն Մանդելայի կանոններ» անվամբ 43.1 կետում, որպես խոշտանգմանը հավասարեցված և ոչ մի դեպքում չարդարացված միջոցներ սահմանում է՝

• դատապարտյալին առանձին պահելն անորոշ ժամկետով,

• դատապարտյալին երկարատև առանձին պահելը,

• դատապարտյալին առանց անհրաժեշտ լուսավորության խցում տեղաբաշխելը կամ այնտեղ պահելը,

• դատապարտյալի նկատմամբ մարմնական պատիժների կիրառումը կամ սննդից կամ ըմպելիքից զրկելը կամ դրանց չափաբաժինը պակասեցնելը,

• կոլեկտիվ պատիժների կիրառումը:

Ուշագրավ է այն փաստը, որ խոշտանգմանը, կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքին առնվազն երկու կետով հավասարեցված է առանձին պահելը: Հարկ է նկատել, սակայն, որ փաստաթղթում առանձնացվում են «առանձին պահման» և «երկարատև առանձին պահման» տեսակները, որոնցից առաջինն իրենից ենթադրում է դատապարտյալին առանձին պահել 22 ժամ, իսկ երկրորդը՝ 15 օր շարունակ: Այս մասին առավել մանրամասներ են առկա Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի զեկույցներում, որը հղում կատարելով Եվրոպական բանտային կանոններում ամեն անգամ ընդգծում է, որ դատապարտյալին առանձին պահելը պետք է լինի ծայրահեղ միջոց և այդպիսի միջոցի կիրառումը պետք է ունենա հստակ օրենսդրական ամրագրում:

Եվրոպական բանտային կանոնները (Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(2006)2 առաջարկությունը), որն ընդունվել է 2006 թվականին՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քրեակատարողական համակարգերի հումանիզացման նպատակով ենթարկվեց որոշակի փոփոխությունների, որոնք Եվրոպայի խորհրդի նախարարների խորհրդի կողմից վերջնականապես ընդունվեցին 2020 թվականին: Փոփոխության հիմնական պատճառների մեկը դարձավ դատապարտյալների առանձին պահելու վերաբերյալ առկա ստանդարտների վերանայման անհրաժեշտությունը: Հիմնական խնդիրը կայանում էր նրանում, որ կանոններում սահմանվում էր, որ խիստ պայմաններում կամ անվտանգությունից ելնելով անձը կարող է առանձին պահվել, որը կարող է բացասաբար անդրադառնալ անձի վրա, սակայն ակտում նշված չէր, թե կոնկրետ ինչ պայմանների առկայության դեպքում դատապարտյալը կարող է մեկուսացվել այլ դատապարտյալներից:

Քրեակատարողական իրավունքի զարգացման ներկայիս իրավիճակը թույլ է տալիս ամրագրել, որ երկար մեկուսացումը կարող է էական ազդեցություն ունենալ անձի հոգեբանական վիճակի վրա և միայն խիստ որոշակի պայմաններում կարելի է վերջինիս կտրել սոցիալական կապերից, իսկ այդպիսի ոչ հստակ չափորոշիչներ չունենալը կարող է որոշակի առումով դիտվել՝ որպես խոշտանգում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ վերը թվարկված փաստաթղթերում առանձնացված և տարբերակված չեն «խոշտանգում» և «այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» հասկացությունները, իսկ «այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» հասկացությունը կամ բովանդակությունը նույնիսկ սահմանված չէ: Այդ եզրույթները բովանդակությունը մեկնաբանելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի քանի որոշումներում նշելով, որ «խոշտանգումը՝ դիտավորյալ անմարդկային վերաբերմունքն է, որը պատճառում է լուրջ և դաժան տանջանքներ», իսկ «այլ վատ վերաբերմունքը» իրենից ներկայացնում է միևնույն մակարդակի դաժանություն: Ընդհանուր առմամբ այս երկուսը իրարից տարբերվում են ինտենսիվությամբ և կախված են նաև զոհի անձնային հատկանիշներից, ուստի անհնար է սահմանել հստակ չափանիշներ, որոնց կսահմանազատվեն այս երկու եզրույթները:

Խնդրահարույց է այն հարցը, որ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համարգում խոշտանգումը սահմանված է որպես հանցակազմ: Այդուհանդերձ, Քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալն իրավունք ունի անվտանգության ապահովման և նա բացառիկ դեպքերում կարող է պահվել առանձնացված՝ պաշտպանական նպատակով՝ իր, իսկ կանխարգելիչ նպատակով՝ այլ անձանց կամ քրեակատարողական հիմնարկի անվտանգության ու ապահովության սպառնացող վտանգի դեպքում: Իսկ նույն օրենսգրքի 78-րդ հոդվածը, որով սահմանվում են դատապարտյալին առանձին պահելու վերաբերյալ մանրամասն կարգավորումները սահմանում է միայն դատապարտյալին առանձին պահելու մասին որոշման վերանայման ժամկետներ, միաժամանակ չսահմանելով, թե որքան է վերջինիս առանձին պահելու առավելագույն ժամկետը: Ստացվում է մի իրավիճակ, որ յուրաքանչյուր դեպքում, երբ օրինակ դատապարտյալը 15 օրից ավելի է պահվում միայնակ, ապա դա միջազգային-իրավական չափորոշիչների տեսանկյունից կարող է համարվել խոշտանգում, կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք, ինչը Հայաստանի ներպետական իրավական կարգավորումների իմաստով համարվում է հանցագործություն: Այստեղ առաջանում է կոլիզիա միջազգային-իրավական ակտերով քրեակատարողական ոլորտում օգտագործվող «խոշտանգման» և ներպետական իրավական ակտերով որպես հանցակազմ սահմանված խոշտանգմանե հանցակազմի տարբերակման միջև:

Ամփոփելով վերը նշված իրավակարգավորումները և դրանք համադրելով միջազգային-իրավական կարգավորումների հետ կարծում ենք, արդեն վաղուց հասունացել է այն պահը, որ պետք է քրեակատարողական օրենսդրության դաշտում ներդնել այս տերմինը և սահմանել այն մեկնաբանությունը, որը համապատասխանում է դրան, այդ թվում նաև միջազգային-իրավական չափորոշիչներով նախատեսված կարգավորումների հաշվառմամբ:

Եզրակացություն. Անազության մեջ պահող անձանց հիմնական իրավունքների պաշտպանությանը նվիրված բազմաթիվ միջազգային-իրավական ակտերով սահմանված այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է պահպանել վերջիններիս իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ ունենալու համար: Այնուամենայնիվ, այս բոլոր միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված իրավունքները չեն կարող լիարժեք իրականացվել առանց մեկ՝ առավել կարևոր և հիմնարար իրավունքի պահպանման՝ արժանապատիվ վերաբերմունքի և ցանկացած տեսակի բռնության՝ հոգեբանական, թե ֆիզիկական, անձի պաշտպանության իրավունքից: Հայաստանը միացել և վավերացրել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, այդպիսով ստանձնելով պարտավորություն՝ հետևելու դրանցում ամրագրված բոլոր դրույթներին: Քրեակատարողական իրավունքի հետագա զարգացման տեսանկյունից կարծում ենք, որ հասունացել է ժամանակը, որ դրանում օրենսդրական մակարդակում ամրագրվի նախ խոշտանգման, այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք արգելի վերաբերյալ սկզբունք, ինչպես նաև հստակ սահմանվի այն դեպքերը, երբ անձը կարող է պահվել մեկուսի՝ այլ անձանցից: Այս ամենը կարևոր երաշխիք կդառնա ինչպես դատապարտյալների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, այնպես էլ կնպաստի ավելի մարդակենտրոն քրեակատարողական համակարգ ունենալուն:

---

[1] Տե՛ս, Ս. Գալյան, Դ. Թումասյան, Ա. Նիկողոսյան. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները (ուսումնական ձեռնարկ դատավորների, դատախազների և քննիչների համար). Երևան, 2019, էջ 6:

[2] Законодательные гарантии защиты осужденных к лишению свободы от пыток, другого жестокого или унижающего достоинство обращения в постсоветских государствах, А. А. Павленко, Russian Journal of Criminal Law N20, 2022, էջեր 119-120:

[3] Տե՛ս, International Bill of Human Rights, https://www.ohchr.org/en/what-are-human-rights/international-bill-human-rights (Վերջին այցելությունը՝ 2024 թվականի փետրվարի 7-ին):

[4] Տե՛ս, International covenant on civil and political rights, United Nations 1967 https://treaties.un.org/doc/treaties/1976/03/19760323%2006-17%20am/ch_iv_04.pdf (Վերջին այցելությունը՝ 2024 թվականի հունվարի 28-ին):

[5] Տե՛ս, Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 10 December 1984, By General Assembly resolution 39/46 https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-against-torture-and-other-cruel-inhuman-or-degrading (Վերջին այցելությունը՝ 2024 թվականի հունվարի 28-ին):

[6] Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Էրիկ Եղինյանի գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴ1/0030/01/16 որոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Գալյան, Դ. Թումասյան, Ա. Նիկողոսյան. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները (ուսումնական ձեռնարկ դատավորների, դատախազների և քննիչների համար). Երևան, 2019, էջ 6:
2. Законодательные гарантии защиты осужденных к лишению свободы от пыток, другого жестокого или унижающего достоинство обращения в постсоветских государствах, А. А. Павленко, Russian Journal of Criminal Law N20, 2022, էջեր 119-120:
3. Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 10 December 1984, By General Assembly resolution 39/46 https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-against-tor-

ture-and-other-cruel-inhuman-or-degrading:
4. International Bill of Human Rights, https://www.ohchr.org/en/what-are-human-rights/international-bill-human-rights:
5. International covenant on civil and political rights, United Nations 1967
https://treaties.un.org/doc/treaties/1976/03/19760323%2006-17%20am/ch_iv_04.pdf:
6. Основные принципы обращения с заключенными. Генеральная Ассамблея ООН. Стамбульское заявление о применении и последствиях содержания в одиночной камере // Международный симпозиум по вопросам психологических травм. 9 де-кабря 2007:
7. Рекомендация Комитета министров Совета Европы государствам-членам № Rec (2006) 2-REV «Европейские пенитенциарные правила» // Бюллетень Европейского Суда по правам человека. Российское издание. — 2020. — № 8 (218). — Էջ. 123:
8. Рекомендация Комитета министров Совета Европы CM/Rec (2012)12 к государствам-членам относительно иностранных заключенных (принята Комитетом министров 10 октября 2012 г. на 1152-м заседании заместителей министров):
9. Уткин, В. А. Европейские тюремные правила и проблемы их реализации : учебное пособие. — Томск, Томский госуниверситет, 1996, Էջ 64:
10. Уткин, В. А. Пенитенциарные стандарты Совета Европы и векторы реформирования уголовно-исполнительной системы // Уголовно-исполнительная система: право, экономика, управление, 2016, № 1, էջեր 14–18:
11. Bennion, E. Banning the Bing: Why Extreme Solitary Confinement Is Cruel and Far Too Usual Punishment // Indiana Law Journal: Vol. 90: Iss. 2. Article 7. 2015:
12. Rasmussen J, ed. Man in Isolation and Confinement. Chicago: Aldine Publications. 1973. Էջ 342:
13. Smith, P. S. The Effects of Solitary Confinement on Prison Inmates: A Brief History and Review of the Literature // Crime and Justice. Vol. 34. № 1. 2006. էջեր 441–528:

Арпи Лазарян
Начальник отдела развития уголовного и уголовно-процессуального
законодательства Министерства Юстиции Республики Армения
Кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Законодательные гарантии защиты лиц, лишённых свободы, от пыток и иных жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения.

В Республике Армения на конституционном уровне закреплено, что никто не может быть подвергнут пыткам, бесчеловечному или унижающему достоинство обращению и наказанию, а лица, лишенные свободы, имеют право на гуманное обращение. Примечательно, что корни этого принципа лежат в международном праве, поскольку в ряде международно-правовых актов, касающихся в основном защиты основных прав человека, закреплен принцип запрета пыток. Лица, лишенные свободы и содержащиеся в пенитенциарных учреждениях, в силу специфики своего статуса находятся в более уязвимом положении с точки зрения пыток или других форм жестокого обращения, поэтому закрепление международно признанных принципов в национальном законодательстве и их реализация являются важными показателями демократического государства. В статье мы проанализировали международно-правовые нормы о пытках и сопоставили их с отечественными законодательными нормами и правоприменительной практикой, уделив большее внимание защите прав лиц, содержащихся под стражей, а также выделив проблемы, которые, по нашему мнению, подлежат разрешению, и предложив определенные решения, необходимые для их разрешения.

***Ключевые слова**: исправительное учреждение, осужденный, пытки, условия содержания.*

Arpi Lazaryan
Head of the Criminal Legislation Development Department of the Criminal legislation, Penitentiary and Probation Policy Development division of the Ministry of Justice of the Republic of Armenia.
PhD in Law

SUMMARY

Legislative guarantees for the protection of persons deprived of liberty from torture and other cruel, inhuman or degrading treatment

In the Republic of Armenia, the Constitution enshrines the principle that no one may be subjected to torture or inhuman or degrading treatment or punishment, and that persons deprived of their liberty have the right to humane treatment. It is noteworthy that the roots of this principle lie in international law, as a number of international legal instruments, primarily related to the protection of fundamental human rights, enshrine the prohibition of torture. Persons deprived of their liberty and held in penitentiary institutions, due to the specific nature of their status, are more vulnerable to torture and other forms of ill-treatment. Therefore, enshrining internationally recognized principles in national legislation and their implementation are important indicators of a democratic state. In this article, we analyzed international legal norms on torture and compared them with domestic legislation and law enforcement practices, focusing on the protection of the rights of persons in custody. We also highlighted issues that, in our opinion, need to be addressed and proposed specific solutions for their resolution.

Key words*: correctional facility, convict, torture, conditions of detention.*

Ընագիրը ներկայացվել է 13.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՐԻԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ
իրավագիտության մագիստրոս

ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ՝ ՀՌՈՄԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԵԿԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է կատարողների իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային պայմանագրերի համակողմանի ուսումնասիրությանը: Մասնավորապես, ուշադրության կենտրոնում են «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի Կոնվենցիան, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Կատարումների և հնչյունագրերի մասին» պայմանագիրը, ինչպես նաև վերջին տասնամյակների ամենահատկանշական զարգացումներից մեկը՝ «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը:

Հոդվածում ոչ միայն ներկայացվում է նշված միջազգային փաստաթղթերի մշակման պատմական ընթացքը և դրանց հիմքում ընկած տեսական ու կոնցեպտուալ մոտեցումները, այլ նաև մանրամասն վերլուծվում է յուրաքանչյուր պայմանագրով կատարողներին վերապահված իրավունքների ծավալը: Հատուկ ուշադրություն է դարձվում այդ իրավունքների մեկնաբանության առանձնահատկություններին, որոնք ունեն էական նշանակություն ոչ միայն միջազգային պրակտիկայի, այլև ազգային օրենսդրությունների մեկնաբանության և կիրառման համատեքստում:

Հիմնաբառեր - Կատարում, կատարողներ, հարակից իրավունքներ, Հռոմի Կոնվենցիա, ,Կատարումների և հնչյունագրերի մասինե պայմանագիր, Պեկինի պայմանագիր:

Ներածություն

Կատարողների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական համակարգը ձևավորվել է երկարատև և բարդ իրավաքաղաքական զարգացման արդյունքում: Թեպետ շատ դեպքերում ստեղծագործությունները կյանք են ստանում կատարողների գործունեության շնորհիվ, սակայն միայն XX դարի երկրորդ կեսից է, որ միջազգային հանրությունը սկսեց գիտակցել կատարողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ իրավականորեն սահմանելով դրանց պաշտպանության ինստիտուցիոնալ և նորմատիվ հիմքերը:

Կատարողների իրավունքների ներպետական կարգավորումները լիարժեքորեն հասկանալու համար անհրաժեշտ է նախ վերլուծել դրանց միջազգային հիմքերը՝ դիտարկելով այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք ձևավորվել են բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակում:

Ներկայացվող հոդվածի նպատակն է կատարողների իրավունքների միջազգային իրավական համակարգի էվոլյուցիայի համապարփակ վերլուծությանը՝ սկսած Հռոմի կոնվենցիայից մինչև Պեկինի պայմանագիր: Հետազոտության ընթացքում ուշադրություն է դարձվում այս փաստաթղթերի միջև առկա նորմատիվ և գաղափարական կապերին, դրանցով ամրագրված իրավունքների ծավալին, ինչպես նաև այն հիմնարար սկզբունքներին, որոնք պայմանավորել են կատարողների իրավունքների արդի միջազգային կարգավորումների ձևավորումը:

Նման վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն միջազգային իրավունքի զարգացման տրամաբանությունը կատարողների իրավունքների ոլորտում, այլև գնահատելու դրա ազդեցությունը Հայաստանի Հանրապետության ներպետական իրավակարգավորման վրա՝ այդ թվում հեղինակային և հարակից իրավունքների օրենսդրական զարգացման համատեքստում:

Հետազոտություն

Կատարումների նկատմամբ իրավունքները և կատարողներին վերապահված իրավունքների ծավալը մշտապես եղել են բարդ քննարկումների, տարբեր շահառուների միջև մշտական բանավեճերի առարկա: Այս կամ այն երկրում և նույնիսկ միջազգային պայմանագրերում կատարողներին վերապահված իրավունքները արդյունք են հախուռն, երբեմն՝ չհամակարգված զարգացումների, հետևաբար կատարողներին վերապահված իրավունքների շրջանակը, դրանց մեկնաբանությունը

հասկանալու համար հատկապես կարևոր է վերհանել միջազգային պայմանագրերով կատարողներին վերապահված իրավունքների ծավալը, քանի որ, որպես կանոն, տարբեր երկրների ներպետական օրենսդրությունները, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությունը հիմնականում արտացոլում է կատարողների իրավունքների այն ծավալը, որը նախանշված է միջազգային պայմանագրերով: Հենց այդ պատճառով էլ ազգային համակարգով կատարողներին վերապահված իրավունքների շրջանակը մեկնաբանելու համար, կդիտարկենք կատարողներին վերապահված իրավունքների շրջանակը միջազգային պայմանագրերով՝ Հռոմի կոնվենցիայից մինչև Պեկինի պայմանագիր:

Միջազգայնորեն կատարողներին իրավունքներ վերապահելու առաջին քայլերը կատարվեցին Բեռնի կոնվենցիան վերանայելու համար 1928 թվականին հրավիրված կոնֆերանսում[1]: Չնայած Կոնֆերանսը մերժեց կատարողներին տրամադրել իրենց կատարումների նկատմամբ հեղինակային իրավունք, սակայն որոշում կայացվեց, որ պետք է ձեռնարկվեն միջոցառումներ կատարողների իրավունքների պաշտպանության համար: Մինչև 1948 թվականը այս հարցում մեծ առաջընթաց տեղի չունեցավ, մինչև Բրյուսելի կոնֆերանսում դիրքորոշումներ ներկայացվեցին այս հարցի վերաբերյալ: Հարցի հետագա ընթացքով սկսեց զբաղվել Աշխատանքի համաշխարհային կազմակերպությունը: 1951 թվականին, Բեռնի միության քարտուղարության հետ համատեղ, Հռոմում տեղի ունեցավ կոնֆերանս, որտեղ պատրաստվեց Կատարողների, հնչյունագիր արտադրողների և հեռարձակողների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի նախագիծը: 1952 թվականին Յունեսկոն՝ որպես հեղինակային իրավունքների համընդհանուր կոնվեցիայի քարտուղարություն, նույնպես ներգրավվեց նոր կոնվենցիայի մշակման աշխատանքներին: Կոնվենցիայի նախագիծը վերանայվեց 1955 թվականին՝ Ժնևում, ապա Մոնակոյում՝ 1957 և Հագայում՝ 1960 թվականին՝ մինչև Հռոմում կոնվենցիայի ամբողջացումը[2]: Կոնվենցիան ստորագրվեց 1961 թվականի հոկտեմբերի 26-ին Հռոմում[3], և ուժի մեջ մտավ 1964 թվականի մայիսի 18-ին: «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի Կոնվենցիան (այսուհետ՝ Հռոմի Կոնվենցիա)[4] փաստացի առաջին փաստաթուղթն էր, որ իրավական պաշտպանություն էր տրամադրում կատարողներին[5]: Բեռնի կոնվենցիայի նման Հռոմի կոնվենցիան որոշակի խումբ սուբյեկտների, այն է՝ կատարողների, հեռարձակող կազմակերպությունների և հնչունագիր արտադրողների համար սահմանում էր պաշտպանության նվազագույն չափանիշները:

Քանի որ կատարումները, ձայնագրումը և հեռարձակումը այդքան փոխկապակցված են, որոշում կայացվեց, որ մեկ կոնվենցիա պետք է նվիրված լինի երեք իրավունքների ստեղծմանը՝ ապահովելով հավասարակշռությունը երեք խումբ իրավատերերի միջև: Սակայն Հռոմի կոնվենիցիայի առանձնահատկությունը այն էր, որ այդ հավասարակշռությունը ի վնաս կատարողների էր, ու սրա պատճառները ոչ թե իրավական էին, այլ զուտ քաղաքական:

Այսպես, կոնվենցիան չի անդրադառնում կատարողների անձնական ոչ գույքային իրավունքներին, բացի դրանից այն չի խոսում կատարողների բացառիկ իրավունքների մասին, այլ կոնվենցիայի 7-րդ հոդվածը ընդամենը սահմանում է, որ կոնվենցիայով կատարողների համար նախատեսված պահպանությունը ընդգրկում է որոշակի գործողություններ «ԿԱՆԽԵԼՈՒ» հնարավորություն:

Ինչքան էլ, որ կոնվենցիայի 7-րդ հոդվածը հիմնաքարային էր կատարողների իրավունքների նախանշման համար, այն միևնույն ժամանակ կատարողների համար սահմանում էր ավելի անբարենպաստ պայմաններ, քան նույնիսկ նույն կոնվենցիայով պաշտպանվող հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների համար: Այսպես, եթե կատարողների համար կոնվենցիան ամրագրում է որոշակի գործողություններ կանխելու իրավունքը, ապա հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների համար այն ամրագրում է որոշակի գործողություններ թույլատրելու կամ արգելելու իրավունքը[6]:

Կատարողների նկատմամբ նման տարբերակված և խտրական մոտեցումը հիմնավորվում էր մի շարք հանգամանքներով:

Պատճառներից մեկը նշվում էր այն, որ կատարողներին բացառիկ իրավունքներ շնորհելը նրանց կվերապահեր ամբողջական հսկողություն իրենց կատարումների նկատմամբ, սա, բնականաբար, խնդրահարույց էր կատարումների ստեղծման, ամրագրման և հեռարձակման գործընթացում ընդգրկված մյուս սուբյեկտների համար: Այսպես՝ կատարողներին բացառիկ իրավունքների չտրամադրումը նախևառաջ պայմանավորված էր հեղինակների մտահոգություններով, որոնք աղաղակում էին, որ կատարողներին բացառիկ իրավունքների տրամադրումը մեծապես կխոչընդոտի իրենց իրավունքների իրացմանը[7]: Իրականում այս մտահոգությունը հիմնավորված չէր, որովհետև առաջին հերթին հենց կատարողներն էին շահագրգռված, որպեսզի իրենց կատարումները հնարավորինս շատ տարածում ստանային, ու, դժվար թե, նրանք խոչընդոտեին հեղինակների իրավունքների իրացմանը, թեև, իհարկե, մեծ էր հավանականությունը, որ կատարողները կարող էին պահանջել որոշակի փոխհատուցում: Միևնույն ժամանակ կատարողներին բացառիկ իրավունքներ տրամադրելու հար-

www.arvestmitoyutyun.com

գում մեծ մտահոգություններ ունեին նաև հնչյունագրեր արտադրողները և հեռարձակող կազմակերպությունները՝ համարելով, որ կատարողների բացառիկ իրավունքները խնդիրներ կստեղծեն հնչյունագրերի ամրագրման, հեռարձակման և վերահեռարձակման համար[8]:

Ի հավելումն վերոգրյալի՝ նշվում էր, որ կոնվենցայի նման բառապաշարը թույլ կտար անդամ պետություններին հնարավորինս հեշտորեն իրլեմենտացնել կոնվենցիան՝ հաշվի առնելով ազգային համակարգերի առանձնահատկությունները: Խնդիրը այն էր, որ կոնվենցիայի ընդունման ժամանակահատվածում տարբեր երկրներում կատարողների իրավունքները պաշտպանվում էին ամենատարբեր իրավական ինստիտուտների միջոցով՝ աշխատանքային իրավունք, անբարեխիղճ մրցակցություն, անհիմն հարստացում և այլն[9]: Այսպես, Չեխոսլովակիայի պատվիրակությունը առաջարկում էր «կանխել» բառի փոխարեն օգտագործել «պետք է իրավունք ունենան թույլատրել կամ օգտագործել» բառերը, այնպես ինչպես դա նախատեսված է հնչյունագիր արտադրողների և հեռարձակողների համար, սակայն ամեն դեպքում որոշում կայացվեց օգտագործել «կանխել» բառը, որպեսզի այնպիսի երկրները ինչպիսիք են, օրինակ Միացյալ Թագավորությունը կարողանան կատարողներին պաշտպանություն տրամադրել քրեական օրենսդրության շրջանակներում[10]:

Հռոմի Կոնվենցիան կատարողի համար ամրագրում է հետևյալ գործողությունները կանխելու կատարողի հնարավորությունը:

ա) առանց կատարողի համաձայնության կատարման հեռարձակումն ու հրապարակային հաղորդումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հեռարձակման կամ հրապարակային հաղորդման մեջ օգտագործված կատարումը արդեն ինքնին հեռարձակված կատարում է կամ իրականացվել է կատարման ամրագրումից[11].

Չնայած որոշ բացառությունների, այս դրույթով կատարողներին հնարավորություն էր տրվում կանխել առանց իրենց համաձայնության իրենց կատարումների հեռարձակումը կամ հանրությանը հաղորդելը: Հանրության հաղորդելու դրույթը կոնվենցիայի ամենաքննարկվող դրույթներից էր: Փաստացի հանրությանը հաղորդման տակ հասկացվում էր այն կատարումը (օրինակ դահլիճում իրականացվող կատարումը), որը մատուցվում էր հանրության մեկ այլ շրջանակի, որը ներկա չէր տվյալ դահլիճում՝ մալուխի կամ բարձրախոսների միջոցով[12]: Կոնվենցիայի քննարկումների ժամանակ նշվում էր, որ կատարումները հանրությանը հաղորդելը, որպես կանոն, չի ընդգրկում անդրսահմանային փոխանցումները, սակայն Հռոմի կոնվենցիան ընդունվեց անդրսահմանային փոխանցումների հաշվառմամբ, և հետագայում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստատեսության, համացանցի զարգացումը ակնհայտ դարձրեցին, որ նման որոշումը ճիշտ էր, որովհետև ներկայումս միևնույն կատարումը կարող է հեռարձակվել աշխարհի ամենատարբեր անկյուններում: Միևնույն ժամանակ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը նախատեսում է այդ դրույթից որոշակի բացառություններ: Ըստ Հռոմի կոնվենցիայի մեկնաբանությունների՝ փաստացի չորս դեպքեր են, երբ կատարումը արդեն հեռարձակվել է, երբ կատարումը հեռարձակվել է կատարման ամրագրումից, ոչ թե կենդանի կատարումից[13]: Երրորդ դեպքը այն է, երբ հանրությանը հաղորդած կատարումը ինքին հեռարձակված կատարում է (օրինակ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով փոխանցվող կատարումները հյուրանոցներում, ռեստորաններում և այլ հանրային վայրերում): Վերջին բացառությունը այն դեպքն է, երբ հանրությանը հաղորդումը իրականացվել է արդեն իսկ կատարված ամրագրումից, դասական օրինակ կարող է լինես,այսպես կոչված, երաժշտական ավտոմատների կողմից (jukebox) կատարումները[14]: Ամփոփելով, կարելի է նշել, որ կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է կատարողի համաձայնությունը այնպիսի կենդանի կատարումների համար, որոնք նախկինում ամրագրված կամ հեռարձակված չեն եղել:

բ) կատարողի չամրագրված կատարման ամրագրումն առանց նրա համաձայնության[15]

Դասական օրինակ է, երբ երաժիշտները կամ երգիչները արգելում են տեսանկարահանումը կամ ձայնագրությունը իրենց համերգների ժամանակ:

գ) կատարման ամրագրման վերարտադրությունն առանց կատարողի համաձայնության[16]

- եթե սկզբնական ամրագրումն ինքնին կատարվել է առանց կատարողի համաձայնության,
- եթե վերարտադրությունն իրականացվել է այն նպատակների համար, որոնք տարբերվում են այն նպատակներից, որոնց համար կատարողը տվել է իր համաձայնությունը,
- եթե սկզբնական ամրագրումն իրականացվել է կոնվենցիայի 15-րդ հոդվածի դրույթների համաձայն, իսկ վերարտադրությունն իրականացվել է այն նպատակների համար, որոնք տարբերվում են այդ դրույթներում նշված նպատակներից:

Առաջին դեպքը այն է, երբ սկզբնական ամրագրումն ինքնին կատարվել է առանց կատարողի համաձայնության: Վերադառնանք նույն երաժշտի օրինակին, ենթադրենք կատարմանը ներկա հանդիսատեսը առանց կատարողի համաձայնության իրականացրել է կատարման ձայնագրությունը և դա տրամադրել հեռարձակման համար հեռուստաընկերությանը:

Հաջորդ օրինակը այն դեպքն է, երբ օրինակ կատարողը իր համաձայնությունը տվել է հնչյունագիր պատրաստելու համար, սակայն կատարու-

www.ardaradatutyunjournal.com

մը օգտագործվել է ոչ միայն հնչյունագիր պատրաստելու համար, այլ կատարումը օգտագործվել է նաև որպես ֆիլմի ուղեկցող երաժշտություն[17]:

Եվ վերջապես վերջին դեպքը այն իրավիճակն է, երբ կատարման վերարտադրությունը իրականացվել է կոնվենցիայի 15-րդ հոդվածի դրույթների շրջանցմամբ: Կոնվենիցայի 15-րդ հոդվածը սահմանում է կոնվենցիայով երաշխավորված պահպանության բացառություններ, օրինակ անձնական օգտագործման, ընթացիկ իրադարձությունների լուսաբանման կամ կատարումների վերարտադրության ուսումնական կամ գիտահետազոտական նպատակներով օգտագործման համար: Օրինակ կարող է լինել, երբ ի սկզբանե ուսումնական նպատակներով ձայնագրված երաժշտական կատարումը, որ նախատեսված էր միայն որոշակի խումբ ուսանողների համար, հասանելի է դարձվում անձանց լայն շրջանակներին:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածը անդրադառնում էր նաև կատարումների հեռարձակմանը՝ կարգավորման հիմնական շեշտը տեղափոխելով ազգային օրենսդրությունների դաշտ: Այս կապակցությամբ պետք է նշել, որ, այնուամենայնիվ, կոնվենցիան հստակորեն ընդգծում է, որ անկախ ցանկացած կարգավորումից ազգային օրենսդրությունը չպետք է զրկի կատարողներին հեռարձակող կազմակերպությունների հետ, ըստ պայմանագրի, իրենց հարաբերությունները վերահսկելու իրավասությունից:

Հռոմի Կոնվենիցայի 7-րդ հոդվածով սահմանված իրավունքների շրջանակը սպառիչ չէր, և այն հնարավորություն էր տալիս անդամ պետություններին ամրագրել կատարողների իրավունքների ավելի լայն շրջանակ՝ նրանց վերապահելով բացառիկ իրավունքներ[18]: Այնուամենայնիվ, նույնիսկ իրավունքների նման սահմանափակ ծավալով Հռոմի կոնվենցիան իսկական առաջընթաց էր, այն առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ բարձրացրեց կատարողների իրավունքների պաշտպանության հարցը:

Կատարողների իրավունքներին անդրադարձ կատարող հաջորդ միջազգային փաստաթուղթը ընդունվեց Հռոմի կոնվենցիայի ընդունումից ավելի քան երեսուն տարի անց: Այդ կոնվենցիան 1994 թվականին ընդունված Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրն էր (այսուհետ՝ Թրիփս)[19]:

Ի տարբերություն Հռոմի կոնվեցիայի՝ Թրիփսը արդեն կատարողներին տրամադրում էր բացառիկ իրավունքներ, բացի դրանից երկարաձգվեց նաև կատարողների իրավունքների պաշտպանության ժամկետները՝ 50 տարի սկսած այն ժամանակից, երբ կատարվել էր ամրագրումը կամ տեղի էր ունեցել կատարումը[20]: Թրիփսը նաև սահմանում էր, որ Բեռնի կոնվենցիայի 18-րդ հոդվածը mutatis mutandis տարածվում է նաև կատարողների նկատմամբ[21]: Այն հսկայական կարևորություն ուներ կատարողների իրավունքների պաշտպանության համար նաև այն առումով, որ ընդլայնվեց այն երկրների շրջանակը, որոնք պարտավորվում էին փոխադարձ պաշտպանություն տրամադրել կատարողներին՝ այսպիսով սահմանելով պաշտպանության ավելի լայն շրջանակ քան Հռոմի կոնվեցիան[22]:

1993 թվականին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը սկսեց աշխատել կատարողների և հնչյունագրերի պաշտպանության հնարավոր նոր փաստաթղթի վրա՝ որպես Բեռնի կոնվենցիայի հնարավոր արձանագրություն: Այս աշխատանքը ներառում էր կատարողների դիրքերի ուժեղացման հնարավոր բոլոր առաջարկների քննարկումը, մասնավորապես կատարողների հասկացության ընդլայնումը, ընդգրկելով օրինակ՝ ժողովրդական բանահյուսության և արվեստի, կամ այլ կերպ՝ ֆոլկլորային ստեղծագործությունների կատարողներին, տրամադրելով կատարողներին անձնական ոչ գույքային՝ բարոյական իրավունքներ և այլն: Կոնվենցիայի վրա տարվող աշխատանքները ամփոփվեցին 1996 թվականին Ժնևում տեղի ունեցած կոնֆերանսում, որին մասնակցում էին 762 ներկայացուցիչներ 127 երկրներից, յոթ միջկառավարական կազմակերպություններ և 76 կառավարական հասարակական կազմակերպություններ[23]: Ի վերջո Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Կատարումների և հնչյունագրերի մասին» պայմանագիրը ստորագրվեց 1996 թվականի դեկտեմբերի 20-ին և ուժի մեջ մտավ 2002 թվականի մարտի 6-ին:

Պայմանագիրը դասվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, այսպես կոչված, համացանցի դարաշրջանի կոնվենցիաների շարքը: Պայմանագրի կարևոր հատկանիշներից էր այն, որ առաջին անգամ այն ամրագրեց կատարողների ոչ գույքային իրավունքները և ճանաչեց կատարողների բացառիկ իրավունքները կատարման նկատմամբ:

Չամրագրված կատարումների կամ, այսպես կոչված, կենդանի կատարումների համար կոնվենցիան սահմանում է, որ կատարողները օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրելու իրենց չամրագրված կատարումների եթերային հեռարձակումն ու հրապարակային հաղորդումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարումը արդեն հեռարձակված է, և իրենց չամրագրված կատարումների ամրագրումը:

Ամրագրված կատարումների համար Պայմանագիրը սահմանում է հետևյալ բացառիկ իրավունքները[24]՝ վերարտադրության[25], տարածման[26], վարձույթով տալու[27], ամրագրված կատարումները հանրությանը մատչելի դարձնելու[28] իրավունքները:

Սակայն, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, վերոգրյալ բացառիկ իրավունքները վերապահում է միայն հնչյունագրերում ամրագրված կատարումների համար, ինչը նշանակում է, որ եթե կատարումը ամրագրված է ոչ թե հնչյունագրում, այլ օրինակ ֆիլմում, որը իրենից ներկայացնում է և ոչ միայն ձայնի, այլ նաև պատկերի ամրագրում, ապա տվյալ պարագայում կոնվենցիան կիրառելի չի կարող լինել[29]: Սա կոնվենցայի ամենամեծ թերություններից է, քանի որ այն խտրական մոտեցում է դրսևորվում և պաշտպանությունից զրկում է կատարողներին միայն այն փաստի ուժով, որ նրանց կատարումները ամրագրված են Կոնվենցիայի տրամաբանությամբ «ոչ պիտանի» կրիչներում:

Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը կատարողներին և հնչյունագրեր արտադրողներին օժտում է նաև արդարացի վարձատրության իրավունքով հնչյունագրերի ուղղակի կամ անուղղակի օգտագործման համար՝ առևտրային նպատակով հրապարակված եթերային հեռարձակման կամ ցանկացած հրապարակային հաղորդման համար[30]: Միևնույն ժամանակ Պայմանագիրը կողմերին հնարավորություն է տալիս ազգային օրենսդրությամբ սահմանափակել վերոգրյալ դրույթը կամ Պայմանագիրը վավերացնել որոշակի վերապահումներով[31]:

Կատարումների և հնչյունագրերի պայմանագրի հենց ընդունման պահից՝ պարզ էր, որ այն ոչ լիարժեք է, քանի որ պաշտպանություն էր տրամադրում միայն հնչյունագրերում ամրագրված կատարումներին: Այդ իսկ պատճառով Կատարումների և հնչյունագրերի պայմանագրի ընդունումից արդեն մեկ տարի անց՝ 1997 թվականից Ժնևում սկսվեցին պարբերական հանդիպումներ կոնվենցիայի դրույթների վերանայման համար, որի արդյունքում 2000 թվականին դեկտեմբերին տեղի ունեցավ Մտավոր Սեփականության համաշխարհային կազմակերպության դիվանագիտական կոնֆերանսը՝ կատարողների իրավունքների պաշտպանության համան նոր կոնվենցիայի ընդունման նպատակով[32]: Կոնֆերանսը կարողացավ համաձայնության հասնել նոր կոնվենցիայի 20-ից 19-ը հոդվածների վերաբերյալ, սակայն ամենակարևոր հարցի՝ իրավունքների փոխանցման հարցը մնաց առկախված[33]: Նղիրն այն էր, որ տարբեր երկրներում տեսալսողական կատարումների նկատմամբ իրավունքների ծավալը տարբեր էր: Այսպես, պրոդյուսերները առաջ էին մղում այն հայեցակարգը, որ նոր կոնվենցիան պետք է ամրագրի տեսալսողական կատարումների նկատմամբ կատարողների իրավունքների՝ պրոդյուսերներին պարտադիր փոխանցման կանխավարկածը, սակայն այս մոտեցմանը ընդդիմանում էին ազգային պատվիրակությունների մեծ մասը[34]: Հանդիպումներ տեղի ունեցան նաև 2001 և 2002 թվականներին, սակայն դա չնպաստեց համաձայնության կայացմանը[35]: Այսպիսով, պահանջվեց մոտ 12 տարի պահանջվեց համաձայնության կայացման համար, և վերջապես, 2012 թվականին ընդունվեց «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը[36]:

Պեկինի պայմանագիրը վերջապես վերացրեց երկար ժամանակ խոր հիմքեր գցած խտրական մոտեցումը տարբեր կատարողների նկատմամբ՝ ամրագրելով հավասար մոտեցում ինչպես հնչյունագրերում ամրագրված կատարումների, այնպես էլ տեսալսողական կատարումների համար: Պեկինի պայմանագիրը կատարողների կողմից ընդունվեց մեծ ջերմությամբ՝ որպես կատարողների, հատկապես՝ տեսալսողական կատարումների կատարողների, (օրինակ՝ ֆիլմերում նկարահանվող դերասանների) մեծ հաղթանակ երկարատև պայքարից հետո[37]:

Պայմանագիրը տեսալսողական ամրագրումը ձևակերպում է որպես շարժվող պատկերների մարմնավորում ձայնի ուղեկցությամբ կամ առանց դրա կամ դրանց ներկայացում, որը թույլ է տալիս դրանց ընկալումը, վերարտադրումը կամ հաղորդումը սարքի միջոցով[38]:

Պեկինի պայմանագիրը կատարողներին վերապահում է ոչ գույքային և գույքային իրավունքներ: Ավելին, ինչպես Հռոմի կոնվենցիան ու Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, այն տարբերակում է կատարողներին տրված իրավունքների ծավալը՝ հաշվի առնելով կատարման ամրագրված կամ չամրագրված լինելու փաստը:

Այսպես, չամրագրված կատարումների համար այն սահմանում է, որ դրանց նկատմամբ կատարողները ունեն բացառիկ իրավունք թույլատրելու կատարումների հեռարձակումը ու հաղորդումը հանրությանը (բացառությամբ այն դեպքերի, երբ կատարումը արդեն հեռարձակված է) և կատարման ամրագրումը[39]:

Տեսալսողական ամրագրումներում ամրագրված կատարումների նկատմամբ կատարողները օգտվում են վերարտադրության[40], տարածման[41], վարձույթով տալու[42], ամրագրված կատարումները մատչելի դարձնելու բացառիկ իրավունքներից[43]: Բացի դրանից ի տարբերություն՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագրի, Պեկինի պայմանագիրը սահմանում է, որ կատարողները օգտվում են նաև տեսալսողական ամրագրումներում ամրագրված իրենց կատարումների հեռարձակման կամ հանրությանը հաղորդումը թույլատրելու բացառիկ իրավունքներից: Միևնույն ժամանակ, պայմանագիրը թույլ է տալիս անդամ պետություններին հրաժարվել վերոգրյալ իրավունքից՝ դրա փոխարեն սահմանելով արդարացի վարձատրության իրավունք տեսալսողական ամրագրումներում ամ-

րագրված կատարման հեռարձակման կամ հանրությանը հաղորդելու համար[44]:

Պայմանագիրը նաև անդրադառնում է իրավունքների փոխանցման հարցին, որը, թերևս, պայմանագրի ամենաերկար բանակցված դրույթն էր: Այսպես՝ Պայմանագիրը սահմանում է, որ պայմանավորվող կողմը կարող է իր ազգային օրենսդրության մեջ նախատեսել, որ եթե կատարողը համաձայնություն է տվել ամրագրելու իր կատարումը տեսալսողական ամրագրման եղանակով, ապա ամրագրված կատարումների նկատմամբ նախատեսված բացառիկ իրավունքները պատկանում են այդպիսի տեսալսողական ամրագրման արտադրողին կամ իրականացվում են նրա կողմից կամ փոխանցվում են նրան, եթե կատարողի և տեսալսողական ամրագրման արտադրողի միջև հակառակի վերաբերյալ պայմանագրի չի կնքվել, ինչպես նախատեսված է ազգային օրենսդրությամբ[45]:

Այսպիսով, ամփոփելով կարելի է նշել, որ ներկայումս միջազգային իրավական գործիքները կատարողներին վերապահում են ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային իրավունքներ: Ընդ որում՝ կատարողների գույքային իրավունքների ծավալը հիմնականում հանգում է հետևյալ բացառիկ իրավունքներին՝

- Չամրագրված կատարումների հանրությանը հաղորդելու, հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունք
- Չամրագրված կատարումների ամրագրումը թույլատրելու իրավունք
- Ամրագրված կատարումների վերարտադրության իրավունք
- Ամրագրված կատարումների տարածման իրավունք
- Ամրագրված կատարումների վարձույթով տալու իրավունք
- Կատարողների արդարացի վարձատրության իրավունք

Եզրակացություն

Կատարողների իրավունքների միջազգային իրավական զարգացումը արտացոլում է մտավոր սեփականության իրավունքի էվոլյուցիայի ընդհանուր ուղղությունը՝ անցում կատարելով նվազագույն պաշտպանության սկզբունքից դեպի հավասարակշռված իրավական պաշտպանություն: Եթե Հռոմի կոնվենցիան (1961 թ.) միայն նախանշեց կատարողների պաշտպանության հիմքերը՝ սահմանափակվելով որոշակի գործողություններ կանխելու հնարավորությամբ, ապա հետագա փուլերում ընդունված Թրիփս համաձայնագիրը, Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիրը և վերջապես Պեկինի պայմանագիրը էապես ընդլայնեցին այդ պաշտպանության ծավալը՝ կատարողներին տրամադրելով ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային իրավունքների լայն շրջանակ:

Այս գործընթացի ընթացքում միջազգային իրավունքը աստիճանաբար արձագանքեց տեխնոլոգիական առաջընթացին և շուկայական հարաբերությունների փոփոխություններին՝ փորձելով ապահովել հավասարակշռություն ստեղծագործական գործունեության տարբեր մասնակիցների՝ հեղինակների, կատարողների, և հեռարձակողների շահերի միջև:

Ներկայումս ձևավորված միջազգային իրավական համակարգը կատարողներին ճանաչում է որպես ինքնուրույն սուբյեկտներ, որոնց գործունեությունը պահանջում է իրավական պաշտպանություն: Այս մոտեցումը դառնում է նաև ազգային օրենսդրությունների զարգացման հիմնաքարը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, որտեղ միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների պատշաճ իրականացումն ապահովում է կատարողների իրավունքների արդյունավետ և արդիական պաշտպանությունը:

Եզրափակելով կարելի է նշել, որ Հռոմի կոնվենցիայից մինչև Պեկինի պայմանագիր անցած իրավաքաղաքական ուղին վկայում է միջազգային իրավունքի հասունացման և արժեքային վերակողմնորոշման մասին՝ հաստատելով այն սկզբունքը, որ կատարողի գործունեությունը արժանի է լիարժեք ճանաչման և համապարփակ միջազգային պաշտպանության:

[1] Տե՛ս, World Intellectual Property Organization, 1978. Guide to the Berne Convention for the Protection of Literary and Artistic Works (Paris Act, 1971) (Vol. 615). WIPO, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/copyright/615/wipo_pub_615.pdf (հասանելի 23.08.2025):
[2] Տե՛ս, Richard, Arnold. Performers' Rights. Fifth Edition. Sweet & Maxwell, 2015, էջ 21:
[3] Տե՛ս, Rome Convention for the Protection of Performers, Producers of Phonograms and Broadcasting Organizations https://www.wipo.int/treaties/en/ip/rome/ (հասանելի 02.03.2025):
[4] Տե՛ս, Rome Convention for the Protection of Performers, Producers of Phonograms and Broadcasting Organizations(October 26, 1961) https://www.wipo.int/wipolex/en/treaties/textdetails/12656(հասանելի 02.03.2025):
[5] Տե՛ս, Richard, Arnold. Performers' Rights. Fifth Edition. Sweet & Maxwell, 2015, էջ 21:
[6] Տե՛ս, Հռոմի կոնվենցիայի 10-րդ և 13-րդ հոդվածներ:
[7] Տե՛ս, World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981, էջ 34-36:
[8] Տե՛ս, World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981, էջ 34-35:
[9] Տե՛ս, նույն տեղում:
[10] Տե՛ս, International Labour Organisation, UNESCO, the United International Bureaux for the Protection of Intellectual Property, Records of the Diplomatic Conference on the International Protection of Performers,Producers of Phonograms and Broadcasting Organizations, Rome (Oct 1961), էջ 43 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000003572:
[11] Տե՛ս, Հռոմի կոնվենցիա, 7-րդ հոդված, ա ենթակետ:
[12] Տե՛ս, World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981, էջ 36:
[13] Տե՛ս, Հարկ է նշել, որ Կոնվենցիայի մշակման ժամանակ շատ է քննարկվել կենդանի կատարում (live performances) եզրույթի ընդգրկումը, սակայն, հաշվի առնելով թարգմանության, բարդությունները որոշում է կայացվել, որ կօգտագործվի միայն կատարում եզրույթը:
[14] Տե՛ս, World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981, էջ 36:
[15] Տե՛ս, Հռոմի կոնվենցիա, 7-րդ Հոդված, բ ենթակետ:
[16] Տե՛ս, Հռոմի կոնվենցիա, 7-րդ Հոդված, գ ենթակետ:
[17] Տե՛ս, World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981, էջ 37:
[18] Տե՛ս, International Labour Organisation, UNESCO, the United International Bureaux for the Protection of Intellectual Property, Records of the Diplomatic Conference on the International Protection of Performers, Producers of Phonograms and Broadcasting Organizations, Rome (Oct 1961), էջ 43 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000003572 (հասանելի 02.03.2025):
[19] Տե՛ս, Agreement on Trade-Related Aspects of Intellectual Property Rights (TRIPS Agreement) https://www.wipo.int/wipolex/en/treaties/details/231 (հասանելի 02.03.2025):
[20] Տե՛ս, ԹՐԻՓՍ համաձայնագիր, հոդված 14:
[21] Տե՛ս, նույն տեղում:
[22] Տե՛ս, Skone James, E. P., and John F. Mummery. "Copinger and Skone James on copyright." Sweet and MaxweU, London(2016), էջ 953:
[23] Տե՛ս, Richard, Arnold. Performers' Rights. Fifth Edition. Sweet & Maxwell, 2015, էջ 38:
[24] Բացառիկ իրավունքների բովանդակությունը առավել մանրամասն բացահայտված է հաջորդիվ:
[25] Տե՛ս, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, հոդված 7:
[26] Տե՛ս, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, հոդված 8:
[27] Տե՛ս, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, հոդված 9:
[28] Տե՛ս, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, հոդված 10:
[29] Տե՛ս, Summary of the WIPO Performances and Phonograms Treaty (WPPT) (1996): https://www.wipo.int/treaties/en/ip/wppt/summary_wppt.html (հասանելի 02.03.2025):
[30] Տե՛ս, Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, հոդված 15:
[31] Տե՛ս, Summary of the WIPO Performances and Phonograms Treaty (WPPT) (1996) https://www.wipo.int/treaties/en/ip/wppt/summary_wppt.html (հասանելի 02.03.2025):
[32] Տե՛ս, Morgan, Owen. International protection of performers' rights. Hart, 2002, էջ 228:
[33] Տե՛ս, նույն տեղում:
[34] Տե՛ս, Sara Tortosa, The Beijing Treaty: A step forward in the protection of related rights in audiovisual performances(June 2021) http://copyrightblog.kluweriplaw.com/2021/06/18/the-beijing-treaty-a-step-forward-in-the-protection-of-related-rights-in-audiovisual-performances/ (հասանելի 02.03.2025):
[35] Տե՛ս, Morgan, Owen. International protection of performers' rights. Hart, 2002, էջ 228
[36] Պայմանագիրը ընդունվել է 2012 թվականի հունիսի 24-ին, և ուժի մեջ է մտել ընդունումից ութ տարի անց 2020

թվականի ապրիլի 28-ին:Ներկայումս պայմանագրին անդամակցում է 42 պետություն:Հայաստանը միացել է պայմանագրին և վավարեցրել է այն 2020 թվականի մայիսի 11-ին:

[37] Տե՛ս, WIPO member states adopt an international treaty protecting audiovisual performances(June 2012) https://www.fim-musicians.org/wipo-av-treaty-adopted (հասանելի 02.03.2025):

[38] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 2:

[39] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 6:

[40] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 7:

[41] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 8:

[42] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 9:

[43] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 10:

[44] Տե՛ս, Պեկինի պայմանագիր, հոդված 11:

[45] Տե՛ս,Պեկինի պայմանագիր, հոդված 12:

Օգտագործված գրականության ցանկ

1. Agreement on Trade-Related Aspects of Intellectual Property Rights (TRIPS Agreement). Signed: 15 April 1994, Entry into force: 1 January 1995. Source: United Nations Treaty Series, vol. 1869, p. 299.https://www.wipo.int/wipolex/en/treaties/details/231 (վերջին մուտք՝ 15.08.2025):
2. Beijing Treaty on Audiovisual Performances. Signed: 24 June 2012, Entry into force: 28 April 2020. Source: WIPO Lex, AVP010EN.
3. International Labour Organisation, UNESCO, the United International Bureaux for the Protection of Intellectual Property, Records of the Diplomatic Conference on the International Protection of Performers,Producers of Phonograms and Broadcasting Organizations, Rome (Oct 1961), https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000003572 (վերջին մուտք՝ 15.08.2025)
4. Morgan, Owen. International protection of performers' rights. Hart, 2002, էջ 228:
5. Richard, Arnold. Performers' Rights. Fifth Edition. Sweet & Maxwell, 2015, էջ 38:
6. Rome Convention for the Protection of Performers, Producers of Phonograms and Broadcasting Organizations. Signed: 26 October 1961, Entry into force: 18 May 1964. Source: United Nations Treaty Series, vol. 496, p. 43.
7. Sara Tortosa, The Beijing Treaty: A step forward in the protection of related rights in audiovisual performances (June 2021) http://copyrightblog.kluweriplaw.com/2021/06/18/the-beijing-treaty-a-step-forward-in-the-protection-of-related-rights-in-audiovisual-performances/ (վերջին մուտք՝ 15.08.2025)
8. Skone James, E. P., and John F. Mummery. "Copinger and Skone James on copyright." Sweet and MaxweU, London (2016):
9. Summary of the WIPO Performances and Phonograms Treaty (WPPT) (1996): https://www.wipo.int/treaties/en/ip/wppt/summary_wppt.html (վերջին մուտք՝ 15.08.2025):
10. WIPO member states adopt an international treaty protecting audiovisual performances (June 2012) https://www.fim-musicians.org/wipo-av-treaty-adopted (վերջին մուտք՝ 15.08.2025).
11. WIPO Performances and Phonograms Treaty (WPPT). Signed: 20 December 1996, Entry into force: 20 May 2002. Source: WIPO Lex, WO020EN.
12. World Intellectual Property Organization, 1978. Guide to the Berne Convention for the Protection of Literary and Artistic Works (Paris Act, 1971) (Vol. 615). WIPO, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/copyright/615/wipo_pub_615.pdf (վերջին մուտք՝ 15.08.2025):
13. World Intellectual Property Organization, Guide to the Rome Convention and to the Phonograms Convention. Vol. 617. BRILL, 1981:

Арпине Оганесян
Преподаватель кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета, кандидат юридических наук, доцент

Мариам Айвазян
Магистр права

РЕЗЮМЕ

Международно-правовая рамка прав исполнителей:
от Римской конвенции до Пекинского договора

Статья посвящена всестороннему исследованию международных договоров, касающихся охраны прав исполнителей. В центре внимания находятся Римская конвенция “Об охране прав исполнителей, производителей фонограмм и организаций эфирного вещания”, Договор Всемирной организации интеллектуальной собственности по исполнениям и фонограммам, а также одно из наиболее значимых достижений последних десятилетий - Пекинский договор по аудиовизуальным исполнениям.

В статье не только излагается исторический процесс разработки указанных международных документов и лежащие в их основе теоретические и концептуальные подходы, но также проводится анализ объема прав, предоставляемых исполнителям каждым из этих договоров. Особое внимание уделяется особенностям толкования данных прав, которые имеют существенное значение не только для международной практики, но и в контексте интерпретации и применения национального законодательства.

***Ключевые слова**: Исполнения, Исполнители, Смежные права, Римская конвенция, Договор ВОИСпо исполнениям и фонограммам, Пекинский договор.*

Arpine Hovhannisyan
Lecturer, Department of Civil Law, Faculty of Law, Yerevan State University,
Candidate of Legal Sciences, Associate Professor

Mariam Ayvazyan
Master of Laws

SUMMARY

The International Legal Framework of Performers' Rights:
From the Rome Convention to the Beijing Treaty

The article is devoted to a comprehensive study of international treaties concerning the protection of performers' rights. It focuses on the Rome Convention for the Protection of Performers, Producers of Phonograms and Broadcasting Organizations, the WIPO Performances and Phonograms Treaty, as well as one of the most significant developments of recent decades - the Beijing Treaty on Audiovisual Performances.

The article not only outlines the historical process of drafting these international instruments and the theoretical and conceptual approaches underlying them, but also provides an analysis of the scope of rights granted to performers under each treaty. Special attention is paid to the interpretative particularities of these rights, which are of considerable importance not only for international practice but also in the context of the interpretation and application of national legislation.

***Key words**: Performance, Performers, Related rights, Rome Convention, WIPO Performances and Phonograms Treaty, Beijing Treaty.*

Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ արդարադատության նախարարի
տեղակալի օգնական,
իրավագիտության մագիստրոս

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հոդվածը ուսումնասիրում է պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման որոշ առանձնահատկություններ: Համապարփակ վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում քննարկվող ինստիտուտի տեսական և գործնական առկա հիմնախնդիրները, առանձին անդրադարձ է կատարվել վերոնշյալ ինստիտուտի առանձին կոմպոնենտների, մասնավորապես՝ իրավական բնույթը, ինստիտուտի նշանակությունը պատժի նպատակների համատեքստում, ինստիտուտի չկիրառելու հիմքերին ու պայմաններին՝ ելակետ ունենալով գործող ՀՀ քրեական օրենսգրքի և նախկին քրեական օրենսգրքի կարգավորումները, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներն ու միջազգային փորձը:

Հիմնաբառեր *- պատիժ, պատիժը պայմանականորեն չկիրառել, դատարան, դատավճիռ, հանցանք կատարած անձ:*

Ներածություն

Աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, կիրառվում են մեծամասամբ ազատազրկման հետ կապված պատիժներ, ինչը հանգեցնում է բազմաթիվ բացասական հետևանքների՝ սոցիալական կապերի խզում, ընտանիքի նյութական վիճակի վատթարացում, հասարակությանը վերաինտեգրվելու դժվարություն, ռեցիդիվի աճ, դատապարտված անձանց քրեականացում, հանցավոր ենթամշակույթի տարածում և այլն: Ուստի ոչ բոլոր դեպքերում է, որ պատիժը փաստացի կրելիս ապահովվում է պատժի նպատակների իրականացումը: Հենց այս բացասական երևույթներից խուսափելու, ինչպես նաև արդարության, մարդասիրության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների իրագործումն ապահովելու նպատակով էլ պայմանավորված է քրեական օրենսդրության մեջ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը ներառելու անհրաժեշտությունը:

Այս ինստիտուտը կարևոր գործիք է հասնելու պատժի նպատակների իրականացմանն առանց դատապարտյալին հասարակությունից փաստացի մեկուսացնելու: Միևնույն ժամանակ դրա չարդարացված կիրառումը կարող է անպատժելիության մթնոլորտ ստեղծել, ինչն անթույլատրելի է:

Քննարկվող ինստիտուտը վաղուց արդյունավետորեն կիրառվում է բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում և այլուր: Թեև ՀՀ-ում նույնպես պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը բավականին հաճախ է կիրառվում, սակայն չի կարելի չխոսել նրա օրենսդրական թերությունների,բացերի ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրների մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը վերջին տարիներին իրականացվող դատահրավական բարեփոխումների համատեքստում, մասնավորապես արդեն ուժի մեջ մտած նոր ՀՀ քրեական օրենսգրքով էական բովանդակային փոփոխությունների է ենթարկվել, ուստի անհրաժեշտություն է առաջանում տեսական քննարկման առարկա դարձնել նոր ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումները, համեմատահրավական վերլուծության ենթարկել նախկին օրենսդրական կարգավորման հետ, վեր հանել դրանց առանձնահատկությունները, որոնք կարող են օգտակար լինել օրենսդրական փոփոխությունների իրականացման ժամանակ: Վերոգրյալը վկայում է սույն աշխատանքի թեմայի արդիականության մասին:

Հետազոտություն.

1. **Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի նշանակությունը պատժի նպատակների իրացումն ապահովելու տեսանկյունից**

Քրեական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի նշանակությունը կախված է պատժի նպատակներին հասնելու հնարավորությունից: Հանցանք կատարած անձանց նկատմամբ արդարացի պատիժ նշանակելը հասարակության մոտ թողնում է դաստիարակչական, ուղղիչ և կանխարգելող ազդեցություն: Սակայն միշտ չէ, որ պատիժ նշանակելով, կարողանում ենք հասնել պատժի նպատակների իրականացմանը, ուստի, դրա համար օրենքով նախատեսվում է հանցանք կատարած անձանց նկատմամբ պատժիը

www.ardaradatutyunjournal.com

պայմանականորեն չկիրառելու հնարավորություն:Քննարկվող ինստիտուտի իրավակարգավորումներց բխում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը պատժի նպատակներին հասնելու հնարավորություններց մեկն է:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի[1] 84-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե դատարանը հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի երկրորդ մասի՝ «Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները»: Դատարանը պետք է համոզվի, որ կարող է հասնել պատժի հետևյալ նպատակներին, դրանից հետո, միայն, կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատժի նպատակների օրենսդրական ձևակերպման տեսանկյունից անհրաժեշտ է նախ անդրադառնալ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում սոցիալական արդարության վերականգնմանը:

Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է ու բավարար նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Այսպիսով՝ սոցիալական արդարության վերականգնումը՝ որպես պատժի նպատակ, ենթադրում է անձին, հասարակությանը, պետությանը հանցագործությամբ պատճառված վնասի՝ պատժի միջոցով հնարավորինս հատուցում, հանցագործության վտանգավորության և պատժի համապատասխանություն[2]:

Հետևաբար՝ սոցիալական արդարությունը կարելի է համարել վերականգնված, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի լինի:

Հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում կարող է տպավորություն ստեղծվել, թե սոցիալական արդարությունը չի վերականգնվում, և անձը հնարավորություն է ստանում խուսափելու պատժից, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ դատարանն անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանգամանքները:

Դրանք են՝

1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

Նման պայմաններում սոցիալական արդարության վերականգնման նպատակը չի խախտվում, քանի որ, օրինակ, եթե դատարանը գտնում է, որ անձի ուղղումը հնարավոր է նաև առանց նշանակված պատիժը կրելու, ապա արդարացի է, որ այդ անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառվի, և հենց այդ դեպքում կարելի է համարել, որ պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման նպատակն իրագործվել է[3]:

Ուստի կարելի է եզրակացնել, որ սոցիալական արդարության վերականգնման նպատակը իրականացվում է դատարանի կողմից արդարացի դատավճիռ կայացնելու միջոցով, այսինքն՝ սկսվում է պատիժ նշանակելու պահից և տևում մինչև դատարանի կողմից սահմանված փորձաշրջանի ավարտը: Իսկ օրենքով սահմանված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելիս՝ շարունակվում պատիժը փաստացի կրելու ընթացքում:

Ինչպես նշվեց, դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելիս անդրադառնում է մի շարք հանգամանքների, որոնցից մեկը պատճառված վնասի հատուցումն է, սա ուղղակիորեն կապված է գույքային բնույթի հանցագործությունների հետ, որոնց վերաբերյալ Վճռաբեկ դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում՝ կապված գույքային բնույթի հանցագործությունների դեպքում սոցիալական արդարության վերականգնման և պատիժը պայմանականորեն չկիրառելու հարաբերակցության հարցի շուրջ. «(…) Գույքային բնույթի հանցագործություններում սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է ապահովել պատճառված վնասի համարժեք հատուցմամբ և նախքան հանցագործությունը եղած իրադրության հնարավորինս վերականգնմամբ, իսկ քանի դեռ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը չի հատուցվել, խոսք չի կարող լինել սոցիալա-

կան արդարությունը վերականգնված լինելու մասին: Ուստի հանցանք կատարած անձի նկատմամբ պետք է ընտրվի այնպիսի ներգործության միջոց, որը կապահովի սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցավորի ուղղումը և նոր հանցագործությունների կանխումը: (…) Հետևաբար այն դեպքերում, երբ առկա է պատճառված վնաս և այդ վնասը հատուցելու գույքային պահանջ, վնասը վերականգնված չլինելու պարագայում ինքնին նվազում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը (…)[4]:

Պատժի հաջորդ նպատակը, որի իրականացումն ապահովվում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումն է:

Դատապարտյալի վերասոցիալականացում ասելով պետք է հասկանալ հոգեբանամանկավարժական, տնտեսական, բժշկական, իրավաբանական և կազմակերպական միջոցների բարդ համալիր կազմող երկարատև գործընթաց, որն ուղղված է յուրաքանչյուր դատապարտյալի մոտ պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ընդունակությունների և հմտությունների ձևավորմանը[5]: Կրիմինոլոգիական գրականությունում «վերասոցիալականացում» արտահայտությունը կիրառվում է նեղ և լայն առումներով: Նեղ առումով այն քրեական պատիժը կրելուց հետո՝ հետպատժական ժամանակաշրջանում իրականացվող սոցիալական գործընթաց է, երբ իրացվում են անձի որակական փոփոխություններ, հայացքների վերակառուցում, որն արտահայտվում է իրավահպատակ վարքագծում: Լայն առումով վերասոցիալականացումը փաստացի սկսվում է դատապարտյալի ազատազրկման վայր հայտնվելու առաջին օրվանից և շարունակվում պատժի կրման ամբողջ ժամկետի ընթացքում, իսկ պատժի կրման վերջին շրջանում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում է ավելի ինտենսիվ: Անհրաժեշտ է չանտեսել նաև, որ դատապարտյալներին կարող է տրամադրվել հոգեբանական օգնություն, ընդ որում՝ այլ անձանց կողմից և ոչ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի[6]: Քննարկվող ինստիտուտի կիրառման դեպքում կարելի է զերծ մնալ այն վնասակար հետևանքներից, որոնք կարող են ի հայտ գալ պատժի իրական կատարման ժամանակ՝ հատկապես ազատազրկման դեպքում և առաջին անգամ հանցանք կատարած անձանց մոտ: Դատապարտյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը կապված չէ շրջակա միջավայրից կտրվելու, աշխատանքը կորցնելու հետ, նրանք իրենց հասարակությունից մեկուսացված չեն զգում, ինչը նպաստում է հասարակական կյանք արագ ինտեգրվելուն[7]: Ուստի անձի վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներն այս դեպքում ավելի արդյունավետ ազդեցություն են ունենում, և այս առումով պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը լիովին իրականացնում է պատժի վերասոցիալականացման նպատակը:

Հարկ է նաև անդրադառնալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված (այսուհետ՝ Նախկին ՀՀ քրեական օրենսգիրք)[8] պատիժը պայմանականորեն չկիրառելու հոդվածում տեղ գտած այն դրույթին, որտեղ նշվում էր, որ դատարանը կիրառում է պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը այն դեպքում, երբ հանգում էր հետևության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց պատիժ կրելու: Այս դրույթից կարող ենք եզրակացնել, որ նախկին օրենսգրքով պատժի նպատակներից միայն մեկի իրականացումն էր նախատեսված, այնինչ այս ինստիտուտը նախատեսված է պատժի բոլոր նպատակների իրականացման համար և ինքնին այս ինստիտուտի կիրառումը ենթադրում է պատժի բոլոր նպատակների իրականացում: Ուստի, գտնում ենք,որ նախկին կարգավորումը թերի էր, և նոր օրենսգրքում, ինչպես արդեն նշել ենք, պատիժը պայմանականորեն չի կիրառվում այն դեպքում,երբ դատարանը պատիժ նշանակելիս հանգում է հետևության,որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու: Եվ այս կարգավորումը ավելի ճիշտ է բնութագրում պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը:Նախկինում թեև չէր նշվում պատժի բոլոր նպատակների իրականացման պահանջը, այնուամենայնիվ պրակտիկայում հոդվածը մեկնաբանելիս, դատարանները դիտարկում էին պատժի բոլոր նպատակների իրականացումը, այլ ոչ միայն դատապարտյալի ուղղումը:

Քննարկվող ինստիտուտն ապահովում է նաև պատժի երրորդ, և ինչպես հավաստում են մի շարք գիտնականներ, առավել կարևոր նպատակի՝ հանցագործությունների կանխման (պրևենցիա) իրականացումը:

Հանցագործությունների կանխման նպատակը քրեական իրավունքի տեսության մեջ տարանջատվում է ընդհանուրի և հատուկի՝ կապված այն հանգամանքի հետ, որ դրանք արտացոլում են պատժի հասցեատերերի տարբերությունը. հատուկ կանխումն իրականացվում է դատապարտյալի նկատմամբ, ընդհանուր կանխումը՝ մնացած քաղաքացիների: Բացի այդ, քննարկվող նպատակների իրականացումն ապահովվում է պատժի գործողության՝ նման, բայց միաժամանակ միմյանցից տարբերվող կառուցակարգերով[9]:

Ն. Ա. Բելյաևայի կարծիքով՝ հատուկ կանխման նպատակն իրականացվում է երկու ճանապարհով՝ ա) հանցագործը զրկվում է նոր հանցագործություն կատարելու ֆիզիկական հնարավորությունից կամ սահմանափակվում է նրա՝ նոր

հանցանք կատարելու հնարավորությունը, բ) հանցագործն ահաբեկվում է իր կատարածի համար պատժի կիրառման (անխուսափելիության) փաստից[10]:

Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, ըստ որի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ապահովվում է միայն պատժի հատուկ կանխման նպատակը, և որ ընդհանուր կանխման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հրաժարվել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտից[11]: Այս առումով կարևորվում է այն հանգամանքը, որ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 348 -րդ հոդվածի 1-ին մասի կանոններով, դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պարզում է, թե ապացուցված են արդյոք մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը), ապացուցված է արդյոք այդ արարքի քրեական հակաիրավականությունը, ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը, ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը տվյալ արարքը կատարելու մեջ և այս բոլոր հարցերին դրական պատասխան տալուց հետո է անցնում պատժի կրման հարցին:

Նշված *իրավադրույթից բխում է, որ դատարանը, հանցագործի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելով և որոշակի պատիժ նշանակելով, արդեն իսկ ներգործում է ոչ միայն հանցանք կատարած անձի, այլև պոտենցիալ հանցագործի և հասարակության մյուս անդամների նկատմամբ (նրանց նկատմամբ*, ովքեր ունակ են հասկանալու իրենց գործողությունների բնույթը և ղեկավարելու դրանք)՝ *վկայելով այն մասին, որ օրենքը գործում է, և խախտված արդարությունն անպայման կվերականգնվի*: Այս դեպքում կատարված արարքը ոչ թե դադարում է հանցագործություն լինելուց, կամ հասարակությունը փոխում է իր վերաբերմունքը կատարված արարքի պատժելիության վերաբերյալ, այլ պարզապես հանցանք կատարած անձին տրվում է ուղղվելու, օրինապահ քաղաքացի դառնալու և վերասոցիալականացվելու ևս մեկ հնարավորություն: *Պատժի ընդհանուր կանխման նպատակի ապահովման կարևոր խթան է հանդիսանում, որ քաղաքացիները գիտակցեն հանցանքի կատարված լինելու իրողությունը, պատժի անխուսափելիությունը, և այս դեպքում է, որ ապահովվում է պատժի ընդհանուր կանխման նպատակը: Ուստի, ամփոփելով կատարված վերլուծությունը, համակարծիք չենք այն տեսակետի հետ,ըստ որի՝* պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ապահովվում է միայն պատժի հատուկ կանխման նպատակը, և որ ընդհանուր կանխման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հրաժարվել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտից:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտն ապահովում է պատժի բոլոր նպատակների իրականացումը: Դրա ճիշտ կիրառումը թույլ է տալիս իրագործել ոչ միայն հանցանք կատարած անձի վերասոցիալականացում, այլև սոցիալական արդարության վերականգնման և հանցագործությունների հատուկ և ընդհանուր կանխման նպատակները: Այս ինստիտուտի արդյունավետությունը կախված է ինչպես օրենսդրական կարգավորումից, այնպես էլ պրակտիկայից:

Դատական համակարգի առաջնային խնդիրը պետք է լինի կատարված արարքին համաչափ գնահատական տալը, արդարացի պատիժ նշանակելը, պատիժը պայմանականորեն չկիրառելով նրա վրա պարտականություններ դնելը, իսկ պրոբացիայի ծառայության խնդիրը՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելը և անհրաժեշտության դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կրելու միջնորդություն ներկայացնելը: Միայն այս դեպքում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս հնարավոր կլինի ապահովել պատժի նպատակների իրականացումը:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքն ու պայմանները

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի ու պայմանների հարցը բավականին երկար ժամանակ քննարկվել է քրեական իրավունքի տեսությունում, սակայն այս հարցի կապակցությամբ դեռևս միասնական դիրքորոշում չկա:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու առանցքային խնդիրը կապված է դրա հիմնավորման հետ: Ինչպես նշվեց, քրեաիրավական գրականության մեջ չկա մեկ միասնական կարծիք այս ինստիտուտի հիմքերի վերաբերյալ: Մի շարք գիտնականներ արտահայտել են իրենց տեսակետը այս հարցի վերաբերյալ: Այսպես՝ Ա. Ն. Տարասովը նշում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու համար հիմք կարող է ծառայել հանցագործության ոչ մեծ հասարակական վտանգավորության և հանցանք կատարած անձին դրականորեն բնութագրող տվյալների միաժամանակյա առկայությունը[12]:

Տ. Յ. Ստրոգանովը այն կարծիքին է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարվում հաստատված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ամբողջությունը, որը վկայում է կատարված հանցանքի հասարակական վտանգավորության, հանցանք կատարած անձի մասին, և որոնց վերլուծությունը դատարանին թույլ է տալիս եզրակացություն անել դատապարտյալի ուղղման հնարավորության մասին առանց պատիժը

www.ardaradatutyunjournal.com

փաստացի կրելու[13]:

Վ. Յ. Նեմանեժինը նշում է, որ այս ինստիտուտի կիրառման միակ հիմքը դատարանի հետևությունն է առ այն, որ անձի ուղղումը հնարավոր է առանց պատժի իրական կրման:

Գ. Լ. Ջեմլյանոյը և Յ. Մ. Տկաչևսկին առավել հաջող են սահմանում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը՝ որպես փաստացի հանգամանքների ամբողջականություն, որոնք անհրաժեշտ և բավարար են դատարանի եզրակացության համար պատժի նպատակներին հասնելու վերաբերյալ առանց պատիժը փաստացի կրելու[14]:

Մ. Ա. Շնեյդերը կարծում է, որ այս ինստիտուտի կիրառման համար անհրաժեշտ են որոշակի կոնկրետ և հատուկ մեղմացնող հանգամանքներ: Իսկ Մ. Դ. Շարգորոդսկիյը, ընդհակառակը, պնդում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար չեն պահանջվում որոշակի հատուկ մեղմացնող հանգամանքներ, այլ կարելի է սահմանափակվել պարզապես հասարակ մեղմացուցիչ հանգամանքների առկայությամբ, օրինակ՝ դատապարտյալի դրական բնութագիրը կամ հանցանքն առաջին անգամ կատարելը[15]:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի ձևակերպումից հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու միակ հիմքը դատարանի հետևությունն է դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները՝ անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, հանցանք կատարածի անձը, պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

Հարկ է նկատել, որ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումներից երևում էր, որ դատարանը նման եզրահանգման գալու համար հաշվի էր առնում միայն հանցավորի անձը բնութագրող տվյալները և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, այնինչ, արդեն նոր ՀՀ քրեական օրենսգրքով այդ հանգամանքերը լրացվել են և ավելի կոնկրետացվել, ինչը հնարավորություն է տալիս դատարանին այդ ինստիտուտը կիրառել՝ հաշվի առնելով այդ բոլոր հանգամանքները, որը կբերի այդ ինստիտուտի ավելի ճիշտ կիրառմանը և մեկնաբանմանը և կքչացնի պրակտիկայում առաջացող խնդիրները:

Չնայած նախկին կարգավորումներին՝ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելիս, այնուամենայնիվ, հաշվի էր առնում ներկա կարգավորումներում ներառված հանգամանքները: Օրինակ, նախկին կարգավորումներով դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքների մեջ առկա չէր հանցագործության վտանգավորությունը,կամ պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել: Հանցագործության վտանգավորության հարցի կապակցությամբ իր մի շարք նախադեպային որոշումներում անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես ՀՀ դատական համակարգի բարձրագույն ատյանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, այնուամենայնիվ դատարանի հետևությունները, ի թիվս այլ հանգամանքների (հանցավորի անձը բնութագրող տվյալներ, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ), պետք է հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա[16]:

Վճռաբեկ դատարանը կարևորել է պատիժը պայմանականորեն չկիրառելիս ուշադրության արժանի՝ հանցագործության վտանգավորության վրա ազդող այնպիսի գործոնների գնահատումը, ինչպիսիք են՝

ա) կատարված հանցագործության նպատակն ու շարժառիթը,

բ) քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,

գ) կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը,

դ) հանցագործության կատարման եղանակը,

ե) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը,

զ) հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը[17]:

Քրեական օրենքով արգելված գործունեությունը մարդկային վարքագծի բազմաբնույթ տեսակներից մեկն է, և ճիշտ չի լինի պնդել, թե այն պայմանավորված է միայն արտաքին սոցիալական գործոններով: Յուրաքանչյուր հանցագործություն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնք ներառում են նաև հանցանք կատարած անձին բնութագրող տվյալները: Այդ իսկ պատճառով կատարված հանցավոր գործունեությունը բնութագրելու, դրա էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության են-

թարկել նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները և, որ ավելի կարևոր է, ճիշտ գնահատական տալ դրանց: Դա հնարավորություն կտա դատարանին ճիշտ հետևության գալ առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակների հնարավոր իրականացման մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս կարող են հաշվի առնվել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են անձի սեռը, տարիքը, առողջական վիճակը, մտավոր զարգացման մակարդակը, բնավորությունը, հասարակության մեջ վարվելակերպը, վերաբերմունքը հասարակական շահերին և այլն[18]: Անձին բնութագրող տվյալները չեն կարող սպառիչ լինել, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող են հաշվի առնվել նաև այլ հատկանիշներ:

Այսպես՝ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը լուծելիս հաշվի է առնում նաև հանցանք կատարած անձի բնութագրող հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգիրքը չի տալիս «հանցանք կատարածի անձ» հասկացության բնորոշումը: Այս հարցի կապակցությամբ տեսության մեջ կան տարբեր մոտեցումներ, որոնք ընդհանրացնելով կարող ենք ասել, որ «հանցանք կատարածի անձ» հասկացությունն իրենից ներկայացնում է անձի կենսաբանական, ֆիզիկական, հոգեբանական և սոցիալ-քաղաքական հատկանիշների համակցություն, որոնք բազմաբնույթ են և բազմաբովանդակ[19]:

Անդրադառնալով վերոնշյալ հարցին՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «(...) «հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրով(...)[20]:

Որպես հանցանք կատարածի անձը բնութագրող սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական, քրեաբանական, քրեաիրավական և ֆիզիկական հատկություններ՝ հաշվի են առնվում հանցանք կատարած անձի ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը[21], նրա խնամքին այլ անձանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները, ինչպես նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա[22]:

ՀՀ քրեական օրենսգիրքը չի բացահայտում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից հաշվի առնվող պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հասկացությունը: Ենթադրվում է, որ որպես այդպիսին կարող է լինել ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 70-ով և 71-ով նախատեսված ցանկացած մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք:

Անդրադառնալով պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ դրանք, հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս[23]: Հարկ է նշել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար ամենևին պարտադիր չէ, որ գործում որևէ ծանրացնող հանգամանք չլինի, քանի որ դատարանը վերոնշյալ բոլոր հանգամանքները գնահատում է համակցության մեջ, և այս առումով մենք համաձայն չենք իրավաբանական գրականության մեջ առկա այն տեսակետի հետ, որ գործում գեթ մեկ ծանրացնող հանգամանքի առկայությունն արդեն իսկ բացառում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը[24]: Որևէ ծանրացնող հանգամանքի առկայությունն ինքնին չի կարող բացառել այս ինստիտուտի կիրառությունը, եթե դատարանը հանգում է հիմնավոր եզրակացության, որ հանցանք կատարած անձի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու[25]:

Դատարանի կողմից հաշվի առնվող հաջորդ հանգամանքը անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունն է:

Նախկին կարգավորումներով այս հանգամանքը նշված չէր որպես պարտադիր հանգամանք, չնայած, իրավակիրառ պրակտիկայում Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային որոշումների լույսի ներքո զարգանում էր այն ուղղությամբ, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս դատարանները հաշվի են առնում նաև հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, սակայն դա թողնել միայն դատարանի հայեցողությանը այդքան էլ ճիշտ չէր, և գտնում ենք, որ փոփոխություններով այդ հանգամանքին օրենսդրական ձևակերպում տալը ճիշտ մոտեցում էր:

Դատարանի կողմից պարտադիր հաշվի առն-

վող վերջին հանգամանքը պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ հարթած լինելն է, որը նախկին կարգավորմամբ նույնպես չկար պարտադիրների մեջ: Կարծում ենք, որ նպատակահարմար չէ վերջինս ամրագրել որպես հաշվի առնվող առանձին հանգամանք, քանի որ այդ հարցը պետք է դիտարկել պատժի նպատակների համատեքստում, մասնավորապես սոցիալական արդարության նպատակը քննարկելիս, ինչպես նաև հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը որոշելիս:

Անդրադառնալով պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններին՝ նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը քննարկվող ինստիտուտի կիրառման պայման է համարում կարճաժամկետ ազատազրկման,կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակված լինելու հանգամանքները: Օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելը թույլատրում է միայն անձի ազատությունը սահմանափակող պատիժների դեպքում:

Գործող իրավակարգավորման պարագայում այս ինստիտուտի կիրառման որևէ սահմանափակում նախատեսված չէ, և պատիժը պայմանականորեն կարող է կիրառվել ինչպես ոչ մեծ ծանրության, այնպես էլ միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց պատժից ազատելու համար: Նման մոտեցումն արդարացված չէ, քանի որ այս դեպքում մեծ է հավանականությունը, որ դատական հայեցողության ոչ ճիշտ կամ հանցավոր օգտագործման պարագայում կարող են թույլ տրվել տարբեր տեսակի կամայականություններ, կայացվել անհիմն ու անարդար դատավճիռներ: Ուստի կարծում ենք՝ անհրաժեշտ է նախատեսել որոշակի սահմանափակումներ և արգելքներ:

Վերոնշյալ խնդրի հետ կապված արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում առկա են որոշակի սահմանափակումներ ինչպես հանցագործության ծանրության աստիճանով և պատժաչափով պայմանավորված, այնպես էլ որոշակի կատեգորիայի անձանց մասով:

Այսպես՝ հանցագործության ծանրության աստիճանով սահմանափակումներ են նախատեսված մի շարք երկրներում, օրինակ՝ Կանադայի քրեական օրենսդրության համաձայն՝ պատիժը պայմանականորեն կարելի է չկիրառել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների կատարման դեպքում (մինչև 2 տարի ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործություններ): Ֆինլանդիայի, Շվեդիայի և Ֆրանսիայի քրեական օրենսգրքերը այս ինստիտուտի կիրառությունը հնարավոր են համարում համապատասխանաբար երկու, երեք և հինգ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նախատեսող հանցագործությունների դեպքում: Իսկ Տաջիկստանում, Ղրղզստանում, Վրաստանում պատիժը պայմանականորեն չի կարող կիրառվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների, իսկ Բելառուսում՝ միայն առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում[26]:

Անձի նկատմամբ նշանակված պատժաչափով պայմանավորված նույնպես արտասահմանյան պետությունների օրենսդրական կարգավորումը տարբերվում է: Այսպես՝ ըստ Չինաստանի և Բուլղարիայի քրեական օրենսդրությունների՝ պատիժը պայմանականորեն կարող է չկիրառվել, եթե նշանակված պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը: Ճապոնիայում այն կարող է կիրառվել մինչև երեք, Շվեյցարիայում և Իսպանիայում՝ մինչև երկու, իսկ Գերմանիայում՝ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում[27]:

Բելառուսի և Ղրղզստանի քրեական օրենսդրությունների համաձայն այս ինստիտուտի կիրառությունը հնարավոր է հինգ տարին չգերազանցող, իսկ Ռուսաստանի քրեական օրենսդրության համաձայն մինչև ութ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում[28]:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է սահմանափակում նախատեսել նաև որոշակի անձանց կատեգորիայի մասով, ինչն առկա է նաև մի շարք երկրներում:

Այսպես՝ օրինակ, Իսպանիայի և Չինաստանի քրեական օրենսգրքերն ուղղակիորեն նախատեսում են, որ պատիժը պայմանականորեն չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, ովքեր ունեն ռեցիդիվ, իսկ Իտալիայի քրեական օրենսդրությունն արգելում է հիշյալ ինստիտուտի կիրառումը դատվածություն ունեցող անձանց նկատմամբ: Ֆրանսիայում էլ պատժի կատարման սովորական հետաձգումը թույլատրվում է կիրառել միայն այն անձանց նկատմամբ, ովքեր վերջին հինգ տարիների ընթացքում դատապարտված չեն եղել ազատազրկման[29]:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ռեցիդիվ ունեցող անձանց նկատմամբ աննպատակահարմար է կիրառել այս ինստիտուտը, քանի որ դա խոսում է անձի հանցավոր գործունեության շարունակականության, նրա և իր կատարած արարքի առավել բարձր հանրային վտանգավորության մասին: Բացի այդ, եթե նախկինում դիտավորյալ հանցանք (հանցանքներ) կատարած անձը կրկին կատարել է նոր դիտավորյալ հանցանք, դա հանգեցնում է ողջամիտ ենթադրության առ այն, որ նախորդ հանցանքի համար նշանակված պատժի պայմաններում չի ապահովվել պատժի նպատակ-

www.ardaradatyunjournal.com

ների իրականացումը: Ուստի, եթե պատիժը փաստացի կրելու արդյունքում չի ապահովվել պատժի նպատակների իրագործումը, ապա, կարծում ենք, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում, առավել ևս, այդ նպատակների իրագործումն անհնար է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածում նախատեսել հետևյալ դրույթը.

«Պատիժը պայմանականորեն չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, ովքեր ունեն ռեցիդիվ»:

Եզրակացություն

Ամփոփելով պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրների վերաբերյալ հիմնական դրույթների վերլուծությունները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտն իր հատկանիշներով, իրավական բնույթով պատժի կրումից ազատելու տարատեսակ է և փաստացի հանդես է գալիս որպես քրեական պատասխանատվության իրացման առանձնահատուկ ձև: Ընդ որում, պատժից ազատելը տվյալ դեպքում դրսևորվում է պատժի կրումից որոշակի պայմանով ազատվելու ձևով:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը պետք է քննարկել և հիմնավորել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի բոլոր նպատակների իրացումն ապահովելու տեսանկյունից, դրանց համատեքստում: Գործող կարգավորումներով, կարելի է փաստել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտն ապահովում է պատժի բոլոր նպատակների իրականացումը: Դրա ճիշտ կիրառումը թույլ է տալիս իրագործել ոչ միայն հանցանք կատարած անձի վերասոցիալականացում, այլև սոցիալական արդարության վերականգնման և հանցագործությունների հատուկ և ընդհանուր կանխման նպատակները: Այս ինստիտուտի արդյունավետությունը կախված է ինչպես օրենսդրական կարգավորումից, այնպես էլ պրակտիկայից:

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքը դատարանի հետևությունն է դատապարտյալի՝ առանց պատիժը փաստացի կրելու ուղղվելու հնարավորության մասին: Նման եզրահանգումը պետք է հիմնված լինի հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների, անձին մեղսագրվող հանցագործության բնույթի ու վտանգավորության, պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ հարթած լինելու հանգամանքի գնահատման վրա: Կարծում ենք, որ նպատակահարմար չէ վերջինս ամրագրել որպես հաշվի առնվող առանձին հանգամանք, քանի որ այդ հարցը պետք է դիտարկել պատժի նպատակների համատեքստում, մասնավորապես՝ սոցիալական արդարության նպատակը քննարկելիս, ինչպես նաև հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը որոշելիս:

4. Արտասահմանյան երկրների օրինակով առաջարկում ենք պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունն օրենսդրորեն սահմանափակել դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի չափով և որոշակի կատեգորիայի անձանց մասով, և քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածում նախատեսել հետևյալ դրույթը. «Պատիժը պայմանականորեն չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, ովքեր ունեն ռեցիդիվ»:

[1] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.2021թ., Ուժի մեջ է մտել՝ 01.07.2022թ., ՀՕ-199-Ն:
[2] Տե՛ս, ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, 2012, էջ 380:
[3] Տե՛ս, Եղիգարյան Լ., Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի հասկացությունը, էությունը և տեղը ՀՀ քրեական օրենսգրքում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու», Երևան, 2018, էջ 263-264:
[4] Տե՛ս, Սամվել Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ ԼԴ/0193/01/10 որոշումը:
[5] Տե՛ս, Խաչիկյան Հ. Մ., Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում ժողովածու», Երևան, 2016, էջ 69:
[6] Տե՛ս, Խաչիկյան Հ. Մ., Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի

Հանրապետությունում, «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում ժողովածու», Երևան, 2016, էջ 68-69:
[7] Տե՛ս, Эрхитуева Т. И., Значение условного осуждения для достижения целей наказания // Гуманитарные, социально-экономические и общественные науки, № 5, Краснодар, 2016, էջ 138:-139
[8] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է՝ 18.04.2023թ., Ուժի կորցրել է՝ 01.07.2022թ., ՀՕ-199-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407
[9] Տե՛ս, Մարտիրոսյան Պ. Վ., Քրեական պատժի նպատակների իրագործման հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն), ատեն. … իրավ. գիտ. թեկն., Երևան, 2017, էջ 102:
[10] Տե՛ս, Беляев Н. А., Избранные труды. СПБ., Санкт-Петербург, 2003, էջ 188:
[11] Տե՛ս, Агзамов И. М., նշվ. աշխ., էջ 184:
[12] Տե՛ս, Тарасов А. Н., Условное осуждение по законодательству России, Санкт-Петербург, 2004, էջ 74:
[13] Տե՛ս, Степашин В. М., Основание применения условного осуждения // Вестник ОмГУ., Серия «Право», №1, Омск, 2013, էջ 180:
[14] Տե՛ս, Степашин В. М., նշվ. աշխ., էջ 180-181:
[15] Տե՛ս, Օհանյան Լ. Պ., Պատիժը պայմանականորեն չկիրառելը ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, առկա վիճակը, հիմնախնդիրները, կատարելագործման ուղիները, ատեն. … իրավ. գիտ. թեկն., Երևան, 2014, էջ 75:
[16] Տե՛ս, Գարուշ Սադաթյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշումը:
[17] Տե՛ս, Վանյա Բեգյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13 որոշումը:
[18] Տե՛ս, Гладких В. И., Дьяконова С. В., նշվ. աշխ., էջ 111:
[19] Տե՛ս, Комиссаров В. С., Павлухин А. Н., Уголовное право. Общая часть, Санкт-Петербург, 2003, էջ 74:
[20] Տե՛ս, Սերոբ Սարգսյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշումը:
[21] Տե՛ս, Հազարապետ Հարությունյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը:
[22] Տե՛ս, Սեյրան Աղախանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշումը:
[23] Տե՛ս, Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը:
[24] Տե՛ս, Бажанов М. И., Сташис В. В., Таций В. Я., Уголовное право Украины. Общая часть, Харьков, 1998, էջ 288
[25] Տե՛ս, Սերյոժա Դավթյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԷԴ/0032/01/10 որոշումը:
[26] Մեջբերված պետությունների քրեական օրենսդրությունները տե՛ս http://www.legislationline.org/documents/section/criminal-codes կայքէջում:
[27] Տե՛ս, https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/5375/108071/F-78796243/CHN5375%20Eng3.pdf, http://www.legislationline.org/documents/section/criminal-codes
[28] Մեջբերված պետությունների քրեական օրենսդրությունները տե՛ս http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes կայքէջում
[29] Տե՛ս, https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/5375/108071/F-78796243/CHN5375%20Eng3.pdf, http://www.legislationline.org/documents/section/criminal-codes:

Օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.2021թ., Ուժի մեջ է մտել՝ 01.07.2022թ., ՀՕ-199-Ն:
2. ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է՝ 18.04.2003թ., Ուժի կորցրել է՝ 01.07.2022թ., ՀՕ-199-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407
3. Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք: Ընդունվել է 29.12.1960թ., Ուժի մեջ է մտել 01.04.1961թ.https://counterterrorlaw.info/assets/downloads/Belarus_Criminal_Code_%281994%29_%28English_translation%29.pdf (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
4. Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: Ընդունվել է 22.07.1999թ. https://rm.coe.int/georgia-criminal-code-of-georgia-section-one-criminal-law-/1680ad3ca7 (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
5. Տաջիկստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: https://bwcimplementation.org/sites/default/files/resource/TJ_Criminal%20Code%20of%20Rep%20of%20Tajikistan_EN.pdf (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
6. Բուլղարիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իսպանիայի Թագավորության, Շվեդիայի Թագավորության, Շվեյցարիայի Համադաշնության, Ֆինլանդիայի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքեր՝ http://www.legislationline.org/documents/section/criminal-codes (վերջին

մուտք՝ 05.08.2025թ.):
7. Ճապոնիայի քրեական օրենսգիրք՝ http://www.cas.go.jp/jp/seisaku/hourei/data/PC.pdf (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
8. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քրեական օրենսգիրք՝ https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/5375/108071/F78796243/CHN5375%20Eng3.pdf (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
9. Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
10. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (խմբ.՝ Գ. Ս. Ղազինյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 544 էջ:
11. Եղիգարյան Լ., Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի հասկացությունը, էությունը և տեղը ՀՀ քրեական օրենսգրքում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու», Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 1 (1), էջեր 261-274:
12. Խաչիկյան Հ. Մ., Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում ժողովածու», Երևան, «Իրավունք», 2016, էջեր 68-69:
13. Մարտիրոսյան Պ. Վ., Քրեական պատժի նպատակների իրագործման հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն), ատեն. … իրավ. գիտ. թեկն., Երևան, 2017, 182 էջ:
14. Օհանյան Լ. Պ., Պատիժը պայմանականորեն չկիրառելը ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, առկա վիճակը, հիմնախնդիրները, կատարելագործման ուղիները, ատեն. … իրավ. գիտ. թեկն., Երևան, 2014, 117 էջ:
15. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշում:
16. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0193/01/10 որոշում:
17. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՏԴ/0018/01/13 որոշում:
18. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ/0109/01/12 որոշում:
19. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎՔ-50/07 որոշում:
20. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշում:
21. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎՔ-192/07 որոշում:
22. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0032/01/10 որոշում:
23. Агзамов И. М., Условное неприменение уголовного наказания как комплексный правовой институт: дис. … доктора юрид. наук, Москва, 2013, 544 էջ:
24. Беляев Н. А., Избранные труды. СПБ., Санкт-Петербург, 2003, Изд во «Юридический центр Пресс», 589 էջ:
25. Бажанов М. И., Сташис В. В., Таций В. Я., Уголовное право Украины. Общая часть, Харьков, Изд во «Право», 1998, 400 էջ:
26. Гладких В. И., Дьяконова С. В., Условное осуждение, правовая природа и проблемы применения, Москва, Изд-во «Международный юридический институт», 2009, 197 էջ:
27. Комиссаров В. С., Павлухин А. Н., Уголовное право. Общая часть, Санкт-Петербург, Изд во «Питер», 2003, 240 էջ:
28. Степашин, В. М., Основание применения условного осуждения // Вестник ОмГУ., Серия «Право», Омск, Изд-во ФГБОУ ВО «ОмГУ им. Ф. М. Достоевского», 2013, №1 (34), էջեր 180-181:
29. Тарасов А. Н., Условное осуждение по законодательству России, Санкт-Петербург, Изд во «Юридический центр Пресс», 2004, 190 էջ:
30. Эрхитуева Т. И., Значение условного осуждения для достижения целей наказания // Гуманитарные, социально-экономические и общественные науки, Краснодар, Изд во «Наука и образование», 2016, № 5, էջեր 137-139:

References

1. HH qreakan o’rensgirq [Criminal Code of the Republic of Armenia]. adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022, HO-199-N. (In Armenian) https://www.arlis.am/hy/acts/215474/latest
2. HH qreakan o’rensgirq [Criminal Code of the Republic of Armenia]. adopted on 18.04.2003, repealed on 01.07.2022, HO-199-N, HHPT 2003.05.02/25(260) Hod.407. (In Armenian) https://www.arlis.am/hy/acts/69646
3. Belarusi Hanrapetutyan qreakan o’rensgirq [Criminal Code of the Republic of Belarus]. adopted on 29.12.1960, entered into force on 01.04.1961. (In Armenian) https://counterterrorlaw.info/assets/downloads/Belarus_Criminal_Code_%281994%29_%28English_translation%29.pdf (last accessed 05.08.2025). (In Armenian)
4. Vrastani Hanrapetutyan qreakan o’rensgirq [Criminal Code of Georgia]. adopted on 22.07.1999. https://rm.coe.int/georgia-criminal-code-of-georgia-section-one-criminal-law-/1680ad3ca7 (last accessed 05.08.2025). (In Armenian)
5. Tajikstani Hanrapetutyan qreakan o’rensgirq [Criminal Code of the Republic of Tajikistan]. https://bwcimplementation.org/sites/default/files/resource/TJ_Criminal%20Code%20of%20Rep%20of%20Tajikistan_EN.pdf (last accessed 05.08.2025). (In Armenian)
6. Bulgariai, Germaniayi, Ispaniayi, Shvediayi, Shveitsariayi, Finlandiayi ev Fransiayi Hanrapetutyan qreakan o’rens-

girk'er [Criminal Codes of Bulgaria, Germany, Spain, Sweden, Switzerland, Finland and France]. http://www.legislation-line.org/documents/section/criminal-codes (last accessed 05.08.2025). (In Armenian)
7. Japoniai qreakan o'rensgirq [Criminal Code of Japan]. http://www.cas.go.jp/jp/seisaku/hourei/data/PC.pdf (last accessed 05.08.2025). (In Armenian)
8. Chinastani Zhoghovrdakan Hanrapetutyan qreakan o'rensgirq [Criminal Code of the People's Republic of China]. https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/5375/108071/F78796243/CHN5375%20Eng3.pdf (last accessed 05.08.2025). (In Armenian)
9. Rusastani Dashnutyan qreakan o'rensgirq [Criminal Code of the Russian Federation]. http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (last accessed 05.08.2025). (In Armenian)
10. Hayastani Hanrapetutyan qreakan iravunk: yndhanur mas (khmb.: G. S. Ghazinyani) [Criminal Law of the Republic of Armenia: General Part (ed. G. S. Ghazinyan)], Yerevan, YPH hrat., 2012, 544 ej. (In Armenian)
11. Yedigaryan L., Patizhy paymanakanoren ch'kirarvelu instituti haskatsutyuny, eutyuny yev teghy HH qreakan o'rensgirkum, "YPH iravagitutyan fakulteti aspirantneri yev haytsordneri nshatshurjani nyuteri zhoghovatsu", Yerevan, YPH hrat., 2018, 1 (1), ej. 261-274. (In Armenian)
12. Khachikyan H. M., Patzhi yentarkvac andzi verasotsialakanacman himnakhndirnery Hayastani Hanrapetutyunum, "Mardu arandzin sosialakan iravunkneri pashtpanutyan erashkikhner@ HH 2015t. poxpokhutyunnerov Sahanadryan hamateqstum zhoghovatsu", Yerevan, "Iravunk", 2016, ej. 68-69. (In Armenian)
13. Martirosyan P. V., Qreakan patzhi npatakneri irakanacman himnakhndirnery (iravahamarotakakan verlyutsutyun) aten. … irav. git. teqn., Yerevan, 2017, 182 ej. (In Armenian)
14. Ohanyan L. P., Patizhy paymanakanoren ch'kirarvel@ st Hayastani Hanrapetutyan qreakan o'rensgirk'i, arka vijaky, himnakhndirnery, katarelakargman ughinery, aten. … irav. git. teqn., Yerevan, 2014, 117 ej. (In Armenian)
15. HH Vjrabek datarani tiv EShD/0029/01/08 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. EShD/0029/01/08]. (In Armenian)
16. HH Vjrabek datarani tiv LD/0193/01/10 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. LD/0193/01/10]. (In Armenian)
17. HH Vjrabek datarani tiv TD/0018/01/13 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. TD/0018/01/13]. (In Armenian)
18. HH Vjrabek datarani tiv SD/0109/01/12 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. SD/0109/01/12]. (In Armenian)
19. HH Vjrabek datarani tiv VB-50/07 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. VB-50/07]. (In Armenian)
20. HH Vjrabek datarani tiv AVD/0082/01/12 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. AVD/0082/01/12]. (In Armenian)
21. HH Vjrabek datarani tiv VB-192/07 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. VB-192/07]. (In Armenian)
22. HH Vjrabek datarani tiv YED/0032/01/10 voroshum [Decision of the Court of Cassation of the Republic of Armenia No. YED/0032/01/10]. (In Armenian)
23. Agzamov I. M., Uslovnoe neprimenenie ugolovnogo nakazaniya kak kompleksny pravovoy institut: dis. … doktora yurid. nauk, Moskva, 2013, 544 ej. (In Russian)
24. Belyaev N. A., Izbrannye trudy, SPB., Sankt-Peterburg, 2003, Izd-vo "Yuridicheskiy tsentr Press", 589 ej. (In Russian)
25. Bazhanov M. I., Stashis V. V., Tatsiy V. Ya., Ugolovnoe pravo Ukrainy. Obshchaya chast', Kharkov, Izd-vo "Pravo", 1998, 400 ej. (In Russian)
26. Gladkikh V. I., D'yakonova S. V., Uslovnoe osuzhdenie, pravovaya priroda i problemy primeneniya, Moskva, Izd-vo "Mezhdunarodny yuridicheskiy institut", 2009, 197 ej. (In Russian)
27. Komissarov V. S., Pavlukhin A. N., Ugolovnoe pravo. Obshchaya chast' [Criminal Law. General Part], Sankt-Peterburg, Izd-vo "Piter", 2003, 240 ej. (In Russian)
28. Stepashin V. M., Osnovanie primeneniya uslovnogo osuzhdeniya // Vestnik OmGU, Seriya "Pravo", Omsk, Izd-vo FGBOU VO "OmGU im. F. M. Dostoevskogo", 2013, No.1 (34), ej. 180-181. (In Russian)
29. Tarasov A. N., Uslovnoe osuzhdenie po zakonodatelstvu Rossii, Sankt-Peterburg, Izd-vo "Yuridicheskiy tsentr Press", 2004, 190 ej. (In Russian)
30. Erkhitueva T. I., Znachenie uslovnogo osuzhdeniya dlya dostizheniya tseley nakazaniya// Gumanitarnye, sotsialno-ekonomicheskie i obshchestvennye nauki, Krasnodar, Izd-vo "Nauka i obrazovanie", 2016, No.5, ej. 137-139. (In Russian)

Арам Сааакян
Помощник заместителя министра юстиции Республики Армения

РЕЗЮМЕ

Некоторые проблемы института условного неприменение наказания

В статье анализируются особенности применения института условного неприменения наказания. Цель исследования заключается в комплексном рассмотрении теоретических и практических проблем данного института в Республике Армения. В работе подробно исследуются отдельные компоненты указанного института, в частности его правовая природа, значение в контексте целей наказания, а также основания и условия его неприменения. В качестве методологической основы исследования использованы положения действующего и ранее действовавшего Уголовного кодекса Республики Армения, решения Кассационного суда Республики Армения, а также международный опыт. Результаты анализа позволяют выявить существующие проблемы и направления совершенствования правового регулирования института условного неприменения наказания.

***Ключевые слова**: наказание, условное неприменение наказания, суд, приговор, лицо, совершившее преступление.*

Aram Sahakyan
Ministry of Justice of the Republic of Armenia,
Assistant to the Deputy Minister

SUMMARY

Some issues of conditional punishment

The article examines certain aspects of the application of the institution of conditional non-imposition of punishment. It provides a comprehensive analysis of the theoretical and practical issues related to this institution in the Republic of Armenia. Particular attention is given to its individual components, including its legal nature, its significance in the context of the purposes of punishment, and the grounds and conditions for its non-application. The analysis is based on the provisions of both the current and the former Criminal Codes of the Republic of Armenia, as well as on the decisions of the Court of Cassation of the Republic of Armenia and relevant international experience.

***Key words**: punishment, conditional non-application of punishment, court, verdict, offender*.

Ընագիրը ներկայացվել է 13.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ՖԻԼԻԱՆԱ ԲԵԼԼՈՒՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի
պաշտպանության վարչության դատախազ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ,
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կիրառվող տնտեսական սանկցիաների իրավական և գործնական վերլուծությանը: Սանկցիաները դիտարկվում են միջազգային անվտանգության ապահովման իրավական գործիքակազմի մաս, սակայն դրանց կիրառման արդյունավետության, իրավաչափության և համաչափության հարցերը շարունակում են մնալ բանավեճի առարկա: Հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում սանկցիաների հումանիտար հետևանքներին, որոնց թվին են դասվում բնակչության կենսապահովման պայմանների խաթարումը, դեղորայքի, սննդի և ռեսուրսների պակասը: Վերլուծվում են նաև ընտրողական կիրառման դեպքերը, երբ սանկցիաները դառնում են քաղաքական ճնշման միջոց: Հոդվածում համեմատական վերլուծություն է իրականացվում Եվրոպական միության և ԲՌԻՔՍ երկրների սանկցիաների մոտեցումների միջև: Ներկայացվում են ՄԱԿ-ի սանկցիաների համակարգի լեգիտիմության ճգնաժամի հիմնական պատճառները և ներկայացվում են բարեփոխումների առաջարկություններ, օրինակ՝ հումանիտար բացառությունների ամրագրում, վետոյի իրավունքի սահմանափակում հումանիտար հարցերում և սանկցիաների ազդեցության մոնիթորինգային համակարգի ստեղծում:

Հիմնաբառեր- *Անվտանգության խորհուրդ, տնտեսական սանկցիաներ, իրավաչափություն, վետոյի իրավունք, մոնիթորինգ, միջազգային մարդասիրական իրավունք, ընտրողականություն, բարեփոխումներ:*

Ներածություն

Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը (այսուհետ նաև՝ ՄԱԿ-ի ԱԽ) հանդիսանում է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գլխավոր մարմինը, որն inter alia, իրավունք ունի պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունել այդ կազմակերպության անդամ պետությունների համար:

Տնտեսական սանկցիաները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի իրավական ներգործության գործիքակազմի կարևորագույն միջոցներից են: Վերջիններիս նպատակը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումն է:

Այդպես էր մինչև երկբևեռ աշխարհակարգի փլուզումը: Ներկա բարդ աշխարհակարգային զարգացումների պայմաններում ցավալիորեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սանկցիաների կիրարկումը իրավական ներգործության միջոցից աստիճանաբար վերածվեց քաղաքական բնույթի հարցեր լուծող, քաղաքական ճնշումներ իրականացնող գործիքի: Այս հանգամանքը ոչ միայն չի նպաստում առկա բարդ միջազգային բնույթի ռազմաքաղաքական խնդիրների լուծմանը, այլև հաճախ դրանք ավելի է խորացնում: Որպես ապացույց կարելի է վկայակոչել այն փաստը, որ եթե Ղարաբաղյան 44 օրյա պատերազմից առաջ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում հայ աղբրեջանական հակամարտության հարցի քննարկման ժամանակ Անվտանգության խորհուրդը առավել սրտացավ վերաբերմունք դրսևորեր հայ-աղբրեջանական հիմնախնդրի լուծման հարցում ապա, այդ պատերազմը կարող էր նաև տեղի չունենալ:

Միջազգային կյանքում տեղի ունեցող ներկա ապակայունացնող բուռն զարգացումների համատեքստում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սանկցիաների արդյունավետության հետ կապված խնդիրների քննարկումները, ինչպես քաղաքագետների, այնպես էլ իրավաբանների համար ձեռք են բերել կենսական կարևոր նշանակություն:

Սույն հետազոտության նպատակը միջազգային իրավունքի շրջանակում ՄԱԿ-ի ԱԽ տնտեսական սանկցիաների միջազգային իրավական բնույթի վերլուծությունն է՝ պարզելու համար դրանց իրավաչափության, արդյունավետության, մարդասիրական հետևանքների և այդ սանկցիաների հետագա բարեփոխման հետ կապված հիմնախնդիրները բացահայտելու համար:

Հետազոտության խնդիրներն են վերլուծել ՄԱԿ-ի ԱԽ սանկցիաների իրավական հիմքերը (հիմնվելով Կանոնադրության 41-րդ հոդվածի վրա), բացահայտել կիրառվող սանկցիաների հիմնական թերությունների բնույթը, համեմատական վերլուծություն իրականացնել Եվրոպական միության (այսուհետ նաև՝ ԵՄ) և Հինգ երկների խմբի (այսուհետ նաև՝ ԲՌԻՔՍ) սանկցիաների քաղա-

www.armjurisprudence.com

քականության միջև: Ուսումնասիրել մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտման հետ կապված հարցերը՝ տնտեսական սանկցիաների համատեքստում, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ՝ տնտեսական սանկցիաների գործող համակարգի արդիականացման ուղղությամբ:

Հետազոտությունն իրականացվել է համեմատական, համակարգային և վերլուծական մեթոդներով: Ուսումնասիրվել են հիմնախնդրին առնչվող միջազգային պայմանագրերը, ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերը, գիտական գրականությունը, ինչպես նաև տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների սանկցիաների հետ կապված քաղաքականության պրակտիկան:

Հատուկ ուշադրություն է դարձվել տնտեսական սանկցիաների հումանիտար ազդեցության գնահատման մեթոդաբանությանը՝ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում:

Ուսումնասիրության տեսական հիմքը ներառում է միջազգային հանրային իրավունքի տեսությունը, միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները, ՄԱԿ-ի և տարածաշրջանային կազմակերպությունների սանկցիաների գործնական կիրառման վերաբերյալ գիտական աշխատությունները և զեկույցները:

Ուսումնասիրության գործնական նշանակությունն այն է, որ առաջարկվում են բարեփոխումների մոդելներ, որոնք կարող են նպաստել ՄԱԿ-ի սանկցիաների կառուցակարգի արդիականացմանը, միջազգային իրավունքի սկզբունքների պահպանմանն ու տնտեսական սահմանափակումների բացասական հետևանքներից քաղաքացիական բնակչության պաշտպանությանը:

Հետազոտություն

Տնտեսական սանկցիաները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի իրավական գործիքակազմի կարևոր մաս են կազմում, որոնք ուղղված են միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը: Կանոնադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ *Անվտանգության խորհուրդը կարող է կիրառել ուժի կիրառման հետ չկապված միջոցներ, այդ թվում՝ տնտեսական սահմանափակումներ, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիոհաղորդակցության, այլ ուղիների կասեցում, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների խզում՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու նպատակով*[1]:

Անվտանգության խորհրդի լիազորությունները բացառիկ են: ՄԱԿ կանոնադրությամբ որևէ այլ մարմին նման լիազորությամբ օժտված չէ: Թեև Գլխավոր ասամբլեան կարող է 7-րդ գլխով սահմանված դեպքերում բանաձևեր ընդունել, սակայն ասամբլեայի գործողությունները սահմանափակվում են խորհրդատվական առաջարկություններ ներկայացնելու լիազորությամբ[2]: Գլխավոր ասամբլեան չի կարող սանկցիաներ կիրառել, սակայն կարող է կոչ անել կամ խնդրել Անվտանգության խորհրդին գործել 7-րդ գլխով սահմանված կարգով: Ընդ որում՝ Անվտանգության խորհուրդն ինքն է որոշում՝ գործել այդպես, թե ոչ: Անվտանգության խորհրդի՝ սանկցիայի ոլորտում լիազորությունները հայեցողական են, այսինքն՝ իրավասու է որոշելու՝ արդյոք այս կամ այն իրադարձությունը կհանգեցի սանկցիայի կիրառման, թե ոչ, ինքը պարտավոր է արդյոք կիրառել սանկցիա, թե ոչ, և եթե այո, ապա ինչպիսի միջոցներով: Անվտանգության խորհուրդը կարող է նաև չեղարկել սանկցիաները: Չնայած այս ամենին՝ 7-րդ գլխի գործարկումը ոչ լրիվ է հայեցողական: Սանկցիայի լիազորությունները պետք է մնան կանոնադրության նպատակների և սկզբունքների շրջանակում: Անվտանգության խորհրդի սանկցիայի կիրառման լիազորությունները չեն ենթարկվում Գլխավոր ասամբլեայի կողմից քաղաքական հսկողության կամ Միջազգային դատարանի կողմից իրավական հսկողության:

ՄԱԿ կանոնադրության 7-րդ գլուխը սահմանում է միջազգային սանկցիաների կիրառման ընթացակարգը: Ասվածի համատեքստում առաջանում է տրամաբանական հարց. արդյոք մինչ կանոնադրության 7-րդ գլխով սահմանված սանկցիաների կիրառումը Անվտանգության խորհուրդը պետք է սպառի՞ կանոնադրության վեճերի խաղաղ կարգավորումների միջոցները՝ կանոնադրության 6-րդ գլխին համապատասխան: Այլ կերպ ասած, արդյոք սանկցիաները ծայրահեղ միջոց են: Այս խնդիրը ընդգծվեց Գլխավոր ասամբլեայի կողմից, երբ վերջինս հայտարարեց. «Սանկցիաներ պետք է կիրառել ծայրահեղ զգուշավորությամբ, երբ կանոնադրությամբ նախատեսված այլ խաղաղ միջոցներ անհաղեկվատ են»[3]: Անվտանգության խորհուրդը ևս քննարկեց այդ հարցը և բավական դրական արձագանքեց, սակայն ո՛չ Գլխավոր ասամբլեան, ո՛չ Անվտանգության խորհուրդը չընդունեց համապատասխան բանաձևեր: Կանոնադրության 7-րդ գլուխը ակտիվացնելու համար Անվտանգության խորհուրդը պետք է կանոնադրությամբ նախատեսված քայլերը կատարի: Այսպես, երբ Անվտանգության խորհուրդը, Կանոնադրության 39-րդ հոդվածի համաձայն, միջազգային խաղաղության դեմ սպառնալիք, խաղաղության խախտում կամ ագրեսիայի ակտ է նկատում, նա 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշում է կայացնում՝ միջազգային խաղաղություն և անվտանգություն հաստատելու կամ դրանք ամրապնդելու համար:

39-րդ հոդվածը սանկցիաների մեխանիզմին է վերաբերում: Նախ Անվտանգության խորհուրդը

www.ardaradatutyunjournal.com

պետք է հայտնաբերի, պարզի խաղաղության դեմ սպառնալիքը, խաղաղության խախտումը, ագրեսիայի ակտը: Նշված երեք դեպքերը դասակարգվում են ըստ աշխարհի խաղաղության վրա դրանց ազդեցության՝ նվազ վտանգավորից մինչև ամենավտանգավորը՝ առաջինը խաղաղության դեմ սպառնալիքը, այնուհետև խաղաղությունը խախտելը և երրորդ՝ ագրեսիան: ՄԱԿ կանոնադրությամբ թեև չկան նշված դեպքերի բնորոշումները, սակայն կարելի է նշված երեք դեպքերից յուրաքանչյուրի կիրառման ոլորտը որոշել՝ հիմնվելով Անվտանգության խորհրդի նախորդ փորձի վրա: Նախ «խաղաղություն» հասկացությունը չի սահմանափակվում միայն միջազգային ռազմական բախումների բացակայությամբ: Ժամանակակից հասկացողությամբ այն պահանջում է պետությունների քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Գլխավոր ասամբլեան «ագրեսիա» հասկացությունը բնորոշել է 1974թ. դեկտեմբերի 14-ին ընդունված 3314 (XXIX) բանաձևով: Խնդիրն այն է, որ Անվտանգության խորհուրդը խուսափում է «ագրեսիա» հասկացությունն օգտագործելուց և օգտագործում է դրան մոտ արտահայտություններ, օրինակ՝ «ագրեսիայի գործողություններ», «ագրեսիայի ակտեր», «զինված ներխուժում»: «Խաղաղության խախտում» հասկացությունը վերաբերում է առավել նվազ վտանգավոր դեպքերին, որը կապված է ուժի կիրառման հետ, բայց պարտադիր չէ՝ ռազմական: Դա ավելի լայն հասկացություն է, որը վերաբերում է ինչպես գործողություններին, այնպես էլ դեպքերին: Նույնիսկ եթե խաղաղության խախտումը ագրեսիայի ակտի հետևանք է, Անվտանգության խորհուրդը կարող է այն անվանել «խաղաղության խախտում»: Այդ առավել չեզոք արտահայտությունը հաճախ դիվանագիտական նկատառումներից ելնելով է օգտագործվում: Դա Անվտանգության խորհրդին թույլ է տալիս ագրեսիայի համար պատասխանատու սուբյեկտին որոշելուց խուսափել[4]: Խաղաղության սպառնալիքը խաղաղության դեմ իրական (և ոչ պոտենցիալ) վտանգը բնորոշող առավել լայն հասկացություն է: Անվտանգության խորհրդի պրակտիկան խաղաղության դեմ սպառնալիքի կոնցեպցիայի կիրառումը ցույց է տվել բազմաթիվ դեպքերում: Արդյունքում Անվտանգության խորհրդի պրակտիկան նպաստել է այն դեպքերի շրջանակի ընդլայնմանը, որոնք կարող են հանգեցնել 7-րդ գլխին համապատասխան կիրառվող սակցիաների՝ դրանք են ազգերի ինքնորոշման իրավունքը, ներքին ռազմական բախումները, զենքի տարածումը, մարդու իրավունքների խախտումը, ժողովրդավարական լեգիտիմությունը խարխլելը, ահաբեկչությունը: Անվտանգության խորհրդի բանաձևերի որոշիչ լինելը վերջինիս սանկցիայի քաղաքականության անհրաժեշտ տարրն է, իսկ որոշիչ բնույթը հիմնված է Կանոնադրության 25-րդ հոդվածի վրա:

Սանկցիաները դիտարկվում են որպես միջանկյալ միջոց՝ զինված միջամտության և դիվանագիտական նախազգուշացման միջև, սակայն դրանց գործնական կիրառումը խնդրահարույց և հասկասական է: Նախ միջազգային իրավունքի շրջանակում ցանկացած սահմանափակող միջոց պետք է լինի համաչափ, իրավաչափ և ունենա հստակ նպատակ՝ ուղղված իրավախախտ որոշակի վարքագծի փոփոխմանը[5]: Իսկ տնտեսական սանկցիաները՝ հատկապես համապարփակ բնույթ ունեցողները, հաճախ դուրս են գալիս այդ չափանիշներից՝ վերածվելով պատժի կոլեկտիվ ձևի:

Օրինակ՝ Իրաքի նկատմամբ 1990-ականներին կիրառված սանկցիաները հանգեցրին հումանիտար աղետի՝ սպառելով երկրի առողջապահական, պարենային համակարգը և հանգեցնելով քաղաքացիական մահացության կտրուկ աճի[6]: Սանկցիաների նման կիրառումը ոչ միայն կասկածի տակ է դնում դրանց արդյունավետությունը, այլ նաև դիտարկվում է որպես մարդու հիմնարար իրավունքների խախտում՝ հակասելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված նպատակներին:

Նման պայմաններում օրինականության և նպատակահարմարության սահմանը դառնում է մշուշոտ: Տնտեսական սանկցիաներն արդարացված են միայն այն դեպքում, երբ ուղեկցվում են իրավական գնահատման համակարգով և հումանիտար ազդեցության կանխատեսմամբ»: Իրականում նման համակարգի բացակայությունը հաճախ սանկցիաները վերածում է «միջպետական հաշվեհարդարի» գործիքի:

Այս համատեքստում անհրաժեշտ է հստակեցում թե՛ իրավական, թե՛ մեթոդաբանական մակարդակում: Սանկցիաները կարող են լինել արդյունավետ, եթե զուգորդվում են միջազգային իրավունքի սկզբունքների պահպանումով, ներառյալ՝ ինքնիշխանության հարգումը, գործերին միջամտելու անթույլատրելիությունը և համաչափության պահանջը: Հակառակ պարագայում դրանք պարզապես վերածվում են միջազգային ճնշման կառուցակարգի, ոչ թե միջազգային իրավունքի պաշտպանության գործիքի:

Տնտեսական սանկցիաները՝ որպես միջազգային պատասխան քայլ, կիրառվել են մի շարք պետությունների նկատմամբ տարբեր աշխարհաքաղաքական հանգամանքներում: Սակայն դրանց արդյունավետությունը և իրավաչափությունը հաճախ վիճարկվում են իրավաբանական, ինչպես նաև հումանիտար հետևանքների գնահատման մակարդակներում:

Ինչպես նշվեց, Իրաքի դեմ կիրառված սանկցիաները (1990–2003) համարվում են միջազգային

իրավունքի և մարդասիրական իրավունքի պատմության ամենախնդրահարույց օրինակներից մեկը: Սանկցիաները կիրառվել էին ի պատասխան Քուվեյթի օկուպացիայի՝ նպատակ ունենալով տապալել Սադդամ Հուսեյնի վարչակարգը: Սակայն դրանք հանգեցրին առողջապահական համակարգի փլուզման, սննդի և դեղորայքի մատակարարման դադարեցման, ինչի հետևանքով, ըստ ՄԱԿ-ի տվյալների, մահացավ ավելի քան կես միլիոն երեխա[7]: Այս իրավիճակը քննադատության արժանացավ իրավապաշտպանների կողմից, դիտարկվեց որպես կոլեկտիվ պատժի դրսևորում:

Իրանի դեմ կիրառվող սանկցիաները, որոնք նպատակ ունեն սահմանափակել միջուկային ծրագրի իրագործումը, մասնակի հաջողության են հասել: Դրանք առաջ բերեցին տնտեսական ճնշում, նպաստեցին քաղաքական բանակցությունների վերականգնմանը: Ասվածով հանդերձ պետք է նշել, որ այդ սանկցիաները ևս մեծ վնաս հասցրեցին բնակչության սոցիալական վիճակին՝ առաջացնելով դեղորայքի պակաս, աղժույթի արժեզրկում և ֆինանսական մեկուսացում[8]: Իրանի օրինակը վկայում է, որ սանկցիաները երբեմն չեն հասնում իրենց նպատակին՝ ուղղված միջազգային մտահոգության օբյեկտ հանդիսացող ծրագրերի, տվյալ դեպքում՝ միջուկային ծրագրի իրագործման դադարեցմանը: Իրանի պարագայում ամրապնդվեցին ռեժիմի ինքնամեկուսացումն ու տնտեսության պաշտպանողականությունը:

Հյուսիսային Կորեայի նկատմամբ կիրառված սանկցիաները շատ խիստ ձևերով ներառել են էներգառեսուրսների և մատակարարման հումքի արգելափակումը: Սակայն ինչպես փաստում են փորձագետները, դրանց ազդեցությունը սահմանափակվել է հիմնականում բնակչության վրա՝ առանց էական ազդեցություն ունենալու քաղաքական վերնախավի վարքագծի վրա[9]: Կիբերանվտանգության և ռազմական փորձարկումների շարունակականությունը վկայում է սանկցիաների անարդյունավետության մասին:

Վենեսուելան, որը սանկցիաների օբյեկտ դարձավ մարդու իրավունքների խախտումների և ընտրությունների կեղծման պատճառով, հայտնվեց խոր տնտեսական և հումանիտար ճգնաժամի մեջ: Հիպերինֆլյացիա, սննդամթերքի պակաս և զանգվածային միգրացիա՝ ավելի քան 6 միլիոն փախստական: Չնայած սանկցիաները, ըստ ԱՄՆ-ի հայտարարությունների, ուղղված էին միայն քաղաքական վերնախավին, փաստացի դրանք ազդեցին ողջ ազգաբնակչության վրա[10]:

Այս դեպքերը վկայում են, որ սանկցիաները հազվադեպ են հասնում իրենց հռչակած նպատակներին, իսկ դրանց կիրառման արդյունքներում գերակշռում են սոցիալական և մարդասիրական բացասական հետևանքները: Տնտեսական սանկցիաների կիրառումը պետք է գնահատվի ոչ միայն արդյունքի, այլև վնասի հիման վրա:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների կայացման գործընթացում կենտրոնական դեր է խաղում դրա մշտական անդամների կողմից իրականացվող վետոյի իրավունքը, որը նախատեսված է Կանոնադրության 27-րդ հոդվածով: Վետոն ի սկզբանե նախատեսված էր որպես գերտերությունների համաձայնության միջոցով խաղաղության պահպանման երաշխիք, սակայն ժամանակակից աշխարհաքաղաքական պրակտիկան ցույց է տալիս, որ այն հաճախ վերածվում է միակողմանի շահերի պաշտպանության գործիքի:

Ամենահայտնի օրինակներից մեկը Իսրայելի նկատմամբ կիրառվող պաշտպանական վետոն է՝ ԱՄՆ-ի կողմից: Տասնյակ բանաձևեր, որոնք դատապարտել են Իսրայելի գործողությունները Գազայի հատվածում, արգելափակվել են ԱՄՆ-ի վետոյի միջոցով՝ անկախ դրանց իրավաբանական հիմնավորվածությունից կամ միջազգային աջակցությունից[11]:

Նմանատիպ է Ռուսաստանի վետոյի կիրառումը Սիրիայի հարցում: Ռուսաստանի Դաշնությունը բազմիցս խափանել է բանաձևեր, որոնք ուղղված էին Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների դատապարտմանը կամ հետաքննության նախաձեռնմանը: Արդյունքում հումանիտար ճգնաժամը շարունակվել է առանց ՄԱԿ-ի գործուն արձագանքի:

Չինաստանն իր հերթին բազմիցս արգելափակել է բանաձևերը Հյուսիսային Կորեայի դեմ՝ հատկապես երբ խոսքը վերաբերում էր տնտեսական սանկցիաների խստացմանը: Չինաստանի դիրքորոշումը պայմանավորված է աշխարհաքաղաքական հավասարակշռությամբ և սեփական անվտանգության առաջնահերթություններով, այլ ոչ թե միջազգային[12] իրավունքի պաշտպանության հրամայականով:

Այս իրավիճակներում վետոն դառնում է ոչ թե պաշտպանիչ մեխանիզմ համընդհանուր խաղաղության համար, այլ քաղաքական գործիք, որն անհավասարակշռություն է ստեղծում Անվտանգության խորհրդի ներսում և խաթարում է այդ կառույցի լեգիտիմությունը[13]: Ինչպես նշում է Վայսը՝ «վետոյի իրավունքը ՄԱԿ-ի անարդյունավետության հիմնական կառուցակարգային պատճառներից մեկն է, որը թույլ է տալիս ուժեղներին ապահովել իրենց և դաշնակիցների անպատժելիությունը»[14]:

Այս իրավիճակը խիստ խնդիր է ստեղծում միջազգային իրավունքի հավասար կիրառման տեսանկյունից: Այն պետությունները, որոնք չունեն վետո ունեցող «հովանավոր», ենթարկվում են պատժամիջոցների արագ և առանց հակադարձումների, մինչդեռ մյուսները մնում են անպատիժ՝

անկախ իրենց կողմից թույլ տրված խախտումներից:

Միջազգային մարդասիրական իրավունքը, իր հիմքում ունենալով մարդկայնության պաշտպանությունը զինված հակամարտությունների ժամանակ, միաժամանակ սահմանում է նաև ընդհանուր մարդասիրական սկզբունքներ, որոնք առնչվում են նաև ոչ ռազմական, բայց զանգվածային ազդեցություն ունեցող միջոցների կիրառմանը, ինչպիսին են տնտեսական սանկցիաները: Հիմնական սկզբունքներից են համաչափության, ռազմական անհրաժեշտության բացակայության, հումանիտար բացառությունների, ինչպես նաև քաղաքացիական անձանց պաշտպանության սկզբունքները[15]:

Սանկցիաները՝ հատկապես համապարփակները, հաճախ հանգեցնում են տնտեսական ու սոցիալական համակարգերի փլուզման, առողջապահական և կրթական ծառայությունների անհասանելիության, սննդամթերքի և կենսական ռեսուրսների պակասի: Այս բոլոր երևույթներն ըստ միջազգային մարդասիրական իրավունքի, դիտարկվում են որպես բնակչության կոլեկտիվ պատժի տարբեր[16]:

Իրաքի օրինակն այն ամենախոսուններից է, որտեղ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տնտեսական սանկցիաները հանգեցրին հումանիտար աղետի: ՄԱԿ-ի կողմից հաստատված՝ «Oil-for-Food» կամ «Նավթ՝ հանուն սննդի» ծրագիրը, որն իբրև թե պետք է մեղմեր բնակչության տառապանքը, չկարողացավ կանխել սոցիալ-առողջապահական համակարգի կազմալուծումը, ուստի այդ ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի կողմից Իրաքին թույլատրված այլ գործունեության հետ մեկտեղ վերջինիս հնարավորություն ընձեռվեց հումանիտար ապրանքներ ձեռք բերելու նպատակով վաճառել նավթ:

Այս բոլորը վկայում է սանկցիաների համակարգային ազդեցության խորության և միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտման հավանականության մասին[17]:

Հյուսիսային Կորեայում, որի նկատմամբ տնտեսական սանկցիաները ներառում են անգամ էներգետիկ ռեսուրսների և պարենային ապրանքների ներկրման սահմանափակումը, նկատվում է բնակչության սովի աճ և առողջապահական համակարգի հասանելիության անկում: Սանկցիաների քաղաքական նպատակը՝ միջուկային սպառազինության վերահսկումը, մնում է չիրագործված, և փաստացի միայն հասարակությունն է կրում տնտեսական ճնշման հիմնական հետևանքները[18]:

Միջազգային մարդասիրական իրավունքի հիման վրա գործող Կարմիր խաչի միջազգային կոմիտեի 2020 թ. զեկույցում հատուկ շեշտադրվում է, որ «սանկցիաները չպետք է վնասեն քաղաքացիական բնակչությանը, և պետք է ունենան հստակ հումանիտար բացառություններ»[19]: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ նման բացառությունները հաճախ «փաստաթղթային» բնույթ են ունենում միայն, իսկ կիրառման մեխանիզմները կա՛մ ուշացած են կիրառվում, կա՛մ անարդյունավետ են լինում:

Նման պայմաններում իրավաբանորեն արդարացված է այն հարցադրումը, թե արդյոք միջազգային մարդասիրական իրավունքը կարող է գործնականում պաշտպանել բնակչությանը տնտեսական «մեղմ ուժի» գործիքներից: Եթե ոչ, ապա անհրաժեշտ է, որ միջազգային իրավունքի զարգացումը ընթանա այդ ուղղությամբ՝ ամրագրելով նոր մոտեցումներ՝ սանկցիաների հումանիտար հետևանքների վերահսկման կառուցակարգերի մասով:

Տնտեսական սանկցիաները տարբեր միջազգային կազմակերպություններում ձևավորվում և կիրառվում են տարբեր մեթոդաբանություններով, իրավական հիմքերով և քաղաքական մոտեցումներով: Համեմատական վերլուծությունը երեք հիմնական դերակատարների՝ ՄԱԿ-ի, Եվրոպական միության (ԵՄ) և ԲՌԻՔՍ բլոկի շրջանակներում ցույց է տալիս թե՛ առավելությունները, թե՛ սահմանափակումները, որոնք կարող են հիմք հանդիսանալ բարեփոխումների մշակման համար:

Այսպես, ինչպես նշվեց, ՄԱԿ-ի սանկցիաների համակարգը հիմնվում է Կանոնադրության 41-րդ հոդվածի վրա և գործարկվում է Անվտանգության խորհրդի կողմից: Որոշումների ընդունումը պահանջում է 9 կողմ ձայն և մշտական անդամներից որևէ մեկի չկիրառված վետո: Սակայն այս համակարգի հիմնական թերությունը հենց քաղաքական շահերով պայմանավորված վետոյի իրավունքն է, ինչը հաճախ հանգեցնում է սանկցիաների անարդար բաշխման, ընտրովի կիրառման և համաչափության բացակայության[20]:

Եվրոպական միությունում սանկցիաները կիրառվում են ըստ նախապես սահմանված իրավական հիմքերի, օրինակ՝ հիմնադիր պայմանագրերի, ինչը տարբերում է այս համակարգը ՄԱԿ-ի սանկցիաներից, որոնք հաճախ կախված են լինում քաղաքական որոշումներից: ԵՄ-ն իրականացնում է թիրախային (smart) սանկցիաներ, որոնք ուղղված են կոնկրետ անձանց, կազմակերպությունների կամ խմբերի դեմ՝ խուսափելով համապարփակ տնտեսական վնասից[21]: Կարևոր առանձնահատկություն է նաև սանկցիաների վերանայման պարբերականությունը և արդարադատության դատարանի միջոցով բողոքարկման հնարավորությունը, ինչը իրավական պաշտպանության գործիք է:

Օրինակ՝ Եվրոպական դատարանի որոշումներով մի քանի անգամ չեղարկվել են սանկցիաներ, քանզի պարզվել է, որ առկա չեն բավարար ապացույցներ կամ խախտվել է արդար դատաքննու-

թյան սկզբունքը[22]: Այսպիսով, ԵՄ-ն ունի ավելի «իրավականորեն վերահսկելի» սանկցիաների համակարգ:

ԲՌԻՔՍ պետությունները, չնայած չունեն համատեղ սանկցիաների համակարգ, որպես քաղաքական բլոկ հանդես են գալիս սանկցիաների չկիրառման և բազմաբևեռության գաղափարով: Ըստ ԲՌԻՔՍ քաղաքականության կենտրոնի՝ «միակողմանի սանկցիաները, առանց ՄԱԿ-ի համաձայնության, խախտում են միջազգային իրավունքի սկզբունքները և նպաստում են գլոբալ անկայունությանը»[23]: ԲՌԻՔՍ երկրների միջև համագործակցությունը ուղղված է սանկցիաների ազդեցության մեղմացմանն ու այլընտրանքային տնտեսական ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորմանը (օրինակ՝ ԲՌԻՔՍ բանկը, արժութային փոխանակման համակարգերը):

Համեմատության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ ՄԱԿ-ը ունի համընդհանուր լեգիտիմություն, բայց բախվում է քաղաքական շահերի առաջնահերթության խնդրին, ԵՄ-ն ապահովում է ավելի մեծ իրավական վերահսկելիություն և համաչափություն, իսկ ԲՌԻՔՍ-ը հանդես է գալիս իբրև հակազդեցություն սանկցիաների չարաշահման դեմ՝ խթանելով ազգային ինքնիշխանության առաջնայնության գաղափարները:

Այս վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ՄԱԿ-ի համակարգը կարող է բարելավվել՝ որպես օրինակելի ձև հիմքում ունենալով ԵՄ-ի թափանցիկությունը և մեխանիզմները, ինչպես նաև հաշվի առնելով ԲՌԻՔՍ-ի բարձրաձայնած միջազգային հավասարության խնդիրները:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սանկցիաների համակարգը ներկայումս լեգիտիմության և կառուցակարգային ճգնաժամի առաջ է: Ըստ Վեյսի՝ «Անվտանգության խորհրդի գործունեության արդյունավետությունը և իրավաչափությունը խաթարվում են քաղաքական շահերի գերակայությամբ, որը վետոյի իրավունքի միջոցով անպատժելիություն է ստեղծում որոշ պետությունների համար»[24]:

Համաձայնվելով Վեյսի դիրքորոշմանը՝ նման պայմաններում գտնում ենք, որ անհրաժեշտ են հետևյալ ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք կվերահաստատեն միջազգային իրավունքի գերակայությունն ու արդարության սկզբունքը.

1. Սանկցիաների կիրառման հստակ չափորոշիչների մշակում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պետք է հաստատի նախադեպային իրավական չափորոշիչներ՝ սանկցիաներ կիրառելու հիմքերի, նպատակների և համաչափության վերաբերյալ: Այս չափանիշները պետք է լինեն թափանցիկ, նախապես սահմանված և կիրառվեն հավասարապես՝ անկախ քիրախ պետության քաղաքական կարգավիճակից:

2. Հումանիտար բացառությունների անբաժանելի ներառում:

Յուրաքանչյուր սանկցիայի գործարկման մեջ պարտադիր պետք է ներառվի հումանիտար ազդեցության նախնական գնահատում և համապատասխան միջոցառումների համակարգ՝ քաղաքացիական բնակչության պաշտպանությունը երաշխավորելու նպատակով[25]:

3. Վետոյի իրավունքի սահմանափակում՝ հումանիտար խնդիրների պարագայում:

Պետք է քննարկվի Կանոնադրության 27-րդ հոդվածի վերանայում, համաձայն որի՝ մարդասիրական աղետի կանխման կամ հետաքննության նպատակով Անվտանգության խորհրդի որոշումները չպետք է վետոյի ենթարկվեն:

4. Անկախ մոնիթորինգային և գնահատման մեխանիզմ:

Անհրաժեշտ է ստեղծել ՄԱԿ-ի անկախ մշտադիտարկման կառույց, որն իրականացնի սանկցիաների ազդեցության պարբերական գնահատում՝ տնտեսության, մարդու իրավունքների և միջազգային խաղաղության վրա: Այդ տվյալները պետք է հասանելի լինեն անդամ պետություններին և ծառայեն որպես քաղաքական որոշումների վերանայման հիմք:

5. Սանկցիաների բողոքարկման միջազգային գործընթաց:

Պետք է ներդրվի ատյան, օրինակ՝ Միջազգային դատարանի կամ առանձին արբիտրաժային մարմնի շրջանակում, որտեղ սանկցիայի ազդեցության տակ հայտնված պետությունը կարողանա բողոքարկել դրա իրավաչափությունը՝ մարդու իրավունքների խախտման կամ անհամաչափության հիմքով:

6. Սանկցիաների գործարկման վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի վերահսկողական մեխանիզմ:

Անշուշտ, Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղության հիմնական պատասխանատուն է, սակայն Գլխավոր ասամբլեայի մասնակցությունը կարող է բարձրացնել գործընթացի ժողովրդավարությունն ու հավասարակշռության ապահովումը՝ օրինակ սանկցիայի հարցի վերաբերյալ խորհրդատվական քվեարկությամբ:

Այս առաջարկները միտված են ոչ թե թուլացնելու ՄԱԿ-ի մանդատը, այլ վերահմաստավորելու դրա գործառույթները արդիական մարտահրավերներին համապատասխան: Այդպիսով, սանկցիաները կարող են վերադառնալ իրենց բուն նպատակին՝ միջազգային խաղաղության պահպանմանն ու իրավունքի գերակայության ապահովմանը:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ այս առաջարկությունները հնարավոր չէ կյանքի կոչել

www.ardaradatutyunjournal.com

առանց ՄԱԿ-ի կանոնադրությունը վերանայելու, քանզի վերջինիս դրույթները, այդ թվում՝ վետոյի իրավունքի իրացման հետ կապված, իմպերատիվ են, հայեցողական լիազորության հնարավորություն չեն տալիս:

Այսպես, ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ-ի կանոնադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ Անվտանգության խորհրդում որոշումների ընդունումը պահանջում է ոչ միայն 9 կողմ ձայն, այլև մշտական հինգ անդամների համաձայնությունը, ինչը վետոյի իրացման հիմքն է:

Միաժամանակ 108-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի կանոնադրության փոփոխությունները հաստատվում են Գլխավոր ասամբլեայի առաջարկությամբ անդամ պետությունների 2/3-ի կողմից և հետո վավերացվում են Անվտանգության խորհրդի մշտական անդամների կողմից: Այսինքն՝ կանոնադրության փոփոխության կարգն ինքնին իրավական լուրջ խնդրի է բախվում, քանզի այդ փոփոխությունը պետք է հաստատի նաև այն պետությունը կամ պետությունները, որի (որոնց) վետոյի իրավունքը փորձում են սահմանափակել:

Նման պայմաններում վետոյի իրավունքը շրջանցելու հնարավոր տարբերակները կարող են հետևյալները լինել.

Նախ՝ պետությունների կամ միջազգային ինստիտուցիոնալ կառույցների կողմից վետոյի իրավունքի չարաշահման, ինչպես նաև Անվտանգության խորհրդի անարդյունավետության վերաբերյալ պարբերաբար հայտարարություններ տարածելը հնարավոր է ի վերջո հանգեցնի նրան, որ ՄԱԿ-ը իր ներսում բարեփոխումներ կատարի, այդ թվում՝ փոփոխելով Կանոնադրությունը:

Վետոյի իրավունքի հետ կապված հիմնախնդրի լուծման նս մեկ միջոց կարող է լինել Գլխավոր ասամբլեայի կողմից արտահերթ նստաշրջանի հրավիրումը և տվյալ հարցի քննարկումը և որոշումների ընդունումը: Թեև նշված որոշումները կամ առաջարկությունները չունեն իրավաբանորեն պարտադիր բնույթ, սակայն առնվազն քաղաքական, բարոյական լեգիտիմություն են հաղորդում որոշումներին՝ միջազգային ճնշում ստեղծելով: Օրինակ՝ երբ Ռուսաստանի Դաշնությունը լայնածավալ հարձակումներ սկսեց Ուկրաինայի տարածքների վրա, Անվտանգության խորհուրդն ընդունեց բանաձևեր՝ դատապարտելով այդ գործողությունները, սակայն Ռուսաստանի վետոյի պատճառով այն չհաստատվեց: Նման պայմաններում Գլխավոր ասամբլեան հրավիրեց իր 11-րդ արտահերթ նստաշրջանը, որի ընթացքում (2022 թվականի մարտի 02-ին) ընդունեց ES-11/1 բանաձևը, որով դատապարտեց Ռուսաստանի գործողությունները, պահանջեց անհապաղ և ամբողջական կերպով դուրս բերել զինված ուժերը Ուկրաինայի տարածքից, արտահայտեց մտահոգություն Բելառուսի մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև կողմերին կոչ արեց ապահովել քաղաքացիական բնակչության պաշտպանությունը: Բանաձևն ընդունվեց 141 կողմ, 5 դեմ և 35 ձեռնպահ ձայներով: Նմանատիպ բանաձև[26] ընդունվեց (2022 թվականի հոկտեմբերի 12-ին): Թեև այդ բանաձևերը պարտադիր իրավական ուժ չունեն, սակայն արտահայտում են միջազգային հանրության դժգոհությունները, աջակցությունը Ուկրաինայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարցերում:

Վետոյի կիրառման նպատակահարմարության, արգելման կամ այն շրջանցելու, ինչպես նաև կիրառող սուբյեկտների շրջանակի ընդլայնման կամ նվազեցման հետ կապված հարցերը կարող են միջազգային լայն քննարկման առարկա դառնալ միայն այն դեպքում, երբ մարդկային հասարակությանը կհաջողվի ներկա բարդ, անկանխատեսելի և կործանարար աշխարհաքաղաքական զարգացումները հաղթահարել և միջպետական հարբերություններում հաստատել միջազգային իրավունքի անվերապահ գերակայությունը:

Եզրակացություն

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տնտեսական սանկցիաները միջազգային իրավունքի շրջանակներում նախատեսված են իբրև խաղաղության և անվտանգության պահպանման գործիք: Սակայն վերջին տասնամյակների փորձը վկայում է, որ այդ միջոցներն ավելի հաճախ կիրառվում են քաղաքական դրդապատճառներով, առանց պահպանելով կիրառման իրավաչափությունը կամ համաչափությունը: Տնտեսական սանկցիաները դարձել են միջազգային հարաբերություններում ուժի քաղաքականության առավել նուրբ, բայց ոչ պակաս ազդեցիկ դրսևորում, որը հաճախ խախտում է մարդու հիմնարար իրավունքները, խաթարում է պետության տնտեսության կայունությունը և խոչընդոտում նրա զարգացման հեռանկարները:

Սանկցիաների կիրառման գործընթացում ակնհայտ են մի շարք կառուցակարգային խնդիրներ: Դրանք են մշտական անդամների վետոյի իրավունքի չարաշահումը, հումանիտար բացառությունների բացակայությունը, իրավական վերահսկողության թուլությունը, թիրախ պետությունների նկատմամբ ընտրողական մոտեցումները:

Համապարփակ սանկցիաները հաճախ չեն համապատասխանում մարդասիրական իրավունքի պահանջներին, քանի որ լինում են անհամաչափ և վնաս են հասցնում խաղաղ բնակչության կյանքի, առողջության ու արժանապատվության իրավունքներին:

Համեմատական վերլուծությունն ընդգծում է, որ ԵՄ-ն ավելի շատ ուշադրություն է դարձնում իրավաչափությանն ու վերանայման մեխանիզմ-

ներին, իսկ ԲՌԻՔՍ-ը հանդես է գալիս իբրև սանկցիաների չարաշահման դեմ ուղղված քաղաքական ուժ: ՄԱԿ-ի համակարգը, չնայած իր համընդհանուր լեգիտիմությանը, պահանջում է բարեփոխումների համադրական ռազմավարություն՝ միավորելով իրավական վերահսկողությունը, հումանիտար պաշտպանությունը և ինստիտուցիոնալ թափանցիկությունը:

Այս համատեքստում ներկայացված բարեփոխումների վերաբերյալ առաջարկները՝ կապված սանկցիաների կիրառման չափորոշիչների կատարելագործման, մոնիթորինգի մարմինների և բողոքարկման կառուցակարգերի աշխատանքների բարելավման հետ, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի մասնակցության արդյունավետության ապահովումը, միջազգային իրավունքի արդիականացմանն ուղղված անհրաժեշտ քայլեր են:

Կարծում ենք, որ եթե չձևավորվի արդար, իրավաչափ և հաշվետու տնտեսական սանկցիաների քաղաքականություն, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կշարունակի կորցնել իր հեղինակությունը՝ միջազգային իրավունքի գերակայության նպատակին հասնելու փոխարեն վերածվելով քաղաքական ազդեցությունների հարթակի:

---

[1] Տե՛ս, ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդված 41:
[2] Տե՛ս, The UNGA resolution 377, 03.11.1950:
[3] Տե՛ս, Resolution adopted by the General Assembly on 16 september 2005, 60/1 A/RES/60/1 – 2005 Համաշխարհային գագաթնաժողովի արդյունքների փաստաթուղթ (կետ 139):
[4] Տե՛ս, Dupuy R.J., L'impossible agression: les Malouines entre l'O.N.U. et l'O.E.A [The Impossible Aggression: The Falklands Between U.N. and the O.E.A], Annuaire français de Droit international, Paris, 1982, էջ 342-343:
[5] Տե՛ս, Murphy, S.D., Principles of International Law, USA, West Academic Publishing, 2006, էջ 102-104:
[6] Տե՛ս, United Nations Office of the Iraq Programme, Oil-for-Food: Retrospective, 2005:
[7] Տե՛ս, ICRC, Humanitarian consequences of economic sanctions, Geneva, 2020:
[8] Տե՛ս, Abdol M.Ch., Impacts of International sanctions on Iranian pharmaceutical market, Daru Journal of Pharmacetical Sciences, vol.21, Tehran, 2013, էջ 2-3.
[9] Տե՛ս, Brics Policy Center, Sovereignty, Sanctions and Global Order, 2023:
[10] Տե՛ս, United Nations High Commissioner for Refuges (UNCHR), Venezuela Crisis Regional Overview, 2023:
[11] Տե՛ս, United Nations Security Council, Records on Resolutions Vetoed by the United States (1945-2023).
[12] Տե՛ս, UN Library Research Guide: Voting Records and Vetoes, 2022.
[13] Տե՛ս, Chesterman S., UN Sanctions and the Rule of Law, UK, Cambridge University Press, vol.12, 2013, էջ 58-63
[14] Տե՛ս, Weiss, T.G., What's wrong with the United Nations and How to Fix it, UK, Cambridge: Polity Press, 2008, էջ 25-34:
[15] Տե՛ս, Geneva Conventions, Common Article 3, Additional Protocols 1 & 2, 1949:
[16] Տե՛ս, Abdol M., Impacts of International sanctions on Iranian pharmaceutical market, Daru Journal of Pharmacetical Sciences, vol.21, Tehran, 2013, էջ 2-3.
[17] Տե՛ս, United Nations Office of the Iraq Progamme, Oil-for-Food, Retrospective, 2005, էջ 12-19:
[18] Տե՛ս, Brics Policy Center, Sanctions and Sovereignty, Rio de Janeiro, 2023:
[19] Տե՛ս, ICRC, Humanitarian consequences of economic sanctions, Geneva, 2020, էջ 5:
[20] Տե՛ս, Weiss T.G., What's wrong with the United Nations and How to Fix it, UK, Cambridge: Polity Press, 2008, էջ 29-36:
[21] Տե՛ս, European Council, Sanctions: types, implementation and legal basis, 2022:
[22] Տե՛ս, European Court of Justice, Case C-599/12 P, Council v.Al-Tajour.
Bosphorus Hava Yollari Turizm Ve Ticaret Anonim Şirketi v. Ireland գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդգծեց, որ պետությունները և Եվրոպական միությունը չեն կարող անտեսել հիմնական իրավունքների նկատմամբ հարգանքը Անվտանգության խորհրդի որոշումները կատարելիս:
[23] Տե՛ս, Brics Policy Center, "Sovereignty, Sanctions and Global Order", Rio de Janeiro, 2023:
[24] Տե՛ս, Weiss T.G., What's wrong with the United Nations and How to Fix it, UK, Cambridge: Polity Press,

2008, էջ 29-36:
[25] Տե՛ս, ICRC, Humanitarian consequences of economic sanctions, Geneva, 2020, էջ 5-8:
[26] Տե՛ս, United Nations General Assembly resolution ES-11/4, 12.10.2022:

Գրականության ցանկ

1. Abdol M.Ch., Impacts of International sanctions on Iranian pharmaceutical market, Daru Journal of Pharmacetical Sciences, vol.21, Tehran, 2013, pp. 3.
2. Brics Policy Center, Sovereignty, Sanctions and Global Order, 2023.
3. Chesterman S., UN Sanctions and the Rule of Law, UK, Cambridge University Press, vol.12, 2013, pp. 294:
4. Dupuy, R. J., The Impossible Aggression: The Falklands Between the U.N. and the O.A.S., French Yearbook of International Law, Paris, 1982, pp. 17.
5. European Council, Sanctions: types, implementation and legal basis, 2022.
6. European Court of Justice, Case C-599/12 P, Council v.Al-Tajour.
7. Geneva Conventions, Common Article 3, Additional Protocols 1 & 2, 1949.
8. ICRC, Humanitarian consequences of economic sanctions, Geneva, 2020:
9. Murphy, S.D., Principles of International Law, USA, West Academic Publishing, 2006, pp. 548:
10. United Nations Office of the Iraq Programme, Oil-for-Food: Retrospective, 2005:
11. United Nations High Commissioner for Refuges (UNCHR), Venezuela Crisis Regional Overview, 2023:
12. United Nations Security Council, Records on Resolutions Vetoed by the United States (1945-2023).
13. United Nations General Assembly resolution 377, 03.11.1950.
14. United Nations General Assembly resolution 3314 (XXIX), 14.12.1974.
15. United Nations General Assembly resolution 60/1, 16.09.2005.
16. United Nations General Assembly resolution ES-11/1, 02.03.2022.
17. United Nations General Assembly resolution ES-11/4, 12.10.2022.
18. UN Library Research Guide: Voting Records and Vetoes, 2022.
19. Weiss, T.G., What's wrong with the United Nations and How to Fix it, UK, Cambridge: Polity Press, 2008, pp.292.

Филиана Беллуян
Прокурор Управления по защите государственных
интересов Генеральной прокуратуры РА
Юридический факультет ЕГУ,
Кафедра европейского и международного права

РЕЗЮМЕ

Экономические санкции Организации Объединенных Наций

Статья посвящена правовому и практическому анализу экономических санкций, применяемых Советом Безопасности ООН. Санкции рассматриваются как часть правового инструментария обеспечения международной безопасности, однако их эффективность, легитимность и соразмерность остаются предметом дискуссий. Особое внимание уделяется гуманитарным последствиям санкций в рамках международного гуманитарного права, включая нарушение условий жизнеобеспечения населения, нехватку медикаментов, продовольствия и жизненно важных ресурсов. Также анализируются случаи избирательного применения санкций, когда они становятся инструментом политического давления. В статье проводится сравнительный анализ подходов к санкционной политике Европейского союза и стран БРИКС. Выявляются основные причины кризиса легитимности санкционной системы ООН и предлагаются меры по ее реформированию, включая закрепление гуманитарных исключений, ограничение права вето по гуманитарным вопросам и создание системы мони-

торинга воздействия санкций.

***Ключевые слова**: Совет Безопасности, экономические санкции, легитимность, право вето, мониторинг, международное гуманитарное право, избирательность, реформы.*

Filiana Belluyan
Prosecutor, Department for the Protection of State Interests,
Prosecutor General's Office of the Republic of Armenia
YSU Faculty of Law,
Department of European and International Law

SUMMARY
Economic sanctions of the United Nations

The article is devoted to the legal and practical analysis of economic sanctions imposed by the United Nations Security Council. Sanctions are viewed as part of the legal framework for ensuring international security, yet questions of their effectiveness, legality, and proportionality remain subject to debate. Particular attention is given to the humanitarian consequences of sanctions under international humanitarian law, including the disruption of livelihoods, shortages of medicine, food, and essential resources. The article also examines instances of selective application, where sanctions become tools of political pressure. A comparative analysis is conducted between the sanctioning approaches of the European Union and BRICS countries. The article identifies key causes of the UN sanctions system's legitimacy crisis and offers reform proposals, such as enshrining humanitarian exemptions, limiting the veto power in humanitarian matters, and establishing a monitoring mechanism to assess the impact of sanctions.

***Key words**: Security Council, economic sanctions, legality, veto power, monitoring, international humanitarian law, selectivity, reforms.*

Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ԱՆԱՀԻՏ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Քրեական
արդարադատություն և փաստաբանություն»
մագիստրոսական ծրագրի ուսանող,
ՀՀ գլխավոր դատախազի օգնական

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱԲՈՏԱԺԻ (ՆԵՆԳԱԴՈՒԼԻ) ՀԱՄԱՐ

Համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա կատարվող հանցագործությունները դուրս են եկել յուրաքանչյուր երկրի սահմաններից ու վերածվել վերազգային հիմնախնդրի, որի հաղթահարման միակ եղանակը բոլոր պետությունների կողմից դրա արգելմանն ուղղված միջոցառումների և խիստ վերահսկողական մեխանիզմների իրագործումն է:

Սույն հոդվածում կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի «Համակարգչային սաբոտաժը (նենգադուլը)» վերտառությամբ հոդվածով նախատեսված հանցակազմի հետազոտություն:

Հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել են քննարկվող հանցակազմի քրեաիրավական բնութագիրը, հանցակազմի տարրերը, վեր են հանվել խնդրահարույց այնպիսի կարգավորումներ, որոնք գործնականում արարքի քրեաիրավական որակման կապակցությամբ կարող են առաջացնել որոշակի խոչընդոտներ: Կատարված վերլուծության արդյունքում սույն ոլորտում քրեական օրենսդրության կատարելագործման նպատակով ներկայացվել են օրենսդրական առաջարկներ:

Հիմնաբառեր *– «Կիբեռհանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիա, համակարգչային սաբոտաժ, համակարգիչ, համակարգչային համակարգ, համակարգչային ցանց:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ժամանակակից հասարակական հարաբերությունների համակարգում դարձել է հիմնարար. այն ոչ միայն փոխում է տնտեսության և սոցիալական փոխգործակցության ձևաչափերը, այլև վերածնում պետության կառավարման և անվտանգության ինստիտուտները, ստեղծում նախադրյալներ դրական առումով աննախադեպ տնտեսական և սոցիալական փոփոխությունների համար: Այդ զարգացումները, այնումենայնիվ, իրենց հետ առաջ են բերում նաև նոր խնդիրներ՝ նոր մարտահրավերների առջև կանգնեցնելով թե՛ միջազգային հանրությանը, և թե՛ ներպետական իրավաստեղծ և իրավակիրառ գործունեություն իրականացնող մարմիններին: Ի թիվս այլնի, այդպիսի լրջագույն խնդիր է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող նոր հանցատեսակների տարածումը:

Այս փոփոխությունները հանգեցնում են այնպիսի իրավիճակի, երբ հանցավոր վարքագծի ավանդական սահմանները աստիճանաբար զիջում են իրենց տեղը թվային հարթությունում դրսևորվող հակաիրավական գործողություններին:

Գլոբալացման գործընթացները, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալացումը, անսահմանափակ հնարավորություններ են ընձեռում անհատների և հասարակության վրա ազդելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բացասական հետևանքներից մեկը հանցագործության նոր ձևի՝ կիբեռհանցագործության ի հայտ գալն էր ու զարգացումը, երբ համակարգչային համակարգերը կամ համակարգչային ցանցերը հանդես են գալիս որպես հանցավոր հարձակումների օբյեկտ, ինչպես նաև հանցագործություններ կատարելու միջոց կամ մեթոդ[1]:

Այսօր համակարգչային տեղեկատվության և տեխնոլոգիաների անվտանգության ապահովման խնդիրը, այդ թվում՝ քրեաիրավական միջոցներով, աշխարհի զարգացած երկրների մեծ մասում համարվում է ամենախնդրահարույցներից մեկը: Գլոբալ ինտերնետ ցանցը, որը սկզբնապես ուներ ակադեմիական բնույթ, վերածվել է առևտրային միջավայրի, որտեղ առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում անվտանգության ապահովումն ու ձևավորվող հարաբերությունների նկատմամբ հնարավոր ոտնձգությունների կանխումը[2]:

Վիրտուալ տարածքում գործող հանցագործների զոհ կարող են դառնալ ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև պետություններ: Internet Complaint Center (IC3) կայքը, որը ստեղծվել է 2000 թվականի մայիսին՝ համացանցի օգտատերերի դիմումները գրանցելու նպատակով, դեռևս 2007 թվականի հունիսի 11-ին ստանում էր բազմաթիվ բողոքներ կիբեռհանցագործությունների վերաբերյալ[3]:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում քաղաքականության, տնտեսագիտության, գիտու-

www.armjurjournal.com

թյան, տեխնոլոգիայի և բազմաթիվ այլ ոլորտներում տեղի ունեցած գործընթացները դարձել են ամբողջովին նոր երևույթների ի հայտ գալու հիմնական որոշիչը: Այդպիսի երևույթներից մեկը արագ զարգացող համակարգչային տեխնոլոգիաներն են: Սակայն, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր մետաղադրամ ունի իր մութ կողմը, և այս դեպքում այդ մութ կողմը համակարգչային հանցագործությունն էր:

Համակարգչային հանցագործության դեմ պայքարի համար մշակվող մեթոդները հետ են մնում հանցավոր գործունեության մասշտաբներից, ինչը դրանք դարձնում է բարձր լատենտային[4]:

Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վտանգը մեծանում է, երբ հանցագործները ներթափանցում են կարևոր ենթակառուցվածքների, պաշտպանության և մի շարք այլ էական նշանակություն ունեցող օբյեկտների համակարգչային համակարգեր:

Համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա կատարվող հանցագործությունների առանձնահատկություններից բխում է, որ այն դուրս է եկել յուրաքանչյուր երկրի սահմաններից ու վերածվել վերազգային հիմնախնդրի, որի հաղթահարման միակ եղանակը բոլոր պետությունների կողմից դրա արգելմանն ուղղված միջոցառումների և խիստ վերահսկողական մեխանիզմների իրագործումն է:

Հայաստանի Հանրապետությունը 2001 թվականի նոյեմբերի 23-ին Բուդապեշտում ստորագրել և 2006 թվականի մարտի 21-ին վավերացրել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Բուդապեշտի կոնվենցիա)5, որը կիբեռհանցավորության դեմ պայքարի նյութաիրավական և դատավարական հիմքերի ձևավորման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունեցող միջազգային իրավական փաստաթուղթ է:

Բուդապեշտի կոնվենցիայի՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի մշակած բացատրական զեկույցի համաձայն՝ այս կոնվենցիայի նպատակներն են՝

1) կիբեռհանցագործություններին առնչվող ներպետական քրեական օրենսդրության ներդաշնակեցումը.

2) կիբեռհանցագործությունների կամ համակարգչային համակարգերի օգնությամբ կատարվող հանցանքների քննության կամ էլեկտրոնային տեսքով ապացույցների ձեռքբերման համար անհրաժեշտ դատավարական գործիքակազմի ապահովումը.

3) միջազգային համագործակցության արագ և արդյունավետ ռեժիմի ձևավորումը[6]:

Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» կարգադրության համաձայն՝ *«Կիբեռանվտանգության հզորացումը և կիբեռհանցագործությունների դեմ պայքարը ՀՀ համար ռազմավարական նշանակության խնդիրներ են: Կիբեռհանցագործությունները նոր երևույթ չեն: Դրանց կատարման մեխանիզմները մշտապես փոփոխվում և կատարելագործվում են: Գաղտնիք չէ, որ հանցագործներին հաջողվում է ոչ միայն օգտվել կիբեռտեխնոլոգիական նորույթներից, այլև մշակել և ներդնել դրանք՝ հետապնդելով ինչպես համակարգչային ցանցի օգնությամբ կամ դրա դեմ հանցանք կատարելու, այնպես էլ հանցագործության հետքերը թաքցնելու նպատակ»*[7]:

Կիբեռհանցագործությունների զարգացման տեմպերը մշտապես արդիական են դարձնում դրանց հակազդելու համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորման խնդիրը, քանի որ միայն մեկ ծրագրային ներթափանցմամբ հնարավոր է կաթվածահար անել պետական կառավարման համակարգերը, ֆինանսական շուկաները կամ կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները, ինչն առաջացնում է սպառնալիք ոչ միայն առանձին սուբյեկտների իրավունքների, այլև ամբողջ ազգային անվտանգության համար:

ԹԵ՛ ՀՀ 2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքով, և ՀՀ թե՛ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքով ամրագրվել են համապատասխանաբար «Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» և «Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ գլուխները և քրեորեն հետապնդելի արարքները:

Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված քրեորեն հետապնդելի արարքներից է համակարգչային սաբոտաժը (նենգադուլը), որի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական միջավայրը դարձել է նոր իրավական տարածք՝ դժվար վերահսկելի, հաճախ անսահմանելի իրավազորությամբ: Այդ տարածքում իրավական պաշտպանության ավանդական մեխանիզմները կորցնում են իրենց արդյունավետությունը: Արդյունքում առաջանում է իրավակարգավորման և տեխնոլոգիական դինամիկայի միջև բաց՝ իրավական վակուում, որն իր հերթին նպաստում է նման հանցագործությունների արագ տարածմանը:

Բացի այդ, կիբեռհանցագործությունները վերածվում են ոչ միայն տնտեսական շահի գործիքի,

այլև ազդեցիկ մեխանիզմի՝ սպառնալիք ստեղծելով պետությունների ինքնիշխանությանը, տեղեկատվական անկախությանը և հասարակական կայունությանը: Հետևաբար, համակարգչային սաբոտաժի՝ որպես համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված քրեորեն հետապնդելի արարքի, ուսումնասիրությունը արդիական է ոչ միայն այն պատճառով, որ այն իրենից ենթադրում է թվային դարաշրջանի նորագույն հանցատեսակ, այլև որովհետև այն մարտահրավեր է նետում քրեական իրավունքի ավանդական սկզբունքներին՝ ստիպելով վերանայել իրավական պատասխանատվության ծավալն ու բովանդակությունը՝ տեխնոլոգիական առաջընթացի և տեղեկատվական միջավայրի փոփոխության համատեքստում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը[8] (այսուհետ՝ ՀՀ ՔՕ), ինչպես նշվեց, 361-րդ հոդվածի ուժով քրեական պատասխանատվություն է նախատեսում, ի թիվս այլնի, համակարգչային սաբոտաժի (նենգադուլի) համար, որպիսին է դիտարկվում համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը):

Նախքան հանցակազմի տարրերին անդրադառնալը, բացահայտենք տվյալ հանցագործության դրսևորման համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հասկացություններ, որպիսիք են՝ համակարգիչը, համակարգչային համակարգը, համակարգչային ցանցը և համակարգչային այլ սարքավորումը:

Այսպես, համակարգիչը ծրագրավորվող էլեկտրոնային սարք է, որը կարող է մշակել տվյալներ և կատարել հաշվարկներ[9]: «Համակարգիչ» է համարվում այն սարքը կամ սարքերի համակցությունը (ներառյալ օժանդակ սարքերը, պերիֆերիկ սարքավորումները կամ ենթակառուցվածքները), ինչպես նաև դրան միացված հաղորդակցման համակարգերը, որոնք կարող են իրականացնել տարբեր գործառույթներ, այդ թվում՝ (բայց դրանցով չսահմանափակվելով) բարդ հաշվարկային, թվաբանական կամ տրամաբանական գործողություններ, տեղեկատվության պահպանման կամ որոնման գործողություններ: Համակարգիչը պետք է կարողանա աշխատել արտաքին ֆայլերի հետ, գործարկել մեկ կամ մի քանի գործողություններ, որոնք պարունակում են համակարգչային ծրագրեր կամ էլեկտրոնային հրահանգներ, ապահովել տվյալների մուտքագրում և ելքագրում: Նման գործողությունները կամ հաղորդակցությունները կարող են իրականացվել ինչպես մարդու միջամտությամբ, այնպես էլ առանց դրա՝ տվյալ խնդրի մշակման ընթացքում[10]:

Վերոգրյալից բխում է, որ համակարգիչը էլեկտրոնային այն սարքն է, որը նախատեսված է տվյալների ընդունման, մշակման, պահպանման համար: Այն իրենից ներկայացնում է ֆիզիկական բաղադրիչների՝ պրոցեսոր, հիշողություն, մուտքային/ելքային սարքեր և այլն և ծրագրային ապահովման միասնություն, որը հնարավորություն է տալիս իրականացնել հաշվարկային և տեղեկատվական գործողություններ:

Բուդապեշտի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» պարբերության համաձայն՝ *համակարգչային համակարգը նշանակում է՝ ցանկացած սարք կամ փոխկապակցվող կամ կապակցվող սարքերի խումբ, որոնցից մեկը կամ մի քանիսը, ծրագրի համաձայն, կատարում են տվյալների ավտոմատ մշակում*:

Բուդապեշտի կոնվենցիայի բացատրական զեկույցի[11] համաձայն՝ «համակարգչային համակարգը» սարք է, որը բաղկացած է ապարատային և ծրագրային ապահովումից և նախատեսված է թվային տվյալների ավտոմատ մշակման համար: Այն կարող է ներառել նաև մուտքային, ելքային և պահպանման միջոցներ: Ընդ որում, համակարգչային համակարգի համար կարևոր չափանիշ է այդ սարքի կողմից տվյալների ավտոմատ մշակման իրականացումը, որը, զեկույցի համաձայն, իրենից ենթադրում է առանց մարդու անմիջական միջամտության կատարվող գործողություն:

Այս կապակցությամբ հետաքրքրական է այն հարցի պարզաբանումը, թե որ հասկացության ներքո պետք է դիտարկել այն իրավիճակը, երբ տվյալների ավտոմատ մշակումն իրականացվի մեկ եզակի սարքի կողմից:

Այսպես, Բուդապեշտի կոնվենցիայի տեսանկյունից որպես համակարգչային համակարգ կարող է դիտարկվել, ինչպես մեկ, այնպես էլ մի քանի սարքերի խումբ, որոնցից մեկի կամ մի քանիսի կողմից իրականացվում է տվյալների մշակում: Համակարգչային համակարգի առանձնահատկությունը, ինչպես և համակարգչի, ի թիվս այլնի, տվյալների մշակումն է, սակայն համակարգչային համակարգի դեպքում այն իրականացվում է բացառապես ավտոմատ եղանակով:

Վերոգրյալից ակնհայտ է, որ քննարկվող իրավիճակի առկայությունը գործնականում կարող է որոշակի դժվարություններ առաջացնել այդ սարքը որպես համակարգիչ կամ համակարգչային համակարգ դիտարկելու տեսանկյունից: Սակայն, հաշվի առնելով այն, որ Բուդապեշտի կոնվենցիայի տեսանկյունից համակարգչային համակարգը կարող է բաղկացած լինել նաև մեկ սարքից, որի առանձ-

www.armjurnal.com

նահատկությունը տվյալների ավտոմատ մշակումն է՝ կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ մեկ սարքավորման կողմից տվյալների մշակումն իրականացվի ավտոմատ կերպով, այն պետք է դիտարկվի ոչ թե որպես համակարգիչ, այլ համակարգչային համակարգ:

Միաժամանակ, կարևոր է նշել, որ օտարերկրյա պետությունների օրենսդրություններում այսպիսի իրավիճակների կարգավորման համար մշակված մոտեցումներն ավելի պարզ և նպատակահարմար են: Մասնավորապես, ԱՄՆ Թենեսի նահանգի քրեական օրենսգրքով համակարգչային համակարգը դիտարկվում է որպես միացված սարքերի ամբողջություն, որոնք թույլ են տալիս համակարգին կատարել տվյալների մշակման առաջադրանքներ[12]: Այսինքն, որպես համակարգչային համակարգ դիտակվում է բացառապես այդպիսի սարքավորումների խումբը, որպիսի մոտեցումը առավել նպատակահարմար է և գործնականում կբացառի վերը ներկայացված իրավիճակներում հնարավոր տարընկալումները:

Անդրադառնանք համակարգչային ցանցի հասկացությանը: Այն փոխկապակցված համակարգիչների և ծայրամասային սարքերի մի խումբ է, որը թույլ է տալիս օգտատերերին փոխանակել տվյալներ և համագործակցել ցանցի ներսում: Ցանցի հիմնական նպատակն է թույլ տալ օգտատերերին հեշտությամբ մուտք գործել և կիսվել դրանում պարունակվող տեղեկատվությամբ, մասնավորապես՝ սահմանափակել չարտոնված անձանց մուտքը[13]:

Այսինքն, կարելի է եզրակացնել, որ համակարգչային ցանցերի հիմնական գործառույթը ֆայլերի և տվյալների փոխանակումն է, սարքավորումների համատեղ օգտագործումը, ինչպիսիք են տպիչները և սերվերները, ինտերնետին և առցանց ռեսուրսներին մուտք գործելու հնարավորությունը և սարքերի հեռակառավարումը:

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ ի տարբերություն համակարգչային ցանցի, որը տարբեր համակարգիչների և սարքերի միավորում է, որոնք միմյանց հետ կապված են հաղորդակցման միջոցներով՝ բացառապես տեղեկատվություն փոխանակելու և կապի ահահովման համար, համակարգչային համակարգը մեկ ամբողջական միասնական համալիր է, որն իր մեջ ներառում է մեկ կամ մի քանի համակարգիչ, դրանց ծրագրային ապահովումը և իրականացնում է որոշակի գործառույթներ, մասնավորապես՝ տվյալների ավտոմատ մշակում:

Ինչ վերաբերում է համակարգչային այլ սարքավորմանը, որը հաճախ անվանվում է նաև պերիֆիրկ սարքեր, ապա դրանք այնպիսի սարքեր են, որոնք միանում են համակարգչին և ապահովում նրա աշխատանքի ընդլայնումը կամ արտաքին աշխարհի հետ փոխազդեցությունը: Դրանք չեն համարվում համակարգչի հիմնական բաղադրիչներ (ինչպիսիք են պրոցեսորը, հիշողությունը և այլն), բայց առանց դրանց համակարգչի լիարժեք օգտագործումը դժվարանում է, քանի որ այդ սարքերի միջոցով ապահովվում է մի շարք գործողությունների իրականացումը, ինչպիսիք են՝ տվյալների մուտքագրումը (ստեղնաշարեր, մկնիկներ), տեղեկատվության ելքագրումը (մոնիտորներ, տպիչներ), տվյալների պահպանումը(արտաքին կոշտ սկավառակներ)[14]:

Ակնհայտ է, որ համակարգչային սաբոտաժը միջազգայնորեն ճանաչված հիմնախնդիրներից մեկն է, որը խաթարում է տեղեկատվական անվտանգության համակարգը, վտանգում պետական ու հասարակական կառույցների կայունությունը, անմիջական սպառնալիք հանդիսանում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության համար:

Յուրաքանչյուր հանցակազմ, որն ամրագրված է ՀՀ ՔՕ-ում, իրենից ներկայացնում է որոշակի օբյեկտի դեմ ոտնձգող և դրան վնաս պատճառելու գործողությամբ կամ դրա սպառնալիքով դրսևորվող հանրորեն վտանգավոր արարք: Մեծ նշանակություն ունի նաև, թե որ հանցագործությունների շարքում է այն ներկայացվում, քանի որ նշվածը և հանցակազմի բովանդակությունը մեծապես պայմանավորում են օբյեկտի առկայությունը: Հարկ է նշել, որ այս հանցակազմը ՀՀ ՔՕ-ում ամրագրված է «Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում:

Համակարգչային սաբոտաժը, որն իր մեջ ներառում է համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը), կարելի է բնորոշել որպես «ստվերային գործընթաց», որն առաջանում է և զարգանում անպատժելիության պայմաններում: Այն լուրջ վտանգ է ներկայացնում տեղեկատվական անվտանգության, տնտեսության, պետական կառավարման և անհատի իրավունքների համար:

Մեր կարծիքով, այս երևույթի դրսևորումը խաթարում է համակարգերի գործառնական ամբողջականությունը, քանի որ նման հարձակումների ընթացքում խափանվում է տեղեկատվական ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, որն էլ կարող է պատճառ հանդիսանալ տեղեկատվական անվտանգության համակարգի, ազգային անվտանգության և հասարակական կարգի ապակայունացման: Տվյալների ոչնչացումը, փոփոխությունը, ուղեփակումը և հանցակազմի օբյեկտիվ

կողմի այլ դրսևորումների իրականացումը ոչ միայն տեխնիկական վնաս են պատճառում, այլև խախտում են համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում և համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալների պաշտպանության նկատմամբ ձևավորված հասարակական և իրավական հարաբերությունները: Բացի այդ, կարևոր է նշել, որ քննարկվող հանցագործությունը կարող է մեծապես ուղղված լինել նաև թվային տեղեկության գաղտնիության խաթարմանը՝ բացահայտելով անձնական, ծառայողական կամ օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տվյալներ:

Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ համակարգչային տեղեկատվության ոլորտում հանցագործությունները բազմօբյեկտ հանցագործություններ են. անմիջական օբյեկտը հանդիսանում է տեղեկատվական անվտանգության համակարգը՝ իր ամբողջության մեջ: Այսինքն՝ այն հարաբերությունները, որոնք ապահովում են համակարգչային տեղեկատվության գաղտնիությունը, ամբողջականությունը և հասանելիությունը: Հիմնական անմիջական օբյեկտի՝ համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության հետ մեկտեղ առանձնացվում են լրացուցիչ անմիջական օբյեկտներ.

- հասարակական հարաբերություններ, որոնք ապահովում են անձանց օրինական իրավունքներն ու օրինական շահերը.
- հասարակական հարաբերություններ, որոնք ապահովում են պետական ծառայության օրինական շահերը[15]:

Անդրադառնանք հանցակազմի առարկային, որը հասարակական հարաբերության այն տարրն է, որի վրա ներգործելով, որը ոչնչացնելով կամ վնասելով խախտվում, վնասվում է հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունը:

Մասնագիտական գրականությամբ բազմիցս քննարկման առարկա է դարձել քննարկվող հանցագործության առարկայի վերաբերյալ հիմնահարցը: Գիտնականների մի մասը այն մոտեցման կողմնակիցներն են, որ տվյալ հանցագործության առարկա պետք է դիտարկել համակարգչային տվյալը կամ տեղեկատվությունը[16]: Այլ մոտեցման համաձայն՝ «համակարգչային սաբոտաժը» հանցագործության առարկան տեղեկատվական միջավայրն է, այսինքն՝ տեղեկատվության ստեղծման, վերափոխման և սպառման հետ կապված սուբյեկտների գործունեությունը[17]:

Հատկանշական է, որ ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի դիսպոզիցիայում հստակ սահմանվում է, որ հանցակազմի օբյեկտիվ կողմ դիտակվող գործողությունները կատարվում են համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալի նկատմամբ: Հետևաբար, պետք է համաձայնել այն տեսաբանների մոտեցմանը, որ ,համակարգչային սաբոտաժե հանցագործության առարկան համակարգչային տվյալն է:

Բուդապեշտի կոնվենցիայի 1-ին հոդվածի «բ» պարբերության համաձայն՝ *«համակարգչային տվյալներ» նշանակում է՝ փաստերի, տեղեկատվության կամ հասկացության հավաքումը այն ձևով, որը հարմար է համակարգչային համակարգերում մշակման համար, ներառյալ այն ծրագրերը, որոնք ապահովում են համակարգչային համակարգի գործառույթների իրականացումը:*

Վերոգրյալ կարգավորումից կարելի է եզրակացնել, որ համակարգչային տվյալի ներքո կարող է դիտարկվել ցանկացած տվյալ, տեղեկություն, անգամ ծրագիր, որոնք մշակվում, պահվում կամ փոխանցվում են համակարգչային համակարգի, ցանցի կամ այլ սարքավորման միջոցով: Այսինքն, համակարգչային տվյալը իրենից ենթադրում է ցանկացած թվային տեղեկություն, որը գոյություն ունի համակարգչային միջավայրում և ենթակա է մշակման:

ՀՀ ՔՕ-ն որպես հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորումներ նախատեսում է հանցագործության առարկան առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը): Նկարագրված հանցակազմը ձևական է, այսինքն, նախատեսված չեն օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող այնպիսի հետևանքներ, որոնց առաջացումը կվկայեր հանցագործության ավարտի մասին, ուստի օբյեկտիվ կողմի դրսևորումն արդեն իսկ վկայում է օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված սպառնալիքի մասին: Օբյեկտիվ կողմի դրսևորման համար կարևոր է ապօրինության չափանիշը, որը վերաբերում է օբյեկտիվ կողմի բոլոր դրսևորումներին: Մասնավորապես, որպեսզի վերը թվարկված գործողություններից որևէ մեկի կատարումը հանգեցնի քրեական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ այն կատարված լինի առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության: Ստացվում է, բոլոր այն դեպքերում, երբ անձը կատարում է գործողություն, որի համար չունի ոչ մի իրավական հիմք՝ ոչ օրենքի, ոչ կնքված պայմանագրի, ոչ էլ որևէ այլ օրինական լիազորության տեսքով (օրինակ՝ իրավասու մարմնի թույլտվություն), կատարված գործողությունը համարվում է հակաիրավական և հանգեցնում քրեական պատասխանատվության:

Անդրադառնանք ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներին: Այսպես, համակարգչային տվյա-

լը «ոչնչացնելը» օբյեկտիվ կողմի դրսևորումը մեր կարծիքով, տեղեկատվության սեփականատիրոջը կամ այն տիրապետողին ամենաէական և ամենամեծ վնաս հասցնող գործողություններից մեկն է:

Որոշ գիտնականներ կարծում են, որ համակարգչային տեղեկատվության ոչնչացումը պետք է հասկանալ որպես դրա լիակատար ֆիզիկական վերացում[18], մյուսները՝ «տեղեկատվության լրիվ կամ մասնակի ջնջում մեքենայական ընթերցվող կրիչից»[19]: Այլ տեսաբանների կարծիքով համակարգչային տեղեկատվության ոչնչացումը դիտարկվում է որպես այդպիսի տվյալների հեռացում համակարգչային հիշողությունից կամ էլեկտրոնային կրիչից, երբ դրան հետագայում հասանելիություն ստանալը անհնար է՝ անկախ դրանց վերականգնման հնարավորությունից[20]:

Մեր կարծիքով համակարգչային տվյալի ոչնչացումը պետք է մեկնաբանել որպես ցանկացած գործողություն՝ ուղղված այդպիսի տվյալը ամբողջությամբ կամ մասամբ համակարգչի հիշողությունից, էլեկտրոնային կրիչից կամ այլ ցանցային միջավայրից վերացնելուն, որի հետևանքով դրանք դառնում են անվերականգնելի և օգտագործման համար ոչ պիտանի: Այսինքն, հանցակազմի՝ «ոչնչացնելը» օբյեկտիվ կողմի դրսևորման պարագայում գործ ունենք համակարգչային տվյալի գոյության կորստի հետ:

Այս կապակցությամբ հատկանշական է, որ մասնագիտական գրականությամբ բազմիցս քննարկման առարկա է դարձել այն հիմնահարցը՝ արդյոք ոչնչացված համակարգչային տվյալի վերականգնման դեպքում այդ գործողությունը պետք է որակել որպես ավարտված հանցագործություն, թե հանցագործության փորձ[21]: Մեր կարծիքով, քանի որ քննարկվող հանցակազմը ձևական է և հանցագործության ավարտը կապվում է արարքի կատարման պահով, սույն դեպքում համակարգչային տվյալի ոչնչացման փաստը, անկախ դրա հետագայում վերականգնվելու հանգամանքից, ինքնին վկայում է ավարտված հանցագործության մասին: Այսինքն, համակարգչային տվյալը հետագայում վերականգնելու փաստը ուղղակիորեն չի կարող հանգեցնել հանցավորի կողմից արդեն իսկ կատարված գործողության, այն է՝ «ոչնչացնելու» փաստի վերացման:

Համակարգչային տվյալը ուղեփակելը (մեկուսացնելը) որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում քննարկելիս, կարևոր է նշել, որ մասնագիտական գրականությունը այս գործողության վերաբերյալ դիտարկել է տարբեր սահմանումներ, սակայն տեսաբանների մեծամասնության կարծիքով այդպիսին պետք է դիտարկել համակարգչային տվյալը իր նպատակային նշանակությամբ ստանալու կամ օգտագործելու անհնարինության իրավիճակը՝ այդպիսի տվյալի ամբողջական պահպանված լինելու վիճակում[22]:

Մեր կարծիքով, համակարգչային տվյալի ուղեփակումը (մեկուսացումը) համակարգչի կամ համակարգչային համակարգի, ցանցի կամ այլ սարքավորման վրա ազդեցություն է, որը հանգեցնում է համապատասխան տվյալը տիրապետողի, դրան հասանելիություն ունեցող անձի՝ համակարգչային տվյալի հետ օրինական գործողություններ կատարելու կարողության ժամանակավոր կամ մշտական դադարեցման, սակայն, որի պարագայում այդ տվյալը չի ոչնչանում կամ վնասվում, այլ վերանում է դրան հասանելիություն ստանալու հնարավորությունը: Երբ համակարգչային տվյալը ժամանակավորապես ուղեփակվում է, դրան ի սկզբանե հասանելիություն ունեցող անձը այլևս չի կարողանում որևէ գործողություն կատարել դրա հետ, իսկ մշտապես ուղեփակվելու պարագայում, օրինակ, երբ հանցագործը բարդ և անընդհատ փոփոխվող մուտքի կոդ է սահմանում այդ տվյալ մուտք գործելու համար կամ այն տեղափոխում մեկ այլ սերվեր և այլն, տվյալին հասանելիությունը կարող է ընդհանրապես վերանալ:

Անդրադառնանք օբյեկտիվ կողմի հաջորդ դրսևորմանը՝ համակարգչային տվյալը վնասելուն: Օբյեկտիվ կողմի այս դրսևորման նախատեսումը որոշակի դժվարություններ է առաջացնում կատարված հանրորեն վտանգավոր արարքի քրեաիրավական որակման շրջանակներում, քանի որ այս օբյեկտիվ կողմին զուգահեռ, ՀՀ ՔՕ-ն քրեականացրել է նաև համակարգչային տվյալները փոփոխելը և աղավաղելը: Մասնագիտական գրականության և տարբեր երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը վկայում են այն մասին, որ շատ հաճախ օբյեկտիվ կողմի հիշյալ դրսևորումները նույնացվում են:

Մասնավորապես, ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի քրեական օրենսգիրքը նս քրեականացրել է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգությունը խաթարող մի շարք գործողություններ՝ ի թիվս այլնի, նախատեսելով, որ արարքը քրեորեն հետապնդելի է, եթե անձը գիտակցաբար և առանց թույլտվության օգտագործում է մեկ կամ մի քանի էլեկտրոնային նամակներ կամ գրառումներ ուղարկելու համար մեկ կամ մի քանի անհատի, կորպորացիայի կամ կազմակերպության ինտերնետային դոմեյնի անունը կամ պրոֆիլը և դրանով իսկ վնաս է հասցնում կամ վնաս է պատճառում համակարգչին, համակարգչային տվյալներին, համակարգչային համակարգին կամ համակարգչային ցանցին:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով բացահայտվում է նաև վնաս հասկացությունը և այդպիսին է դիտարկվում համակարգչային համակարգի, համակարգչային ցանցի, համակարգչային

www.ardaradatutyunjournal.com

ծրագրի կամ տվյալների ցանկացած փոփոխությունը, ջնջումը, ոչնչացումը, որը պայմանավորված է համակարգչային համակարգի, ցանցի կամ ծրագրի օրինական օգտատերերի մուտքի մերժմամբ[23]:

Ակնհայտ է, որ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի օրենդրությամբ վնասել եզրույթը ավելի լայն է և ընդգրկում է նույնիսկ «ոչնչացնել» օբյեկտիվ կողմի դրսևորումը:

Մեծ Բրիտանիայի «Համակարգչային չարաշահման մասին» 1990 թվականի օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով[24] ևս սահմանվում է, որ համակարգչի բովանդակության փոփոխությունը չի կարող համարվել որևէ համակարգչի կամ համակարգչային կրիչի վնաս, եթե դրա ազդեցությունը այդ համակարգչի կամ համակարգչային կրիչի վրա չի խաթարում դրա ֆիզիկական վիճակը:

Այսինքն, սույն կարգավորումից ստացվում է, որ Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ ևս համակարգչային տվյալի վնասում գործողությունը մեկնաբանվում է այդպիսի տվյալների բովանդակությունը փոփոխելու միջոցով, պայմանով, որ այն հանգեցնի համակարգչի կամ սկավառակի, համակարգչային կրիչի ֆիզիկական վիճակի վրա խախտման:

ԱՄՆ-ում «Համակարգչային հանցագործությունների մասին» օրենքի համաձայն վնասը իրենից ենթադրում է տվյալների, ծրագրի, համակարգի կամ տեղեկատվության ամբողջականության կամ մատչելիության ցանկացած խախտում[25]:

Վերոգրյալից ակնհայտ է, որ համակարգչային տվյալը վնասելու գործողությունը միջազգային տիրույթում մեկնաբանվում է տվյալը փոփոխելու, ոչնչացնելու, որոշ դեպքերում նույնիսկ ուղեփակելու գործողությամբ, այդ իսկ պատճառով հանցագործությունների որակման գործընթացում հնարավոր խնդիրների բացառման նպատակով կարևոր է քննարկման առարկա դարձնել «վնասել», «աղավաղել», «փոփոխել» եզրույթների հասկացությունը:

Ինչպես արդեն իսկ նշվեց ՀՀ ՔՕ-ն առանձին հանցակազմով քրեականացրել է նաև համակարգչային տվյալը փոփոխելու գործողությունը և, ի տարբերություն, համակարգչային սաբոտաժի, քննարկվող հանցագործությունը նախատեսվել է որպես նյութական հանցակազմ, այսինքն հանցագործությունը ավարտված դիտարկելու համար պահանջվում է, որ համակարգչային տվյալը փոփոխելը վնաս պատճառի օրենքով պաշտպանվող սուբյեկտների իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին:

Նշյալից ակնհայտ է, որ ներպետական իրավական կարգավորումներով ևս վնաս հասկացությունը լայն է և ընդգրկուն, ներառում է փոփոխելու գործողությունը, քանի որ ՀՀ ՔՕ-ն որպես փոփոխելու վերջնարդյունք նախատեսել է վնասի պատճառումը:

Վերոշարադրյալից բխում է, որ միջազգային և ներպետական իրավական կարգավորումները ,վնասե և ըստ այդմ «վնասել» եզրույթները ավելի լայն են դիտարկում, այլ ոչ թե բացառապես նյութական վնասի առաջացման տեսանկյունից: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համակարգչային տվյալները նյութական առարկաներ չեն, այլ ունեն գործառնական արժեք և դրանց հասցված ցանկացած միջամտություն, որը խաթարում է վերջիններիս ամբողջականությունը, ճշգրտությունը, կամ օգտագործելիությունը իրավական տեսանկյունից դիտվում է որպես վնաս պատճառելու ձև: Այս տրամաբանությամբ գործողությունները, ինչպիսիք են «փոփոխելը», «աղավաղելը», նույնիսկ որոշ դեպքերում «ուղեփակելը» առաջացնում են վերը ներկայացված հետևանքները և դիտարկվում որպես վնաս պատճառելու իրավական արդյունք: Այսինքն, թվարկված գործողությունների կատարումը, ինքնին, կարող է դիտարկվել «վնասել» եզրույթի ներքո:

Հետևաբար, կարծում ենք աննպատակահարմար է համակարգչային տվյալը փոփոխելը առանձին հանցակազմով նախատեսելը, և գործնականում, կատարված հանրորեն վտանգավոր արարքների քրեաիրավական որակման շրջանակներում առաջացող հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք կամ կատարել օրենսդրական փոփոխություն, այն է՝ նախատեսել քրեական պատասխանատվություն համակարգչային տվյալը, ի թիվս այլնի, վերացնելու համար, որի ներքո կդիտարկվեն դրանք աղավաղելու և փոփոխելու գործողությունները, կամ Օրենսգրքում օգտագործված եզրույթները մեկնաբանել հետևյալ կերպ:

Մասնագիտական գրականությունը պարունակում է համակարգչային տվյալի փոփոխություն տերմինի բազմաթիվ սահմանումներ[26], սակայն, գերակշռում են այն կարծիքները, որ այս գործողությունը իրենից ենթադրում է տվյալի բովանդակային փոփոխություն: Մենք ևս կարծում ենք, որ համակարգչային տվյալի փոփոխություն ասելով պետք է հասկանալ դրանց բովանդակային փոփոխությունները, որոնք չեն կրի տեխնիկական բնույթ:

Համակարգչային տվյալների վնասում ասելով պետք է հասկանալ միջամտություն համակարգչային տեղեկատվության նկատմամբ, դրա կառուցվածքային ամբողջականության խախտում, որի արդյունքում դրանք կորցնում են իրենց բնականոն գործառնական հատկությունները կամ դառնում են օգտագործման համար ոչ անհրաժեշտ և պիտանի, ընդ որում, առանց դրանց բովանդակության փոփոխման կամ լիակատար ոչնչացման: Այսինքն, սույն գործողության պարագայում խախտվում է այդ տվյալների կառուցվածքը կամ ամբողջակա-

նությունը, որն էլ հանգեցնում է դրանք օգտագործելու անհնարինության, օրինակ, երբ խափանվում է ֆայլի կամ տվյալների բազայի կառուցվածքը, համապատասխան ֆայլը «փչանում է» և հնարավոր չի լինում մուտք գործել այդտեղ պարունակվող տվյալ ֆայլի կառուցվածքի վնասման պատճառով, հանգեցնում է տվյալների մասնակի կորստի՝ առանց բովանդակությունը փոխելու:

Այսինքն, տվյալների վնասման դեպքում դրանց բովանդակությունը մնում է անփոփոխ, սակայն այլևս խաթարվում է դրանք ճիշտ մշակելու կամ այլ կերպ օգտագործելու համակարգչային համակարգի, ցանցի կամ այլ սարքավորման աշխատանքը:

Պատկերացնենք մի իրավիճակ, երբ հանցավորը համակարգչային տվյալի վնասման համար օգտագործի հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ, օրինակ՝ հատուկ ծրագրային վիրուսներ և հանցավորի կողմից դիտավորությամբ վնասվի համակարգչային տվյալը (օրինակ՝ այլևս հնարավոր չլինի բացել բանկային համակարգում հաճախորդների տվյալների բազան կամ խախտվի ֆայլի կառուցվածքը): Սույն դեպքում, արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ, մասնավորապես ՀՀ ՔՕ 363-րդ հոդվածի 1-ին և 361-րդ հոդվածի 1-ին մասերով, քանի որ օգտագործվել էր հատուկ ծրագրային միջոց համակարգչային տվյալի վնասման համար և որպես վերջնարդյունք դիտավորությամբ այդ տվյալը վնասվել էր:

Անդրադառնանք համակարգչային տվյալը «աղավաղելու» գործողությանը: Հատկանշական է, որ բացատրական բառարանում աղավաղել բառը ներկայացվում է, ի թիվս այլնի, որպես փոփոխել: Այսինքն, այս եզրույթի համատեքստում ևս խնդիր է առաջանում հանցագործությունների որակման գործընթացում:

Մեր կարծիքով «աղավաղել» գործողության ներքո պետք է դիտարկել այնպիսի գործողությունները, որոնց հետևանքով տվյալը, թեև ձևականորեն մնում է համակարգում, այնուամենայնիվ, այլևս չի արտացոլում իրական կամ սկզբնական բովանդակությունը, այսինքն, խեղաթյուրվում է այդ տվյալի ճշգրտությունը, օրինակ, երբ մուտքագրված տվյալները խառնվում են կամ այդ տվյալի ձևաչափը փոխվում է:

Այսինքն, ի տարբերություն փոփոխելու, որի դեպքում կատարվում է տվյալի բովանդակային փոփոխություն, և ի տարբերություն վնասելու, որի դեպքում խաթարվում է դրանք ճիշտ մշակելու կամ այլ կերպ օգտագործելու համակարգչային համակարգի, ցանցի կամ այլ սարքավորման աշխատանքը և հնարավոր չի լինում մուտք գործել համակարգչային տվյալներ, աղավաղելու դեպքում համակարգչային տվյալը ձևականորեն առկա է, սակայն բովանդակային ճշգրտությունը խաթարված:

Որպես օրինակ ներկայացնենք միջազգային պրակտիկայում տեղի ունեցած մի դատական գործ: Այսպես, Գերմանիայի դաշնային դատարանը Urteil vom 10.11.1999 – 1 StR 637/98 գործի շրջանակներում արձանագրել էր, որ կորպորատիվ աշխատողը փոխել էր արտադրական ծրագրային միջավայրի պարամետրերը՝ առանց թույլտվության, ինչի հետևանքով տվյալների հաշվարկները խեղաթյուրվել էին: Այս գործողությունը դատարանը գնահատել էր որպես համակարգչային տվյալի աղավաղում և դիտարկել որպես պատճառված վնաս:

Բացի վերը շարադրված հիմնական հանցակազմերից ՀՀ ՔՕ-ն պատասխանատվություն է նախատեսում նաև միևնույն օբյեկտի դեմ ուղղված, միևնույն առարկան ունեցող և օբյեկտիվ կողմերով դրսևորվող որակյալ հանցակազմի համար: Նախքան որակյալ հանցակազմերին անդրադառնալը հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումների քննարկման համատեքստում հարկ է անդրադառնալ նաև մասնագիտական գրականությամբ բազմիցս քննարկման առարկա դարձած այն հիմնահարցին՝ արդյոք համակարգչային տվյալների պատճենահանումը, օրինակ՝ համակարգչային տվյալի վերաշարադրումը, դրա կրնօրինակումը կամ փոխանցումը ցանկացած նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա, որպես առանձին գործողություն և ոչ որպես այլ գործողության հետևանք հանգեցնում է քրեական պատասխանատվության, թե ոչ:

Համակարգչային տվյալի պատճենահանումը համակարգչային տեղեկատվության անալոգը անօրինական կերպով ստեղծելու և այն ցանկացած ֆիզիկական միջավայր փոխանցելու գործընթաց է՝ պահպանելով սկզբնական տվյալների (տեղեկատվության) բոլոր առկա պարամետրերը: Համակարգչային տվյալը կարող է գոյություն ունենալ ոչ միայն էլեկտրական ազդանշանների տեսքով, այլև մեխանիկական, թվային, օպտիկական, լազերային, քվանտային, մոլեկուլային և այլ ֆիզիկական ձևերով: Հետևաբար, համակարգչային տեղեկատվության պատճենը կարող է ունենալ բնօրինակին նույնական բովանդակություն, բայց ունենալ տարբեր ֆիզիկական ձև: Օրինակ, տեղեկատվությունը պատճենվել և փոխանցվել է ճկուն սկավառակից, կոշտ սկավառակից կամ ֆլեշ կրիչից (համակարգչային տեղեկատվություն էլեկտրական ազդանշանների տեսքով) CD կամ DVD սկավառակի (համակարգչային տեղեկատվություն օպտիկական կամ լազերային-օպտիկական ազդանշանների տեսքով): Համակարգչային տեղեկատվության ֆիզիկական ձևը փոխվել է, բայց պատճենված տեղեկատվության բովանդակությունը մնում է նույնը[27]:

Հատկանշական է, որ ներպետական օրենսդրությամբ համակարգչային տվյալների պատճե-

www.ardaradatutyunjournal.com

նահանումը որպես առանձին գործողություն քրեականացված չէ: ՀՀ ՔՕ-ն քննարկվող հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքները սահմանելիս ամրագրել է, որ ավելի խիստ քրեական պատասխանատվություն է նախատեսվում այն դեպքում, երբ վերը քննարկված օբյեկտիվ կողմը հանդիսացող արարքների դրսևորման հետևանքով առաջանում է, ի թիվս այլնի, առանձնակի արժեք ունեցող տվյալի պատճենահանում: Այսինքն, սույն դեպքում պատճենահանումը դիտարկվում է որպես ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքի հետևանք և առաջացնում ավելի խիստ քրեական պատասխանատվություն, երբ դրանց կատարման արդյունքում առաջանում է տվյալի պատճենահանում:

Միևնույն, կարևոր է նշել, որ գործնականում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ հանցավորի դիտավորությունը ուղղված լինի բացառապես համակարգչային տվյալը պատճենահանելուն, առանց այն ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու, որի պարագայում առկա օրենսդրական բացը հնարավորություն է տալիս խուսափել քրեական պատասխանատվությունից: Հետևաբար, անտրամաբանական է օրենսդրի մոտեցումը առավել խիստ քրեական պատասխանատվություն նախատեսել օբյեկտիվ կողմի կատարման արդյունքում որպես վրա հասող «պատճենահանում» հետևանքի համար՝ չքրեականացնելով դրա՝ որպես առանձին դրսևորվելու հանգամանքը:

Հատկանշական է, որ միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ պատճենահանումը որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում նախատեսելը նպատակահարմար է և արդիական: Մասնավորապես, ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի քրեական օրենսգրքի[28] 502-րդ հոդվածի «c» բաժնի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում համակարգչային տվյալների պատճենահանման համար:

Վերոշարադրյալի հիման վրա առաջարկում ենք Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսել և քրեականացնել նաև համակարգչային տվյալը պատճենահանելու գործողությունը:

Անդրադառնանք հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքներին: Այսպես, ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 2-րդ մասը քննարկվող հանցակազմը ծանրացնող հանգամանքեր է դիտարկել ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելը, որը զուգորդվել է համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելով կամ անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Նշյալից ակնհայտ է, որ այս ծանրացնող հանգամանքների դրսևորման պարագայում, որոշ դեպքերում, կարող է առաջանալ քննարկվող հանցագործության և ՀՀ ՔՕ 359-րդ հոդվածով նախատեսված «Համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը» վերտառությամբ հանցագործության հատում: Մասնավորապես, երբ հանցավորը դիտավորությամբ ոչնչացնի կամ վնասի համակարգչային տվյալը և դա զուգորդվի համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելով, արարքի որակման առնչությամբ գործնականում կարող են առաջանալ անհստակություններ:

Մեր կարծիքով, սույն դեպքում արարքը հանցագործությունների համակցությամբ որակելու հանգամանքը բացառվում է, քանի որ ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ծանրացնող հանգամանքի ձևակերպումն արդեն իսկ վկայում է, որ համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելով «համակարգչային սաբոտաժը» հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները կատարելը համարվում է քննարկվող հանցակազմի բաղկացուցիչ մաս: Հետևաբար, արարքը պետք է որակվի միայն ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ ՔՕ 359-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար նախատեսված է ավելի մեղմ պատիժ, քան «համակարգչային սաբոտաժը» հանցագործության համար:

Ավելին, ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 3-րդ մասը առավել խիստ քրեական պատասխանատվություն է նախատեսում այն դեպքում, երբ 361-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Նշյալ ծանրացնող հանգամանքի և ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքների տարբերությունը կայանում է դիտավորության դրսևորման մեջ, մասնավորապես, այն դեպքում, երբ վրա հասող հետևանքների նկատմամբ հանցավորը դրսևորում է ազգուշություն, արարքը որակվում է ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 2-րդ մասով, դիտավորության դրսևորման պարագայում՝ նույն հոդվածի 3-րդ մասով:

Կարևոր է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ այդ ծանրացնող հանգամանքների որակման համար որպես պարտադիր պայման է դիտարկվել առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի պատճառումը կամ առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացումը, փոփոխությունը, ուղեփակումը կամ պատճենահանումը:

Այսինքն, գույքային վնասի առաջացման դեպքում օրենսդիրը սույն հանցակազմի պարագայում արարքի քրեականացումը պայմանավորել է բացառապես առանձնապես խոշոր չափի գույքային վնասի առկայությամբ, որպիսի մոտեցման պարագայում, ստացվում է, որ հանցավորի կողմից օբյեկտիվ կողմի դրսևորումները դիտավորությամբ կատարելը, որը առաջացնում է խոշոր չափերի գույքային վնասի պատճառում, պետք է որակվի հասարակ հանցակազմով՝ ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով: Մինչդեռ, օրենսդրի այս մոտեցումն անտրամաբանական է, մասնավորապես այն պայմաններում, երբ մի շարք հանցագործությունների (269-րդ, 279-րդ, 280-րդ, 282-րդ հոդվածներ) պարագայում խոշոր չափերի գույքային վնասի պատճառումը ևս դիտարկվել է որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք:

Ինչ վերաբերում է առանձնակի նշանակություն ունեցող տվյալներին, ապա որպես այդպիսին կարող են դիտարկվել պետական քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական կամ անվտանգության հետ կապված ցանկացած այլ տվյալ, որի կորուստը, փոփոխությունը կամ բացահայտումը կարող է լուրջ վնաս պատճառել:

Ստացվում է, որ գործող ՀՀ ՔՕ-ն հստակ ամրագրում է թե՛ համակարգչային սաբոտաժի դրսևորումները՝ այդպիսիք դիտարկելով դրանք ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը, և թե՛ արարքը ծանրացնող հանգամանքների սպառիչ ցանկը:

Անդրադառնանք քննարկվող հանցակազմի սուբյեկտին առնչվող առանձնահատկություններին: Օրենսգրքով ամրագրված «համակարգչային սաբոտաժ» հանցագործության համար քրեական պատասխանատվությունը առաջանում է, եթե այն կատարվում է իրավաբանական անձի կողմից կամ էլ ֆիզիկական անձի կողմից, բայց վերջինիս պատասխանատվության ենթարկելու համար կարևոր է հանցանքը կատարելու պահին արդեն իսկ 16 տարին լրացած լինելը և մեղսունակ վիճակում գտնվելը: Ինչ վերաբերում է իրավաբանական անձի քրեական պատասխանատվությանը, ապա այն նոր ինստիտուտ է քրեական իրավունքում: Ի սկզբանե քրեական օրենսգիրքը պատասխանատվություն նախատեսում էր միայն ֆիզիկական անձանց համար, իսկ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքով կարգավորվեցին իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքերի, նրա նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների և այլ հարցեր: Միաժամանակ, կարևոր է նշել, որ ՀՀ ՔՕ 123-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքերը: Օրինակ, իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ դրա գործունեության վրա ազդելու իրավասություն ունեցող անձի դրդմամբ համակարգչային տվյալները ոչնչացվեն:

Ինչպես նշվեց ՀՀ ՔՕ-ն նախատեսել է հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքների սպառիչ ցանկ, որը հնարավորություն չի տալիս որպես այդպիսին դիտարկել նաև այլ հանգամանքներ: Մասնավորապես, չի բացառվում, որ սույն հանցանքը կատարելու համար ստեղծված լինի հանցավոր կազմակերպություն կամ այն կատարվի երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությամբ՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Այսպես, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ հանցավոր կազմակերպության կողմից համակարգչային սաբոտաժի կատարումը ավելի մեծացնում է հանցանքն ավարտին հասցնելու հանցավորների մտադրությունը իրականացնելու հնարավորությունը և արարքի հանրային վտանգավորությունը: Այսինքն, սույն դեպքում գործ ունենք ավելի համախմբված, միասնական դիտավորություն ունեցող անձանց կողմից հանցանքի կատարման հետ, որոնք գործում են նախապես պլանավորված, մշակված մեթոդների հիման վրա, որոնք հեշտացնում են հանցանքի կատարումը:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք որպես հանցակազմի ծանրացնող հանգամանքներ նախատեսել արարքի կատարումը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և հանցավոր կազմակերպության կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային սաբոտաժը միջազգայնորեն ճանաչված հիմնախնդիրներից մեկն է, որը խաթարում է տեղեկատվական անվտանգության համակարգը, վտանգում պետական ու հասարակական կառույցների կայունությունը, անմիջական սպառնալիք հանդիսանում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության համար:

Այն դուրս է եկել յուրաքանչյուր երկրի սահմաններից ու վերածվել վերազգային հիմնախնդրի, որի հաղթահարման միակ եղանակը բոլոր պետությունների կողմից դրա արգելմանն ուղղված միջոցառումների և խիստ վերահսկողական մեխանիզմների իրագործումն է:

Համակարգչային սաբոտաժը քրեականացնող օրենսդրության կատարելագործման նպատակով

ներկայացնում ենք հետևյալ առաջարկները և եզրահանգումները.

1. Կատարել օրենսդրական փոփոխություն, այն է՝ նախատեսել քրեական պատասխանատվություն համակարգչային տվյալը, ի թիվս այլնի, վերացնելու համար, որի ներքո կդիտարկվեն դրանք աղավաղելու և փոփոխելու գործողությունները, կամ ՀՀ ՔՕ-ում օգտագործված եզրույթները մեկնաբանել հետևյալ կերպ:

Համակարգչային տվյալի փոփոխություն ասելով պետք է հասկանալ դրանց բովանդակային փոփոխությունները, որոնք չեն կրի տեխնիկական բնույթ:

Համակարգչային տվյալների վնասում ասելով պետք է հասկանալ միջամտություն համակարգչային տեղեկատվության նկատմամբ, դրա կառուցվածքային ամբողջականության խախտում, որի արդյունքում դրանք կորցնում են իրենց բնականոն գործառնական հատկությունները կամ դառնում են օգտագործման համար ոչ անհրաժեշտ և պիտանի, ընդ որում, առանց դրանց բովանդակության փոփոխման կամ լիակատար ոչնչացման: Այսինքն, սույն գործողության պարագայում խախտվում է այդ տվյալների կառուցվածքը կամ ամբողջականությունը, որն էլ հանգեցնում է դրանք օգտագործելու անհնարինության,

Այսինքն, տվյալների վնասման դեպքում դրանց բովանդակությունը մնում է անփոփոխ, սակայն այլևս խաթարվում է դրանք ճիշտ մշակելու կամ այլ կերպ օգտագործելու համակարգչային համակարգի, ցանցի կամ այլ սարքավորման աշխատանքը:

«Աղավաղել» հասկացության ներքո պետք է դիտարկել այնպիսի գործողությունները, որոնց հետևանքով տվյալը, թեև ձևականորեն մնում է համակարգում, այնուամենայնիվ, այլևս չի արտացոլում իրական կամ սկզբնական բովանդակությունը, այսինքն, խեղաթյուրվում է այդ տվյալի ճշգրտությունը:

2. ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսել և քրեականացնել նաև համակարգչային տվյալը պատճենահանելու գործողությունը:

3. Որպես հանցակազմի ծանրացնող հանգամանքներ նախատեսել արարքի կատարումը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և հանցավոր կազմակերպության կողմից:

4. Գույքային վնասի առաջացման դեպքում օրենսդիրը սույն հանցակազմով արարքի քրեականացումը պայմանավորել է բացառապես առանձնապես խոշոր չափի գույքային վնասի առկայությամբ, որպիսի մոտեցման պարագայում, ստացվում է, որ հանցավորի կողմից օբյեկտիվ կողմի դրսևորումները դիտավորությամբ կատարելը, որը առաջացնում է խոշոր չափերի գույքային վնասի պատճառում, պետք է որակվի հասարակ հանցակազմով՝ ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով: Սինչդեռ, օրենսդրի այս մոտեցումն անտրամաբանական է, մասնավորապես այն պայմաններում, երբ մի շարք հանցագործությունների (ՀՀ ՔՕ 269-րդ, 279-րդ, 280-րդ, 282-րդ հոդվածներ) պարագայում խոշոր չափերի գույքային վնասի պատճառումը ևս դիտարկվել է որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք:

[1] Տե՛ս, Номоконов В.А., Тропина Т.Л.. Киберпреступность как новая криминальная угроза, криминология интернет-пространства УДК 343.9 ББК 67.51, 2012, էջ 45:
[2] Տե՛ս, Волеводз А.Г. Волеводз Д.А. Уголовное законодательство об ответственности за компьютерные преступления: ОПЫТ РАЗНЫХ СТРАН, Правовые вопросы связи. – 2004. – № 1. – С. 37-48.
[3] Տե՛ս, Номоконов В. А., Тропина Т.Л.. Киберпреступность как новая криминальная угроза, криминология интернет-пространства УДК 343.9 ББК 67.51, 2012, էջ 45:
[4] Տե՛ս, Апкаев Д. М. Преступления в сфере компьютерной информации / Д. М. Апкаев, А. С. Мельников // Пенитенциарное право: юридическая теория и правоприменительная практика. – 2019. – № 1 (19). – С. 74–76.
[5] Տե՛ս, Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիա, Սկզբնաղբյուրը՝ ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), Բուդապեշտ, ընդունվել է՝ 23.11.2001, ուժի մեջ է մտել՝ 01.02.2007:
[6] Տե՛ս, Explanatory Report to the Convention on Cybercrime Budapest, 23.XI.2001, European Treaty Series - No. 185
[7] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=121592 (վերջին մուտք՝ 15.10.2025թ.):
[8] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ է մտել 01.07.2022.

[9] Հասանելի է հետևյալ հղմամբ, https://book.kbsu.ru/theory/chapter2/1_2.htm (վերջին մուտք՝ 20.10.2025թ.):
[10] Տե՛ս, Tennessee Code § 39-14-601 — Definitions (Computer Network / System) https://law.justia.com/codes/tennessee/title-39/chapter-14/part-6/section-39-14-601/?utm_source. (վերջին մուտք՝ 01.11.2025թ.):
[11] Տե՛ս, Explanatory Report to the Convention on Cybercrime Budapest, 23.XI.2001, էջ 5:
[12] Տե՛ս, Tennessee Code § 39-14-601 — Definitions (Computer Network / System) https://law.justia.com/codes/tennessee/title-39/chapter-14/part-6/section-39-14-601/?utm_source. (վերջին մուտք՝ 01.11.2025թ.):
[13] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://gb.ru/blog/vidy-kompjuternyh-setej/ (վերջին մուտք՝ 22.09.2025թ.):
[14] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ittelo.ru/news/chto-takoe-periferiynoe-oborudovanie/?srsltid=AfmBOorLjKe-oiiyL3Hqve0UzonjFRkLydOmQe8dxnjgYYXOSBB58Dix (վերջին մուտք՝ 18.09.2025թ.):
[15] Տե՛ս, Николаевич Е. К. «Противодействие компьютерной преступности: теория, законодательство, практика», МОСКВА – 2021, 307:
[16] Տե՛ս, Лебедева В. М. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под общ. ред. д.ю.н., председателя Верховного Суда Российской Федерации. Москва: Норма, 2006. С. 704; Уголовное право России. Особенная часть: учебник / под ред. И. Э. Звечаровского. Москва: Норма: Инфра-М, 2010. С. 730. Добровольский Д. В. Актуальные проблемы борьбы с компьютерной преступностью (уголовно-правовые и криминологические проблемы) : 12.00.08 : дис. ... канд. юрид. наук. Москва, 2005. С. 50; Степанов-Егиянц В. Г. Указ. соч. С. 125.
[17] Տե՛ս, Радченко В. И., Михлина А. С. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред.. Санкт-Петербург: Питер, 2008. С. 563.
[18] Տե՛ս, Дворецкий М. Ю. Преступления в сфере компьютерной информации (уголовно – правовое исследование) : 12.00.08 : дис. … канд. юрид. наук. Волгоград, 2001. С. 84;
Лебедева В. М. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под общ.ред. доктора юридических наук, Председателя Верховного Суда Российской Федерации и доктора юридических наук, профессора Ю. И. Скуратова. Москва, 2002. С. 733. (Автор главы – к.ю.н. С.А. Пашин).
[19] Տե՛ս, Кадникова Н. Г. Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации (постатейный) / под общ. ред. д.ю.н., проф. Москва: Книжный мир, 2005. С. 691. (Автор главы – к.ю.н. А.В. Пушкин).
[20] Տե՛ս, Наумова А. В. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред. доктора юридических наук, проф.. Москва, 1996. С. 664 (Автор главы – д.ю.н., проф. С.В. Бородин).
Попов А.Н. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред. В. И. Радченко, А. С. Михлина. Санкт-Петербург: Питер, 2008. С.566.
Ефремова М.А. Уголовная ответственность за преступления, совершаемые с использованием информационно-телекоммуникационных технологий: монография. Москва: Юрлитинформ, 2015. С.100; Степанов-Егиянц В. Г. Указ. соч. С. 176.
[21] Տե՛ս, Быков В. М., Черкасов В. Н. Новый закон о преступлениях в сфере компьютерной информации: ст. 272 УК РФ // Российский судья. 2012. № 5. С. 14-19; Сало И. А. Указ. соч. С.104.
[22] Տե՛ս, Ефремова М.А. Уголовная ответственность за преступления, совершаемые с использованием информационно-телекоммуникационных технологий: монография. Москва: Юрлитинформ, 2015. С. 100; Степанов-Егиянц В. Г. Указ. соч. С. 176.
Տե՛ս, Радченко В. И., Михлина А. С. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред.. Санкт-Петербург: Питер, 2008. С. 566. (Автор главы – д.ю.н., проф. А.Н. Попов).
[23] Տե՛ս, California public law, art 502, section B(10) https://california.public.law/codes/penal_code_section_502#10-%E2%80%9Cinjury%E2%80%9D-means-any-alteration-deletion-damage-or-destruction (í»ñçÇÝ Ùáõïù՝ 20.09.2025Ã.):
[24] Տե՛ս, Computer Misuse Act 1990 https://www.legislation.gov.uk/ukpga/1990/18/enacted?utm_source (վերջին մուտք՝ 21.09.2025թ.):
[25] Տե՛ս, Computer Fraud and Abuse Act, 18 U.S.C. § 1030, 1996, art 18 https://www.law.cornell.edu/uscode/text /18/1030 (վերջին մուտք՝ 25.09.2025թ.):
[26] Տե՛ս, Волеводз А. Г. Противодействие компьютерным преступлениям: правовые основы международного сотрудничества. Москва: ООО Издательство «Юрлитинформ», 2002. С. 69);
Տե՛ս, Копырюлин А. Н. Преступления в сфере компьютерной информации: уголовно-правовой и криминологический аспекты: 12.00.08 : дис. … канд. юрид. наук. Тамбов, 2007. С. 17);
Зинина У. В. Преступления в сфере компьютерной информации в российском и зарубежном уголовном праве: 12.00.08 : дис. канд. юрид. наук. Москва, 2007. С. 57);
[27] Տե՛ս, Николаевич Е. К. «Противодействие компьютерной преступности: теория, законодательство, практика» МОСКВА – 2021, С 324:
[28] Տե՛ս, California Penal Code Part 1. Of Crimes and Punishments Title 13. Of Crimes Against Property Chapter 5. Larceny. 502. Unauthorized access to computers, computer systems and computer data.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ է մտել 01.07.2022:
2. Բուդապեշտի կոնվենցիա, Հիմնական ակտ (01.02.2007-մինչ օրս), ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), Եվրոպայի խորհուրդ, ընդունվել է 23.11.2001, ուժի մեջ է մտել 01.02.2007.
3. California public law, art 502, section B(10) https://california.public.law/codes/penal_code_section_502#10-%E2%80%9Cinjury%E2%80%9D-means-any-alteration-deletion-damage-or-destruction (վերջին մուտք՝ 20.09.2025թ.):
4. Computer Fraud and Abuse Act, 18 U.S.C. § 1030, 1996, art 18 https://www.law.cornell.edu/uscode/text/18/1030 (վերջին մուտք՝ 25.09.2025թ.):
5. Computer Misuse Act 1990 https://www.legislation.gov.uk/ukpga/1990/18/enacted?utm_source (վերջին մուտք՝ 21.09.2025թ.):
6. Explanatory Report to the Convention on Cybercrime Budapest, 23.XI.2001.
7. Tennessee Code § 39-14-601 — Definitions (Computer Network / System) https://law.justia.com/codes/tennessee/title-39/chapter-14/part-6/section-39-14-601/?utm_source. (վերջին մուտք՝ 01.11.2025թ.):
8. Апкаев, Д. М. Преступления в сфере компьютерной информации / Апкаев Д. М., Мельников А. С. // Пенитенциарное право: юридическая теория и правоприменительная практика. – 2019. – № 1 (19).
9. Быков В. М., Черкасов В. Н. Новый закон о преступлениях в сфере компьютерной информации: ст. 272 УК РФ // Российский судья. 2012. № 5.
10. Волеводз А. Г. Противодействие компьютерным преступлениям: правовые основы международного сотрудничества. Москва: ООО Издательство «Юрлитинформ», 2002.
11. Волеводз. А.Г. Волеводз Д.А. Уголовное законодательство об ответственности за компьютерные преступления: опыт разных стран, Правовые вопросы связи. – 2004. – № 1.
12. Дворецкий М. Ю. Преступления в сфере компьютерной информации (уголовно – правовое исследование) : 12.00.08 : дис. … канд. юрид. наук. Волгоград, 2001.
13. Добровольский Д. В. Актуальные проблемы борьбы с компьютерной преступностью (уголовно-правовые и криминологические проблемы) : 12.00.08 : дис. ... канд. юрид. наук. Москва, 2005. С. 50; Степанов-Егиянц В. Г. Указ. соч.
14. Ефремова М.А. Уголовная ответственность за преступления, совершаемые с использованием информационно-телекоммуникационных технологий: монография. Москва: Юрлитинформ, 2015. Степанов-Егиянц В. Г. Указ. соч.
15. Зинина У. В. Преступления в сфере компьютерной информации в российском и зарубежном уголовном праве: 12.00.08 : дис. … канд. юрид. наук. Москва, 2007.
16. Кадникова Н. Г. Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации (постатейный) / под общ. ред. д.ю.н., проф. Москва: Книжный мир, 2005.
17. Копырюлин А. Н. Преступления в сфере компьютерной информации: уголовно-правовой и криминологический аспекты, 12.00.08, дис. … канд. юрид. наук. 2007.
18. Лебедева В. М. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под общ. ред. д.ю.н., председателя Верховного Суда Российской Федерации. Москва: Норма, 2006. С. 704; Уголовное право России. Особенная часть: учебник / под ред. И. Э. Звечаровского. Москва: Норма: Инфра-М, 2010. С. 730. .
19. Наумова А. В. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред. доктора юридических наук, проф.. Москва, 1996. (Автор главы – д.ю.н., проф. С.В. Бородин);
20. Николаевич Е. К. «Противодействие компьютерной преступности: теория, законодательство, практика», МОСКВА – 2021.
21. Номоконов В.А., Тропина Т.Л. Киберпреступность как новая криминальная угроза, криминология интернет-пространства УДК 343.9 ББК 67.51, 2012.
22. Попов А.Н. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред. В. И. Радченко, А. С. Михлина. Санкт-Петербург: Питер, 2008.
23. https://www.arlis.am/documentview.aspx?docid=121592. (վերջին մուտք՝ 15.10.2025թ.):
24. https://book.kbsu.ru/theory/chapter2/1_2.html. (վերջին մուտք՝ 20.10.2025թ.):
25. https://gb.ru/blog/vidy-kompjuternyh-setej/. (վերջին մուտք՝ 22.09.2025թ.):

References

1. HH qreakan o’rensgirq, HO’-199-N, Miasnakan kayq 2021.05.17-2021.05.30, y’ndownvel e’ 05.05.2021, owjhi mej e’ mtel 01.07.2022:
2. Bowdapeshti konvencia, Himnakan akt (01.02.2007-minch o’rs), HHAGNPT 2008.02.11/9(17), Evropayi xorhowrd, y’ndownvel e’ 23.11.2001, owjhi mej e’ mtel 01.02.2007.
3. A.G.Volevodz D.A.Volevodz Ugolovnoe zakonodatel’stvo ob otvetstvennosti za komp’juternye prestuplenija: opyt raznyh stran, Pravovye voprosy svjazi. – 2004. – № 1.

4. Apkaev D. M. Prestuplenija v sfere komp'juternoj informacii / D. M. Apkaev, A. S. Mel'nikov // Penitenciarnoe pravo: juridicheskaja teorija i pravoprimenitel'naja praktika. – 2019. – № 1 (19).
5. Bykov V. M. Cherkasov V. N. Novyj zakon o prestuplenijah v sfere komp'juternoj informacii: st. 272 UK RF // Rossijskij sud'ja. 2012. № 5.
6. Dobrovol'skij D. V. Aktual'nye problemy bor'by s komp'juternoj prestupnost'ju (ugolovno-pravovye i kriminologicheskie problemy) : 12.00.08 : dis. ... kand. jurid. nauk. Moskva, 2005. S. 50; Stepanov-Egijanc V. G. Ukaz. soch.
7. Dvoreckij M. Ju. Prestuplenija v sfere komp'juternoj informacii (ugolovno – pravovoe issledovanie) : 12.00.08 : dis. … kand. jurid. nauk. Volgograd, 2001.
8. Efremova M.A. Ugolovnaja otvetstvennost' za prestuplenija, sovershaemye s ispol'zovaniem informacionno-telekommunikacionnyh tehnologij: monografija. Moskva: Jurlitinform, 2015. Stepanov-Egijanc V. G. Ukaz. soch.
9. Kadnikova N. G. Kommentarij k Ugolovnomu Kodeksu Rossijskoj Federacii (postatejnyj) / pod obshh. red. d.ju.n., prof. Moskva: Knizhnyj mir, 2005.
10. Kopyrjulin A. N. Prestuplenija v sfere komp'juternoj informacii: ugolovno-pravovoj i kriminologicheskij aspekty, 12.00.08, dis. … kand. jurid. nauk. 2007.
11. Lebedeva V. M. Kommentarij k Ugolovnomu kodeksu Rossijskoj Federacii / pod obshh. red. d.ju.n., predsedatelja Verhovnogo Suda Rossijskoj Federacii. Moskva: Norma, 2006. S. 704; Ugolovnoe pravo Rossii. Osobennaja chast': uchebnik / pod red. I. Je. Zvecharovskogo. Moskva: Norma: Infra-M, 2010. S. 730.
12. Naumova A. V. Kommentarij k Ugolovnomu kodeksu Rossijskoj Federacii / pod red. doktora juridicheskih nauk, prof.. Moskva, 1996. (Avtor glavy – d.ju.n., prof. S.V. Borodin);
13. Nikolaevich E. K. «Protivodejstvie komp'juternoj prestupnosti: teorija, zakonodatel'stvo, praktika», MOSKVA – 2021.
14. Nomokonov V. A., Tropina T.L. Kiberprestupnost' kak novaja kriminal'naja ugroza, kriminologija internet-prostranstva UDK 343.9 BBK 67.51, 2012.
15. Popov A.N. Kommentarij k Ugolovnomu kodeksu Rossijskoj Federacii / pod red. V. I. Radchenko, A. S. Mihlina. Sankt-Peterburg: Piter, 2008.
16. Volevodz A. G. Protivodejstvie komp'juternym prestuplenijam: pravovye osnovy mezhdunarodnogo sotrudnichestva. Moskva: OOO Izdatel'stvo «Jurlitinform», 2002.
17. Zinina U. V. Prestuplenija v sfere komp'juternoj informacii v rossijskom i zarubezhnom ugolovnom prave: 12.00.08 : dis. … kand. jurid. nauk. Moskva, 2007.

Анаит Бабаханян
Помощник Генерального прокурора Республики Армения

РЕЗЮМЕ

Уголовная ответственность за компьютерный саботаж

Преступления, совершаемые на компьютере, в компьютерной системе, компьютерной сети или на других компьютерных устройствах, вышли за пределы границ отдельных государств и превратились в транснациональную проблему. Единственным способом её преодоления является осуществление всеми государствами мер, направленных на её пресечение, и внедрение строгих контрольных механизмов.

В настоящей статье проведено исследование состава преступления, предусмотренного Уголовным кодексом Республики Армения статьёй под названием «Компьютерный саботаж».

В статье изучены и проанализированы уголовно-правовая характеристика рассматриваемого состава преступления, его элементы, а также выявлены проблемные правовые положения, которые на практике могут создавать определённые препятствия при уголовно-правовой квалификации деяния. По результатам проведённого анализа представлены законодательные предложения, направленные на совершенствование уголовного законодательства в данной сфере.

***Ключевые слова**: Будапештская конвенция о киберпреступности, компьютерный саботаж, компьютер, компьютерная система, компьютерная сеть.*

Anahit Babakhanyan
Assistant to Prosecutor General of the RA

SUMMARY
Criminal liability for computer sabotage

Crimes committed on a computer, in a computer system, computer network, or other computer devices have crossed the borders of individual states and have turned into a transnational issue. The only way to overcome this problem is through the implementation by all states of measures aimed at its prevention and the establishment of strict control mechanisms.

This article presents a study of the crime set forth in the Criminal Code of the Republic of Armenia, under the article titled “Computer Sabotage”.

The article examines and analyzes the criminal-law characteristics of the offence in question, its constituent elements, and identifies problematic legal provisions that may, in practice, create certain obstacles in the criminal-legal qualification of the act. As a result of the conducted analysis, legislative proposals have been presented with the aim of improving the criminal legislation in this field.

Key words: *Budapest Convention on Cybercrime, computer sabotage, computer, computer system, computer network.*

Ընագիրը ներկայացվել է 13.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 18.11.25թ.

ԱՐԵԳ ՅՈԼՉՅԱՆ
ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական
դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի
դասախոս (ժամավճարով), ասպիրանտ

ՈՉ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔ

Աշխատանքը նվիրված է քրեադատավարական սանկցիաների կիրառման ընդհանուր հիմքի բացահայտմանը, քրեական դատավարությունում ոչ պատշաճ վարքագծի խնդրին և դրա համար դատավարական սանկցիաներ կիրառելու իրավական հիմքերին: Վերլուծվում են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները և առկա տեսական աղբյուրները: Հիմնական շեշտադրումը կատարվում է «ոչ պատշաճ» և «ոչ իրավաչափ» վարքագծի հասկացությունների տարբերակման վրա: Աշխատանքում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ սանկցիաների կիրառման հիմքը ոչ թե զուտ իրավական, այլ ավելի լայն՝ սոցիալական, բարոյական և էթիկական նորմերին հակասող վարքագիծն է («ոչ պատշաճ»): Աշխատանքում տրվել է դատավարական սանկցիայի կիրառման հիմքի ընդհանուր սահմանումը: Այս վարքագիծը վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատականով դառնում է իրավախախտում: Առանձին քննարկվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի թերի կարգավորումը, որը «ոչ իրավաչափ վարքագծի արգելքը» տարածում է միայն վարույթի մասնավոր մասնակիցների վրա՝ անտեսելով հանրային մասնակիցների նկատմամբ համանման չափանիշի կիրառումը: Հատուկ անդրադարձ է կատարվել վարույթի հանրային մասնակիցների վարքագծի չարաշահման խնդրին: Արդյունքում տրվել են օրենսդրական կարգավորումների փոփոխության կոնկրետ առաջարկներ, ինչպես նաև առաջ են քաշվել գիտական եզրահանգումներ:

Հիմնաբառեր- *Դատավարական սանկցիա, ոչ իրավաչափ վարքագիծ, ոչ պատշաճ վարքագիծ, իրավունքի չարաշահում, բարեխիղճ վարքագիծ, քրեական դատավարության օրենսգիրք:*

Ներածություն.

Անվիճելի է, որ քրեական վարույթի իրականացման ընթացքում քրեական վարույթ իրականացնող յուրաքանչյուր մարմնի (քննիչի, դատախազի և դատարանի) առաջնային և հիմնական առաքելությունն է օրենսդրությամբ իր վրա դրված պարտականությունների և կոնկրետ տվյալ վարույթի փուլի խնդիրների արդյունավետ իրականացումը: Սինեւնույն ժամանակ, վարույթ իրականացնող մարմինը ցանկացած պարագայում պետք է իրեն օրենքով վերապահված և հասանելի գործիքակազմով վարութային պայմաններ ստեղծի իր վարութային առաքելության արդյունավետ և իրավաչափ իրականացման համար: Նշվածով պայմանավորված վարույթ իրականացնող մարմինը շատ հաճախ վարույթի ընթացքում բախվում է վարույթի մասնակիցների կողմից այնպիսի՝ ոչ պատշաճ վարույթային վարքագծի դրսևորմանը, որը խոչընդոտում է և երբեմն նաև խաթարում վարույթային խնդիրների արդյունավետ իրականացման գործընթացը: Նման պայմաններում վարույթ իրականացնող մարմնի առաջ ծառանում է վարույթի մասնակիցների՝ վարույթի բնականոն ընթացքը խախտող վարքագիծը կանխելու, խափանելու և վերացնելու խնդիրը: Վերոնշյալ խնդիրը լուծելու համար օրենսդիրը վարույթ իրականացնող մարմնին ընձեռել է որոշակի դատավարական գործիքակազմ, որի անբաժան մասն է հանդիսանում դատավարական սանկցիաների ինստիտուտը:

Գնահատման է արժանի այն փաստը, որ օրենսդիրը հստակ գիտակցելով ներկայացված հիմնախնդիրը ամուր օրենսդրական հենք է ստեղծել նշված իրավիճակները կարգավորելու համար, մասնավորապես այս առումով առաջնային է 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով ամրագրված «Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը» վերտառությամբ սկզբունքը, որը հենց նախանշում է վարույթի մասնավոր մասնակիցների[1] բարեխիղճ և իրավաչափ գործելու հրամայականը: Սինեւնույն ժամանակ գտնում ենք, որ վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիայի կիրառման հիմքերի շուրջ կան որոշ խնդիրներ, ինչպես նաև որոշ տեսական մեկնաբանման ենթակա հարցեր, որոնց մի մասին անդրադարձ կկատարենք աշխատանքում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Կատարված հետազոտությունը հիմնված է ընդհանուր գիտական և մասնագիտացված իրավաբանական մեթոդների համակցված կիրառման վրա, որոնք ապահովել են թեմայի բազմակողմանի և ամբողջական վերլուծությունը: Հետազոտության

www.ardaradatutyunjournal.com

ընթացքում օգտագործվել են ինչպես տեսական-բացատրական, այնպես էլ իրավահամեմատական և գործնական վերլուծական մեթոդներ:

Առաջին հերթին կիրառվել են վերլուծության, համադրության և սինթեզի մեթոդները, որոնց միջոցով ուսումնասիրվել և համադրվել են դատավարական սանկցիաների կիրառման ընդհանուր և կոնկրետ ճյուղային օրենսդրական հիմքերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել է նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մոտեցում, որի միջոցով ընդհանուր տեսական դրույթներից անցում է կատարվել կոնկրետ օրենսդրական և դատական պրակտիկ օրինակների ուսումնասիրությանը, և հակառակը՝ առանձին դեպքերից ձևավորվել են ընդհանուր գիտական եզրակացություններ: Դրանց օգնությամբ բացահայտվել են ոչ պատշաճ վարքագծի և ոչ իրավաչափ վարքագծի տարբերությունները, ինչպես նաև դրանց իրավական և սոցիալական բնույթը:

Մասնագիտական իրավաբանական մեթոդներից օգտագործվել են իրավական վերլուծության և դոգմատիկ մեկնաբանության մեթոդները, որոնք թույլ են տվել բացահայտել դատավարական նորմերի բովանդակությունը և դրանց տրամաբանական կապերը: Իրավահամեմատական մեթոդը հնարավորություն է տվել տարբերակել և համեմատել օրենսդրական դրույթները՝ բացահայտելով դատավարական սանկցիաների կիրառման միասնական և տարբեր մոտեցումները:

Համակարգային և կառուցվածքային վերլուծության մեթոդները կիրառվել են դատավարական վարքագծի՝ որպես իրավական, սոցիալական և բարոյական երևույթների փոխազդեցության ուսումնասիրության համար՝ ապահովելով հետազոտության ամբողջական և ինտեգրված տեսանկյունը:

Հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա իրավաբան-գիտնականների՝ դատավարական պատասխանատվության և վարքագծի հարցերով աշխատությունները (մասնավորապես՝ Ս. Դիլբանդյան, Լ. Գոլովկո և այլք), ինչպես նաև խնդրո առարկա հասարակական հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

1. *Ոչ պատշաճ վարութային վարքագիծը որպես դատավարական սանկցիայի կիրառման ընդհանուր հիմք.*

Անդրադառնալով ընդհանուր դատավարական սանկցիաների կիրառման հիմքերին՝ անհրաժեշտ է նշել, որ ներպետական օրենսդրությունը ամրագրել է ընդհանուր՝ ցանկացած տեսակի վարույթով (քաղաքացիական, վարչական, քրեական) դատավարական սանկցիաների կիրառման հիմքերը «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (այսուհետ նաև՝ Դատական օրենսգիրք)[2], ինչպես նաև կոնկրետ ճյուղային, մասնավորապես քրեական վարույթով դատավարական սանկցիաների կիրառմանը նվիրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ գլուխը: Դատական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատական սանկցիան կիրառվում է դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելու, ինչպես նաև դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:»: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում են սանկցիաների կիրառման հիմքերը, մասնավորապես դատարանը դատական սանկցիա կարող է կիրառել, երբ անձը՝ 1) չարաշահում է իր դատավարական իրավունքները կամ չարամտորեն չի կատարում իր դատավարական պարտականությունները, 2) չի ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտում է դատական նիստի կարգը, 3) դատական նիստի դահլիճում անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարույթի մասնակցի կամ այլ անձի կողմից իր իրավունքները չարաշահելու կամ իր պարտականությունները չարամտորեն չկատարելու միջոցով վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտելու, ինչպես նաև դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում վարույթն իրականացնող մարմինն իրավասու է այդ անձանց նկատմամբ կիրառելու դատավարական սանկցիա:»: Ընդհանրացնելով վերոգրյալը կարող ենք արձանագրել, որ դատավարական սանկցիաների կիրառման հիմքերն են դատավարական խախտումը՝ կոնկրետ դատավարական օրենքով սահմանված պարտականությունների չկատարումը, դատավարական իրավունքների չարաշահումը և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը: Հատկանշական է, որ դատավարագետներից շատերը գտնում են, որ դատավարական սանկցիայի կիրառման հիմք է հանդիսանում դատավարական խախտումը[3] և դատավարական խախտում են համարում նաև իրավունքի չարաշահումը[4], սակայն կան նաև տեսակետներ, որ քրեադատավարական խախտում է համարվում կոնկրետ օրենսդրությամբ ամրագրված նորմի/պարտականության խախտումը[5]: Այս համատեքստում մեզ համար ավելի ընդունելի է իրավունքի չարաշահման տարանջատումը դատավարական խախտումից, ինչը նաև բխում է քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից և այս առումով մենք համաձայն ենք պրոֆեսոր Ս.Դիլբանդյանի այն տեսակետի հետ, որ իրավունքի չարաշահումը իրավախախտում չէ, բայց սոցիալական տեսանկյունից ոչ ցանկալի վարքագիծ է[6]: Իսկ ինչ վերաբերում է դատարանի

նկատմամբ անհարգալից վերաբերմունքին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածով սահմանված է, որ դատական վարույթի բոլոր մասնակիցները դատարանին պարտավոր են դիմել հոտնկայս՝ «Պատվարժան Դատարան» արտահայտությամբ, ինչպես նաև դատական նիստի ընթացքում **դրսևորել պատշաճ վարքագիծ**: Որոշ պարագայում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը նույնպես կարելի է դիտարկել որպես դատավարական խախտում, բայց ոչ դատավարական կոնկրետ նորմի խախտում, քանի որ այստեղ գործ ունենք նաև վարքագծի բուն սոցիալական և ոչ թե մաքուր իրավական բնույթի հետ, մասնավորապես, եթե վարույթի պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագիծը կարգավորվում է իրավական ակտերով (օրինակ՝ փաստաբանի վարքագծի կանոնագիրք, դատախազի վարքագծի կանոններ), ապա վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագիծը ամբողջությամբ չի ընկնում վարքագծի իրավական կանոնակարգման տիրույթում և այստեղ առյուծի բաժին է ընկնում վարքագծի կանոնակարգման ընդհանուր սոցիալական-էթիկական կանոնակարգմանը:

Այսպիսով՝ համադրելով վերոնշյալը կարող ենք կրկնել, որ սանկցիաների կիրառման հիմքերն են դատավարական խախտումը, իրավունքի չարաշահումը, ինչպես նաև վարույթ իրականացնող մարմնի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որոնք համադրելով որպես ընդհանուր հիմք կարող ենք սահմանել, որ դատավարական սանկցիաները կիրառվում են այն վարույթի մասնակցի նկատմամբ ով դրսևորում է ոչ պատշաճ/ոչ իրավաչափ վարութային վարքագիծ:

Պատասխանելով այն հարցին, թե արդյոք ո՞րն է դատավարական սանկցիայի կիրառման ընդհանուր հիմքը, առաջանում է նոր հարց՝ հիմք պետք է հանդիսանա ոչ իրավաչափ, թե ոչ պատշաճ վարքագիծը և արդյո՞ք առկա է տարանջատում:

Այսպես, ինչպես արդեն նշվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով ամրագրվում է ոչ իրավաչափ վարքագծի արգելքը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ նորմերով, որոնք արդեն իսկ մեջբերվել են, հաճախ շեշտադրում է դատավարության մասնակցի կողմից պատշաճ վարքագծի դրսևորման պարտականությունը՝ հատկապես վարույթի դատական քննության փուլում: Պատշաճ բառը լեզվաբանորեն բացատրվում է որպես՝ հարկ եղած ձևով՝ վարմունքով և կատարված, պահանջված ձևին, մակարդակին համապատասխան[7]: Իսկ պատշաճ սոցիալական (վարութային) վարքագիծը բնութագրվում է որպես ներքինացված բարոյական չափանիշներին, նորմերին և կանոններին համապատասխան վարքագիծ[8]: Այսինքն, այնպիսի վարքագիծ, որը համապատասխանում է սոցիալապես ընդունված նորմերին և սպասումներին: Անդրադառնալով իրավաչափ վարքագծի հասկացությանը պետք է նշենք, որ իրավաչափ վարքագիծը բնութագրվում է որպես իրավունքի սոցիալական գործողության ոլորտում մարդու գործունեություն, որը հիմնված է դրա նպատակների և **պահանջների** գիտակցված կատարման վրա՝ պայմանավորված մշակութային և բարոյական հայացքներով և կյանքի փորձով: Մասնավորապես օրինական վարքագիծը կամքի գիտակցված դրսևորում է, երկրորդ, վարքագիծը գնահատվում է՝ այն համեմատելով իրավունքի նպատակների և պահանջների հետ, երրորդ, վարքագծի ներքին կարգավորիչները կամ դրդապատճառները որոշվում են անհատի մշակութային և բարոյական որակներով և կողմնորոշումներով, ինչպես նաև նրա կյանքի փորձով[9]: Այսպիսով՝ իրավաչափ վարքագծի բնութագրման համար անհրաժեշտ է դրա համեմատումը և դրա համապատասխանությունը ամրագրված օրենսդրական պահանջներին: Արդյունքում կարող ենք պնդել, որ իրավաչափ վարքագիծը գտնվում է զուտ իրավական տիրույթում, մինչդեռ պատշաճ վարքագիծը ընդհանուր սոցիալական՝ բարոյագիտական, բարոյական, էթիկական նորմերի կարգավորման տիրույթում:

Գաղտնիք չէ, որ տեսական գրականության մեջ անդրադառնալով իրավաբանական վարույթների ընթացքում վարույթի մասնակիցների վարքագծին միշտ ուշադրության կենտրոնում է գտնվել վարույթի պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագիծը և հենց այդ հիմնահարցերով զբաղվելով իրավաբանական կամ դատական էթիկայի գիտության շնորհիվ է որ առաջ են եկել և ամրագրվել դատավորների, փաստաբանների և դատախազների վարքագծի կանոնները: Մինչդեռ բավարար կերպով ուշադրության չեն արժանացել ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագծի կանոնները՝ թողնելով դրանք իրավական կարգավորման առարկայից դուրս: Սակայն դատարանի էթիկետը (վարվելակերպի կանոնները) ներառում է ոչ միայն ընդհանուր ընդունված, այլև հատուկ էթիկետի նորմեր: Իսկ իրավական վեճի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցները դատավարության ընթացքում սովորում են անհայտ էթիկետի կանոններ: Նրանք «քաղում» են դատարանի էթիկետի նորմերը դատարանի փաստաբանների կամ գործի այլ մասնակիցների վարքագծից, որոնք մասնագիտորեն կապված են դատական գործունեության հետ[10]: Դատական մշակույթի ապահովման տարրեր են համարվում, ի թիվս այլնի, դատավարության մասնագիտական և ոչ մասնագիտական մասնակիցների վարքագծի կանոնները, որոնք մշակվել են բարոյականության սկզբունքներն ու նորմերը հաշվի առնելով (բարոյական մշակույթ)[11]:

www.ardaradatutyunjournal.com

Ինչպես նշեցինք վարույթի պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագծի կանոնները կարգավորված են իրավական ակտերով, մինչդեռ ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագիծը կարգավորվում է էթիկական և բարոյական կանոններով: Ուստի կարող ենք փաստել, որ այն պայմաններում, երբ դատավարական սանկցիաներ կիրառելու հիմքերը ամբողջովին նորմատիվ կարգավորված չեն, մասնավորապես վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագծի առումով[12], ինչպես նաև իրավունքի չարաշահումը նույնպես ամբողջությամբ չի համարվում իրավախախտում, վարույթի մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիա կիրառելու հիմքը ոչ թե ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումն է այլ ոչ պատշաճ վարույթային վարքագծի դրսևորումը: Ասվածն էլ ավելի է ամրապնդում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի կարգավորումը, որի համաձայն՝ նախագահող դատավորը, ի թիվս այլնի, միջոցներ է ձեռնարկում ապահովելու դատական նիստին ներկա գտնվող անձանց **պատշաճ վարքագիծը**: Միևնույն ժամանակ իրավունքի տեսության համաձայն իրավական պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այնպիսի վարքագծից, որը հակասում է իրավունքին, վնաս է պատճառում հասարակությանը, պետությանը, անհատին[13], մինչդեռ ինչպես արդեն նշվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից գնահատման է ենթարկվում վարույթի մասնակցի վարքագծի պատշաճ լինելը, որը փաստացի կարգավորված չէ իրավունքի նորմերի կարգադրագրերով: Ուստի դասական գնահատմամբ, երբ նորմատիվացված չեն վարույթի ոչ պրոֆեսիոնալ սուբյեկտների վարքագծի կանոնները չի կարող խոսվել ոչ իրավաչափ վարքագծի մասին: Սակայն, ինչպես երևում է, նշվածը խառնաշփոթի տեղիք է տալիս և նույնիսկ առաջ է քաշում դատողություն առ այն, թե արդյո՞ք նման պայմաններում սանկցիաների կիրառումը իրավական է, թե ոչ: Ուստի անհրաժեշտ է հստակ սահմանել իրավախախտման հիմքը, որը ըստ մեր դիրքորոշման հանգում է հետևյալին. **Դատավարական սանկցիան ինչպես ցանկացած իրավական պատասխանատվություն առաջանում է իրավախախտման արդյունքում: Սանկցիայի կիրառման հիմք է հանդիսանում դատավարական կոնկրետ նորմի խախտումը, ինչպես նաև վարույթի մասնակցի կողմից ոչ պատշաճ (սոցիալական-վարութային)՝ էթիկական, բարոյական և այլ ընդունված սոցիալական նորմերին հակասող վարքագծի դրսևորումը, որը վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատման արդյունքում դառնում է ոչ իրավաչափ (իրավախախտում) և արդյունքում հանգեցնում իրավական պատասխանատվության: Այսինքն՝ վարույթի մասնակցի կողմից դրսևորված այնպիսի վարքագիծը, որը տվյալ պարագայում վարույթն իրականացնող մարմնի կողմից կգնահատվի որպես ոչ պատշաճ, արդեն իսկ վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատման արդյունքում կհանդիսանա ոչ իրավաչափ: Պետք է ընդգծել, որ ոչ միշտ է ոչ պատշաճ վարքագիծը ինքնաբերաբար նշանակում ոչ իրավաչափ, դրա համար պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատականը վերոնշյալ վարքագծի վերաբերյալ**: Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է ամրագրել, որ արգելվում է ոչ թե ոչ իրավաչափ այլ ոչ պատշաճ վարույթային վարքագիծը, որի դրսևորումը արդեն իսկ վարույթն իրականացնողի գնահատմամբ կհամարվի ոչ իրավաչափ արարք և կհանգեցնի իրավական հետևանքների՝ դատավարական սանկցիայի կիրառման տեսքով: Ուստի գտնում ենք, որ իրավական պատասխանատվության հիմքերի կանխատեսելիության տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածում ամրագրել ոչ պատշաճ վարքագծի արգելքը:

Մեր կողմից արված եզրահանգումները ցույց տվեցին, որ ներկա կարգավորմամբ օրենսդիրը լայն հայեցողություն է տվել վարույթն իրականացնող մարմնին ինչը ներկայիս իրավական մտածողության համատեքստում այդքան էլ գովելի չէ: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է կատարել քայլեր, որոնք վարույթի մասնակիցների վարքագծի գնահատումը հնարավորինս կբերեն մաքուր իրավական դաշտ, մասնավորապես գտնում ենք, որ անհրաժեշտ են վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների համար վարույթի ընթացքում նմուշային որոշակի վարքագծի կանոնների մշակում, որոնք էլ դատարանին հնարավորություն կտան գնահատումը իրականացնել վարքագծի իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ:

2. Դատավարական իրավունքի չարաշահումը, որպես վարույթի հանրային մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիայի կիրառման ընդհանուր հիմք.

Աշխատանքի նախորդ հատվածում հիմնականում շեշտադրվել է վարույթի ոչ պրոֆեսիոնալ՝ մասնավոր մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիաների կիրառման հիմքերը, սակայն խնդիրներ առկա են նաև վարույթի հանրային մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիաներ կիրառելու հիմքերի մեջ: Մասնավորապես հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանվում է միայն վարույթի մասնավոր մասնակիցների ոչ իրավաչափ/պատշաճ վարքագծի արգելքը, ինչը մեր կարծիքով հիմնավոր չէ: Ասվածը հիմնավորելու համար անհրաժեշտ է վեր հանել խնդրո առարկա հոդվածի բովանդակությու-

նը, ըստ որի՝ 1) վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն, 2) արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին: Այսպիսով՝ առաջ է քաշվում իրավունքների և պարտականությունների բարեխիղճ կատարման և դրանց չչարաշահման հրամայականը: Հարկ է նշել, հանրային մասնակիցների վերաբերյալ կարգավորման այս հոդվածում բացակայությանը անդրադարձ է կատարվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույցում, որտեղ նշվել է, որ վարույթի հանրային մասնակիցների պատշաճ վարքագծի հիմնական չափանիշներն ամրագրված են վարութային այլ սկզբունքով (հանրայնության սկզբունքով), ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը սահմանող դրույթներով[14]: Նշված մեկնաբանությունները համահունչ են ի.գ.դ. Լ.Վ. Գոլովկոի այն դիրքորոշմանը, որ քրեադատավարական հարկադրանք երբեք չի կիրառվում այն պաշտոնյաների և պետական մարմինների նկատմամբ, որոնք քրեական դատավարության հանրային իրավունքի մասնակիցներ են, այսինքն՝ նրանք պարզապես չեն մասնակցում քրեական դատավարությանը, այլ իրականացնում են դրանցում դատավարությանը վերաբերող լիազորություններ[15]: Գտնում ենք, որ այս մեկնաբանությունները տեղին չեն, քանի որ նույն տրամաբանությամբ կարող էր ասվել, որ վարույթի հանրային մասնակիցներն իրենց լիազորությունների բարեխիղճ ապահովումը նախատեսված է նրանց օրենսդրությամբ և ենթաօրենսդրական ակտերով սահմանված վարքագծի կանոններով, մինչդեռ կոնկրետ խնդրո առարկա իրավունքի չարաշահման և դրա բարեխիղճ գործելու վերաբերյալ հստակ կարգավորումներ դրանք չեն նախատեսում և իրենց բնույթով չեն կարող լրացնել այն դաշտը, որն ի սկզբանե պետք է կարգավորվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Անդրադառնալով բուն իրավունքի չարաշահմանը պետք է նշել, որ չնայած վարույթի հանրային մասնակիցներն իրենց վարութային իրավունքները իրացնում են ելնելով իրենց պաշտոնեական լիազորություններից, ինչը հենց բացառում է նրանց մոտ սուբյեկտիվ իրավունքների առկայությունը, սակայն օրենսդրությունը նրանց տվել է հայեցողության շրջանակ, որի իրականացման ժամանակ էլ առաջ է գալիս իրավունքները չչարաշահելու և բարեխիղճ գործելու պահանջը: Այստեղ տեղին է ամրագրել քրեադատավարական իրավունքի չարաշահման հասկացությունը, այն է՝ քրեական դատավարության մեջ իրավունքների չարաշահումը դիտավորյալ գործողություն է, որը դրսևորվում է քրեական դատավարության ցանկացած մասնակցի կողմից կատարվող գործողության տեսքով, որը բաղկացած է օրենքի ուժով իրեն պատկանող սուբյեկտիվ իրավունքի անարդար իրականացումից՝ հակասելով այդ իրավունքի իրական նպատակին և իմաստին, որը վնաս է հասցնում քրեական դատավարության մասնակիցներին և (կամ) արդարադատության շահերին կամ վնասի սպառնալիքի առաջացում[16]:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ վարույթի հանրային մասնակիցը ունենալով իրավունքի իրականացման հայեցողություն նույնպես ունի դրա չարաշահման իրական հնարավորություն: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չամրագրելով վարույթի հանրային մասնակցի կողմից իրավունքների չարաշահման արգելքը առաջ է բերում այլ խնդիրներ, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով ամրագրված իրավունքի իրականացման սահմանափակում դատական սանկցիայի կիրառման համատեքստում պարզ չէ արդյոք նշված սանկցիան կարող է կիրառվել վարույթի հանրային մասնակիցների նկատմամբ, թե ոչ: Մեկ կողմից օրենսգիրքը սահմանել է, որ նշված սանկցիան կարող է կիրառվել վարույթի մասնակցի նկատմամբ՝ այսինքն պետք է ենթադրվի և հանրային և մասնավոր մասնակցի նկատմամբ կիրառման հնարավորությունը, մյուս կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը փաստացի սահմանել է միայն վարույթի մասնավոր մասնակցի նկատմամբ այդ հիմքով սանկցիայի կիրառման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է իրավունքների բարեխիղճ իրականացմանը, ապա այս մասով նախ նշենք, որ բարեխղճությունը, որպես իրավունքների իրականացման սահմանափակում ուղղված է քրեական դատավարության մասնակիցների կողմից իրավունքների անպատասխանատու իրականացման հաղթահարմանը, ինչպես նաև իրավական նորմերի բացակայության կամ անորոշության դեպքում շահերի հնարավոր բախման լուծմանը[17]: Այսինքն՝ բարեխիղճ գործելը կարևոր է վարույթի ցանկացած մասնակցի և, հատկապես, պետաիշխանական լիազորություններով օժտված անձի դեպքում և հատկապես այն պարագայում, երբ հնարավոր է օրենսդրական հստակ կարգավորումների բացակայություն և փաստացի առկա է լինում հանրային մասնակցի իրավունքների իրականացման մեծ լուսանցք: Հարկ է նշել, որ իրավունքի չարաշահումը և անբարեխիղճ իրականացումը միմյանց սերտորեն փոխկապակցված և հաճախ նույնացվող երևույթներ են ուստի օրգանական է, որ իրավունքի չարաշահման արգելքը և բարեխիղճ գործելու պահանջը

www.ardaradatutyunjournal.com

համատեղ ներառվեն օրենսդրական կարգավորումներում:

Այս առումով պետք է նշել, որ գովելի են նախկինում գործող 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20.1-րդ հոդվածի կարգավորումները, որի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն:»: Այսինքն՝ նախկինում գործող օրենսդրությունը չէր բավարարվել միայն վարույթի մասնավոր մասնակիցների վրա իրավաչափ վարքագիծ դրսևորելու պարտականության ամրագրմամբ, այլ ձևավորել էր ընդհանուր սկզբունք՝ դատավարության բոլոր մասնակիցների համար: Ավելին, եթե ուսումնասիրենք օրենքի նախագծի հիմնավորումները, ապա պարզ կդառնա, որ նշված սկզբունքի ամրագրումը օրգանական կապի մեջ է դրվել իրավունքների իրականացման սահմանափակում դատավարական սանկցիայի հետ և դրանք ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգիրք ներմուծվել են մեկ նախագծով: Մասնավորապես նախագծի հիմնավորումներում նշվում է. «որպես դատական սանկցիայի առանձին տեսակ նախատեսել իրավունքի իրականացման սահմանափակումը, որն առաջարկվում է դատարանի կողմից կիրառելի դարձնել այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը, իր դատավարական իրավունքներից օգտվելիս, պարբերաբար չարաշահում է դրանք՝ վտանգելով դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխավորումն ու արդարադատության շահի ապահովումը: (…)»[18]: Այսպիսով օրենսդիրը նախկին դատավարական օրենսդրության պայմաններում հիմնավոր է համարել իրավաչափ վարքագծի դրսևորման պարտականության սահմանումը վարույթի պետական ներկայացուցիչների համար և նշված իրավակարգավորումը ներմուծել է նաև նրանց կողմից այլոց իրավունքներին ոչ արդարացիորեն միջամտող հայեցողության սահմանափակման համար՝ նշվածն ապահովելով իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիայով: Իսկ նոր կարգավորումների պայմաններում, ինչպես արդեն նշվել է խնդիր է առաջանում վարույթի հանրային մասնակիցների նկատմամբ նշված սանկցիայի կիրառման գործում:

Ամփոփելով վերոնշյալը, պետք արձանագրենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը թերի է կարգավորում առկա հարաբերությունները, ինչն առաջացնում է իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիայի կիրառման հետ կապված օրենսդրական խնդիրներ և այն պետք է լրացվի ներառելով նաև դատավարության հանրային մասնակիցների բարեխիղճ գործելու և իրավունքի չարաշահում թույլ չտալու պարտականությունը՝ հետ բերելով օրենսդրությունը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի կարգավորման տրամաբանությանը: Իսկ վարույթի հանրային մասնակիցների կողմից իրենց իրավունքների բարեխիղճ/անբարեխիղճ իրացումը և իրավունքների չարաշահումը կրկին պետք է գնահատվեն վարույթն իրականացնողի (դատարանի) կողմից դրա պատշաճ իրացման՝ պատշաճ վարքագիծ հանդիսանալու/չհանդիսանալու համատեքստում:

Եզրակացություն.

1. Դատավարական սանկցիաների կիրառման հիմքերն են դատավարական խախտումը, իրավունքի չարաշահումը, ինչպես նաև վարույթ իրականացնող մարմնի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը:

2. Որպես ընդհանուր հիմք կարող ենք սահմանել, որ դատավարական սանկցիաները կիրառվում են այն վարույթի մասնակցի նկատմամբ ով դրսևորում է ոչ պատշաճ/ոչ իրավաչափ վարույթային վարքագիծ:

3. Այն պայմաններում, երբ դատավարական սանկցիաներ կիրառելու հիմքերը վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագծի առումով, ամբողջությամբ կարգավորված չեն և առկա չեն վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների վարքագծի կանոններ, գտնում ենք, որ վարույթի մասնակիցների նկատմամբ դատավարական սանկցիա կիրառելու հիմքը ոչ թե ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումն է, այլ ոչ պատշաճ վարույթային վարքագծի դրսևորումը:

4. Դատավարական սանկցիայի կիրառման հիմք է հանդիսանում դատավարական կոնկրետ նորմի խախտումը, ինչպես նաև վարույթի մասնակցի կողմից ոչ պատշաճ (սոցիալական-վարութային)՝ էթիկական, բարոյական և այլ ընդունված սոցիալական նորմերին հակասող վարքագծի դրսևորումը, որը վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատման արդյունքում դառնում է ոչ իրավաչափ (իրավախախտում) և արդյունքում հանգեցնում իրավական պատասխանատվության:

5. Միևնույն ժամանակ ցանկացած սոցիալապես ոչ ցանկալի վարքագիծը անպայմանորեն դատավարական իմաստով չի համարվի ոչ պատշաճ վարքագիծ և չի հանդիսանա ոչ իրավաչափ: Քանի որ նշված վարքագծի իրավախախտում համարվելու համար պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գնահատականը վերոնշյալ վարքագծի վերաբերյալ:

6. ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը պետք է ենթարկվի օրեսդրական փոփոխության և նույնիսկ պետք է փոխվի հոդվածի վերնագիրը այն սահմանելով՝ «Ոչ պատշաճ

վարքագծի արգելքը», ինչն ավելի կհստակեցնի և առավել կանխատեսելի կդարձնի դատավարական սանկցիաների կիրառման համատեքստում քրեադատավարական պատասխանատվության հիմքերը:

7. Անհրաժեշտ է կատարել քայլեր, որոնք վարույթի մասնավոր մասնակիցների վարքագծի գնահատումը հնարավորինս կբերեն մաքուր իրավական դաշտ, մասնավորապես անհրաժեշտ է վարույթի ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների համար վարույթի ընթացքում (մեծապես դատական վարույթի) նմուշային որոշակի վարքագծի կանոնների մշակում, որոնք էլ դատարանին հնարավորություն կտան գնահատումն իրականացնել վարքագծի իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ:

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում՝ վարույթի հանրային մասնակիցների քրեադատավարական իրավունքների չարաշահման ասպեկտով արձանագրում ենք, որ վարույթի հանրային մասնակիցը, չնայած սուբյեկտիվ իրավունքներ չունենալուն՝ ունենալով իր լիազորությունների իրականացման շրջանակում իրավունքի իրականացման հայեցողություն նույնպես ունի դրա չարաշահման իրական հնարավորություն:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը, չներառելով դրա կարգավորման տիրույթում վարույթի հանրային մասնակիցների վարքագիծը, թերի է կարգավորում առկա դատավարական հարաբերությունները, ինչը առաջացնում է իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիայի կիրառման խնդիրներ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը պետք է լրացվի ներառելով նաև դատավարության հանրային մասնակիցների բարեխիղճ գործելու և իրավունքի չարաշահում թույլ չտալու պարտականությունը՝ նույնացվելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20.1-րդ հոդվածի կարգավորմանը:

10. Վարույթի հանրային մասնակիցների կողմից իրենց իրավունքների բարեխիղճ/անբարեխիղճ իրացումը և իրավունքների չարաշահումը կրկին պետք է գնահատվեն վարույթն իրականացնողի (դատարանի) կողմից դրա պատշաճ իրացման՝ պատշաճ վարքագիծ հանդիսանալու/չհանդիսանալու համատեքստում:

---

[1] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը ամրագրում է միայն մասնավոր մասնակիցների կողմից բարեխիղճ և իրավաչափ գործելու հրամայականը, ինչի հետ հեղինակը համաձայն չէ և այս մասով անդրադարձ կկատարվի բուն աշխատանքում:

[2] Դատական օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով օգտագործվում է դատական սանկցիա եզրույթը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատավարական սանկցիա եզրույթը, սակայն գտնում ենք որ այս տարբերությունը կրում է զուտ լեզվական բնույթ և չունի բովանդակային նշանակություն, այդ իսկ պատճառով նշվածը քննարկման առարկա դարձնելը համարում ենք առարկայազուրկ:

[3] Տե՛ս, ի թիվս այլնի, Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ. Քրեադատավարական սանկցիաները (գիտագործնական մեկնաբանություններ) Երևան, Տիգրան Մեծ 2022թ. էջ 28:

[4] Տե՛ս, Попова З. В. Санкции в правоохранительном процессе: понятие, виды, основания применения : дис. – Российская академия правосудия, 2008, էջ 78:

[5] Տե՛ս, Ольков, С.Г. Уголовно-процессуальные правонарушения / - Тюмень, 1996. - էջ 49:

[6] Տե՛ս, Դիլբանդյան Ս. Ոչ պատշաճ վարքագծի արգելքը քրեական դատավարության սկզբունքների համակարգում. Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 15(1 (40), 2024, էջ 113:

[7] Տե՛ս, Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան : ,Հայաստանե Հրատարակչություն, Երեւան, 1976, էջեր 1194-1195:

[8] Տե՛ս, Унарова Л. Д. Поведение человека: ценностно-смысловые основания и социокультурные факторы среды : автореферат дис.. Улан-Удэ. 2013. Էջ 34:

[9] Տե՛ս, В.В.Оксамытный, Теория государства и права: учебник /. Москва: ЮНИТИ, 2012. Էջ 511:

[10] Տե՛ս, Красовская О. В.. Судебный этикет. Юрислингвистика, (9), 2008, էջ 101:

www.ardaradatutyunjournal.com

[11] Տե՛ս, Куницина О.А. К вопросу об основных элементах культуры судебного процесса. Вестник Воронежского государственного университета. Серия: Право, (2 (53)), 2023. էջ 106:
[12] Այս մասին անդրադարձ կատարվել է նաև Եվրոպայի խորհրդի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքի 60-րդ կետում: Տե՛ս Opinion of the directorate general human rights and rule of law of the council of europe on the revised draft criminal procedure code of the Republic of Armenia, հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/coe-opinion-on-the-revised-draft-cpc-of-armenia/16809cd984, վերջին այցելություն՝ 2025թ. հոկտեմբերի 24:
[13] Տե՛ս, Վաղարշյան Ա. , Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 332:
[14] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների եվ հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց
[15] Տե՛ս, Головко Л.В. Государсво и его уголовное судопроизводство: Монография. Москва: Издательский дом «Городец», 2022. Էջ 25:
[16] Տե՛ս, Богатырев Д.В. Основания и механизмы преодоления злоупотребления правом в досудебном уголовном производстве: автореф. дис, Москва, 2023., Էջ 12:
[17] Տե՛ս, Желева О.В. Добросовестность и разумность как пределы осуществления субъективных прав в уголовном судопроизводстве // Вестн. Том. гос. ун-та. 2016. №407. Էջեր 189-190:
[18] Տե՛ս, հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12886&Reading=0, վերջին այցելություն՝ 2025թ. հոկտեմբերի 24:

Գրականության ցանկ և աղբյուրներ

1. «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք: Ընդունվել է 07.02.2018թ.-ին, ուժի մեջ մտել՝ 09.04.2018թ.-ին: ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 01.07.1998թ.-ին, ուժի մեջ մտել՝ 12.01.1999թ.-ին, ուժը կորցրել՝ 01.07.2022թ.-ին: ՀՀՊՏ 1998.09.21/22(55):
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 30.06.2021 թ.-ին, ուժի մեջ մտել՝ 01.07.2022թ.-ին: Միասնական կայք 2021.07.26-2021.08.08, պաշտոնական հրապարակման օրը 28.07.2021:
4. Աղայան Է. «Արդի հայերենի բացատրական բառարան»: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, 1615 էջ:
5. Դիլբանդյան Ս. «Ոչ պատշաճ վարքագծի արգելքը քրեական դատավարության սկզբունքների համակարգում»: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 15(1 (40), 2024, էջեր 106-116:
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: 613 էջ:
7. Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ. «Քրեադատավարական սանկցիաները (գիտագործնական մեկնաբանություններ)»: Երևան, Տիգրան Մեծ, 2022թ., 176 էջ:
8. Վաղարշյան Ա. «Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն»: ԵՊՀ- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011, 448 էջ:
9. Богатырев Д.В. «Основания и механизмы преодоления злоупотребления правом в досудебном уголовном производстве»: автореф. дис. Москва, 2023, 36 էջ:
10. Головко Л.В. «Государство и его уголовное судопроизводство»: Монография. Москва: Издательский дом «Городец», 2022, 464 էջ:
11. Желева О.В. «Добросовестность и разумность как пределы осуществления субъективных прав в уголовном судопроизводстве»: Вестн. Том. гос. ун-та. 2016. №407, էջեր 186-191:
12. Куницина О.А. «К вопросу об основных элементах культуры судебного процесса»: Вестник Воронежского государственного университета. Серия: Право, (2 (53)), 2023, էջեր 105-110:
13. Красовская О. В.. «Судебный этикет»: Юрислингвистика, (9), 2008, էջեր 101-108:
14. Ольков, С.Г. «Уголовно-процессуальные правонарушения»: Тюмень, 1996, 268 էջ:
15. Оксамытный В. В. «Теория государства и права: учебник»: Москва: ЮНИТИ, 2012, 511 էջ:
16. Попова З. В. «Санкции в правоохранительном процессе: понятие, виды, основания применения»: диссертация. – Российская академия правосудия, 2008, 189 էջ:
17. Унарова Л. Д. «Поведение человека: ценностно-смысловые основания и социокультурные факторы среды»: автореферат дис. Улан-Удэ. 2013, 49 էջ:
18. Opinion of the directorate general human rights and rule of law of the council of europe on the revised draft criminal procedure code of the Republic of Armenia: Հասանելի է՝ https://rm.coe.int/coe-opinion-on-the-revised-draft-cpc-of-armenia/16809cd984, վերջին այցելություն՝ 2025թ. հոկտեմբերի 24:

19. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք: Հասանելի է՝ http://www.parliament.am/drafts.php?sel= show-draft&DraftID=12886&Reading=0, վերջին այցելություն՝ 2025թ. հոկտեմբերի 24:

References

1. "HH Datakan Orensgrk'" HH sahmanadrakan orenk' ["Judicial Code of the Republic of Armenia" Constitutional Law of the RA]. Adopted on February 7, 2018, entered into force on April 9, 2018. (In Armenian)
2. HH k'reakan datavarut'yan orensgrk' [Criminal Procedure Code of the Republic of Armenia]. Adopted on July 1, 1998, entered into force on January 12, 1999, ceased to be in force on July 1, 2022. (In Armenian)
3. HH k'reakan datavarut'yan orensgrk' [Criminal Procedure Code of the Republic of Armenia]. Adopted on June 30, 2021, Entered into force on July 1, 2022.(In Armenian)
4. Aghayan E. "Ardi hayereni bac'atrakan bararan" [Explanatory Dictionary of Modern Armenian]. Yerevan, "Hayastan" hratarakch'ut'yun, 1976, 1615 p. (In Armenian)
5. Dilbandyan S. "Voch patsharj varkagitsi argeleke qreak'an datavarut'yan skzbnakanneri hamakargum" [Prohibition of Improper Conduct in the System of Principles of Criminal Procedure]. Journal of Yerevan University. Law, 15(1 (40)), 2024, pp. 106–116. (In Armenian)
6. Hayastani Hanrapetut'yan k'reakan datavarut'yan nor orensgrk'i hayetsakargayin luts'umneri, nororarakan motets'umneri yev himnakan institutneri meknabanman gorts'nakan ughhets'uyts [Practical Guide to the Interpretation of the Conceptual Solutions, Innovative Approaches, and Key Institutions of the New Criminal Procedure Code of the Republic of Armenia]. 613 pages. (In Armenian)
7. Ghambaryan A., Israelyan Sh. "Qreak'an datavarakan sankts'iannerë (gitagorc'nakan mek'nabanut'yunner)" [Criminal Procedure Sanctions (Scientific and Practical Commentaries)]. Yerevan, "Tigran Mets," 2022, 176 p. (In Armenian)
8. Vagharshyan A. "Petut'yan ev iravunqi tesutyun–2: Dasakhosut'yun" [Theory of State and Law-2: Lecture]. Yerevan, YSU, Author's Publication, 2011, 448 p. (In Armenian)
9. Bogatyrëv D. V. "Osnovaniya i mekhanizmy preodoleniya zloupotrebleniya pravom v dosudebnom ugolovnom proizvodstve" [Grounds and Mechanisms for Overcoming Abuse of Rights in Pre-trial Criminal Proceedings]. Abstract of Dissertation, Moscow, 2023, 36 p.(In Russian)
10. Golovko L. V. "Gosudarstvo i ego ugolovnoe sudoproizvodstvo" [The State and Its Criminal Procedure]. Monograph, Moscow: Izdatelskiy dom "Gorodets," 2022, 464 p. (In Russian)
11. Zheleva O. V. "Dobrosovestnost' i razumnost' kak predely osushchestvleniya sub''ektivnykh prav v ugolovnom sudoproizvodstve" [Good Faith and Reasonableness as Limits on the Exercise of Subjective Rights in Criminal Procedure]. Vestnik Tomskogo Gosudarstvennogo Universiteta (Tomsk State University Journal), No. 407, 2016, pp. 186–191. (In Russian)
12. Kunitsina O. A. "K voprosu ob osnovnykh elementakh kul'tury sudebnogo protsessa". [On the Issue of the Main Elements of Judicial Process Culture]. Vestnik Voronezhskogo Gosudarstvennogo Universiteta. Seriya: Pravo (Voronezh State University Journal. Series: Law), (2 (53)), 2023, pp. 105–110. (In Russian)
13. Krasovskaya O. V. "Sudebnyy etiket". [Judicial Etiquette]. Yurislingvistika (Jurilinguistics), (9), 2008, pp. 101–108. (In Russian)
14. Ol'kov S. G. "Ugolovno-protsessual'nye pravonarusheniya". [Criminal Procedure Offenses]. Tyumen, 1996, 268 p. (In Russian)
15. Oksamytniy V. V. "Teoriya gosudarstva i prava: uchebnik" [Theory of State and Law: Textbook]. Moscow: YuNITI, 2012, 511 p. (In Russian)
16. Popova Z. V. "Sanktsii v pravookhranitel'nom protsesse: ponyatie, vidy, osnovaniya primeneniya". [Sanctions in Law Enforcement Process: Concept, Types, Grounds for Application]. Dissertation, Russian Academy of Justice, 2008, 189 p. (In Russian)
17. Unarova L. D. "Povedenie cheloveka: tsennostno-smyslovye osnovaniya i sotsiokul'turnye faktory sredy" [Human Behavior: Value-Semantic Foundations and Sociocultural Environmental Factors]. Abstract of Dissertation, Ulan-Ude, 2013, 49 p. (In Russian)
18. HH Azgayin zhoghovÇ pashtonakan kayk', [Official website of the National Assembly of the RA] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12886&Reading=0, latest access` 24 October 2025.

Арег Ёлчян
Помощник судьи Кассационного суда РА,
преподаватель кафедры уголовного процесса и криминалистики
Ереванского государственного университета (на почасовой основе), аспирант,

РЕЗЮМЕ

Ненадлежащее процессуальное поведение как основание для применения процессуционной санкции

Данная работа посвящена выявлению общего основания для применения уголовно-процессуальных санкций. Автор обсуждает проблему ненадлежащего поведения в уголовном процессе и правовые основания для применения процессуальных санкций за такое поведение. Анализируются соответствующие положения Уголовно-процессуального кодекса РА и существующие теоретические источники.

Основной акцент делается на разграничении понятий «ненадлежащее» и «неправомерное» поведение. В работе обосновывается позиция, что основанием для применения санкций является не только сугубо правовое, но и более широкое поведение, противоречащее социальным, моральным и этическим нормам («ненадлежащее»). Такое поведение, по субъективной оценке органа, ведущего производство, становится правонарушением.

Отдельно обсуждается несовершенство статьи 29 Уголовно-процессуального кодекса РА. Эта статья распространяет запрет на «неправомерное поведение» только на частных участников, игнорируя применение аналогичного стандарта к публичным участникам (следователям, прокурорам). В работе особо выделяется проблема злоупотребления поведением со стороны публичных участников.

В результате работы были представлены конкретные предложения по изменению законодательства, а также выдвинуты научные выводы.

***Ключевые слова**: процессуальная санкция, неправомерное поведение, ненадлежащее поведение, злоупотребление правом, добросовестное поведение, уголовно-процессуальный кодекс.*

Areg Yolchyan
Assistant to a judge,
lecturer of the chair of criminal procedure and criminalistic
in Yerevan State University (hourly basis), PhD student,

SUMMARY

Improper procedural conduct as a ground for applying a procedural sanction

This paper aims to uncover the general basis for applying criminal procedural sanctions. The author discusses the issue of improper conduct in criminal proceedings and the legal grounds for applying procedural sanctions for such behavior. The analysis includes relevant provisions of the RA Criminal Procedure Code and existing theoretical sources.

The main emphasis is placed on the distinction between the concepts of “improper” and “unlawful” conduct. The paper argues that the basis for applying sanctions is not strictly legal but rather a broader behavior that contradicts social, moral, and ethical norms (“improper”). This conduct, through the subjective evaluation of the body conducting the proceedings, becomes a legal offense.

A separate discussion is dedicated to the flawed regulation of Article 29 of the RA Criminal Procedure Code. This article extends the prohibition of “unlawful conduct” only to private participants, ignoring the application of a similar standard to public participants (investigators, prosecutors). The paper specifically addresses the problem of public participants’ abuse of conduct.

As a result, concrete proposals for legislative changes are provided, along with scientific conclusions.

***Key words:** Procedural sanction, unlawful conduct, improper conduct, abuse of rights, bona fide conduct, criminal Procedure Code.*

Ընդունվել է տպագրության 18.11.25թ.

ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի քրեական
իրավունքի ամբիոնի դասախոս

ՈՂՈՐԿԱՓՈՂ ՀՐԱԶԵՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՋԵՆՔԻ ՏԵՍԱԿ. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածում քննարկվում են Գործող քրեական օրենսգրքով զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող հանցակազմերում ողորկափող հրազենին առնչվող բացառության վերաբերյալ տեղի ունեցած բովանդակային փոփոխությունները:

Հեղինակի կարծիքով՝ ցանկացած ողորկափող հրազեն ինքնին չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական» և այդ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիական զենքի շրջանառության համար «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները: Մասնավորապես, ըստ հեղինակի՝ ինքնաշեն, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների ենթարկված գործարանային ծագման ողորկափող հրազենը չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական», հետևաբար, դրա ապօրինի շրջանառությունը պետք է որակել Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով: Ընդ որում, գործարանային ողորկափող հրազենի կառուցվածքային փոփոխությունները իրավաբանորեն կարող են արժևորվել միայն այն դեպքում, երբ դրա հետևանքով նշված հրազենը կորցնում է իր նախնական (գործարանային) նշանակությունը՝ խաթարվում են տվյալ հրազենին ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվում են դրա մարտավարատեխնիկական հատկությունները:

Բացի այդ, հեղինակի կարծիքով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը հանդես է գալիս ինքնուրույն հանցագործություն և դուրս է գտնվում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակից: Հետևաբար, այն դեպքում, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխությունների ենթարկված քաղաքացիական ողորկափող հրազենի շրջանառությունն իրականացնում է այն անձը, ով պատրաստել կամ ձևափոխել է այն, ապա վերջինիս արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ և 336-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համակցությամբ:

***Հիմնաբառեր**: քաղաքացիական ողորկափող հրազեն; գործարանային ծագում; ինքնաշեն հրազեն; ձևափոխված հրազեն; դասակարգում:*

Ներածություն

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի[1] (այսուհետ նաև՝ Նախկին քրեական օրենսգիրք) 235-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն էր նախատեսում ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար: Սինհնույն ժամանակ, նշված հոդվածի դիսպոզիցիան բացառություն էր սահմանում **ողորկափող հրազենի** և դրա փամփուշտների ձեռքբերման, իրացման, պահելու, փոխադրելու կամ կրելու համար: Ընդ որում, նշված բացառության վերաբերյալ իրավական պրակտիկայում ձևավորված մեկնաբանությունը հնարավորություն չէր ընձեռում անձին քրեական պատասխանատվության ենթարկել ընդհանրապես ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար՝ անկախ ողորկափող հրազենի փողը կարճեցված լինելու հանգամանքից:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Երվանդ Մելքոնյանի գործով որոշման[2] շրջանակներում անդրադառնալով ողորկափող հրազենի վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսված բացառությանը՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասում առկա այս բացառության տառացի մեկնաբանությունից Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ այն հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պատասխանատվության ենթարկել ընդհանրապես ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ողորկափող հրազենի փողերը կարճեցված են, թե ոչ: Բանն այն է, որ փողերը կարճեցված որսորդական հրացանը չի դադարում ողորկափող հրազեն լինելուց և դարձյալ հանդիսանում է այդպիսին: Իսկ եթե անտեսվի օրենսդրորեն ամրագրված բացառության՝ բառերի տառացի նշանակությունը և օրենքը մեկնաբանվի դրանում պարունակ-*

www.ardaradatutyunjournal.com

վող բառերի տառացի նշանակությունից ավելի լայն, անձը քրեական պատասխանատվության կենթարկվի քրեական օրենքով չնախատեսված հանցանքի համար: Նման մեկնաբանությունն անթույլատրելի է, քանի որ այդ դեպքում կխախտվեն ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և ՀՀ քրեական օրենսգրքի՝ սույն որոշման 13-րդ կետում շարադրված դրույթները»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի[3] (այսուհետ նաև՝ Գործող քրեական օրենսգիրք) 335-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ կրելու համար:

Ձենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող Նախկին և Գործող քրեական օրենսգրքերի վերը վկայակոչված հոդվածների համեմատական վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ Գործող քրեական օրենսգրքի ձևակերպումներում ողորկափող հրազենի վերաբերյալ բացառության առումով առկա է էական բովանդակային փոփոխություն: Մասնավորապես, ինչպես նկատում ենք՝ օրենսդիրը Նախկին քրեական օրենսգրքում սահմանած բացառությունը՝ «բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից», Գործող օրենսգրքում սահմանել է այլ կերպ՝ «բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի»:

Գործող քրեական օրենսգրքում տեղ գտած եզրութաբանական հիշյալ վերաձևակերպումը հիմք է տալիս փաստել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այլևս կորցրել է իր արդիականությունը և քննարկվող դրույթի մեկնաբանման ու կիրառման տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում[4] (այսուհետ նաև՝ Օրենք) նախատեսված իրավակարգավորումների բովանդակության, այդ թվում քաղաքացիական ողորկափող հրազեն համարվող առարկաների շրջանակի բացահայտումը:

Սույն հոդվածի նպատակը զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող հանցակազմերում ողորկափող հրազենին առնչվող բացառության վերաբերյալ Գործող քրեական օրենսգրքում տեղի ունեցած բովանդակային փոփոխությունների հետազոտումն է:

Հոդվածի 1-ին բաժնում քննարկվում են «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում նախատեսված իրավակարգավորումները, իսկ 2-րդ բաժնում՝ քննարկվող հարցի առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան:

Արդյունքում առաջարկվում է ցանկացած ողորկափող հրազեն ինքնին չդասակարգել որպես «քաղաքացիական» և այդ գործընթացում հաշվի առնել քաղաքացիական զենքի շրջանառության համար «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ: Հոդվածում արված եզրահանգումների համար հիմք են ծառայել գիտական գրականության մեջ և դատական պրակտիկայում առկա տեսակետներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև օրենսդրական նորմերի համակարգային իրավահամամեմատական վերլուծությունը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում.

1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում նախատեսված իրավակարգավորումների վերաբերյալ

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

«Զենքը, ըստ համապատասխան սուբյեկտների կողմից օգտագործման նպատակայնության, հիմնական չափանիշների և բնութագրող հատկանիշների, լինում է՝

1) քաղաքացիական զենք.

2) ծառայողական զենք.

3) ձեռքի մարտական հրաձգային զենք (այսուհետ՝ մարտական զենք)

(…)»:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիական է համարվում այն զենքը, որը նախատեսված է քաղաքացիների ինքնապաշտպանության, սիրողական և սպորտային հրաձգության, որսորդության, սպորտային ու մշակութային միջոցառումների ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում օգտագործելու համար: Քաղաքացիական զենքն իր կառուցվածքով պետք է բացառի կրակահերթով կրակելու հնարավորությունը:

2. Քաղաքացիական զենքի տեսակներն են՝

www.armjournal.am

1) ողորկափող հրազեն.

2) համակցված հրազեն, այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով.

3) երկար ակոսափող հրազեն՝ 1500 մմ-ից ոչ ավելի երկարությամբ և 12.7 մմ-ից ոչ ավելի տրամաչափ ունեցող փողով.

4) օդաճնշիչ զենք՝ ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով.

5) գազային զենք.

6) ազդանշանային զենք.

7) սառը զենք.

8) էլեկտրահարող զենք.

9) նետողական զենք»:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Ծառայողական է համարվում այն զենքը, որը նախատեսված է պետական մարմինների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց, պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողների (ծառայածների) կամ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է կրել, պահել և օգտագործել այդ զենքը ինքնապաշտպանության կամ օրենքով նրանց վրա դրված՝ քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ բոլակցության պահպանության պարտականությունների կատարման համար:

2. Ծառայողական զենք է մինչև 800 ջոուլ փողային էներգիայով կարճ ակոսափող հրազենը, որի փամփուշտները տարբերվում են մարտական զենքի փամփուշտներից, և իր կառուցվածքով զուրկ է կրակահերթով կրակելու հնարավորությունից:

(…):

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Մարտական է համարվում այն զենքը, որը նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար և, օրենսդրությանը համապատասխան, ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ, բացառությամբ քաղաքացիական և ծառայողական զենքի: Մարտական զենքը կարող է ունենալ կրակահերթով կրակելու հնարավորություն: Կրակահերթով կրակելու հնարավորություն ունեցող մարտական զենք կարող են ունենալ նաև Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ առանձնահատուկ ծառայողական խնդիրների լուծման համար:

(…):

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արգելվում է, որպես քաղաքացիական և ծառայողական զենք, շրջանառության մեջ մտցնել՝

(…)

2) ինքնաշեն զենք, իր ձևով և տեսքով այլ առարկաների նմանեցված զենք, կառուցվածքային փոփոխության ենթարկված ակոսափող և ողորկափող հրազեն՝ առանց կրակելու ունակության կորստի.

3) ակոսափող հրազենի փամփուշտներով կրակելու համար հարմարեցված ողորկափող հրազեն.

4) ակոսափող հրազենի փամփուշտների չափերին համապատասխան պատրաստված ողորկափող հրազեն.

5) գազային զենք կամ ազդանշանային զենք, որի կառուցվածքը հնարավորություն է տալիս կրակելու հրազենի փամփուշտներ.

(…)

9) Կառավարության հաստատած քրեագիտական պահանջներին չհամապատասխանող տեխնիկական բնութագիր ունեցող զենք և ռազմամթերք. (…)»:

Վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ ըստ համապատասխան սուբյեկտների կողմից օգտագործման նպատակայնության, հիմնական չափանիշների և բնութագրող հատկանիշների՝ Օրենքն առանձնացնում է զենքի երեք հիմնական խումբ՝ քաղաքացիական, ծառայողական և մարտական: Ընդ որում, Օրենքով զենքի յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է առանձին հասկացություն, ինչպես նաև նախատեսվել են դրանց շրջանառության վրա տարածվող սահմանափակումները:

Հարկ է նշել, որ այս առումով թերևս առանձնահատուկ են քաղաքացիական զենքի վերաբերյալ Օրենքում նախատեսված իրավակարգավորումները, քանի որ դրա ընդհանուր հասկացության հետ մեկտեղ օրենսդրորեն հստակեցվել են նաև քաղաքացիական զենքի տեսակները՝ **ողորկափող հրազեն**, համակցված հրազեն (այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով), երկար ակոսափող հրազեն (1500 մմ-ից ոչ ավելի երկարություն և 12.7 մմ-ից ոչ ավելի տրամաչափ ունեցող փողով), օդաճնշիչ զենք (ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով), գազային զենք, ազդանշանային զենք, սառը զենք, էլեկտրահարող զենք և նետողական զենք:

Ինչպես նկատում ենք, որպես քաղաքացիական զենքի տեսակ, ի թիվս այլնի, օրենսդիրը նախատեսել է **ողորկափող հրազենը**՝ չնկարագրելով դրա առանձին հատկանիշներ (գործարանային, որսորդական, երկարափող[5] և այլն): Այնուհանդերձ, հարկ է նշել, որ այս մոտեցումը գործնականում չպետք է հիմք հանդիսանա քննարկվող նորմի տարածական մեկնաբանման համար: Մասնավորապես, հրազենը որպես «քաղաքացիական» դա-

սակարգելու համար չի կարող **վճռորոշ չափանիշ** համարվել բացառապես դրա **ողորկափող լինելու հանգամանքը**՝ անտեսելով քաղաքացիական զենքի շրջանառության վրա տարածվող օրենսդրական սահմանափակումները:

Այսպես՝ Օրենքի 7-րդ հոդվածով, ի թիվս այլնի, **արգելվում է որպես քաղաքացիական զենք շրջանառության մեջ մտցնել ինքնաշեն զենք**[6] կամ **կառուցվածքային փոփոխության ենթարկված** ակոսափող և **ողորկափող հրազեն** (առանց կրակելու ունակության կորստի), **այդ թվում**՝ ակոսափող հրազենի փամփուշտներով կրակելու համար հարմարեցված ողորկափող հրազեն, ակոսափող հրազենի փամփուշտների չափերին համապատասխան պատրաստված ողորկափող հրազեն, գազային զենք կամ ազդանշանային զենք, որի կառուցվածքը հնարավորություն է տալիս կրակելու հրազենի փամփուշտներ կամ **Կառավարության հաստատած քրեագիտական պահանջներին չհամապատասխանող տեխնիկական բնութագիր ունեցող զենք և ռազմամթերք**:

Հարկ է ընդգծել, որ զենքի շրջանառությունը կանոնակարգող օրենսդրությամբ վերը նշված սահմանափակումների նախատեսումն ինքնանպատակ չէ:

Այսպես՝ **գործարանային հրազենը** (заводское огнестрельное оружие), այդ թվում դրա բաղկացուցիչ մասերն ու համալրող դետալները պատրաստվում են զենքի արտադրամասերում, հատուկ որակավորում ունեցող զինագործ-մասնագետների կողմից՝ սահմանված որակական ու տեխնիկական պահանջներին համապատասխան: Սինհնույն ժամանակ, գործարանային ծագման հրազենին բնորոշ է հատուկ նույնականացման տարրերի (սերիա, համար և այլն) առկայությունը[7]:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ-ում քաղաքացիական, ծառայողական զենքի և ռազմամթերքի քրեագիտական պահանջները սահմանված են ՀՀ Կառավարության N 429-Ն որոշմամբ[8] (այսուհետ նաև՝ Որոշում):

Որոշման՝ **«Հրազենի տեխնիկական բնութագրերին ներկայացվող քրեագիտական պահանջները»** վերտառությամբ չորրորդ բաժնում սահմանվում է՝

«14. Նույն նմուշի փամփուշտներ կրակելու համար նախատեսված տարբեր մոդելների ակոսափող զենքերը պետք է տարբերվեն պարկուճների և գնդակների վրայի կրակման հետքերով:

15. Ակոսափող երկարափող զենքը չպետք է պատրաստված լինի ատրճանակային և ռևոլվերային փամփուշտներ կրակելու համար, բացի 5,6 մմ տրամաչափի /22L.R./ օղակաձև բոցավառման փամփուշտներից:

16. Ակոսափող և ողորկափող զենքը կրակված պարկուճների հարվածիչի զարկանի և փակաղակի հենքի հետքերում, իսկ ակոսափող զենքը և ներդիր ակոսավոր փողերը՝ կրակված գնդակների վրայի փողանցքի հետքերում պետք է ձևավորեն այնպիսի միկրոռելիեֆ, որը տարբերակվի երկակնյա ծավալաղիտակային մանրադիտակի տակ 20-անգամյա խոշորացմամբ:

17. Ծալվող երկարափող հրազենը, որի երկարությունը ծալված վիճակում 800 մմ-ից պակաս է, չպետք է այդ վիճակում ունենա կրակելու հնարավորություն կամ դառնալի փոփոխություններ կատարելու (մաս հանելու, ավելացնելու կամ փոխարինելու) դեպքում ձեռք բերի այդպիսի հնարավորություն:

18. Ակոսափող, ողորկափող հրազենը պետք է ունենա անհատական համար (0.2 մմ-ից ավելի խորությամբ մեխանիկական եղանակով (հարված, ճնշում) կամ էներգիայի բարձր կոնցենտրացիայի աղբյուրի (այդ թվում նաև լազերով) օգտագործմամբ

(…)»:

Ի տարբերություն գործարանային հրազենի՝ **ինքնաշեն հրազենը** (самодельное огнестрельное оружие)[9], պատրաստվում է ոչ գործարանային պայմաններում և չի անցնում որակական ու տեխնիկական ստուգումներ: Սինհնույն ժամանակ, այն չի ստանում պետական գրանցում և չունի հատուկ նույնականացման տարրեր, որի հետևանքով ինքնաշեն հրազենով կատարված հանցանքների քննությունն իրավապահների համար առաջացնում է լրացուցիչ բարդություններ, ինչպես նաև մեծացնում դրա պահանջարկը հանցագործների շրջանում:

Հարկ է նշել, որ վերը նշված զենքերի լայն շրջանառությունն առավել նկատելի է այն երկրներում, որտեղ գործում են զենքի շրջանառության վերաբերյալ խիստ կանոնակարգումներ, քանի որ այդ պայմաններում նշված առարկաների հասանելիությունը և ցածր գինը հանցագործների[10] համար դրանք դարձնում են գրավիչ այլընտրանք:

Ինչ վերաբերում է **կառուցվածքային փոփոխությունների** ենթարկված գործարանային հրազենին, ապա հարկ է նշել, որ նշված փոփոխությունների հետևանքով խաթարվում են դրան ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվում են հրազենի մարտավարատեխնիկական հատկությունները (գնդակի թռիչքի ուղեգիծ, հեռահարություն, ճշգրտություն և այլն) և վերջնարդյունքում այն կորցնում է իր նախնական՝ գործարանային նշանակությունը:

Ընդ որում, հարկ է նշել, որ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների ոլորտային իրավական ակտերով ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխության ենթարկված զենքերը չեն դասակարգվում որպես ինքնուրույն կատեգորիա, այլ համարվում են ապօրինի շրջա-

www.armjurnal.com

ներության առանձին օբյեկտ:

Ամփոփելով՝ հարկ է արձանագրել հետևյալը՝

• Ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխության ենթարկված հրազենի շրջանառությունը լուրջ վտանգ է ներկայացնում հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար:

• Հիմք ընդունելով վերը նշվածը՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխության ենթարկված ողորկափող հրազենի շրջանառության իմպերատիվ արգելք:

• Ողորկափող հրազենը որպես «քաղաքացիական» դասակարգելու համար այն պետք է ունենա **գործարանային ծագում** և **ենթարկված չլինի կառուցվածքային այնպիսի փոփոխությունների**, որոնց հետևանքով տվյալ հրազենը կորցրել է իր նախնական (գործարանային) նշանակությունը՝ խաթարվել են դրան ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվել են մարտավարատեխնիկական հատկությունները:

2. Իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ

Քրեական գործերի ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստել, որ ողորկափող հրազենին առնչվող բացառության առումով Գործող քրեական օրենսգրքի ձևակերպումներում կատարված բովանդակային փոփոխությունը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում չունի միանշանակ ընկալում: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխության ենթարկված հրազենը ստացել է «քաղաքացիական» դասակարգում: Ըստ էության, տվյալ դեպքում իրավակիրառը որպես հրազենի դասակարգման **վճռորոշ չափանիշ** հիմք է ընդունել բացառապես դրա **ողորկափող լինելու հանգամանքը**՝ անտեսելով քաղաքացիական զենքի շրջանառության վրա տարածվող օրենսդրական սահմանափակումները:

Այսպես.

Թիվ 26162424 քրեական վարույթով Վալոդյա Մարտինի Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի **336-րդ հոդվածի 1-ին մասով** մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա 2024թ. մարտ-ապրիլ ամիսներին Արարատի համայնքի Նռյակերտ բնակավայրի Հրաչյա Քոչարի 11 հասցեի իր տան բակում ինքնաշեն եղանակով **պատրաստել է** 12 տրամաչափի փամփուշտներ կրակող ողորկափող հրազեն և **պահել** իր ավտոտնակում, որը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Արարատի բաժնի աշխատակիցների պահանջով 27.12.2024թ. ներկայացրել է*»[11]:

Ինչպես նկատում ենք, վերը նշված դեպքում մեղադրյալի արարքը որակվել է բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով (ապօրինի կերպով հրազեն պատրաստելը), իսկ վերջինիս կողմից ապօրինի կերպով պատրաստված հրազենի ապօրինի շրջանառությունը, քննարկվող դեպքում՝ ապօրինի պահելը, ինքնուրույն քրեաիրավական գնահատականի չի արժանացել: Կարծում ենք՝ քրեաիրավական նման որակման համար իրավակիրառի կողմից հիմք է ընդունվել այն, որ քաղաքացիական հրազենի դեպքում ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված բացառապես այն ապօրինի կերպով կրելու համար: Սինչդեռ, ինչպես վերը նշվեց, ինքնաշեն եղանակով պատրաստված հրազենը չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական» և տվյալ դեպքում կատարվածը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ և 335-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համակցությամբ: Ըստ էության, քննարկվող իրավիճակում գործ ունենք այսպես կոչված հանցանքների անխուսափելի համակցության հետ, քանի որ դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ ապօրինի կերպով հրազեն պատրաստելն առնվազն չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

Այս համատեքստում ուշագրավ է այն, որ մեկ այլ դեպքում ապօրինի կերպով հրազեն պատրաստած և պահած անձի արարքը պրակտիկայում թեև որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով, այնուհանդերձ, այս անգամ իրավական գնահատական չի տրվել ապօրինի կերպով այն պատրաստելու հանգամանքին: Այնինչ, տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նկարագրված արարքը պետք է ստանար ինքնուրույն քրեաիրավական գնահատական և որակվեր հանցանքների համակցության կանոններով: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը հանդես է գալիս որպես ինքնուրույն հանցագործություն և դուրս է գտնվում հրազենի ապօրինի շրջանառության հանցակազմի շրջանակներից:

Այսպես, թիվ 18125325 քրեական վարույթով Էդիկ Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա չունենալով սահմանված կարգով տրամադրված հրազեն և ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և փոխադրելու իրավունք, **ապօրինի կերպով պատրաստել** և իր բնակության վայր հանդիսացող՝ Գյումրի քաղաքի Ա. Իսահակյան փողոցի «ն» շենքի, բնակարան «ն» հասցեի նկուղում **պահել է** հրազեն հանդիսացող՝ ինքնաշեն եղանակով պատրաստված, 9մմ /9x18մմ ՈՒՖ/ տրամաչափի փամփուշտներով կրակելու համար թմբուկավոր ատրճանակը և ռազմամթերք հանդիսացող՝ 4 /չորս/ հատ 9մմ /9x18մմ ՈՒՖ/ տրամաչափի մարտական փամփուշտներ, որոնք*

www.ardaradatutyunjournal.com

հայտնաբերվել և վերցվել են 10.12.2023 թվականին՝ Էդիկ Գալստյանի բնակարանում կատարված խուզարկությամբ»[12]:

Ներկայացնենք պրակտիկայից այլ օրինակներ, երբ ինքնաշեն եղանակով պատրաստված հրազենը ոչ իրավաչափորեն դասակարգվել է որպես «քաղաքացիական»:

Այսպես.

Թիվ 26119224 քրեական վարույթով Արսեն Աղվանի Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ և 336-րդ հոդվածներով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա ունենալով ՀՀ ոստիկանության ՀՄՄԳ վարչության կողմից, 22.09.2020թ տրված՝ թիվ 17587 գործարանային համարի 8/ մմ տրամաչափի «Կինգ» տեսակի գազային ատրճանակը պահելու և կրելու թիվ 107772/2 թույլտվությունը, միաժամանակ զենքի շրջանառության կարգավորման մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն, ունենալով հիշյալ զենքը այնպիսի պայմաններում պահելու պարտականություն, որով դրա պահպանությունը, անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է բացառվեր, կողմնակի անձանց հասանելիությունը զենքին, սույն վարույթով չպարզված հանգամանքներում և ժամանակին՝ 2023թ հունվարի 26-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում, թիվ 17587 գործարանային համարի 8/ մմ տրամաչափի «Կինգ» տեսակի* ***գազային ատրճանակը ձևափոխելու արդյունքում ապօրինի պատրաստել է փողաբերանից կամ փամփշտանոցի հատվածից համապատասխան կառուցվածքային տվյալներով արկ /կապարից գնդակ, մետաղագնդիկ/ տեղադրելու և փողի փամփշտանոցում 8մմ տրամաչափի ազդանշանային փամփուշտ տեղադրելու դեպքում, կրակոցներ կատարելու համար պիտանի, ինքնաշեն ողորկափող հրազեն, որը հայտնաբերվել է Արսեն Կարապետյանի բնակության վայրում***՝ Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի Պ.Սևակի փողոցի 14-րդ տանը 2024 թվականի օգոստոսի 8-ին կատարված *խուզարկությամբ:*

Այնուհետև Արսեն Կարապետյանը 2024 թվականի օգոստոսի 04-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, եղբոր՝ Հարություն Աղվանի Կարապետյանի կանչով գնացել է Փոքր Վեդի բնակավայրի Մ.Հովհաննիսյան փողոցի 46 հասցում գործող գարեջրատուն, իջևելով ավտոմեքենայից և ***ապօրինի կրելով*** *թիվ 17587 գործարանային համարի 8/մմ տրամաչափի «Կինգ» տեսակի փողաբերանից կամ փամփշտանոցի հատվածից համապատասխան կառուցվածքային տվյալներով արկ /կապարից գնդակ, մետաղագնդիկ/ տեղադրելու և փողի փամփշտանոցում 8մմ տրամաչափի ազդանշանային փամփուշտ տեղադրելու դեպքում, կրակոցներ կատարելու համար պիտանի, իր իսկ կողմից ապօրինի, ինքնաշեն եղանակով պատրաստված ողորկափող հրազենը, (…)»*[13]:

Ինչպես նկատում ենք, նշված դեպքում **գազային ատրճանակը ձևափոխելու արդյունքում ապօրինի կերպով հրազեն պատրաստած**, այն **կրած** և **պահած** անձի արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ և 336-րդ հոդվածների համակցությամբ, այնինչ, քննարկվող իրավիճակում ապօրինի կերպով պատրաստված հրազենի ապօրինի շրջանառությունը (կրելը և պահելը) պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ, այլ՝ 335-րդ հոդվածով՝ վերջնարդյունքում այն համակցելով ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածի հետ:

2024 թվականի հուլիսի 31-ին Կոտայքի մարզի դատախազության դատախազ Գ.Հարությունյանի որոշմամբ թիվ 20168524 քրեական վարույթով Սեյրան Գալուստի Աղամալյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ **քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով** հարուցվել է հանրային քրեական հետապնդում[14] այն հանցանքների կատարման համար, որ «*նա զենքի գործադրմամբ կատարել է խուլիգանություն, ինչպես նաև փորձել է ապօրինաբար կյանքից զրկել Վարդգես Բալյանին:*

2024 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի 44-րդ տան դիմաց Սեյրան Աղամալյանը վիճաբանել է Աշոտ Գոռի Բալյանի և Վարդգես Գոռի Բալյանի հետ, որի ընթացքում հասարակության նկատմամբ անհարգալից, ինչպես նաև իրավական և բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, անտեսելով բնակելի տների բակում գտնվելու և շրջակայքում բազմաթիվ անձանց ներկայության հանգամանքը, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ հնչեցրել է հայհոյանքներ, ինչպես նաև ***իր մոտ ապօրինի գտնվող, «ANSAR 1071» մոդելի ինքնաշեն ողորկափող հրազենից*** *Աշոտ Բալյանի ուղղությամբ արձակել է ընդհանուր առնվազն չորս կրակոց, ինչից հետո հիշյալ տան երկրորդ հարկի բացված պատուհանի մոտ նկատելով Վարդգես Գոռի Բալյանին,* ***իր մոտ ապօրինի գտնվող մյուս՝ «EKOL ASI» մոդելի ինքնաշեն ողորկափող հրազենից,*** *վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, մոտ տարածությունից նշան բռնելով առնվազն երկու անգամ կրակել է Վարդգես Բալյանի ուղղությամբ՝ պատճառելով կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսի կրծքավանդակ չթափանցող, վերքային խոռոչակի ընթացքով փափուկ հյուսվածքների, մեծ կրծքամկանի վնասումներով, աջ բազուկոսկրի գլխի կոտրվածքով, վերքային խոռոչակի վերջնամասում մետաղական օտար մարմնի առկայությամբ հրազենային, գնդակային,*

կույր վնասվածքներ, որոնք առաջացրել են առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության մեկ երրորդի կայուն կորստով, սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել՝ մեկ անգամ կրակոցով վրիպելու, ինչպես նաև Վարդգես Բալյանի քաքվելու և ժամանակին ցույց տրված բուժօգնության արդյունքում:

Վերը նշված գործողությունների հետևանքով խոչընդոտել է շրջակայքում գործող կազմակերպությունների, մասնավորապես՝ «Օգոն» և «Վարբերիս» սպասարկման կետերի բնականոն աշխատանքը, խաթարվել է դրանցում գտնվող մարդկանց անդորրը, վերջիններիս մոտ առաջացնելով վախի և տագնապի զգացում»[15]:

Քննարկվող թեմայի շրջանակում, կարծում ենք՝ **գիտագործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում թիվ ԵԴ-1/0716/01/25 քրեական գործով դատավճռի ուսումնասիրությունը**, որի արդյունքում պարզ է դառնում հետևյալը՝

Թիվ 12108025 քրեական վարույթով Մաքսիմ Սերգեյի Ջալավյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա չունենալով «Զենքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հրազենի, ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու, այն է՝ ձեռք բերելու և պահելու իրավունք, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում օրենքով սահմանված կարգով չստանալով՝ հրազենի և ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու թույլտվություն, քննության ընթացքում չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել և 2025 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 01:40-ի սահմաններում, Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 49 հասցեում իր մոտ կրել է համապատասխան տրամաչափի ազդանշանային փամփուշտներով կրակելու համար նախատեսված, ինքնաշեն եղանակով ձևափոխված, համապատասխան չափային և կառուցվածքային տվյալներ ունեցող գնդակային փամփուշտներով կրակելու համար հարմարեցված, ներկայացված ձևափոխված փամփուշտներով /կամ նմանատիպ փամփուշտներով/ կրակոցներ կատարելու համար պիտանի և ողորկափող հրազեն հանդիսացող, գործարանային արտադրության «BARICAT R2.5"S» տեսակի «V2YBRYFYTO2- 2200063 համարի 9մմ տրամաչափի ազդանշանային բմբուկավոր ատրճանակ, ինքնաշեն եղանակով ձևափոխված՝ դրանց մեջ տեղադրված գնդակներով և համապատասխան չափային և կառուցվածքային տվյալներ ունեցող զենքերից /այդ թվում՝ ներկայացված ձևափոխված բմբուկավոր ատրճանակից կրակվելու համար հարմարեցված, ներկայացված ձևափոխված բմբուկավոր ատրճանակով /կամ համապատասխան չափային և կառուցվածքային տվյալներ ունեցող այլ զենքով կրակվելու համար պիտանի և ռազմամթերք հանդիսացող թվով 13 հատ 9մմ տրամաչափի ազդանշանային փամփուշտներ»*:

Դատարանը 2025 թվականի հուլիսի 16-ին նշված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման շրջանակում արձանագրել է՝ «*Անդրադառնալով մեղադրյալ Մաքսիմ Ջալավյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի առկայության կամ բացակայության հարցին՝ Դատարանը գտնում է, որ այն հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատվում է սույն քրեական գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով, այլ կերպ ասած՝ ապացուցված է Մաքսիմ Սերգեյի Ջալավյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի կատարման մեջ:*

Այս համատեքստում Դատարանը ցանկանում է անդրադառնալ դատաքննության ընթացքում վիճարկման ենթակա այն հանգամանքին, ըստ որի՝ Մաքսիմ Ջալավյանի մոտ հայտնաբերված զենքը հանդիսանում է ողորկափող հրազեն, իսկ դրա քաղաքացիական լինելու կամ չլինելու հանգամանքը պարզ չէ, մինչդեռ դրա՝ քաղաքացիական ողորկափող հրազեն լինելու դեպքում արարքը կարող էր որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով:

*Վերը նշվածի կապակցությամբ Դատարանի գնահատականը կայանում է նրանում, որ ձախ փորձաքննության թիվ 133-25 եզրակացությամբ նշում չի կատարվել հայտնաբերված հրազենի քաղաքացիական լինելու մասին, և երկրորդ՝ փորձաքննությունն իրականացրած **փորձագետ Ռ. Պողոսյանը Դատարանում հստակ պարզաբանեց այդ հանգամանքը՝ նշելով, որ ողորկափող և քաղաքացիական ողորկափող հրազենները միմյանցից տարբերվում են նրանով, որ քաղաքացիական ողորկափող հրազենն ի սկզբանե արտադրողի կողմից է այդպիսին արտադրվում և կառուցվածքային փոփոխության չի ենթարկվում, դրանք քաղաքացիական ազատ շրջանառության մեջ են գտնվում և քաղաքացիները կարող են խանութից ձեռք բերել: Զենքի փոփոխման արդյունքում հնարավոր չէ ստանալ քաղաքացիական ողորկափող հրազեն: Զենքի քաղաքացիական նշանակությունը որոշում է արտադրողը:***

Նշվածից ուղղակիորեն ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ ու 335-րդ հոդվածների և «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունից չի կարելի հետևություններ կատարել այն մասին, որ ողորկափող հրազենը կարող է լինել միայն քաղաքացիական և ըստ այդմ՝ անձը պետք է ենթարկվի պատասխանատվության բացառապես 334-րդ

հոդվածով: Ընդհակառակը, փորձագետի պարզաբանումներից պարզ է դառնում, որ առհասարակ զենքը համարվում է քաղաքացիական բացառապես այն դեպքերում, երբ այն այդպիսին արտադրված է գործարանում, այլ ոչ թե ձևափոխման արդյունքում է այդպիսին դարձել: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ որևէ տեսակի զենք ձևափոխման արդյունքում է դառնում, օրինակ՝ ողորկափող հրազեն, ապա այն այլևս չի կարող համարվել քաղաքացիական ողորկափող, այլ այն հենց հրազեն է՝ բառի բուն իմաստով:

Սույն դեպքում ևս Մաքսիմ Ջալավյանի մոտ հայտնաբերված ատրճանակը միայն ձևափոխման արդյունքում է դարձել ողորկափող հրազեն, ուստի այն չի կարող լինել ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա: Արդյունքում, Դատարանը եզրահանգում է, որ Մաքսիմ Ջալավյանի կատարած արարքին տրված քրեաիրավական գնահատականը ճիշտ է և վերջինի մոտ հայտնաբերված ատրճանակը ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է հրազեն»[16]:

Այսպիսով, տվյալ դեպքում փորձագետի կողմից առաջ է քաշվում, իսկ դատարանի կողմից կայացված դատավճռով հաստատվում է **քաղաքացիական զենքի գործարանային ծագում ունենալու գաղափարը**, ըստ որի՝ ողորկափող և քաղաքացիական ողորկափող հրազենը միմյանցից տարբերվում են նրանով, որ քաղաքացիական ողորկափող հրազենն ի սկզբանե արտադրողի կողմից է այդպիսին արտադրվում և կառուցվածքային փոփոխության չի ենթարկվում: **Զենքի քաղաքացիական նշանակությունը որոշում է արտադրողը: Այլ կերպ՝ զենքը համարվում է քաղաքացիական բացառապես այն դեպքերում, երբ այն այդպիսին արտադրված է գործարանում**, այլ ոչ թե ձևափոխման արդյունքում է այդպիսին դարձել:

Եզրակացություն

1. Զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող Նախկին և Գործող քրեական օրենսգրքերի վերաբերելի հոդվածների համեմատական վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ ողորկափող հրազենին առնչվող բացառության առումով Գործող քրեական օրենսգրքի ձևակերպումներում առկա է էական բովանդակային փոփոխություն, և նշված բացառությունը սահմանող դրույթի մեկնաբանման ու կիրառման տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում նախատեսված իրավակարգավորումների բովանդակության, այդ թվում քաղաքացիական ողորկափող հրազեն համարվող առարկաների շրջանակի բացահայտումը:

2. Քրեական գործերի ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստել, որ ողորկափող հրազենին առնչվող բացառության առումով Գործող քրեական օրենսգրքի ձևակերպումներում կատարված բովանդակային փոփոխությունը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում չունի միանշանակ ընկալում: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխության ենթարկված հրազենը ստացել է քաղաքացիականե դասակարգում: Ըստ էության, տվյալ դեպքում իրավակիրառը որպես հրազենի դասակարգման վճռորոշ չափանիշ հիմք է ընդունել բացառապես դրա ողորկափող լինելու հանգամանքը՝ անտեսելով քաղաքացիական զենքի շրջանառության վրա տարածվող օրենսդրական սահմանափակումները:

3. Սույն աշխատության շրջանակում կատարված իրավական վերլուծությունը հիմք է տալիս փաստել, որ Գործող քրեական օրենսգրքի ձևակերպումներում ողորկափող հրազենին առնչվող բացառությունը սահմանող դրույթը գործնականում պետք է կիրառվի՝ հիմք ընդունելով հետևյալ մեկնաբանությունները՝

1) Չնայած քաղաքացիական զենքի տեսակների շարքում օրենսդիրը ներառել է ողորկափող հրազենը՝ առանց կոնկրետացնելու դրա առանձին հատկանիշներ, այնուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ցանկացած ողորկափող հրազեն ինքնին չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական» և այդ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիական զենքի շրջանառության համար «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

2) Ինքնաշեն, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների ենթարկված գործարանային ծագման ողորկափող հրազենը չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական», հետևաբար, դրա ապօրինի շրջանառությունը պետք է որակել Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով: Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ գործարանային ողորկափող հրազենի կառուցվածքային փոփոխություններն իրավական որակման տեսանկյունից կարող են արժևորվել միայն այն դեպքում, երբ դրանց հետևանքով նշված հրազենը կորցրել է իր նախնական (գործարանային) նշանակությունը՝ խաթարվել են տվյալ հրազենին ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվել են մարտավարատեխնիկական հատկությունները:

4. ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը հանդես է գալիս որպես ինքնուրույն հանցագործություն և դուրս է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակից: Այն դեպքում, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխությունների ենթարկված քաղաքացիական ողորկափող հրազենի շրջանառությունը (իրացնել, պահել,

www.ardarapatyamjournal.com

փոխադրել, առաքել կամ կրել) իրականացնում է այն անձը, ով պատրաստել կամ ձևափոխել է այն, ապա վերջինիս արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ և 336-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համակցության: Տվյալ դեպքում, ըստ էության, գործ ունենք հանցանքների անխուսափելի համակցության հետ, քանի որ դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ ապօրինի կերպով հրազեն պատրաստելը կամ քաղաքացիական ողորկափող հրազենը կառուցվածքային փոփոխությունների ենթարկելն առնվազն չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

[1] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ., ՀՕ-528-Ն: Ուժը կորցրել է 01.07.2022թ.:
[2] Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Երվանդ Մելքոնյանի գործով 2011թ. Մայիսի 11-ի թիվ ԵԾԴ/0090/01/10 որոշումը:
[3] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն: Գործում է:
[4] Տե՛ս, ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է:
[5] Հարկ է նշել, որ Օրենքի սկզբնական տեքստում որպես քաղաքացիական զենքի տեսակ նախատեսված էր «ողորկ-երկարափող հրազենը», որը հետագայում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 02.02.2024թ. ՀՕ-34-Ն օրենքով փոխարինվեց «ողորկափող հրազեն» ձևակերմամբ:
[6] Ինչպես նկատում ենք՝ Օրենքով կառուցվածքային փոփոխության ենթարկելու արգելքը տարածվում է բացառապես հրազենի վրա, մինչդեռ «ինքնաշենի» դեպքում նշված արգելքը տարածվում է ոչ միայն հրազենի, այլ նաև՝ ցանկացած զենքի վրա: Այնուհանդերձ, քննարկվող թեմայի համատեքստում մեզ համար գործնական հետաքրքրություն է ներկայացնում ինքնաշեն հրազենը, հետևաբար սույն աշխատանքի շրջանակում անդրադարձ կկատարենք բացառապես վերջինին:
[7] Տե՛ս, Исаков В.Д., Бабаханян Р.В. К вопросу об экспертизах при применении газового оружия Судебная экспертиза: Межвуз. сб. науч. ст. Выш. 1. Саратов: СЮИ МВД России, 2001, էջ 40:
[8] Տե՛ս, ՀՀ կառավարության «Քաղաքացիական, ծառայողական զենքի և ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» 2021 թվականի ապրիլի 1-ի N 429-Ն որոշումը:
[9] Հարկ է նկատել, որ ռուսական գրականությունում առանձացվում է ոչ գործարանային հրազենի երկու ինքնուրույն տեսակ՝ ինքնաշեն (самодельное огнестрельное оружие) և արհեստագործական (кустарное огнестрельное оружие): Սինևույն ժամանակ, այդ գրականությունում սահմանվում են դրանց տարբերակիչ հատկանիշները: Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ նշված տարանջատումն ունի կրիմինալիստիկական նշանակություն և քրեաիրավական որակման տեսանկյունից որևէ հետաքրքրություն չի ներկայացնում: Այս մասին տե՛ս Самсонов Г.А. Криминалистика: учебное пособие для вузов. М.: Юридическая литература, 2009, էջեր 176-178:
[10] Տե՛ս, N. Florquin and B. King, From Legal to Lethal. Converted Firearms in Europe, Small Arms Survey, Graduate Institute of International and Development Studies, Geneva, 2018:
[11] Տե՛ս, թիվ ԱՎԴ-1/0050/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741156194 (վերջին մուտք՝ 29.08.2025թ.):
[12] Տե՛ս, թիվ ԱՎԴ-1/0050/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554826973 (վերջին մուտք՝ 29.08.2025թ.):
[13] Տե՛ս, թիվ ԱՎԴ-1/0296/01/24 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741154547 (վերջին մուտք՝ 29.08.2025թ.):
[14] Հարկ է նշել, որ թեև նախաքննության ընթացքում Ս.Աղամալյանի նկատմամբ հանրային քրեական

հետապնդում է հարուցվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով, այնուհանդերձ, վերջինիս վերաբերյալ քրեական գործը դատարան է ուղարկվել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով և 297-րդ հոդվածի 3-րդ մասով:

[15] Տե՛ս, թիվ ԿԴ/0008/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649420414 (վերջին մուտք՝ 02.09.2025թ.):

[16] Տե՛ս, թիվ ԵԴ1/0716/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947691959 (վերջին մուտք՝ 31.08.2025թ.):

Օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ

1. Թիվ ԱՎԴ1/0050/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741156194
2. Թիվ ԱՎԴ1/0050/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554826973
3. Թիվ ԱՎԴ1/0296/01/24 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741154547
4. Թիվ ԵԴ1/0716/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947691959
5. ԹԻվ ԿԴ/0008/01/25 քրեական գործը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649420414
6. ՀՀ կառավարության «Քաղաքացիական, ծառայողական զենքի և ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» 2021 թվականի ապրիլի 1-ի N 429-Ն որոշումը:
7. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Երվանդ Մելքոնյանի գործով 2011թ. Մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումը:
8. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն: Գործում է:
9. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ., ՀՕ-528-Ն: Ուժը կորցրել է 01.07.2022թ.:
10. ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է:
11. Исаков В.Д., Бабаханян Р.В. К вопросу об экспертизах при применении газового оружия. Судебная экспертиза: Межвуз. сб. науч. ст. Выш. 1. Саратов: СЮИ МВД России, 2001:
12. Самсонов Г.А. Криминалистика: учебное пособие для вузов. М.: Юридическая литература, 2009:
13. N. Florquin and B. King, From Legal to Lethal. Converted Firearms in Europe, Small Arms Survey, Graduate Institute of International and Development Studies, Geneva, 2018:

References

1. T’iv AVD1/0050/01/25 qreakan gorc’y’, hasaneli e’ het&yal hghmamb — https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741156194 (Criminal Case No. AVD1/0050/01/25, available at the following link.) (In Armenian).
2. T’iv AVD1/0050/01/25 qreakan gorc’y’, hasaneli e’ het&yal hghmamb — https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=29554872554826973 (Criminal Case No. AVD1/0050/01/25, available at the following link.) (In Armenian).
3. T’iv AVD1/0296/01/24 qreakan gorc’y’, hasaneli e’ het&yal hghmamb — https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741154547 (Criminal Case No. AVD1/0296/01/24, available at the following link.) (In Armenian).
4. T’iv ED1/0716/01/25 qreakan gorc’y’, hasaneli e’ het&yal hghmamb — https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947691959 (Criminal Case No. ED1/0716/01/25, available at the following link.) (In Armenian).
5. T’iv KD/0008/01/25 qreakan gorc’y’, hasaneli e’ het&yal hghmamb — https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649420414 (Criminal Case No. KD/0008/01/25, available at the following link.) (In Armenian).
6. HH karavarut’yan ,Qaghaqaciakan, tsarayoghakan zenqi yev razmamat’erqi k’ŗeagitakan pahandrnery hastatelu masinե 2021 tvakani aprili 1-i N 429-N voroshumy. (Decision of the Government of the Republic of Armenia “On Approval of Forensic Requirements for Civilian, Service Weapons and Ammunition” No. 429-N of April 1, 2021.) (In Armenian).
7. HH Vtwr’abek datarani՝ Ervand Melqonyani gorc’ov 2011t’. Mayisi 11-i t’iv EShD/0090/01/10 oroshowmy’. (Decision of the Court of Cassation of the Republic of Armenia in the case of Yervand Melqonyan, No. EShD/0090/01/10, May 11, 2011.) (In Armenian).
8. HH qreakan o’rensgirq, y’ndownvel e’ 05.05.2021t’., owjhi mej e’ mtel 01.07.2022t’., HO’-199-N: Gorc’owm e’. (Criminal Code of the Republic of Armenia, adopted May 5, 2021, entered into force July 1, 2022, Law No. HO-199-N, currently in force) (In Armenian).

9. HH qreakan o'rensgirq, y'ndownvel e' 18.04.2003t'., owjhi mej e' mtel 01.08.2003t'., HO'-528-N: Owjhy' korcrel e' 01.07.2022t'. (Criminal Code of the Republic of Armenia, adopted April 18, 2003, entered into force August 1, 2003, Law No. HO-528-N, repealed July 1, 2022.) (In Armenian).
10. HH o'renqy' zenqi shrjanar'owt'yan kargavorman masin. Y'ndownvel e' 05.10.2022t'. owjhi mej e' mtel 28.04.2023t'., HO'-368-N: Gorc'owm e'. (Law of the Republic of Armenia on the Regulation of the Circulation of Weapons, adopted October 5, 2022, entered into force April 28, 2023, Law No. HO-368-N, currently in force) (In Armenian).
11. Isakov V.D., Babakhanyan R.V. K voprosu ob ekspertizakh pri primenenii gazovogo oruzhiya. Sudebnaya ekspertiza: Mezhvuzovskiy sbornik nauchnykh statey, Vysh. 1. Saratov: SYuI MVD Rossii, 2001. (On the Question of Expert Examinations in the Use of Gas Weapons. In Forensic Expertise: Inter-University Collection of Scientific Papers, issue 1. Saratov: SYuI MVD of Russia, 2001.) (In Russian).
12. Samsonov G.A. Kriminalistika: uchebnoe posobie dlya vuzov. Moskva: Yuridicheskaya literatura, 2009. (Criminalistics: A Textbook for Universities. Moscow: Yuridicheskaya Literatura.) (In Russian).

Вираб Амбарцумян
Преподаватель кафедры уголовного права Ереванского Государственного Университета

РЕЗЮМЕ

Гладкоствольное огнестрельное оружие как вид гражданского оружия: некоторые проблемы уголовно-правовой квалификации

В статье рассматриваются содержательные изменения, произошедшие в статьях действующего Уголовного кодекса, устанавливающих уголовную ответственность за незаконный оборот оружия, в отношении исключения, касающегося гладкоствольного огнестрельного оружия.

По мнению автора, любое гладкоствольное огнестрельное оружие само по себе не может быть отнесено к «гражданскому», и при этом необходимо учитывать ограничения оборота гражданского оружия, предусмотренные законом "О регулировании оборота оружия". В частности, автор отмечает, что самодельное, а также конструктивно изменённое оружие заводского происхождения с гладким стволом не может быть отнесено к гражданскому, следовательно, его незаконный оборот подлежит квалификации по статье 335 Уголовного кодекса РА. При этом, структурные изменения Заводского гладкоствольного огнестрельного оружия могут быть юридически оценены только в том случае, если в результате этого указанное огнестрельное оружие теряет свое первоначальное (заводское) значение: нарушаются криминологические требования, предъявляемые к данному огнестрельному оружию, изменяются его тактико-технические свойства.

Кроме того, по мнению автора, заслуживает внимания то обстоятельство, что состав преступления, предусмотренный статьей 336 Уголовного кодекса РА, является самостоятельным преступлением и выходит за рамки состава преступления, предусмотренного статьей 335 Уголовного кодекса РА. Следовательно, в случае, когда оборот самодельного или подвергшегося структурным изменениям гражданского гладкоствольного огнестрельного оружия осуществляет лицо, которое его изготовило или модифицировало, то его действие необходимо квалифицировать как совокупность преступлений, предусмотренных статьями 335 и 336 Уголовного кодекса РА.

***Ключевые слова**: гражданское гладкоствольное огнестрельное оружие; заводское происхождение; самодельное огнестрельное оружие; модифицированное огнестрельное оружие; классификация.*

Virab Hambardzumyan
Lecturer at the Chair of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

SUMMARY

Smooth-bore firearms as a type of civil weapons: some issues of criminal-legal qualification

The article examines the substantive changes that have occurred in the articles of the current Criminal Code establishing criminal liability for the illegal circulation of weapons, particularly regarding the exception related to smoothbore firearms.

According to the author, any smoothbore firearm in itself cannot be classified as "civilian," and it is necessary to take into account the restrictions on the circulation of civilian weapons provided by the Law "On the Regulation of the Circulation of Weapons" In particular, the author notes that homemade firearms, as well as factory-made smoothbore weapons that have undergone structural modifications, cannot be considered civilian weapons. Consequently, their illegal circulation should be qualified under Article 335 of the Criminal Code of the Republic of Armenia.

At the same time, structural modifications of factory-produced smoothbore firearms can be legally assessed only if, as a result, the given firearm loses its original (factory) characteristics-namely, when the criminological requirements applicable to that weapon are violated and its tactical and technical properties are altered.

In addition, according to the author, it is noteworthy that the corpus delicti established by Article 336 of the Criminal Code of the Republic of Armenia constitutes an independent offense and goes beyond the scope of the crime defined by Article 335. Therefore, if a person who has manufactured or structurally modified a homemade or altered civilian smoothbore firearm subsequently engages in its circulation, their act should be qualified as a combination of offenses under Articles 335 and 336 of the Criminal Code of the Republic of Armenia.

Key words*: civilian smoothbore firearm; factory origin; homemade firearm; modified firearm; classification.*

Ընագիրը ներկայացվել է 13.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 18.11.25թ.

ՍԱՆԵ ՍԱՐԿՈՍՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Սույն հոդվածում կատարվել է ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման ոլորտում երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունների համապարփակ հետազոտություն:

Հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել են ներպետական օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավազորությունների իրականացման առանձնահատկությունները և երկրաբանական տեղեկատվությունը՝ որպես մտավոր սեփականության օբյեկտ:

Հոդվածում կատարված վերլուծության արդյունքում հեղինակը ներկայացրել է երկրաբանական տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավազորությունների իրականացմանը, ինչպես նաև՝ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ համարվող երկրաբանական տեղեկատվության նկատմամբ մտավոր սեփականության իրավունքների օրենսդրական ամրագրմանը նվիրված եզրահանգումներ:

Հիմնաբառեր *– ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտներ, ընդերքօգտագործման իրավունք, երկրաբանական տեղեկատվություն, մտավոր սեփականության իրավունքներ, առևտրային գաղտնիք:*

Ներածություն

Շուկայական տնտեսության պայմաններում ընդերքը և ընդերքօգտագործման ոլորտում հանդիպող մյուս օբյեկտները դադարել են լինել սոսկ «բնական հարստություն» և դարձել են տնտեսական հարաբերությունների զարգացման գործում կարևորագույն դերակատարություն ունեցող քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնատիպ օբյեկտներ, որոնց տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ կապված հարաբերությունները իրավունքի տարբեր ճյուղերի կողմից ստացել են համալիր իրավական կարգավորում:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ընդերքօգտագործման ոլորտում **երկրաբանական տեղեկատվության**՝ որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտի քաղաքացիաիրավական կարգավիճակը սահմանող նորմերի ուսումնասիրությունը:

Գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդել, **որ երկրաբանական տեղեկատվության** տիրապետման, տնօրինման և օգտագործման կարգը սահմանող օրենսդրական նորմերում առկա են իրավական կարգավորման որոշ բացեր և անորոշություններ՝ հնարավորություն չտալով հստակեցնել դրա նկատմամբ ընդերքօգտագործման իրավահարաբերության սուբյեկտների իրավազորությունների ծավալը: Բացի այդ, գործող օրենսդրության կարգավորման շրջանակից ամբողջությամբ դուրս են մնացել երկրաբանական տեղեկատվության՝ որպես մտավոր սեփականության օբյեկտի կամ առևտրային գաղտնիքի իրավական պահպանության կանոնները:

Չնայած երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական ռեժիմի վերոհիշյալ հիմնախնդիրներին՝ դրա իրավական ռեժիմը հայրենական գրականության մեջ երբևէ չի ուսումնասիրվել:

Սույն հետազոտության շրջանակում կատարվել է ՀՀ օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական ռեժիմի առանձնահատկությունների համապարփակ հետազոտություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, ընդհանրացման, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտություն.

Օրենսգրքի համաձայն՝ **երկրաբանական տեղեկությունը** (պետք է լիներ՝ «տեղեկատվությունը»[1]) *ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, դրանում օգտակար հանածոների առկայության, քանակի և այլ հատկությունների, ինչպես նաև ընդեր-*

www.ardaradutyunjournal.com

օգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին տվյալներն են (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի[2] (այսուհետ՝ նաև «Օրենսգիրք») 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ, 12-րդ հոդված): Օրենսգրքի 3-րդ հոդվածով *«երկրաբանական տեղեկություն»* եզրույթի սահմանումից պարզ է դառնում, որ օրենսդիրը տարբերակել է երկրաբանական տեղեկատվության **երկու տեսակ**՝ 1) ընդերքի տեղամասը նկարագրող (դրա կառուցվածքը, կազմը, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակական և այլ հատկանիշները) և 2) ընդերքօգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշներին վերաբերող:

Հանքարդյունաբերության հիմքում ճշգրիտ և հավաստի երկրաբանական տեղեկատվությունն է[3], որն ունի կարևոր դեր ոչ միայն հանքարդյունաբերության[4], այլև տնտեսության այլ ճյուղերի համար: Երկրաբանական տեղեկատվությունն ըստ էության ձեռք է բերվում ընդերքօգտագործման իրավունքի բոլոր տեսակներով նախատեսված գործունեության իրականացման արդյունքում: Հենց ընդերքի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում երկրաբանական տեղեկատվություն ստանալու նպատակով տրամադրվում են օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը, ինչպես նաև՝ երկրաբանական ուսումնասիրության համաձայնությունը (Օրենսգրքի 4-րդ գլուխ), որոնք բովանդակային առումով միմյանցից տարբերվում են:

Երկրաբանական տեղեկատվությունը օբյեկտիվ արտահայտություն է ստանում երկրաբանական հաշվետվություններում, քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում (Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ի մաս), ընդերքի երկրաբանական ուսումնասիրության առնչվող առաջնային փաստաթղթերում (երկրաբանական գրառումների օրագիր, տոպոգրաֆիական և երկրաբանական քարտեզներ, վերծանված օդատիեզերական լուսանկարներ և այլն)[5]: Ուստի, Օրենսգրքի 12-րդ հոդվածի իմաստով քաղաքացիական շրջանառության օբյեկտ է ոչ թե ցանկացած, վերացական (աբստրակտ) երկրաբանական տեղեկատվությունը, այլ այն երկրաբանական տեղեկատվությունը, որը ստացել է **օբյեկտիվ արտահայտություն**[6]:

Երկրաբանական տեղեկատվության իրավական ռեժիմը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական նորմերը պարունակում են որոշ բացեր, ինչի արդյունքում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի իրավազորությունների, ինչպես նաև՝ դրանց իրականացման ծավալի մասով առաջանում են մի շարք հիմնախնդիրներ:

Այսպես, Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկրաբանական տեղեկատվությունը, անկախ դրա ստացման ֆինանսավորման աղբյուրից (պետության կամ ընդերքօգտագործողի միջոցներով), **Հայաստանի Հանրապետության սեփականությունն է**[7]: Ինչ վերաբերում է երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքներին, ապա Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ընդերքօգտագործողն ունի **«ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում»** ստացած երկրաբանական տեղեկատվությունը **տնօրինելու և օգտագործելու** իրավազորություններ: Իր հերթին պետությունը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում[8] պարտավորվում է չբացահայտել ընդերքօգտագործողի ստացած երկրաբանական տեղեկատվությունը առանց ընդերքօգտագործողի համաձայնության, ինչպես նաև՝ նույն ժամկետում ապահովել պետության կողմից երկրաբանական տեղեկատվության օգտագործման ընթացքում երրորդ անձանցից դրա գաղտնիությունը (Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մաս):

Անհասկանալի է, թե ինչու են Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված միայն երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի օգտագործման և տնօրինման իրավազորությունները, իսկ **տիրապետման իրավազորությունը** նախատեսված չէ: Գտնում ենք, որ հնարավոր չէ պատկերացնել առանց տիրապետման իրավազորության երկրաբանական տեղեկատվությունը օգտագործելու և տնօրինելու ընդերքօգտագործողի իրավազորությունների գործնականում իրացման հնարավորությունը: *Ուստի, առաջարկում ենք Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել լրացում և նախատեսել երկրաբանական տեղեկատվությունը տիրապետելու ընդերքօգտագործողի իրավազորությունը:*

Պետք է նշել նաև, որ Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու և օգտագործելու ընդերքօգտագործողի իրավազորությունները չեն կարող մեկնաբանվել որպես ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի *«ժամանակավոր սեփականության իրավունքը»* սահմանող դրույթներ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[9] 279-րդ հոդվածում սպառիչ թվարկված են սեփականության իրավունքի դադարման հիմքերը, որոնցից ոչ մեկի մեջ որևէ տեսակի իրավունքի դադարման փաստով պայմանավորված սեփականության իրավունքի դադարեցումը կամ դադարումը ոչ մի կերպ չի տեղավորվում:

Ընդերքօգտագործման իրավունքի դադարման փաստը (ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի լրանալը կամ դրանից հրաժարվելը) հիմք է

ընդերքօգտագործողի կողմից երկրաբանական տեղեկատվությունը **պետությանը** անհատույց հիմքերով փոխանցելու համար (Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Ընդերքօգտագործման իրավունքի դադարման փաստով վերանում է նաև երկրաբանական տեղեկատվության բացահայտման սահմանափակումը: Պետությունը, ի դեմս լիազոր մարմնի (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ[10]) ստեղծում, վարում և տնօրինում է երկրաբանական տեղեկատվության միասնական համակարգը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անճար տրամադրում է երկրաբանական տեղեկատվություն (Օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մաս, 17-րդ հոդված):

Ներպետական օրենսդրական կարգավորումների վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ ընդերքօգտագործողը երկրաբանական տեղեկատվության նկատմամբ բացառապես պետական (անկախ դրա ստացման ֆինանսավորման աղբյուրից) սեփականության իրավունքի օրենսդրական ամրագրման պարագայում դրա նկատմամբ ոչ մի պարագայում սեփականության իրավունք ձեռք չի բերում, այլ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում ստանում է երկրաբանական տեղեկատվության տիտղոսային տիրապետողի կարգավիճակ[11], որը բխում է Օրենսգրքից: Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ ընդերքօգտագործողն ունի ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետով սահմանափակված ժամկետում երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու, օգտագործելու, տիրապետելու բացառիկ իրավունքներ, որը պարտավորեցնում է երրորդ անձանց (այդ թվում՝ պետությանը) այդ ժամկետում զերծ մնալ նշված իրավունքները խախտելուց:

Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում ընդերքօգտագործողի տիրապետման իրավազորությունն ամրագրելուց զատ անհրաժեշտ է նաև հստակեցնել երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում ընդերքօգտագործողի իրավազորությունների ծավալը, որոնք չեն հստակեցվում նաև համապատասխան ենթաօրենսդրական ակտերով (այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը)[12]: Ինչպես արդեն նշվել է, Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է միայն երկրաբանական տեղեկատվության ժամանակավոր գաղտնիության ռեժիմը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է երկրաբանական տեղեկատվության գաղտնիության ռեժիմից բացառությունները:

Սինչդեռ, երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական ռեժիմը սահմանող օրենսդրական նորմերը պետք է հաշվի առնեն, որ երկրաբանական տեղեկատվությունը քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքում ունի երկակի դասակարգում՝ հանդես է գալիս թե՛ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվություն, թե՛ որպես մտավոր գործունեության արդյունք:

Ներպետական օրենսդրությամբ իրավական պահպանության է ենթակա ծառայողական, առևտրային, բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդված) և չբացահայտված տեղեկատվությունը՝ որպես մտավոր գործունեության արդյունքների ենթատեսակ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ գլուխ): Իսկ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվող երկրաբանական տեղեկատվությունը պահպանվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով[13]:

Երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի սուբյեկտիվ իրավունքների ծավալը ներառում է դրա օգտագործման կարգը որոշելու վերջինիս իրավունքը (այդ թվում՝ առևտրային նպատակներով)՝ ներառյալ երկրաբանական տեղեկատվության օտարումը, վճարի դիմաց տարածումը երրորդ անձանց, դրա նկատմամբ առևտրային գաղտնիքի և գաղտնիության ռեժիմների սահմանումը[14]:

Երկրաբանական տեղեկատվությունը որոշ դեպքերում դասվում է առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունների շարքին[15] (օրինակ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մեթոդների և տեխնոլոգիաների մասին)[16], ուստի ենթակա է իրավական պահպանության ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի շրջանակներում:

Որոշ դեպքերում էլ երկրաբանական տեղեկատվությունը մտավոր գործունեության արդյունք է, որը ստեղծվում է տարբեր մասնագետների ստեղծագործական աշխատանքի արդյունքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112-րդ հոդվածով որպես հեղինակային իրավունքի օբյեկտ են ճանաչվում երկրաբանական քարտեզները: Սակայն մտավոր սեփականության (հեղինակային իրավունքի) օբյեկտներ են նաև երկրաբանական տեղեկատվության փաստաթղթավորված այլ ձևերը[17]: Թվային արտահայտություն ունեցող երկրաբանական տեղեկատվությունը կարող է իրավական պահպանություն ստանալ որպես տվյալների բազա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1139-րդ հոդված), իսկ այլ տեքստային կամ քարտեզագրական տեղեկատվությունը՝ ընդերքօգտագործման իրավունքի ժամկետում երրորդ անձանց անհայտ լինե-

լու ուժով այդ ժամկետում կարող է իրավական պահպանության ենթարկվել որպես չբացահայտված տեղեկատվություն (նոու-հաու) (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ գլուխ)[18]: Ինչ վերաբերում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրությանն առնչվող առաջնային փաստաթղթերին (օրինակ՝ վերծանված օդատիեզերական լուսանկարները, մերկացումների ուրվագծերը և այլն), ապա դրանք, մեր կարծիքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1114-րդ հոդվածի հիմքով հեղինակային իրավունքի օբյեկտ չեն, քանի որ դրանք առանց մարդու ստեղծագործական գործունեության՝ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքներ են:

Չնայած երկրաբանական տեղեկատվության օբյեկտիվ ձև ստացած տարբեր տեսակների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտների տարասեռ դասակարգմանը, ինչպես վերը նշել ենք, ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությունը երկրաբանական տեղեկատվության իրավական ռեժիմը կարգավորել է մասամբ՝ անդրադառնալով միայն դրա ժամանակավոր (ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում) գաղտնիության իրավական ռեժիմին: Մինչդեռ, երկրաբանական տեղեկատվության՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի այլ առանձնահատկությունները հաշվի չեն առնվել, ինչի արդյունքում օրենսդրական մակարդակով պաշտպանված չեն մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող երկրաբանական տեղեկատվության տարբեր տեսակների հեղինակների իրավունքները: Սակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1108-րդ հոդվածից բխում է, որ դրանք պետք է ճանաչվեն և պաշտպանության ենթարկվեն երկրաբանական տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքից անկախ: Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն առևտրային գաղտնիք համարվող երկրաբանական տեղեկատվության շրջանառության հարցերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ներդնել համապարփակ կարգավորումներ, որոնք նվիրված կլինեն՝ 1) մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող երկրաբանական տեղեկատվության նկատմամբ մտավոր սեփականության իրավունքների ճանաչմանը և երաշխավորմանը, ինչպես նաև՝ 2) ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում առևտրային գաղտնիք կազմող երկրաբանական տեղեկատվության իրավական պահպանության առանձնահատկություններին:

Եզրակացություն.

Ամփոփելով ՀՀ օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական ռեժիմի առանձնահատկություններին նվիրված հետազոտությունը՝ կատարել ենք մի շարք եզրահանգումներ, որոնցից առավել էականները հանգում են հետևյալին՝

1. Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է **միայն** երկրաբանական տեղեկատվությունը **տնօրինելու և օգտագործելու** ընդերքօգտագործողի իրավազորությունները, իսկ դրա **տիրապետման** իրավազորությունը նախատեսված չէ: Մինչդեռ, առանց տիրապետման իրավազորության երկրաբանական տեղեկատվությունը օգտագործելու և տնօրինելու ընդերքօգտագործողի իրավազորությունների գործնականում իրացումն անհնար է: Ուստի, Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվել է կատարել լրացում և նախատեսել երկրաբանական տեղեկատվությունը **տիրապետելու** ընդերքօգտագործողի իրավազորությունը:

Ներպետական օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության նկատմամբ պետական սեփականության իրավունքի օրենսդրական ամրագրման պարագայում ընդերքօգտագործողը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում ստանում է երկրաբանական տեղեկատվության տիտղոսային տիրապետողի կարգավիճակ, որը բխում է Օրենսգրքից: Ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետով սահմանափակված ժամկետում երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու, օգտագործելու, տիրապետելու ընդերքօգտագործողի բացառիկ իրավունքը ենթադրում է երրորդ անձանց՝ (այդ թվում՝ պետության) նշված իրավունքը խախտելուց զերծ մնալու պարտականությունը:

2. Քննարկելով և վերլուծելով երկրաբանական տեղեկատվության՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի առանձնահատկությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները՝ արձանագրվել է, որ ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությունը երկրաբանական տեղեկատվության իրավական ռեժիմը կարգավորել է մասամբ՝ անդրադառնալով միայն դրա ժամանակավոր (ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում) գաղտնիության իրավական ռեժիմին: Ուստի, առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ներդնել համապարփակ կարգավորումներ, որոնք նվիրված կլինեն՝ 1) մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող երկրաբանական տեղեկատվության նկատմամբ մտավոր սեփականության իրավունքների ճանաչմանը և երաշխավորմանը, ինչպես նաև՝ 2) ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում առևտրային գաղտնիք կազմող երկրաբանական տեղեկատվության իրավական պահպանության առանձնահատկություններին:

[1] Սեր կարծիքով առավել ճիշտ է օգտագործել ոչ թե ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում օգտագործվող «երկրաբանական տեղեկություն», այլ «երկրաբանական տեղեկատվություն» եզրույթը, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ նշվում է «տեղեկատվությունը»:
[2] Տե՛ս, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:
[3] Տե՛ս, ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023), Հավելված N 1, էջ 36:
[4] Տե՛ս, Хамитов Р.А., Геологическая информация и право собственности, էջ 21, http://ig.ufaras.ru/File/K2008/03_003_08.pdf (վերջին մուտք՝ 15.08.2025թ.):
[5] Տե՛ս, ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 08-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պահպանության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի N 669-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1414-Ն որոշումը:
[6] Տե՛ս, Агафонов В. Б., Право собственности на геологическую информацию, Российский Государственный Университет нефти и газа имени И.М. Губкина, Москва - 2006, էջ 34:
[7] Երկրաբանական տեղեկության նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ օտարերկրյա պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ պետություններում գործում է երկրաբանական տեղեկության նկատմամբ դուալ սեփականության իրավունքի մոդելը (ՌԴ, Ղազախստան), որի համաձայն, կախված ֆինանսավորման աղբյուրից (պետական կամ ընդերքօգտագործողի միջոցներով), երկրաբանական տեղեկության նկատմամբ սեփականության իրավունքը համապատասխանաբար պատկանում է պետությանը կամ ընդերքօգտագործողին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), հոդված 75 (2); Закон РФ “О недрах” от 21.02.1992 N 2395-1 (ред. от 07.06.2025), հոդված 27:
[8] ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը, ինչպես նաև՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքը տրամադրվում է առավելագույնը 3 տարի ժամկետով:
[9] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
[10] Տե՛ս, ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» 1758-Ն որոշումը:
[11] Տե՛ս, Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, էջ 295:
[12] Տե՛ս, ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 12-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 437-Ն որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրերին, ապա դրանք պարունակում են միայն ընդերքօգտագործողի՝ երկրաբանական տեղեկությունը լիազոր մարմնին փոխանցելու պարտավորությանը վերաբերող դրույթներ, իսկ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 23-ի «Երկրաբանական տեղեկության հանձնման կարգը սահմանելու մասին» N 569-Ն որոշումը կարգավորում է միայն ընդերքօգտագործման իրավունքը դադարելու դեպքում ընդերքօգտագործողի կողմից տնօրինվող երկրաբանական տեղեկության հանձնմանը վերաբերող ընթացակարգային բնույթի նորմեր:
[13] Տե՛ս, ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 08-ի ,Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պահպանության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի N 669-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե N 1414-Ն որոշման հավելվածի 12-րդ կետ:
[14] Տե՛ս, Левочко, В.В., Геологическая информация как объект гражданских прав недропользования / В.В. Левочко // Научное обозрение. Серия 1. Экономика и право. - 2017, №1, էջ 143. https://www.elibrary.ru/download/elibrary_28879719_84259011.pdf (վերջին մուտք՝ 06.08.2025թ.):
[15] Տե՛ս, Закон РФ “О недрах” от 21.02.1992 N 2395-1 (ред. от 07.06.2025), հոդված 27:
[16] Տե՛ս, Левочко, В.В., Геологическая информация как объект гражданских прав недропользования / В.В. Левочко // Научное обозрение. Серия 1. Экономика и право. - 2017, №1, էջ 145:
[17] Տե՛ս, Агафонов, В. Б., Право собственности на геологическую информацию, Российский Государственный Университет нефти и газа имени И.М. Губкина, Москва - 2006, էջ 137:
[18] Տե՛ս, Оганесян Р.О., Некоторые проблемы правовой охраны интеллектуальных прав в сфере геологического изучения и использования недр, էջ 83; տե՛ս նաև ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ԱԳՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն, 30 օգոստոս, 2018թ. էջ 13. https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/LIRAP (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
2. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ

2011.12.21/69(872) Հոդ.1661:
3. ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» 1758-Ն որոշումը:
4. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 12-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 437-Ն որոշումը:
5. ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 08-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պահպանության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի N 669-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1414-Ն որոշումը:
6. ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 23-ի «Երկրաբանական տեղեկության հանձնման կարգը սահմանելու մասին» N 569-Ն որոշումը:
7. ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը:
8. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, էջ 295:
9. ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ԱԶՄԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն, 30 օգոստոս, 2018թ. էջ 13. https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/LIRAP (վերջին մուտք՝ 05.08.2025թ.):
10. Агафонов, В. Б., Право собственности на геологическую информацию, Российский Государственный Университет нефти и газа имени И.М. Губкина, Москва - 2006, 205 էջ.
11. Закон РФ “О недрах” от 21.02.1992 N 2395-1 (ред. от 07.06.2025).
12. Левочко, В.В., Геологическая информация как объект гражданских прав недропользования / В.В. Левочко // Научное обозрение. Серия 1. Экономика и право. - 2017, №1, էջեր 135-148. https://www.elibrary.ru/download/elibrary_28879719_84259011.pdf (վերջին մուտք՝ 06.08.2025թ.):
13. Оганесян Р.О., Некоторые проблемы правовой охраны интеллектуальных прав в сфере геологического изучения и использования недр, էջ 83.
14. Хамитов Р.А., Геологическая информация и право собственности, էջ 21, http://ig.ufaras.ru/File/K2008/03_003_08.pdf (վերջին մուտք՝ 15.08.2025).
15. Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024).

References

1. HH Azgayin Jhoghov. HH qaghaqaciakan o’rensgirq. [RA National Assembly, RA Civil Code] 05 May 1998 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193748. (In Armenian)
2. HH y’nderqi masin o’rensgirq [The Code on the Subsoil of the Republic of Armenia]. 28 Noy. 2011. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178678. (In Armenian)
3. HH karavarut’yan 2002 t’vakani hoktemberi 31-i «Hanrapetakan erkrabanakan fond» petakan och ar’&trayin kazmaker-powt’yown steghc’elow masin» 1758-N voroshowmy’ [Resolution of the Government of the Republic of Armenia No. 1758-N]. (In Armenian)
4. HH karavarut’yan 2012 t’vakani marti 12-i «Y’nderqo’gtagorc’man paymanagreri o’rinakeli d’&ery’ hastatelow masin» N 437-N voroshowmy’ [Resolution of the Government of the Republic of Armenia No. 437-N]. (In Armenian)
5. HH karavarut’yan 2012 t’vakani noyemberi 08-i «Hayastani Hanrapetowt’yan y’nderqi masin erkrabanakan teghekowt’yan pahpanowt’yan kargy’ hastatelow & Hayastani Hanrapetowt’yan kar’avarowt’yan 2004 t’vakani mayisi 6-i N 669-n oroshowmn owjhy’ korcrac’ twanachelow masin» N 1414-N voroshowmy’ [Resolution of the Government of the Republic of Armenia No. 1414-N]. (In Armenian)
6. HH karavarut’yan 2013 t’vakani mayisi 23-i «Yerkrabanakan teɫekut‘yan hanznman kargə sahmanelu masin» N 569-N voroshowmy’ [Resolution of the Government of the Republic of Armenia No. 569-N]. (In Armenian)
7. HH karavarut’yan 2023 tvakani mayisi 11-i «Hank‘ardyunaberut‘yan volorti zargac‘man razmavarut‘yuny ev dranic‘ bkhogh gorc‘oxut‘yunneri plany (minch‘ev 2035 t‘v.) hastatelu masin» N 730-L voroshowmy’ [Resolution of the Government of the Republic of Armenia No. 730-L]. (In Armenian)
8. HAH-i Patasxanatow hanqardyownaberowt’yan kentron, ATwT’N o’rensdrakan & institowcional verlowc’owt’yown, 30 o’gostos, 2018t’. e’j 13. https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/LIRAP (verjin mowtq՝ 05.08.2025t’.). (In Armenian)
9. Barseghyan T. K., Hayastani Hanrapetowt’yan qaghaqaciakan iravownq, ar’ajin mas (chorrord hratarakchowt’yown), Erevani pet. hamalsaran, Erevan, Tigran Mec’ hrat., 2014, e’j 295. (In Armenian)
10. Zakon RF “O nedrah” ot 21.02.1992 N 2395-1 (red. ot 07.06.2025). (In Russian)
11. Levochko, V.V., Geologicheskaja informacija kak obyekt grazhdanskih prav nedropol’zovanija / V.V. Levochko // Nauchnoe obozrenie. Serija 1. Jekonomika i pravo. - 2017, №1, e’j 135-148. https://www.elibrary.ru/download/elibrary_28879719_84259011.pdf. (verjin mowtq՝ 06.08.2025t’.) (In Russian)

12. Agafonov, V. B., Pravo sobstvennosti na geologicheskuju informaciju, Rossijskij Gosudarstvennyj Universitet nefti i gaza imeni I.M. Gubkina, Moskva - 2006, 205 e'j. (In Russian)
13. Oganesjan R.O., Nekotorye problemy pravovoj ohrany intellektual'nyh prav v sfere geologicheskogo izuchenija i ispol'-zovanija nedr, e'j 83. (In Russian)
14. Hamitov R.A., Geologicheskaja informacija i pravo sobstvennosti, e'j 21, http://ig.ufaras.ru/File/K2008/03_003_08.pdf (verjin mowtq` 15.08.2025). (In Russian)

Мане Маркосян
Аспирант кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета,
Генеральная прокуратура РА,
советник Генерального прокурора Республики Армения

РЕЗЮМЕ

Особенности гражданско-правового статуса геологической информации по законодательству Республики Армения

В данной статье проведено комплексное исследование особенностей гражданско-правового статуса геологической информации в сфере недропользования в соответствии с национальным законодательством.

Рассмотрены и проанализированы особенности осуществления правомочий собственника в отношении геологической информации, закреплённые в национальном праве, а также правовая природа геологической информации как объекта интеллектуальной собственности.

На основании проведённого анализа автор формулирует выводы, касающиеся как реализации правомочий собственника в отношении геологической информации, так и законодательного закрепления прав интеллектуальной собственности на геологическую информацию, признаваемую объектом интеллектуальных прав.

***Ключевые слова**: объекты гражданских прав в сфере недропользования; право недропользования; геологическая информация; права интеллектуальной собственности; коммерческая тайна.*

Mane Markosyan
Postgraduate student of the Department of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University,
Prosecutor General's Office of the Republic of Armenia,
Advisor to the Prosecutor General of the RA

SUMMARY

Features of the civil-law status of geological information under the legislation of the Republic of Armenia

This article presents a comprehensive study of the distinctive features of the civil-law status of geological information in the field of subsoil use under domestic legislation.

It examines and analyzes the peculiarities of exercising ownership powers over geological information as defined by national law, as well as the recognition of geological information as an object of intellectual property.

Based on the analysis conducted, the author presents conclusions concerning both the exercise of ownership powers with respect to geological information and the legislative establishment of intellectual property rights in geological information recognized as an object of intellectual property.

***Key words**: objects of civil rights in the subsoil-use sector; right of subsoil use; geological information; intellectual property rights; trade secret.*

Ընդգրկվել է տպագրության 20.11.25թ.

ՄԻԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի
իրավական փորձաքննությունների ծառայության
պետի պաշտոնակատար,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածի նպատակն է վերլուծել փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով գույքի վրա արգելանք դնելու հետ կապված որոշակի իրավական հարցեր:

Հոդվածում վերլուծվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ քննարկվող հանցանքների վերաբերյալ գործերով միջազգային գործիքակազմի սակավությունը՝ համապատասխան ոչ բարենպաստ հետևանքներով, գույքի արգելադրման և իրեղեն ապացույցի ռեժիմների հարաբերակցությունը, իրավաբանական անձանց գույքի արգելադրման խնդիրները, ինչպես նաև՝ ժամանակային սղության կամ այլ օբյեկտիվ պատճառներով արգելադրման ենթակա գույքի արժեքի վերաբերյալ փորձագետի կողմից տրված եզրակացություն ներկայացնելու անհնարինության խնդիրը:

Հոդվածում քննարկման առարկա է դարձվել այն հարցը, որ վարույթն իրականացնող մարմինը գույքի արգելադրման կամ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու ռեժիմներից մեկն ընտրելիս պետք է ուղենիշ ընդունի իրարից տարբերվող քրեադատավարական նպատակները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջամտում է անձի հիմնարար սեփականության իրավունքին:

Կարևորվել է այն հանգամանքը, որ իրավաբանական անձը քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ է և իրավաբանորեն մեղադրյալին պատկանող իրավաբանական անձի գույքը չի կարող արգելադրվել մեղադրյալին ենթադրաբար փաստացի պատկանող մեկ այլ ընկերության կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի արդյունքում պետությանը պատճառված վնասի հատուցման համար:

Հոդվածում քննարկվել է նաև ժամանակային սղության կամ այլ օբյեկտիվ պատճառներով արգելադրման ենթակա գույքի արժեքի վերաբերյալ փորձագետի կողմից տրված եզրակացություն ներկայացնելու անհնարինության հարցը:

Այսինքն, հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել այնպիսի խնդիրներ, որոնք առաջացել են իրավակիրառ պրակտիկայում: Այս առումով հոդվածը նաև արդիական է, քանի որ ներկայացվող մոտեցումները կարող են հետաքրքրություն ներկայացնել ինչպես ուսանողների, այնպես էլ փաստաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցների և դատավորների մոտ:

***Հիմնաբառեր** - սեփականության իրավունք, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վերադարձ, ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող գույք, գույքի արգելադրում, իրեղեն ապացույց, իրավաբանական անձ, պետությանը պատճառված վնասի հատուցում, փորձագետի եզրակացություն:*

Ներածություն

Գործնականում հաճախ առաջանում են սեփականության իրավունքի սահմանափակման քրեադատավարական նոր կարգավորումների ընկալման և մեկնաբանման հետ կապված խնդիրներ: Սույն հոդվածի շրջաններում փորձ է արվել որոշ խնդիրների վերհանման և դրանց օրենսդրական կարգավորումների բովանդակության բացահայտման միջոցով առաջարկել որոշակի լուծումներ՝ նպաստելով միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Ընդ որում, այդ խնդիրներն առավել զգայուն են փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, ինչը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև այդ հանցագործությունների առանձնակի բարդ և լատենտային բնույթով:

Հոդվածում քննարկվում են այնպիսի իրավական խնդիրներ, ինչպիսիք են իրեղեն ապացույցի և գույքի արգելադրման ռեժիմների հարաբերակցությունը, մեղադրյալի կողմից իրեն պատկանող մեկ իրավաբանական անձի միջոցով ենթադրյալ հանցանք կատարելու մեղադրանքով այդ մեղադրյալին պատկանող արդեն մեկ այլ իրավաբանական անձի գույքը արգելադրելու իրավաչափությունը, ինչպես նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգր-

www.armjurisprudence.com

քի 133-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից արգելադրման ենթակա անշարժ գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը արտացոլող, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գրություն ներկայացնելը:

Սույն աշխատանքի նպատակն է գործնականում հանդիպող խնդիրների վերհանումն ու դրանց հաղթահարմանն ուղղված որոշակի լուծումներ առաջարկելը:

Ուսումնասիրությունը կատարվել է սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ձևական-տրամաբանական, համեմատահիրավական մեթոդների կիրառմամբ:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող գույքի արգելադրման շուրջ առաջացող իրավական խնդիրներից սույն գիտական հոդվածի համար առանձնացրել ենք երեքը: Դրանք են.

1. իրեղեն ապացույցի և գույքի արգելադրման ռեժիմների հարաբերակցության հարցը,

2. մեղադրյալի կողմից իրեն պատկանող մեկ իրավաբանական անձի միջոցով ենթադրյալ հանցանք կատարելու մեղադրանքով այդ մեղադրյալին պատկանող մեկ այլ իրավաբանական անձի գույքի արգելադրելման իրավաչափության հարցը, և

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի ապահովման նպատակով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գրություն (արտացոլում է արգելադրման ենթակա անշարժ գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը) ներկայացնելու հարցը:

1. Իրեղեն ապացույցի և գույքի արգելադրման ռեժիմների հարաբերակցությունը.

Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ենթադրյալ հանցավոր արարքի արդյունքում ստացված գույքին, առավել կոնկրետ՝ անշարժ գույքին, վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի այդ գույքն իրեղեն ապացույց է ճանաչում, թե կայացնում է գույքն արգելադրելու մասին որոշում: Նշված հարցի իրավաչափ որոշման հիմքում ընկած է իրեղեն ապացույց ճանաչելու և գույքն արգելադրելու նպատակը, քանի որ յուրաքանչյուրն ունի իր ուրույն նպատակը, որի ապահովման համար օրենսդրությամբ սահմանված են համապատասխան իրավական երաշխիքներով առանձին ընթացակարգեր:

Այսպես, իրեղեն ապացույցներ են նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են վարույթի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ հերքման միջոց դառնալ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածում նշվում է, որ իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել:

Այս հոդվածի ուղղակի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ առհասարակ որևէ առարկա, այդ թվում՝ անշարժ գույքը, իրեղեն ապացույց ճանաչելը չի կարող հետապնդել անձի գույքն արգելադրելու կառուցակարգերով նախատեսված նպատակներ:

Գույքի արգելադրման նպատակը ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելն է[1]:

Գույքի արգելադրման ինստիտուտը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի միջոցի տեսակ, ունի իրեն բնորոշ նպատակները, որոնց էությունից բխում է, որ գույքի արգելադրմամբ հնարավոր չէ հետապնդել վարույթի համար նշանակություն ունեցող որևէ փաստական հանգամանք հետագայում պարզելու ու հավաստելու նպատակ:

Վերոշարադրյալի լույսի ներքո պարզ է դառնում, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական վարույթով առկա է ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող (առաջացած, ստացված) անշարժ գույք, այն իրեղեն ապացույց ճանաչելու համար անհրաժեշտ է, որ, **առաջին հերթին, տվյալ գույքը համապատասխանի օրենքով իրեղեն ապացույցին ներկայացվող հատկանիշներին**:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը պետք է **հստակ հիմնավորի**, թե նման դեպքերում ինչու է տվյալ անշարժ գույքը ճանաչում որպես իրեղեն ապացույց:

Բացի այդ, հստակ հիմնավորման անհրաժեշտությունն առաջանում է նաև պրակտիկայում առաջացող այն դեպքերում, երբ այդ անշարժ գույքը ենթադրյալ հանցագործության հետք է պարունակում[2]: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն այն դեպքերին, երբ անշարժ գույքը ենթադրյալ հանցագործության հետք է պարունակում, այլ նաև՝ այն դեպքերին, երբ անշարժ գույքը ենթադրյալ հանցագործության գործիք է: Այսինքն, մի կողմից անշարժ գույքը պարունակում է իրեղեն ապացույցի հատկանիշ, իսկ մյուս կողմից՝ ենթադրյալ հանցագործության գործիքները գույքի արգելադրման ռեժիմով կարող են արգելադրվել: Այլ կերպ, անշարժ գույքը լինելով ենթադրյալ հանցագործության գործիք վարույթն իրականացնող մարմնի

www.ardaradatutyunjournal.com

մոտ առաջացնում է իրավական հարցադրում առ այն, թե տվյալ պահին քրեադատավարական որ ընթացակարգով է պետք առաջնորդվել. տվյալ գույքը իրեղեն ապացույց ճանաչելու, թե՞ տվյալ գույքն արգելադրելու մասին որոշում կայացնելու:

Նշյալը օրենսդրական կարգավորումների լույսի ներքո ներկայացնելու համար հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **իրեղեն ապացույց է** ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործության **գործիքները** կամ այն առարկաները, որոնք իրենց վրա ենթադրյալ հանցագործության հետքեր են պահպանել, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ **գույքը կարող է արգելադրվել**, երբ ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց:

Կարող են լինել նաև իրավիճակներ, երբ խոսքը վերաբերի այն անշարժ գույքին, որը ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ է եղել: Այդպիսի հատկանիշը նույնպես մի կողմից նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, մյուս կողմից այն կարող է բնորոշ լինել նաև 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցագործության արդյունքում ստացված անշարժ գույքին:

Նման իրավիճակներում անշարժ գույքի՝ միայն հանցավոր ներգործության օբյեկտ լինելու, կամ ենթադրյալ հանցագործության գործիք լինելու հանգամանքը վկայակոչելը բավարար չէ ենթադրյալ հանցագործության արդյունքում ստացված գույքն իրեղեն ապացույց ճանաչելու համար, այլ անհրաժեշտ են հավելյալ հիմնավորումներ ու փաստարկներ, թե վարույթն իրականացնող մարմինը երկու հնարավոր ընթացակարգերից ինչու է նախապատվությունը տվել իրեղեն ապացույց ճանաչելուն:

Հարկ է նաև հաշվի առնել այն, որ այն դեպքերում, երբ հանցագործության նպատակը պետությանը պատկանող անշարժ գույքը հանցավոր ճանապարհով մասնավորեցնելն է, այդ անշարժ գույքը հնարավոր է ինքնին չվնասվի, պահպանի իր ներքին ու արտաքին որակական հատկանիշները: Այսինքն, այդպիսի հանցանքները, որպես կանոն, կատարվում են համապատասխան փաստաթղթերի կեղծման կամ օրենսդրական համապատասխան ընթացակարգերի, պահանջների խախտման միջոցով: Նման դեպքերում այդպիսի անշարժ գույքը վարույթի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքը պարզելու տեսանկյունից կարևորվում է միայն կամ առավելապես իր գոյությամբ, լինելիությամբ, այլ ոչ թե այն պատճառով, որ այն իր արտաքին տեսքով, ներքին որակական կամ այլ հատկանիշներով կարող է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու համար ունենալ պիտանի նշանակություն:

Հակառակ մեկնաբանության պարագայում վարույթն իրականացնող մարմինն ունենում է գործողությունների չհստակեցված և անորոշ հայեցողություն, ինչը կարող է կոնկրետ իրավիճակում հանգեցնել կամայականության: Խոսքը վերաբերում է, մասնավորապես նրան որ իրեղեն ապացույց ճանաչելու որոշումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բողոքարկման ենթակա միջնդատական ակտերի ցանկում, ի տարբերություն գույքի արգելադրման մասին որոշման: Այսինքն, գույքն արգելադրելու մասին որոշումը այդ արգելադրումը հիմնավորող նյութերով հանդերձ եռօրյա ժամկետում քննիչի կողմից ներկայացվում է իրավասու դատարանի հաստատմանը՝ նախնական հետաձգված դատական վերահսկողության միջոցով երաշխավորելով սեփականության սահմանադրական իրավունքին միջամտության համաչափությունը, իսկ նման ընթացակարգ և դատական պարտադիր վերահսկողություն, ինչպես նշվեց, գույքի արգելադրման ընթացակարգի կիրառման դեպքում առկա չէ:

Ընդ որում, հարկ է նաև նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասն **արգելում է իրեղեն ապացույց ճանաչված գույքը արգելադրելը**:

Ամփոփելով վերոշարադրյալը, գտնում ենք, որ վարույթն իրականացնող մարմինը վերոնշյալ երկու հնարավոր տարբերակներից որևէ մեկն ընտրելու չափանիշ, ուղենիշ պետք է ընդունի դրանց՝ իրարից տարբերվող քրեադատավարական նպատակները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջամտում է անձի հիմնարար սեփականության իրավունքին: Այդ նպատակից չբխող և ոչ իրավաչափ տարբերակն ընտրելը խեղաթյուրում է ոչ միայն օրենսդրի կողմից սահմանված նպատակը, այլև՝ կանխորոշում է դրա ընթացքը, քանի որ յուրաքանչյուրի համար նախատեսված են տարբեր իրավական կառուցակարգեր:

Դեռ ավելին, հարկ է նաև նկատել, որ պրակտիկայում փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով վարույթն իրականացնող մարմինը անշարժ գույքը իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշում է կայացնում և այդ որոշման օրինակն ուղարկում է ՀՀ կառավարի կոմիտե՝ անշարժ գույքի վերաբերյալ գործարքներ չկատարելու նպատակով:

Նման պայմաններում միանշանակ է այն, որ տեղի է ունենում գույքի քողարկված արգելադրում և երկու տարբեր քրեադատավարական ինստիտուտների միաձուլում, ինչն իրավաչափ համարվել չի կարող:

Վարույթն իրականացնող մարմինը փորձում է նման գործելակերպը մեկնաբանել որպես իրեղեն ապացույցի պահպանման եղանակ, սակայն իրեղեն ապացույցի պահպանման եղանակները սպառիչ կերպով թվարկված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում, իսկ անշարժ գույքերի վերաբերյալ գործարքներ չկատարելու արգելք կիրառելը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված իրեղեն ապացույցի պահպանման եղանակների մեջ:

Վարույթն իրականացնող մարմնի նշված գործողությունը դասական առումով հանդիսանում է գույքի արգելադրում, որն այլ ընթացակարգով պետք է իրականացվեր:

Նման կերպ վարույթն իրականացնող մարմինը քողարկված կերպով արգելադրում է անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը՝ փորձելով օրենսդրական ձևակերպման որոշակի նմանություններն օգտագործել՝ շրջանցելու գույքի արգելադրման ընթացակարգի համար նախատեսված քրեադատավարական նորմերը, անտեսելով քննարկվող երկու ընթացակարգերի նպատակների ընդգծված տարբերությունները ու չներկայացնելով անհրաժեշտ ու բավարար հիմնավորումներ: Ընդ որում, հատկանշական է այն, որ իրեղեն ապացույցի ընթացակարգի կիրառման շնորհիվ վարույթն իրականացնող մարմինը փաստացի ազատվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակը հիմնավորելուց, նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված «ապացույցների գերակշռության» օրենսդրական շեմը հաղթահարելու և այդ որոշման իրավաչափությունը դատարանի հաստատմանը ներկայացնելու օրենսդրական պահանջներից:

Վարույթն իրականացնող մարմինը հաճախ այդ մոտեցումը փորձում է մեկնաբանել այնպես, որ կիրառվում է անալոգիա, մասնավորապես, նշվում է, որ էական որևէ տարբերություն չկա իրեղեն ապացույցի պահպանությունը կիրականացնի տեղական ինքնակառավարման մարմինը, թե՞ ՀՀ Կադաստրի կոմիտեն:

Նշյալի կապակցությամբ պետք է նկատել, որ անալոգիա կիրառելու իրավական հնարավորությունը չի հիմնավորվում, քանի որ անալոգիայի կիրառման իրավական հնարավորության նախապայման է հանդիսանում օրենսդրական բացը, ինչը քննության առարկա դեպքում առկա չէ, քանի որ այդ մասով օրենսդրի կամքը հստակ տեղ է գտել օրենսդրական համապատասխան կարգավորումներում: Այլ կերպ ասած, օրենսդրական կարծեցյալ բացի դեպքում անալոգիայի կիրառման իրավական հնարավորությունը բացակայում է[3]:

2. Անդրադառնալով մեղադրյալի կողմից իրեն պատկանող մեկ իրավաբանական անձի միջոցով ենթադրյալ հանցանք կատարելու մեղադրանքով այդ մեղադրյալին պատկանող արդեն մեկ այլ իրավաբանական անձի գույքը արգելադրելու խնդրին՝ հարկ է նշել հետևյալը.

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ արգելանք է դրվում մեղադրյալին իրավաբանորեն պատկանող իրավաբանական անձի գույքի վրա՝ այն պայմաններում, երբ ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը այդ նույն մեղադրյալին պատկանող մեկ այլ իրավաբանական անձից է գոյացել: Մասնավորապես, անձը հանդիսանում է X և Y ընկերությունների սեփականատեր: Այդ անձին մեղադրանք է առաջադրվում Y ընկերության կողմից վճարման ենթակա հարկերը չվճարելու համար, մինչդեռ արգելանք է դրվում ոչ թե այդ Y ընկերության, այլ արդեն X ընկերության գույքի վրա: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ արգելանք է դրվում որևէ հանցավոր արարքի հետ չփոխկապակցված իրավաբանական անձի գույքի վրա միայն այն պատճառով, որ այդ իրավաբանական անձի սեփականատերը ենթադրյալ հանցավոր արարք է կատարել մեկ այլ իրավաբանական անձի միջոցով:

Նշյալ իրավական խնդրի կապակցությամբ գտնում ենք, որ նման մոտեցումը ոչ իրավաչափ է և չի բխում ինչպես միջազգային չափանիշներից, այնպես էլ իրավաբանական անձի՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ լինելու էությունից: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«*1. Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող*»[4]:

Այսինքն, իրավաբանական անձը՝

1. ունի առանձնացված գույք,
2. իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով,
3. իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
4. կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

www.ardaradatutyunjournal.com

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

2. Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:»[5]

Վերոգրյալից ակնհայտ է, որ իրավաբանական անձը չի նույնանում իր սեփականատիրոջ կամ սեփականատերերի հետ, վերջինիս պատկանող գույքը պատկանում է բացառապես իրեն և չի համարվում իր հիմնադիրների կամ մասնակիցների սեփականությունը, ավելին՝ ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

Այսինքն, իրավաբանորեն մեղադրյալին պատկանող իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել մեղադրյալին փաստացի պատկանող մեկ այլ ընկերության կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի արդյունքում պետությանը պատճառված վնասի հատուցման համար:

Հակառակ դեպքում կստացվի այնպիսի իրավիճակ, որ անձի մեղավորության հաստատման պայմաններում պետությանը պատճառված վնասի հատուցման պարտականությունը կդրվի քննության առարկա քրեական վարույթին որևէ առնչություն չունեցող իրավաբանական անձի վրա, իսկ նման մոտեցումը կհակասի իրավաբանական անձի՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ լինելուն և դրա ամբողջ էությանը:

Ընդ որում նշյալ հարցի կապակցությամբ ավելորդ չէ հիշատակել նաև այն, որ Եվրոպայի խորհուրդի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածից բխում է, որ պետք է ընդունվեն այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կապահովեն, որ իրավաբանական անձինք պատասխանատվություն կրեն Կոնվենցիայով սահմանված՝ փողերի լվացման քրեական հանցանքների համար, որոնք, ի շահ այդ անձանց, կատարվել են տվյալ իրավաբանական անձի կազմում առաջատար դիրք զբաղեցնող ֆիզիկական անձի կողմից, որը գործել է ինքնուրույն կամ իբրև իրավաբանական անձի մարմնի անդամ՝ օգտագործելով իրավաբանական անձը ներկայացնելու իրավասությունը, կամ իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավասությունը, կամ իրավաբանական անձի կազմում հսկողություն իրականացնելու իրավասությունը, ինչպես նաև կատարվել են նշված հանցանքներում այդպիսի ֆիզիկական անձին՝ իբրև հանցակից կամ սադրիչ ներգրավելու նպատակով: Ընդ որում նույն հոդվածից է բխում նաև պահանջն առ այն, որ պետք է ապահովել, որ իրավաբանական անձը պատասխանատվություն կրի այն դեպքերում, երբ սահմանված հսկողության կամ վերահսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել նշված քրեական հանցանքների կատարումը ի շահ տվյալ իրավաբանական անձի վերջինիս իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձի կողմից[6]:

Այսինքն, նույնիսկ վերոգրյալ միջազգային չափանիշից է բխում, որ ֆիզիկական անձին պատկանող այն իրավաբանական անձինք, որոնց կողմից ենթադրյալ հանցանք կատարելու վերաբերյալ տվյալներ առկա չեն և ըստ այդմ՝ այդ մասով առկա չէ նախաձեռնված քրեական վարույթ՝ այդ իրավաբանական անձի գույքը մեղադրյալին պատկանող մեկ այլ իրավաբանական անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մեղադրանքի պայմաններում արգելադրվել չի կարող: Այսինքն, փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով իրավաբանական անձին պատկանող գույքը կարող է արգելադրվել, եթե դրանք կատարվել են ի շահ տվյալ իրավաբանական անձի և կատարվել են այնպիսի ֆիզիկական անձի կողմից, ով գործել է օգտագործելով տվյալ իրավաբանական անձը ներկայացնելու, վերջինիս անունից որոշումներ կայացնելու, վերջինիս կազմում հսկողություն իրականացնելու իրավասությունը:

3. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի ապահովման նպատակով ՀՀ կաղաստրի կոմիտեի կողմից տրված գրություն ներկայացնելուն՝ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Արգելադրման ենթակա գույքի արժեքը որոշվում է շուկայական գնով այդ նպատակով ներգրավված փորձագետի կողմից»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով մասնավորապես եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը, և հետևաբար՝ պետք է ապահովել համապատաս-

www.ardaradatyan.am

խան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա ազդեցությունը կամայական կամ անկանխատեսելի չէ:

Վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրել է, որ անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչը նշանակում է հիմնավորել այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակները. դա պետք է լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռություն (Տե՛ս Ս. Մայրապետյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0587/11/18 գործով վճռաբեկ դատարանի որոշումը):

Փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով իրավակիրառ պրակտիկայում որոշակի խնդիրներ են առաջանում՝ կապված քննության սկզբնական փուլում ՀՀ քրեական դատավարության 133-րդ հոդվածի 7-րդ հոդվածի պահանջի պահպանման հետ:

Իրավակիրառ պրակտիկայում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գրություն, որտեղ արտացոլվում է արգելադրման ենթակա գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես գույքի արգելադրման իրավաչափության պայման, նախատեսել է գույքի՝ արգելադրմամբ հետապնդվող նպատակն ապահովելու համար բավարար արժեքը նշելու իմպերատիվ պահանջ: Ընդ որում, նշված պահանջը բխում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից, այլ նաև՝ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներից:

Գույքի արգելադրման իրավունքը պետք է հետապնդի կոնկրետ նպատակներ և ողջամտորեն պայմանավորվի քրեական վարույթի բնույթով, առանձնահատկությամբ, պատճառված վնասի կամ բռնագրավման ենթակա գումարի չափով և մյուս նպատակներով:

Այս համատեքստում անդրադառնալով փողերի լվացման և հարակից հանցագործությունների վարույթներով քննության սկզբնական փուլում գույքի արգելադրմանը և արգելադրման ենթակա գույքի արժեքը շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով որոշելուն՝ հարկ է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանել է, որ արգելադրման ենթակա գույքի արժեքը որոշվում է շուկայական գնով և այդ նպատակով ներգրավված փորձագետի կողմից, հետևաբար՝ նման կերպ հնարավոր չէ ապահովել օրենսդրի պահանջը և այդ կերպ խախտվում է անձի սեփականության իրավունքը:

Հատկանշական է այն, որ գույքի շուկայական արժեքը և շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը նույնական չեն, և կարող են տարբերվել: Նման պայմաններում կարող ենք հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության համար առաջարկել հնարավոր լուծում.

-Եթե ժամանակային սղության կամ այլ օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ միջնորդությունը կից դատարան ներկայացնել փորձագետի եզրակացություն, դատարան ներկայացված միջնորդությամբ մեջբերված լինի որևէ իրավական դրույթ և հիմնավորում այն մասին, որ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը առնվազն հավասար կամ բարձր է շուկայական արժեքից (չնայած այն հանգամանքին, որ քրեադատավարական պահանջը չի պահպանվի, բայց հետևանքի տեսանկյունից անձի որևէ իրավունք չի խախտվի, քանի որ կստացվի մի իրավիճակ, որ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը ի վնաս անձի չի կարող լինել):

Ընդ որում, իրավական դրույթ և հիմնավորում ասելով պետք է հասկանանք հետևյալը. ելնելով այն հանգամանքից, որ շուկայական արժեքը գործարքային իրական արժեքն է՝ ներկայացված միջնորդությունը պետք է կոնկրետ դեպքով պարունակի լրացուցիչ հիմնավորում այն մասին, որ ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված գրությամբ նշված շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը տվյալ դեպքում ողջամտորեն հավասար կամ առավել բարձր է շուկայական արժեքից: Այսպես, Կադաստրային արժեքը հաշվարկելու կարգը սահմանված է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով, բացի այդ՝ ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանվել է հողամասերի և շինությունների տարածագնահատման գոտիականության սահմանները, կոորդինատները և քարտեզները, որը հնարավորություն է տալիս ապահովել կադաստրային արժեքի առավելագույն մոտեցում շուկայական արժեքին: Նշյալ իրավական ակտերի համալիր վերլուծության արդյունքում համեմատություն տանելով կոնկրետ վարույթով արգելադրման ենթակա անշարժ գույքի գտնվելու վայրի, օգտագործման նպատակի, ընդհանուր վիճակի հետ՝ վարույթն իրականացնող մարմինն իր միջնորդությամբ պետք է նշի, թե կոնկ-

www.ardaradatutyunjournal.com

րետ դեպքով ինչպիսի ողջամիտ հավանականություն է առկա, որ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը հավասար կամ բարձր է շուկայական արժեքից, որպիսի պայմաններում նվազագույնի կհասնի անձի սեփականության իրավունքի խախտման հավանականությունը, իսկ դատարանը կունենա բավարար ծավալի թե՛ իրավական, թե՛ փաստական հենք՝ միջնորդությունը քննարկելու և բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու միջոցով լուծելու. այլ կերպ, վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված պատշաճ վերլուծությունն ու իրավական հենք ունեցող հիմնավորումը գործուն երաշխիք կհանդիսանա անձի սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակումը կանխելու համար և հնարավորություն կտա առաջացնել համոզվածություն առ այն, որ կոնկրետ դեպքում ներկայացված արժեքը հաշվարկվել է հիմնվելով իրական գործարքների գների վրա: Այլ խոսքով, միջնորդությունը պետք է պարունակի համարժեք վերլուծություն այն մասին, որ տվյալ գույքի՝ Կադաստրի կոմիտեի կողմից հաշվարկված շուկայականին մոտարկված արժեքը՝ հաշվի առնելով գույքի գտնվելու վայրը, նպատակային նշանակությունը, տեխնիկական վիճակը և գործարքային ակտիվության ցուցանիշները, ողջամտորեն կարող է դիտարկվել որպես շուկայական արժեքին համարժեք կամ գերազանցող՝ հիմքում ունենալով նաև համապատասխան իրավական կարգավորումները, որոնք արդեն նշվեցին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ողջ վերոշարադրյալի նպատակն է անձի սեփականության իրավունքի պաշտպանության իրավական առավել լայն երաշխիքների ապահովումը՝ իհարկե հավասարկշռված ապահովելով նաև հանրային շահի պաշտպանությունը:

Եզրակացություն

1. Իրեղեն ապացույցի և գույքի արգելադրման ռեժիմների հարաբերակցության մասով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առանցքային նշանակություն ունի իրեղեն ապացույց ճանաչելու և գույքն արգելադրելու նպատակները, քանի որ յուրաքանչյուրն ունի իր ուրույն նպատակը, որի ապահովման համար օրենսդրությամբ սահմանված են համապատասխան ընթացակարգեր:

Որևէ առարկա, այդ թվում՝ անշարժ գույքը, իրեղեն ապացույց ճանաչելը չի կարող հետապնդել անձի գույքն արգելադրելու կառուցակարգերով նախատեսված նպատակներ:

Այն դեպքերում, երբ խոսքը կվերաբերի այն անշարժ գույքին, որն իր հատկանիշով պայմանավորված մի կողմից նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, մյուս կողմից այն կարող է բնորոշ լինել նաև 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցագործության արդյունքում ստացված անշարժ գույքին՝ պետք է նկատի ունենալ, որ անշարժ գույքի՝ միայն հանցավոր ներգործության օբյեկտ կամ գործիք կամ իրեղեն ապացույցին բնորոշ այլ հատկանիշ ունենալու հանգամանքը վկայակոչելը բավարար չէ ենթադրյալ հանցագործության արդյունքում ստացված գույքն իրեղեն ապացույց ճանաչելու համար, այլ անհրաժեշտ են հավելյալ հիմնավորումներ ու փաստարկներ, թե վարույթն իրականացնող մարմինը երկու հնարավոր ընթացակարգերից ինչու է նախապատվությունը տվել իրեղեն ապացույց ճանաչելուն:

Վարույթն իրականացնող մարմինը նշյալ երկու հնարավոր տարբերակներից որևէ մեկն ընտրելու չափանիշ, ուղենիշ պետք է ընդունի դրանց՝ իրարից տարբերվող քրեադատավարական նպատակները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջամտում է անձի հիմնարար սեփականության իրավունքին:

2. Իրավաբանորեն մեղադրյալին պատկանող իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել մեղադրյալին ենթադրաբար փաստացի պատկանող մեկ այլ ընկերության կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի արդյունքում պետությանը պատճառված վնասի հատուցման համար: Հետևաբար, ֆիզիկական անձին պատկանող այն իրավաբանական անձինք, որոնց կողմից ենթադրյալ հանցանք կատարելու վերաբերյալ տվյալներ առկա չեն և ըստ այդմ՝ այդ մասով առկա չէ նախաձեռնված քրեական վարույթ՝ այդ իրավաբանական անձի գույքն արգելադրվել չի կարող:

3. Եթե ժամանակային սղության կամ այլ օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ միջնորդությանը կից դատարան ներկայացնել փորձագետի եզրակացություն, դատարան ներկայացված միջնորդությամբ պետք է մեջբերված լինի որևէ իրավական դրույթ և հիմնավորում այն մասին, որ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը առնվազն հավասար կամ բարձր է շուկայական արժեքից (չնայած այն հանգամանքին, որ քրեադատավարական պահանջը չի պահպանվի, բայց հետևանքի տեսանկյունից անձի որևէ իրավունք չի խախտվի, քանի որ կստացվի մի իրավիճակ, որ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը ի վնաս անձի չի կարող լինել):

[1]Տե՛ս, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 131-րդ հոդվածը:
[2]Տե՛ս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:
[3]Իրեղեն ապացույցի և գույքի արգելադրման ռեժիմների հարաբերակցության մասով համանման իրավական դիրքորոշումներ արտահայտել է նաև ՀՀ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը՝ համապատասխան որոշումներով:
[4]Տե՛ս, 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածը:
[5]Տե՛ս, 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածը:
[6]Տե՛ս, Եվրոպայի խորհրդի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիան:

Գրականության ցանկ

1. Եվրոպայի խորհրդի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիան:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ԱԺ,05.05.1998,ՀՕ-239-Ն):
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ԱԺ,30.06.2021,ՀՕ-306-Ն):
4. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0587/11/18 որոշումը (20.12.2019):

References

1. Ewropayi xorhrdi' - «Hanc'avor chanaparhov stac'vac yekamnutyunneri lvac'man, hetaxuzman, arg'ravman u br'na-gravman ev ahabekchut'yan finansavorman dem payqari masin» konventsian
[Council of Europe Convention on Laundering, Search, Seizure and Confiscation of the Proceeds from Crime and on the Financing of Terrorism]
2. HH qaghaqaciakan orensgirq (AJh,05.05.1998,HO'-239-N)
[Civil Code of the Republic of Armenia (NA, 05.05.1998, zr -239-N]
3. HH qreakan datavarut'yan orensgirq (AJh,30.06.2021,HO'-306-N)
[Criminal Procedure Code of the Republic of Armenia (NA, 30.06.2021, zr -306-N)]
4. Vjrabek datarani t'iv YeD/0587/11/18 oroshumy (20.12.2019)
[Decision No. ED/0587/11/18 of the Court of Cassation (20.12.2019)]

Милена Айрапетян
Исполняющий обязанности руководителя службы правовой экспертизы
Апелляционного антикоррупционного суда Республики Армении
Аспирант кафедры уголовного судопроизводства и криминалистики
юридического факультета Ереванского государственного университета РА

РЕЗЮМЕ

Некоторые юридические проблемы, связанные с арестом имущества по делам об отмывании денег и связанных с ним преступлениях

Цель статьи состоит в том, чтобы проанализировать определенные правовые вопросы, связанные с наложением ареста на имущество по делам об отмывании денег и связанных с ним преступлениях.

В статье были проанализированы такие проблемы, как нехватка международного инструментария по делам о рассматриваемых преступлениях с соответствующими неблагоприятными последствиями, соотношение режимов ареста имущества и вещественных доказательств, проблемы ареста имущества юридических лиц, а также проблема невозможности представления экспертного заключения о стоимости имущества, подлежащего запрету из-за нехватки времени или по другим объективным причинам.

В статье обсуждался вопрос о том, что орган, осуществляющий производство, при выборе одного из способов наложения ареста на имущество или признания имущества вещественным доказательством должен руководствоваться отличающимися друг от друга уголовно-процессуальными целями с учетом того обстоятельства, что он вмешивается в основное право собственности лица.

Было подчеркнуто то обстоятельство, что юридическое лицо является самостоятельным субъектом гражданско-правовых отношений, и имущество юридического лица, принадлежащее обвиняемому по закону, не может быть конфисковано для возмещения ущерба, причиненного государству в результате предполагаемого преступного деяния, совершенного другой компанией, предположительно фактически принадлежащей обвиняемому.

В статье также обсуждался вопрос о невозможности представления заключения эксперта о стоимости имущества, подлежащего запрету, из-за нехватки времени или по другим объективным причинам.

Другими словами, статья преследует цель представить проблемы, которые возникли в правоприменительной практике. В этом отношении статья также актуальна, поскольку представленные подходы могут представлять интерес как для студентов, так и для юристов, сотрудников правоохранительных органов и судей.

***Ключевые слова**: право собственности, возврат доходов полученных преступным путем, имущество предполагаемого преступного происхождения, конфискация имущества, вещественные доказательства, юридическое лицо, возмещение ущерба причиненного государству, заключение эксперта.*

Milena Hayrapetyan
Acting head of the legal expertise service of the Anti-Corruption Court of Appeal of Republic of Armenia
Yerevan State university, faculty of law- Postgraduate student at the chair of
Criminal Procedure and Criminalistics

SUMMARY

Some legal issues related to the seizure of property in cases of money laundering and related crimes

The purpose of this article is to examine specific legal issues related to the seizure of property in cases involving money laundering and related crimes.

The article addresses problems such as the absence of effective international legal instruments in dealing with such crimes and the resulting negative consequences. It also explores the relationship between the seizure of property and the treatment of material evidence, as well as challenges related to the seizure of property owned by legal entities.

The article also discussed the problem of the inability to provide an expert opinion on the value of the property subject to the ban due to lack of time or other objective reasons.

A key issue discussed is that the authority conducting the proceedings must pursue different criminal procedural objectives when deciding whether to seize property or classify it as material evidence. This decision must consider the significant impact such measures have on an individual's fundamental property rights.

The article emphasizes that a legal entity is an independent subject of civil law. Therefore, property owned by a legal entity, even if it is affiliated with the accused, cannot be confiscated to compensate for damage caused to the State by a crime allegedly committed by another company that is presumed to be under the actual control of the accused.

The article also discussed the issue of the impossibility of submitting an expert opinion on the value of the property subject to the ban due to lack of time or other objective reasons.

In summary, the article aims to highlight the legal and practical challenges encountered in law enforcement practice. In this context, it is particularly relevant, as the approaches presented may be of interest to students, legal professionals, law enforcement officials, and judges alike.

***Key words**: ownership, return of proceeds from crime, property of alleged criminal origin, confiscation of property, material evidence, legal entity, compensation for damage caused to the state, expert opinion.*

Ընդունվել է տպագրության 20.11.25թ.

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
լեզվաբանության և մանկավարժության
ֆակուլտետի դեկան, հ.գ.թ., դոցենտ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ ՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դատապարտյալի անձի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրությունը քրեական հոգեբանության կարևոր ղրույթներից մեկն է: Դրանք պայմանավորված են ինչպես դատապարտյալի անձի առանձնահատկություններով, անձնային բնութագրիչներով, այնպես էլ ժամանակային և տարածական պայմաններով, կենսագործունեության յուրահատկություններով, սոցիալական իրադրություններով: Ուստի, աշխատանքում դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրները քննարկելու ենք անձնային բնութագրիչների, սոցիալական իրադրության և քրեաիրավական պատճառականության տեսանկյուններից: Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների ուղղման և վերահարմարման գործընթացին: ՔԿՀ-ին վերաբերվող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատարում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես ընդհանուր համակարգ: Հանցարարքի բնույթով պայմանավորված կարող ենք ոչ միայն որոշակի հոգեբանական բնութագիր կազմել դատապարտյալի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ, այլև ՔԿՀ-ում սոցիալ-հոգեբանական հարմարման, ինտեգրման, միջանձնային հարաբերությունների, վարքի, քոփինգ ռազմավարությունների մասին:

Դուրս են բերվում դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրների 5 հիմնական խմբեր.

դատապարտյալի անձի հոգեբանական բնութագրեր (անձնային առանձնահատկությունների համակարգը (խառնվածք, բնավորություն, ինտելեկտ, կամք), հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, բնութագրերը (ճանաչողական և իմացական գործընթացները), անձի հույզերի, հուզական վիճակների համակարգը),

դատապարտյալի անձի կենսաբանական բնութագրեր (տարիք, սեռ, ֆիզիկական առողջություն, գենետիկական տվյալներ),

դատապարտյալի անձի սոցիալական բնութագրեր (կրոնական պատկերացումներ, ազգային պատկանելիություն, էթնոմշակութային բնութագիր, ընտանիքի պատմություն),

դատապարտյալի անձի քրեաիրավական բնութագրեր (կատարած արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը, հանցարարքի դրդապատճառները, դատվածության քանակը, հիմնարկությունում սոցիալական դերերը և միջանձնային հարաբերությունները),

դատապարտյալի անձի ինքնության բնութագրեր (վարքի յուրահատկությունները՝ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ ընթացքը, ինքնագիտակցության, ինքնավերաբերմունքի վերակառուցումները, կենսաիմաստային արժեքների բնութագրերը, փոփոխությունը, կյանքի ոճը):

Հիմնաբառեր *- դատապարտյալ, պատիժ, սոցիալ-հոգեբանական խնդիրներ, քրեակատարողական համակարգ, հարմարում*:

Ներածություն.

Անձի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրությունը հոգեբանական գիտության ղրույթներից մեկն է: Դրանք պայմանավորված են ինչպես անձնային առանձնահատկություններով, անձի բնութագրիչներով, այնպես էլ ժամանակային և տարածական պայմաններով, կենսագործունեության յուրահատկություններով, սոցիալական իրադրություններով: Ուստի, աշխատանքի նպատակն է դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրները քննարկել երկու տեսանկյունից՝ **անձնային բնութագրիչների և սոցիալական իրադրության**:

Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների ուղղման և վերահարմարման գործընթացին: ՔԿՀ-ին վերաբերվող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատա-

www.ardaradatutyunjournal.com

րում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես ընդհանուր համակարգ: Հանցարարքի բնույթով պայմանավորված ուսումնասիրության խնդիրն է ոչ միայն որոշակի հոգեբանական բնութագիր կազմել դատապարտյալի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ, այլև ՔԿՀ-ում սոցիալ-հոգեբանական հարմարման, ինտեգրման, միջանձնային հարաբերությունների, վարքի, քոփինգ ռազմավարությունների մասին:

Հիմնական մաս. Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների ուղղման և վերահարմարման գործընթացին [11]: Այս բնագավառի որոշ ուսումնասիրություններ փորձում են ձևավորել քրեակատարողական համակարգի հոգեբանության ուսումնասիրության հիմնական խնդիրները, դատապարտյալի անձի ուսումնասիրությունը, քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աշխատանքի համակարգը [8]:

Քրեակատարողական համակարգին վերաբերվող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատարում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես ընդհանուր համակարգ:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ուսումնասիրության համար կարևոր է ուշադրություն դարձնել կատարած արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանին, ըստ որի հանցարարքները դասակարգվում են ոչ մեծ, միջին, ծանր և առանձնապես ծանր տիպերի [5]: Հանցարարքի բնույթով պայմանավորված կարող ենք ոչ միայն որոշակի հոգեբանական բնութագիր կազմել դատապարտյալի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ, այլև ՔԿՀ-ում սոցիալ-հոգեբանական հարմարման, ինտեգրման, միջանձնային հարաբերությունների, վարքի, քոփինգ ռազմավարությունների մասին:

Այս տեսանկյունից, կարևորում ենք նշել նաև, որ դատապարտյալի անձի սոցիալ-հոգեբանական խնդիրները պայմանավորված են ոչ միայն արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով, այլև քրեակատարողական հիմնարկության պայմաններով, որում դատապարտյալը կրում է պատժաժամկետը: Ինչպես գիտենք, դրանք համապատասխանաբար չորսն են՝ բաց, կիսաբաց, կիսափակ և փակ տիպի հիմնարկություններ: Թե՛ դատապարտյալի արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, և թե՛ քրեակատարողական հիմնարկության տիպը մեծապես ազդեցություն են ունենում դատապարտյալի անձի սոցիալ-հոգեբանական խնդիրների ձևավորման գործում: Խոսքը վերաբերվում է դատապարտյալի ինչպես հանցարարքի դրդապատճառներին, վարքի յուրահատկություններին, այնպես էլ քրեակատարողական հիմնարկության այն պայմաններին, միջավայրի սոցիալ-հոգեբանական յուրահատկություններին, որոնք էական ազդեցություն են ունենում դատապարտյալի վարքի դինամիկայում:

Քրեակատարողական հիմնարկը՝ ունենալով հասարակությունից մեկուսացնող, կենցաղային բոլոր պայմաններում կանոնակարգող, համասեռ խմբում ստիպողաբար ներգրավվածության բնույթ, բնականաբար առաջացնում է պահանջ՝ հարմարում տվյալ միջավայրում: Վերջինս առաջ է բերում դատապարտյալների անձի հետաճ և ընդհանրապես որակական այնպիսի փոփոխություններ, որոնց արդյունքը հաճախ բևեռայնորեն հակադրվում է սպասվածին: Այստեղից էլ կարող է ծագել դատապարտյալների կարևորագույն հիմնախնդիրը՝ նորից վերադառնալու այն միջավայր, ուր նախկին դատապարտյալը երկար տարիներ ապրել է, հարմարվել՝ դառնալով այդ միջավայրի լիարժեք անդամ: Տարիներ շարունակ հասարակությունից մեկուսացված դատապարտյալների մոտ ի հայտ է գալիս կենսական պասիվություն, որն արգելակում է անձի ադապտիվ կարողությունները: Արդյունքում այս անձինք ազատության մեջ չեն կարողանում ակտիվորեն ներգրավվել հասարակական կյանքին, հաղթահարել հանդիպող դժվարությունները և դիմակայել միջավայրի բացասական ազդեցությանը:

Ե. Բուռուկինան և Տ. Չելնոկովան նշում են, որ բանտում դատապարտյալները հայտնվում են իրենց համար անսովոր իրավիճակում. սեփական ազատության, տեղաշարժման, ընտրության սահմանափակում, ինտիմ հարաբերությունների և շփման սահմանափակում, օրվա խիստ կանոնակարգ, որոշակի աստիճանակարգի առկայություն՝ պայմանավորված դատվածության քանակով, ՔԿՀ-ում զբաղեցրած դիրքով և հանցատեսակով [6]: Նրանց մոտ մտածողության սահմանները խիստ նեղանում են՝ կենտրոնանալով տվյալ միջավայրի վրա: Միօրինակ կյանքը հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամփոփության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով զբաղվելու սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճված վիճակը, որը հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատու-

թյան զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է: Դատապարտյալի մեջ առաջանում է հիասթափություն, արժանապատվության անկում, արժեքային համակարգի փոփոխություններ, ներանձնային կոնֆլիկտներ, ինքնավերաբերմունքի փոփոխություններ: ՔԿՀ-ում գտնվելու նախնական շրջանում առաջին անգամ դատապարտվածների ինքնագնահատականը ցածր է, ինքնավերաբերմունքն ունի բացասական հուզական երանգ: Խմբում որոշակի դերերի յուրացման և դիրքի հասնելու արդյունքում դատապարտյալի ինքնագնահատականն աստիճանաբար բարձրանում է, ձևավորվում է դրական ինքնավերաբերմունք [12]:

Վ.Ֆ. Պիրոժկովն [9] դատապարտյալների խնդիրների համատեքստում առանձնացնում է ֆոբիաները, հատկապես կլաուստրոֆոբիկ հակազդումը, որը դրսևորվում է փակ տարածքի, մասնավորապես քննչական մեկուսարանի կամ բանտախցի նկատմամբ: Գտնվելով խցում՝ դատապարտյալների մեջ դրսևորվում է շարժողական անհանգստություն: Հաջորդը ընկճված-տագնապային հակազդումն է, որի դեպքում գերակշռում է տրամադրության անկումը, ապագայի հանդեպ հոռետեսությունը: Նրանց հատուկ է դյուրագրգռվածությունը, անքնությունը, կարոտը, անհանգստությունը: Վ.Ֆ. Պիրոժկովը նշում է նաև ժխտողական-ընկճված հակազդումը, որի ժամանակ բնութագրական է սեփական անձը մեղավոր չճանաչելը, կատարածի համար չզղջալը, ազատազրկման փաստի նկատմամբ ներքին ժխտողականությունը և ժխտողական-հիստերիկ հակազդումը, որի դեպքում բնութագրական է ճնշված տրամադրությունը, ապատիան, անտարբերությունն ու ուղղվելու ձգտման բացակայությունը, ինչպես նաև եսակենտրոնությունը, հեղինակության ձգտումը:

Ա.Դ. Գլոտոչկինը և Վ.Ֆ. Պիրոժկովը համատեղ կատարած ուսումնասիրությունների արդյունքում նշում են, որ դատապարտյալների միջավայրում ամենից հաճախ, մերժված, անհամատեղելի, միջավայրի նոր պայմաններին դժվար հարմարվողները լինում են ցմահ դատապարտյալները, որոնց պատիժը փոխարինվել է ազատազրկման մաքսիմալ ժամանակով: Նրանք են. հոմոսեքսուալները, որդիասպանները, հոգեկան ու ֆիզիկական արատներ ունեցողները, վարակիչ հիվանդություններ ունեցողները: Այս և նմանատիպ հանցագործներն ամենահալածվածներն ու մերժվածներն են բանտային միջավայրում: Նրանց հետ ոչ ոք չի ուզում նստել մի նստարանի, աշխատել նույն խմբում, պատիժն անցկացնել մի խցում: Նման սոցիալական մեկուսացումը երբեմն նպաստում է դատապարտյալ ,մերժվածներին անձի հետագա դեգրադացիային ու կործանմանը [7, էջ 274]:

Է. Գրինը մի շարք հետազոտություններ կատարելով դատապարտյալների խմբերում, նշում է, որ կան մի խումբ դատապարտյալներ, որոնք չկարողանալով հարաբերություններ հաստատել հասարակությունում՝ իրենց մերժված են համարում: Կրոնական խմբերում ընդգրկվելով նրանք նոր խթան են ձեռք բերում իրենց անձն ու աշխարհը վերափոխելու համար: Կրոնական խմբերում ընդգրկվածների մոտ շփումը նպաստում է սեփական աշխարհի կառուցմանը, որի արդյունքում մարդը հնարավորություն է ստանում ուղղակի երկխոսության մեջ մտնել Աստծո հետ, ինչն էլ կյանքը լցնում է կենդանի բովանդակությամբ: Նրանք կյանքի իմաստը տեսնում են հավատքի հավերժական ընթացքի մեջ: Այդ ամենն օգնում է հաղթահարել նևրոտիկ և հատկապես մահվան վախերը [1]:

Ես-ի սահմանների նեղացումն ու շփումների աստիճանական նվազումը, իրենց հերթին իջեցնում են անձի ակտիվությունը, սահմանափակում նրա ինքնադրսևորման ու ինքնակատարելագործման հնարավորությունները: Դժվարությունները նախ և առաջ պայմանավորված են ազատազրկման ու քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններով, որն իր կնիքն է թողնում դատապարտյալի հոգեբանության վրա: Նախ կատարած հանցանքի վերաբերյալ մտքերը, ապա կարոտը, հույզերն ու զգացմունքները՝ չկարողանալով արտահայտել այլոց մոտ, դատապարտյալների մոտ մեծանում է նյարդային լարվածությունն ու դյուրագրգռվածությունը, որն էլ իր հերթին բարձրացնում է տագնապայնության մակարդակը: Դա է պատճառներից մեկը, որ դատապարտյալների մոտ հաճախ կարող են լինել անհանդուրժողականություն, կոնֆլիկտային իրադրություններ, որոնց արդյունքը կարող է ունենալ ծանր հետևանքներ: Անընդհատ զսպվածությունը, սեփական վարքի, գործողությունների, շփումներում ճնշումները կարող են հանգեցնել պոռթկումների: Միօրինակ կյանքը՝ լինելով ձանձրալի, շատ անգամներ հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամփոփության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով զբաղվելու սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճվածությունը, որը հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատության զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է:

Քրեագետ, քրեական հոգեբանության մասնագետ Յու. Անտոնյանն այս կապակցությամբ նշում է. «Մշտապես, քսանչորս ժամ շարունակ գտնվելով տվյալ անձանց շրջապատում, դատապարտյալն ասես դառնում է մերկ, զգալիորեն զրկվում է առանձնանալու, կենտրոնանալու, կատարածի ու սեփական մեղքերի, իր կյանքի ու դրանց հեռանկարների, հարազատների և այլնի մասին խորհելու

www.ardaradatutyunjournal.com

հնարավորությունից: Մինչդեռ դա հարկավոր է հատկապես հենց նրանց, ովքեր ոտնահարել են բարոյական և իրավական հիմնական արգելքները և որի համար պատիժ են կրում: Ստեղծվում է ամբոխի մեջ մենության ֆենոմենը, երբ շուրջը մշտապես մարդաշատ է, իսկ նրանք, ում հետ կարելի կլիներ խոսել, կիսվել, ում կարելի էր վստահել, գրեթե չկան» [3, էջ 69-70]: Դատապարտյալները, հատկապես առաջին դատվածություն կրողները հաճախ կարող են կորցնել հավատը սեփական ուժերի նկատմամբ, ինչպես նաև ազատություն վերադառնալու հույսը:

Հետազոտության մեթոդաբանությունը.

Հետազոտության մեթոդաբանության կազմում են դատապարտյալների անձի ուսումնասիրության վերաբերյալ քրեական հոգեբանության հայեցակարգերն ու տեսությունները, դրանց հիման վրա մեր կողմից առանձնացված մեթոդաբանական մոտեցումները: Ստացված տվյալները առանձնացվել են ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում իրականացված հետազոտությունների արդյունքում: Այս տեսանկյունից դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրության հիմքում առանձնացնում ենք՝

• Խնդիրների համակարգ, որոնք ունեն սոցիալական, հոգեբանական, կենսաբանական փոխպայմանավորվածություն.

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների համատեքստում առանձնացնում ենք հուզական ոլորտի խնդիրները՝ դեպրեսիա, անհանգստություն, լարվածություն, հուզական մեկուսացում, սթրես, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների սոցիալական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են դատապարտյալների սոցիալական դերի փոփոխություններով, սոցիալական նոր միջավայրում կարգավիճակով, անձի սոցիալական մեկուսացման պայմաններով, սոցիալ-հոգեբանական հարմարման և ինտեգրման խնդիրներով:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների կենսաբանական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք հոգեկենսաբանական խանգարումները (անքնություն, դող, փորկապություն)՝ պայմանավորված ինչպես հոգեբանական, այնպես էլ քրեակատարողական հիմնարկության պայմաններով (լուսավորություն, խոնավություն, ջերմություն, սննդակարգի փոփոխություն, յուրահատուկ հոտը ինչպես միջավայրի, այնպես էլ սեփական մարմնի և այլն):

• Խնդիրների համակարգ, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխպայմանավորվածություն.

Դատապարտյալների օբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են կատարած արարքի նկատմամբ օբյեկտիվ վերաբերմունքով՝ արարքի ծանրության աստիճանով, դատավճռով, դատապարտյալների միջավայրի վերաբերմունքով (որը կարող է լինել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ): Ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապված խնդիրներ՝ ընտանիքի, հարազատների, աշխատավայրի և այլն: Հաճախ դատապարտյալների մոտ մի շարք հոգեբանական խնդիրներ պայմանավորված են լինում ընտանիքում ունեցած որոշակի խնդիրներով՝ ընտանիքի սոցիալական ապահովվածության, ընտանիքի անդամների առողջության, կորստի և մի շարք այլ հարցերի հետ:

Սուբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք արարքի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքը, ինքնաքննադատությունը կամ կատարած արարքի արդարացումը: Սուբյեկտիվ խնդիրների մեջ դիտարկում ենք սեփական ինքնավերաբերմունքը, ինքնագնահատականի առանձնահատկությունները, ինքնագիտակցության վերակառուցումները:

Լ. Սարգսյանի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՔԿՀ-ում դատապարտյալների առաջնային հարմարումն ընթանում է երկու փուլերով: Առաջին փուլը՝ նախնական պատրանքային հարմարման փուլն է, որն արտահայտվելով սեփական անձի նկատմամբ ինքնամեղադրմամբ, ինքնաքննադատությամբ, ներքին կոնֆլիկտայնությամբ, ընդգրկում է հիմնարկությունում դատապարտյալների գտնվելու մինչև մեկ ամիսն ընկած ժամանակահատվածը, և երկրորդը՝ բուն հարմարման շրջանը, որն արտահայտվելով սեփական անձի նկատմամբ ինքնարժևորմամբ, ինքնաընդունմամբ, ինքնավստահությամբ, ինքնագնահատականի բարձր մակարդակով, ընդգրկում է հիմնարկությունում գտնվելու չորսից վեցերորդ ամիսները: Բացասական ինքնավերաբերմունքով պայմանավորված՝ դատապարտյալները գտնվելով ապահարմարված վիճակում, ժամանակի ընթացքում սկսում են հարմարվել քրեական ենթամշակույթի, դատապարտյալների խմբի և առհասարակ հիմնարկության պայմաններին ու պահանջներին: Հարմարումն ընթանում է հուզական անբարեհարմարությամբ, նյարդահոգեկան անկայունությամբ, ինքնավստահության, ինքնակառավարման, ինքնաընդունման, ներքին վերահսկողության ցածր, ինքնաքննադատման, ինքնամեղադրման, միայնակության սուբեկտիվ զգացողության, ներքին կոնֆլիկտայնության բարձր մակարդակներով: ՔԿՀ-ում գտնվելու սկզբնական շրջանում առաջին անգամ դատապարտվածների ինքնագնահատականը՝ պայմանավորված ինքնավերաբերմունքի ցածր մակարդակով՝ ցածր է: Ինքնավերաբերմունքի դրական միտման, ինչպես նաև դատապարտյալների խմբում որոշակի դերի յուրացման արդյունքում ինքնագնահատականը բարձրա-

նում է [12]:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ուսումնասիրության արդյունքում դուրս բերված խնդիրները կարելի է դասակարգել հիմք ընդունելով՝

• Տարիքը, սեռը, կրոնական, ազգային պատկանելիությունը.

• կատարած արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը.

• հանցարարքի դրդապատճառները, դատվածության քանակը.

• քրեակատարողական հիմնարկության տիպը ու պայմանները.

• խնդիրների սոցիալական ու կենսաբանական պայմանավորվածությունը.

• խնդիրների օբյեկտիվ ու սուբյեկտիվ փոխպայմանավորվածությունը.

• ինքնագիտակցության վերակառուցումը, կենսական արժեքների փոփոխությունը, կյանքի ոճը.

• հոգեկան գործընթացները (ինտելեկտի գնահատում).

• հոգեվիճակները, հուզական հակազդումները.

• վարքի յուրահատկությունները՝ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ ընթացքը [2, էջ 407]:

Քրեակատարողական հիմնարկությունում դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրների համատեքստում կարևորվում է դատապարտյալների հարմարման խնդիրը, որը քրեահոգեբանության մեջ բաժանում են հիմնական երեք փուլերի [14].

1. Կյանքի նոր պայմաններին ընտելանալու փուլ, որը համարվում է ազատազրկման մեջ գտնվելու առաջին կես տարին: Այս շրջանում դատապարտյալներն ստիպված են լինում սահմանափակել իրենց պահանջմունքները, մոռանալ սովորությունները: Այս շրջանին բնորոշ է ապագայի մասին նպատակների ու հեռանկարների կորուստ, որն անդրադառնում է կենսական ակտիվության նվազեցման, դեպրեսիաների: Անհարմարվողականությունը հաճախ հանգեցնում է ըմբոստությունների: Հաճախ դատապարտյալներն այս շրջանում դրսևորում են անհնազանդություն, պայքարում առկա ռեժիմի դեմ: Այս փուլում, երբ դատապարտյալը հատկապես կենտրոնացած է անցյալի վրա, չի կարող հարմարվել ոչ տվյալ միկրոմիջավայրի վերաբերմունքին, որն ուղղված է դեպի իր անձը և ոչ էլ կարողանում է հարմարվել կատարած արարքին: Ինքնակործանիչ միտումը խանգարում է ընդունել սեփական Ես-ը: Վերոնշյալը տևում է այնքան ժամանակ, քանի դեռ դատապարտյալների մոտ չեն ձևավորվել կյանքի նոր պայմանների համար անհրաժեշտ անձնային հատկանիշներ ու որակներ: Սա համարվում է կողմնորոշման և հարմարման առաջնային կարևոր փուլ:

2. Արժեքային վերակողմնորոշման, միկրոմիջավայրի և առկա նորմերի ընդունման փուլ, որը սկսվում է քրեակատարողական հիմնարկում գտնվելու 6-րդ ամսից: Պայմանավորված դատապարտյալների սոցիալական մեկուսացման փաստով՝ այս փուլը կարող ենք անվանել հարթեցման շրջան, քանի որ մի շարք հարցեր գտնում են իրենց լուծումները: Դատապարտյալն այս փուլում փորձում է հարմարվել ոչ միայն ներկային, այլև ապագային: Նա ոչ միայն պլաններ է կազմում կապված ապագայի հետ և հուսադրվում դրանց իրականացմանը, այլև իր երևակայության մեջ փորձում է հարմարվել դրանց: Այս փուլում դատապարտյալներին բնորոշ է իրենց համար նոր մոտեցումների մշակումը, որը հատկապես արտացոլվում է հետաքրքրություններում, միջանձնային հարաբերություններում: Համեմատաբար հույզերը հանդարտվում են, հաղթահարվում է գոյության անիմաստության պատկերացումները, որոշ չափով մեծանում են շփման եզրերը: Այս փուլը կարող ենք բնութագրել որպես անձնային հարաբերական կայունության շրջան: Կարևոր դեր ունի «դատապարտյալի համախտանիշը», որը դատապարտյալներին նմանեցնում է իրար: Այդ նմանություններն արտահայտվում են նրանց արտաքինում, դիմախաղում, ժեստերում, քայլվածքում, պահվածքում, բառապաշարում: Հետագայում դատապարտյալների անձնային դինամիկայում ձևավորվում ու հիմնավորվում են երկու մոտեցումներ. հաղթահարվում է ազատազրկման պայմաններին հարմարվելու դժվարությունները և դատապարտյալի մոտ կարծրանում են նեգատիվ փոփոխությունները, որն էլ խոչընդոտում է ազատազրկման պայմաններում ուղղմանն ու վերադաստիարակմանը:

3. Հարմարման ավարտման փուլ, որը համապատասխանում է կալանքից ազատվելու վերջին շրջանին: Այս փուլում դատապարտյալն իր առջև նոր խնդիրներ է դնում՝ պայմանավորված ապագայի հետ: Դատապարտյալների մոտ կարող են առաջ գալ մտքերն այն մասին, որ շուտով պետք է կանգնեն վերահարմարման նոր փուլի առջև, որը հեշտ չի լինի հաղթահարել այն ժամանակահատվածից հետո, որն անցկացրեցին քրեակատարողական հիմնարկում:

Հասարակությունից մեկուսացման պայմաններում անձի հարմարման մեխանիզմներին ու օրինաչափություններին է անդրադառնում Վ. Ֆրանկլը: Նա առաջարկում է բանտային կյանքում անձի հոգեբանական հարմարման հետևյալ երեք մակարդակները.

1. Շոկային մակարդակ, որը կապված է ձերբակալումից մինչև բերդ հասնելու շրջանի հետ,

2. հարմարման մակարդակ, որի ժամանակ տեղի է ունենում իրավիճակի գիտակցում, սակայն չեն նվազում հոգեկան ապրումները,

3. ազատման մակարդակ, որը կապված է բան-

www.ardaradatutyunjournal.com

տից ազատման շրջանի հետ, երբ անձի մոտ բավական դժվար են հաղթահարվում բանտում ձեռք բերված անձնային մի շարք բարդություններ [13]:

Հեղինակը համարում է, որ դատապարտյալի առաջնային խնդիրն ինքնապահպանումն է, որը նրան մղում է հարմարման: Վ. Ֆրանկլը գրում է, որ դատապարտյալների ցանկությունները բավական պարզունակ են, հիմնականում կարիք ունեն համեղ բաներ ուտելու, ծխելու և այլն: Փոխարենը, ինչպես բնութագրում է հեղինակը՝ դատապարտյալներն իրենց զգում են ապադասակարգայնացված, որն իր հերթին նրանց մոտ առաջ է բերում անլիարժեքության ներքնայնացում: Նա, հատկապես ուշադրություն է դարձնում դատապարտյալների մոտ հանդիպող ապատիային, որը մեկուսացման պայմաններում բնութագրում է որպես հոգեկանի պաշպանական մեխանիզմ, և ագրեսիայի դրսևորումներին [13]:

Վ.Մ. Պոզդնյակովի ուսումնասիրություններում [10] պայմանավորված անձի կարծրատիպերի փոփոխության հետ, հանդիպում ենք հարմարման ֆիզիոլոգիական, սոցիալական և սոցիալ-հոգեբանական մեխանիզմներին, համաձայն որի՝ դատապարտյալը ստիպված է լինում ոչ մեկ անգամ հարմարվել ռեժիմի պահանջներին ու պատժաժամկետի պայմաններին, ինչպես նաև ազդեցության հիմնական միջոցներին. ռեժիմ, աշխատանք, դաստիարակչական ներգործություն, ուսուցում: Հեղինակը նշում է, որ դատապարտյալների մոտ որքան մեծ է տարբերությունը բանտային ու նախկինում ազատության պայմանների միջև, այնքան ավելի վառ է արտահայտված հարմարման պահանջմունքը ներքին կարծրատիպերի ու հին սովորույթների փոփոխմանը: Բացի այդ, այս խմբում ընդգրկված դատապարտյալները շատ ավելի դժվարությամբ են հարմարվում քրեակատարողական հիմնարկությունում ազատազրկման պայմաններին:

Հետազոտության արդյունքներ և քննարկում. Այսպիսով, դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրներն առաջարկում ենք առանձնացնել հետևյալ հինգ խմբերում.

1. Դատապարտյալի անձի հոգեբանական բնութագիրը

- Անձնային առանձնահատկությունների համակարգը (խառնվածք, բնավորություն, ինտելեկտ, կամք)
- Հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, բնութագրերը (ճանաչողական և իմացական գործընթացները)
- Անձի հույզերի, հուզական վիճակների համակարգը

2. Դատապարտյալի անձի կենսաբանական բնութագիրը

- տարիքը
- սեռը
- ֆիզիկական առողջությունը
- գենետիկական տվյալները

3. Դատապարտյալի անձի սոցիալական բնութագիրը

- կրոնական պատկերացումները
- ազգային պատկանելիությունը, էթնոմշակութային բնութագիրը
- ընտանիքի պատմությունը

4. Դատապարտյալի անձի քրեաիրավական բնութագիրը

- կատարած արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը
- հանցարարքի դրդապատճառները, դատվածության քանակը
- հիմնարկությունում սոցիալական դերերը և միջանձնային հարաբերությունները

5. Դատապարտյալի անձի ինքնության բնութագիրը

- վարքի յուրահատկությունները՝ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ ընթացքը
- ինքնագիտակցության, ինքնավերաբերմունքի վերակառուցումները
- կենսահիմաստային արժեքների բնութագրերը, փոփոխությունը
- կյանքի ոճը:

Եզրակացություն.

Այսպիսով, կարևորում ենք դատապարտյալների հոգեբանական խնդիրների դասակարգման վերոնշյալ մոդելի զարգացման անհրաժեշտությունը քրեակատարողական համակարգի հոգեբանական հետազոտություններում, ինչպես նաև դրա կիրառականությունը, ինչը հնարավորություն կտա ամբողջացնել ինչպես դատապարտյալների հոգեբանական խնդիրների համակարգումն ու դասակարգումը քրեակատարողական համակարգի գործունեության հոգեբանության բնագավառում, այնպես էլ քրեակատարողական հիմնարկներում սոցիալ-հոգեբանական աշխատանքների, հոգեբանական ուղղեկցման և վերականգնողական գործընթացի բարելավման համար: Աշխատանքի արդյունքում ընդհանրացնելով հիմնախնդրին վերաբերող տեսական դրույթները, ուսումնասիրություններն ու հայեցակարգերը, ինչպես նաև մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, առաջարկում ենք դատապարտյալների սոցիալ-հոգեբանական խնդիրների մոդել, որը ներառում է՝ դատապարտյալի անձի հոգեբանական բնութագրերը, դատապարտյալի անձի կենսաբանական բնութագրերը, դատապարտյալի անձի սոցիալական բնութագրերը, դատապարտյալի անձի քրեաիրավական բնութագրերը, դատապարտյալի անձի ինքնության բնութագրերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրին Է. Սեղք, ապաշավանք, կատարսիս. – Եր., Զանգակ-97, 2005. – 72 էջ:
2. Սարգսյան Լ.Կ. Դատապարտյալների հոգեբանական խնդիրների դասակարգումը: Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները: Միջազգային գիտաժողովի նյութեր. - Եր.: «Լիմուշ» հրատ., 2019. էջ 403-410:
3. Антонян Ю.М. Жестокость в нашей жизни. – М.: Инфра-М, 1995. – 320 с.
4. Антонян Ю.М. Мотивация поведения осужденных: монография / Ю.М. Антонян, Е.Н. Колышницына. – М.: ЮНИТИДАНА: Закон и право, 2017. – 143 с.
5. Багдасарян Д.С. Теория государства и права. Ереван: 2002. – 273 с.
6. Бурукина Е. Челнокова Т. Социально-психологический портрет личности осужденного. Материалы III международной научной студенческой конференции «Научный потенциал студенчества в XXI веке». Том 2. Ставрополь: ГТУ, 2009. – 144 с.
7. Глоточкин А.Д., Пирожков В.Ф. Исправительно-трудовая психология. Академия МВД СССР, М.: 1974. – 427 с.
8. Дмитриев Ю.А. Пенитенциарная психология: /Ю. Дмитриев, Б. Казак - Ростов н/Д: Феникс, 2007. – 681 с.
9. Пирожков В.Ф. Криминальная психология. – М.: “Ось-89”, 2001. – 704 с.
10. Поздняков В.М. Психология в пенитенциарной практике зарубежных стран в XX столетии. Монография. - М.: Академия управления МВД России. 2000. – 148 с.
11. Ресоциализация осужденных в условиях развития гражданского общества: сборник материалов Международной научно-практической конференции (11-12 декабрия 2014) Киров: ФКОУ ДПО Кировский ИПКР ФСИН России, 2014. 275 с.
12. Саргсян Л.К. Роль самоотношения в процессе адаптации осужденных. Автореф. дис. канд. психол. наук. – Ереван. 2015. – 26 с.
13. Франкл В. Человек в поисках смысла: Сборник. /М.: Прогресс, 1990. С. 132-133.
14. Dennis Howitt Forensic and criminal psychology. “Prentice Hall”, 2002. – 423 p.

References

1. Grin E’. Meghq, apashavanq, katarsis. – Er., Zangak-97, 2005. – 72 e’j:
2. Sargsyan L.K. Datapartyalneri hogebanakan xndirneri dasakargowmy’: Hogebanakan himnaxndirner. bnowt’agrery’, dasakargman & axtoroshman skzbownqnery’: Mijazgayin gitajhoghovi nyowt’er. - Er.: «Limowsh» hrat., 2019. e’j 403-410:
3. Antonyan Yu.M. Zhestokost’ v nashei zhizni. – M.: Infra-M, 1995. – 320 c.
4. Antonyan Yu.M. Motivatsiya povedeniya osuzhdennykh: monografiya / Yu.M. Antonyan, E.N. Kolyshnitsyna. – M.: YuNITIDANA: Zakon i pravo, 2017. – 143 s.
5. Bagdasaryan D.S. Teoriya gosudarstva i prava. Erevan: 2002. – 273 s.
6. Burukina E. Chelnokova T. Sotsial’no-psikhologicheskii portret lichnosti osuzhdennogo. Materialy III mezhdunarodnoi nauchnoi studencheskoi konferentsii «Nauchnyi potentsial studenchestva v XXI veke». Tom 2. Stavropol’: GTU, 2009. – 144 s.
7. Glotochkin A.D., Pirozhkov V.F. Ispravitel’no-trudovaya psikhologiya. Akademiya MVD SSSR, M.: 1974. – 427 s.
8. Dmitriev Yu.A. Penitentsiarnaya psikhologiya: /Yu. Dmitriev, B. Kazak - Rostov n/D: Feniks, 2007. – 681 c.
9. Pirozhkov V.F. Kriminal’naya psikhologiya. – M.: “Os’-89”, 2001. – 704 s.
10. Pozdnyakov V.M. Psikhologiya v penitentsiarnoi praktike zarubezhnykh stran v XX stoletii. Monografiya. - M.: Akademiya upravleniya MVD Rossii. 2000. – 148 s.
11. Resotsializatsiya osuzhdennykh v usloviyakh razvitiya grazhdanskogo obshchestva: sbornik materialov Mezhdunarodnoi nauchno-prakticheskoi konferentsii (11-12 dekabriya 2014) Kirov: FKOU DPO Kirovskii IPKR FSIN Rossii, 2014. 275 s.
12. Sargsyan L.K. Rol’ samootnosheniya v protsesse adaptatsii osuzhdennykh. Avtoref. dis. kand. psikhol. nauk. – Erevan. 2015. – 26 s.
13. Frankl V. Chelovek v poiskakh smysla: Sbornik. /M.: Progress, 1990. S. 132-133.

Левон Саргсян
декан факультета лингвистики и педагогики
Государственного университета имени В. Брюсова,
к.пс.н., доцент

РЕЗЮМЕ

Социально-психологические проблемы осужденного

Изучение социально-психологических проблем личности осуждённого является одним из ключевых принципов уголовной психологии. Эти проблемы обусловлены как индивидуальными особенностями и личностными чертами осуждённого, так и временными и пространственными условиями, спецификой жизнедеятельности и социальными обстоятельствами. Поэтому в данной работе социально-психологические проблемы осуждённых анализируются с точки зрения личностных характеристик, социального контекста и криминально-правовой причинности.

Психологические исследования личности осуждённого сыграли важнейшую роль в становлении и развитии юридической психологии, особенно психологии пенитенциарной системы. Современные психологические исследования в пенитенциарной системе в первую очередь сосредоточены на процессах исправления и ресоциализации осуждённых. Некоторые психологические работы, связанные с пенитенциарной системой, затрагивают личность осуждённых, хотя зачастую лишь частично охватывают их психологические проблемы, не представляя их как комплексное, системное явление. На основании характера совершённого преступления возможно не только составить психологический портрет личностных черт осуждённого, но и проанализировать его социально-психологическую адаптацию, интеграцию, межличностные отношения, поведение и стратегии совладания в условиях пенитенциарной среды.

В данном исследовании выделяются пять основных категорий социально-психологических проблем осуждённых:

Психологические характеристики личности осуждённого – система личностных черт (темперамент, характер, интеллект, воля), особенности психических процессов (когнитивные и перцептивные функции), эмоциональные состояния и система эмоциональной регуляции;

Биологические характеристики личности осуждённого – возраст, пол, физическое здоровье, генетические предрасположенности;

Социальные характеристики личности осуждённого – религиозные убеждения, национальная принадлежность, этнокультурный фон, история семьи;

Криминально-правовые характеристики личности осуждённого – характер и степень опасности совершённого преступления, мотивы преступления, количество предыдущих судимостей, социальные роли и межличностные отношения внутри учреждения;

Характеристики идентичности личности осуждённого – поведенческие тенденции (конструктивные или деструктивные), трансформация самосознания и самоотношения, системы ценностей и изменения образа жизни.

***Ключевые слова**: осуждённый, наказание, социально-психологические проблемы, пенитенциарная система, адаптация.*

Levon Sargsyan
Dean of Faculty of Lingvistics and Pedagogy Brusov State University,
Ph.D in Psychology, Associate professor

SUMMARY

Social psychological problems of the convicts

The study of the socio-psychological problems of prisoners is one of the central areas of focus in criminal psychology. These problems are shaped not only by the individual traits and psychological characteristics of the convict but also by temporal and spatial factors, specific living conditions, and the broader social environment. Accordingly, this study examines the socio-psychological challenges faced by prisoners through the lenses of personal characteristics, social context, and criminological and legal factors.

Psychological research into the personality of convicts has played a crucial role in the development of legal psychology, particularly within the penitentiary system. Contemporary psychological studies in this domain mainly focus on the processes of correction and resocialization. While some research addresses the personality of convicts,

it often covers only isolated aspects of their psychological issues and fails to present them within a coherent and comprehensive framework. Based on the nature of the committed offense, it is possible not only to develop a psychological profile of the convict but also to analyze their socio-psychological adaptation, integration, interpersonal relationships, behavioral patterns, and coping strategies within the penitentiary environment.

This study identifies five main categories of the socio-psychological problems experienced by convicts:

Psychological Characteristics: A system of personality traits (e.g., temperament, character, intellect, will), features of mental processes (cognitive and perceptual functions), emotional states, and mechanisms of emotional regulation.

Biological Characteristics: Age, sex, physical health, and genetic predispositions.

Social Characteristics: Religious beliefs, national and ethnic identity, cultural background, and family history.

Criminal-Legal Characteristics: The nature and severity of the offense, motives for committing the crime, prior convictions, and social roles and interpersonal relationships within the correctional institution.

Identity Characteristics: Behavioral tendencies (constructive or destructive), transformation of self-awareness and self-attitude, value system, and lifestyle changes.

Key words*: convict, punishment, socio-psychological issues, penitentiary system, adaptation.*

Ընագիրը ներկայացվել է 13.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ԱՆԱՀԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԴԱՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ

Գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծություն է ենթարկել դատական նորմաստեղծության և դատական հայեցողության հետ կապված հարցերը: Հոդվածում քննարկվել են դատական նորմաստեղծության վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ ա) դատավորները ստեղծում են իրավունք, (դատական իրավունք), բ) դատավորները իրավունք ստեղծող չեն, այլ իրավունքի հռչակողներն են: Դատական հայեցողությունը պարունակում է որոշակի սուբյեկտիվիզմի դրսևորում, որը կարող է հանգեցնել նաև իրավաբանական սխալի: Նման իրավակիրառ ռիսկը բացառելու կամ նվազագույնի հասցնելու համար պահանջվում է իրավակիրառողի (դատավորի) պատասխանատու, անաչառ, կամայականության բացառում, հիմնավորված և հավասարակշռված մոտեցում:

Հիմնաբառեր *- դատավոր, դատական պրակտիկա, իրավունքի հռչակողներ, նորմաստեղծ գործունեություն, դատական նախադեպ, դատական հայեցողություն:*

Ներածություն

Հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավագիտության արդի խնդրահարույց թեմաներից մեկը՝ դատական նորմաստեղծ գործունեության հիմնախնդիրը: Հեղինակը հիմնավորում է, որ դատական նորմաստեղծ գործունեությունը (գործառույթը) ոչ թե հակասում է իշխանությունների բաժանման հայեցակարգին, այլ լրացնում և ամբողջականացնում է այդ հայեցակարգը, քանզի մյուս երկու թևերը՝ օրենսդիրը և գործադիրը օժտված են իրավաստեղծ (նորմաստեղծ) գործունեությամբ, իսկ լիարժեք հավասարակշռության համար անհրաժեշտ է նաև դատական իշխանությունը վերապահել նորմաստեղծ գործունեությամբ, ինչի շնորհիվ կբարձրանա դատական ակտերի հեղինակությունը՝ որպես իրավակիրառ և իրավամեկնողական ակտեր: Հոդվածի հիմնական օբյեկտը նախադեպային իրավունքն է, իսկ առարկան դատական նորմատիվ իրավական ակտերի ստեղծումն ու գործընթացը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության մեթոդաբանական հիմքում դրված են վերլուծական, համեմատական և համակարգային մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել իրավական նորմաստեղծության էությունը և զարգացման միտումները:

Աշխատանքի ընթացքում իրականացվել է ազգային և միջազգային իրավական ակտերի, ինչպես նաև գիտական գրականության վերլուծություն՝ նորմաստեղծ գործընթացի տեսական և գործնական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով:

Ստացված եզրակացությունները հիմնված են տեսական դրույթների համադրման և իրավական պրակտիկայի քննության վրա:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Չնայած նրան, որ արդի առաջատար իրավական համակարգերում դատական նախադեպը համարվում է իրավունքի աղբյուր, այդուհանդերձ իրավահասկացման տարբեր հայեցակարգերում գոյություն ունեն հակադիր մոտեցումներ: Բնական իրավունքի տեսության կողմնակիցները (Հեյլը, Բլեկստոնը) չէին ընդունում դատարանի (դատավորի) նորմաստեղծ իրավազորությունը: Նրանք գտնում էին, որ պոզիտիվ իրավունքը ստեղծվում է թագավորի կամ պառլամենտի կողմից, բայց ոչ դատարանի: Հեյլը և Բլեկստոնը մշակեցին այսպես կոչված, հռչակագրային տեսությունը, որի համաձայն դատավորները իրավունքի ստեղծողներ չեն, այլ «իրավունքի հռչակողներ» են[1]:

Ըստ նրանց, բնական իրավունքը անկախ է դատական հայեցողությունից, այն միայն բացահայտվում և հռչակվում է դատավորների կողմից[2]:

Հռչակագրային տեսությունը հսկայական տեսական և գործնական նշանակություն ունեցավ իրավագիտության զարգացման ոլորտում: Դրանով ոչ միայն բարձրացավ դատավորների հեղինակությունը որպես «իրավունք հռչակողներ», այլև «իրավունք կիրառողներ», իսկ անհրաժեշտության դեպքում՝ «իրավունքի մեկնիչներ» և իրավունքի բացերը լրացնողներ՝ պոզիտիվ իրավունքում:

Հռչակագրային տեսությունը նախադեպային իրավունքին հաղորդեց նաև արժեքային հատկություն՝ որպես բանականության նորմատիվ արտացոլում: Այսպես, Ե. Կոկը և Թ. Հեդլին գտնում էին, որ ընդհանուր իրավունքը հանձինս նախադեպային իրավունքի, ձեռք բերեց արժեքային հատկու-

թյուններ՝ ողջախոհություն, արդարություն, բանականություն[3]:

Հռչակագրային տեսությունը իր դիրքերը պահեց մինչև XIX դարի վերջը: 1892 թվականին լորդ Էշերը պնդում էր, որ գոյություն չունի դատական իրավունք (judge-made law), քանի դատավորները իրավունք չեն ստեղծում[4]:

Սակայն, վերլուծական պոզիտիվիզմի հաղթանակով, որը համընկավ դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուր վերջնական ընդունման հետ, վերանայվեց դատական նորմաստեղծ հայեցակարգի էությունը և հաստատվեց այն մոտեցումը, ըստ որի՝ դատարանն օժտված է նորմաստեղծ իրավազորությամբ և գոյություն ունի դատական (դատավորի) իրավունք (ըստ Բենդամնի): Վերլուծական պոզիտիվիզմի կողմնակիցները գտնում էին, որ դատարանները որպես պետական իշխանության մարմիններ, իրավասություն ունեն իրականացնել նորմաստեղծ գործունեություն[5]:

Կողմնակից լինելով դատական նորմաստեղծ գործունեությանը՝ վերլուծական պոզիտիվիզմի կողմնակիցները նաև գտնում են, որ դատական նորմաստեղծ գործունեությունը պետք է լինի հիմնավոր, տրամաբանորեն փաստարկված և ողջամիտ[6]:

Որպես կանոն, դատավորը որոշումը ընդունում է իր ներքին համոզմամբ (հայեցողությամբ), հետո միայն հիմնավորում է փաստերի ու ողջամտության դիրքերից:

Նախադեպային իրավունքի հետազոտողները առանձնացնում են դատական նորմաստեղծ գործունեության հետևյալ հատկանիշները. դատական հայեցողության ինքնասահմանափակում, դատական իմաստություն և ճկունություն, դատական ստեղծագործություն, որոնց համակցությամբ դատարանը (դատավորը) ստեղծում է նոր իրավունք կամ մեկնում է ստատուտի (օրենքի) նոր բովանդակություն[7]:

Արդի ժամանակաշրջանում դատական նորմաստեղծ գործունեության հայեցակարգը լայն տարածում է ստացել ընդհանուր (նախադեպային) իրավունքի երկրների իրավական համակարգերում և դատական պրակտիկայում:

Դատական նախադեպի, դատական պրակտիկայի, դատական հայեցողության և դատական նորմաստեղծ գործունեության վերաբերյալ իրավաբանական գիտելիքների որակական փոփոխությունները կապված են ոչ միայն սոցիալ-քաղաքական փոփոխությունների հետ, այլև իրավունքի և իրավունքի աղբյուրների նախկին հասկացությունների, իրավունքի և իրավունքի աղբյուրների նոր իրավաընկալման անցման և դրա հետ փոխկապված նոր մեթոդաբանության և նոր իրավաբանական տեսության ձևավորման հետ:

Ժամանակակից տեսական և մեթոդաբանական մոտեցումը ենթադրում է նաև համապատասխան նոր հայեցակարգային մոտեցում քննարկվող հասկացությունների էության և բովանդակային առանձնահատկությունների վերաբերյալ: Էմպիրիկ նյութերի վերլուծության և դրանց վերաբերյալ եղած տեսական գիտելիքների, հայեցակարգային մոտեցումների վերահիմաստավորման և արժեվորման արդյունքում արմատապես վերափոխվում է նաև մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգի տեսությունը և պրակտիկան:

Այդ համակարգի երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, աստիճանաբար ձևավորվում է սկզբունքորեն նոր հայեցակարգ դատական նորմաստեղծ գործունեության վերաբերյալ: Դա բացատրվում է նրանով, որ պոզիտիվ իրավունքով օբյեկտիվորեն հնարավոր չէ կանխատեսել հասարակական կյանքի բոլոր նրբերանգները, հնի հետ նոր հասարակական հարաբերությունների երևան գալը, իրավաստեղծ իրավասու մարմինների ոչ օպերատիվ արձագանքը իրավական կարգավորման ենթական հարցերի վերաբերյալ, օրենսդրական տեխնիկայի ոչ պատշաճ մակարդակը, իրավակարգավորումների ոլորտում օրենսդրական բացերի և հակասությունների անխուսափելիությունը և այլն: Դրանց առկայության պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում դատական մարմինների վիրահատական միջամտություն, այսինքն՝ նորմաստեղծ գործունեություն՝ ողջախոհության և բանականության սահմաններում:

Դատական նախադեպը, այդ թվում՝ դասական նախադեպը, իրավամեկնողական նախադեպը, իրավական դիրքորոշումը, դատական պրակտիկան բարձրագույն դատարանների կամայինինտելեկտուալ գործունեության և էմպիրիկ նյութի վերլուծության արդյունք են, որոնք օրինակելի և պարտադիր են դատական համակարգի մարմինների (դատավորների) համար և իրենց ուրույն տեղն ունեն իրավունքի աղբյուրների աստիճանակարգում[8]:

Դատական նախադեպը, իրավական դիրքորոշումը և դատական պրակտիկան իրենց համակցության մեջ կազմում են, այսպես կոչված, «դատական նորմ», որն օժտված է իրավական նորմին բնորոշ հատկանիշներով. նորմատիվության, համապարտադրության, որոշակիության հատկանիշներով:

Դատական նախադեպը, իրավական դիրքորոշումը և դատական պրակտիկան՝ ի տարբերություն նորմատիվ իրավական ակտերի, «կենդանի իրավունքի» նմուշներ են, դրանք ծագում, առաջանում, ձևավորվում և ընդունվում են իրավական վեճերի լուծման, հասարակական հարաբերությունների իրավական պահանջներին արձագանքելու

արդյունքում, որոնցում, որպես կանոն, բացակայում են քաղաքական ուժերի միջամտությունները և կանյուկտիվ մոտեցումները:

Դրանք, այսպես կոչված, զուտ իրավական երևույթներ են և անմիջական դերակատարում ունեն իրավակարգավորումների, սոցիալական վեճերի լուծման գործընթացներում:

Դատական հայեցողությունը՝ որպես դատական նորմաստեղծ գործունեության նախապայման, դատարանի (դատավորի) ազատ դիրքորոշում է գործում առկա իրավաբանական փաստերի գնահատման, օրենսդրական նորմի մեկնաբանման կամ դատական նախադեպի և իրավական դիրքորոշման մշակման, և վերջապես տվյալ դատական գործով վերջնական որոշման կայացման գործընթացում:

Դատական հայեցողությունը պարունակում է որոշակի սուբյեկտիվիզմի դրսևորում, որը կարող է հանգեցնել նաև իրավաբանական սխալի: Նման իրավակիրառ ռիսկը բացառելու կամ նվազագույնի հասցնելու համար պահանջվում է իրավակիրառողի (դատավորի) պատասխանատու անաչառ, կամայականության բացառում, հիմնավորված և հավասարակշռված մոտեցում:

Դատական նորմաստեղծ գործունեությունը և դատական հայեցողությունը՝ որպես հարակից զույգ իրավական կատեգորիաներ, պետք է համահունչ լինեն գործող իրավական համակարգի տրամաբանության, իրավակիրառ պրակտիկայի և դատական քաղաքականության հետ:

Եզրակացություն

Իրավական նորմաստեղծությունը ներկայացնում է իրավակարգավորման հիմնարար փուլ, որի միջոցով ձևավորվում են հասարակական հարաբերությունները կարգավորվող իրավական նորմերը: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ արդյունավետ նորմաստեղծ գործընթացը պահանջում է իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական գործոնների ներդաշնակ համակցում: Ժամանակակից իրավական համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նորմաստեղծ գործունեության որակը պայմանավորում է ոչ միայն իրավական կարգավորման արդյունավետությունը, այլև իրավական պետության կայունությունը և քաղաքացիական հասարակության զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության հետագա զարգացման հեռանկարը և արդարադատության արդյունավետության բարձրացման խնդիրը անհրաժեշտաբար թելադրում են նաև դատական իշխանության մարմիններին օժտել նորմաստեղծ գործունեությամբ, համենայն դեպս դրանք ճանաչել որպես իրավամեկնողական դատական նախադեպեր:

[1] Տե՛ս, Hale M. The History of the Common Law of England. London, 1971, p. 45.
[2] Տե՛ս, Blackstone W. Commantaries. L. 1976, p. 88-89.
[3] Տե՛ս, Coke E. First Inditute of the Laws of England N.Y. 1979, p. 97.
[4] Տե՛ս, Williams v. Baddeley QB 324 p. 326.
[5] Տե՛ս, Buckland-Mc.Nair. Roman Law and Common Law. L. 1952, p. 15 XIV.
[6] Տե՛ս, Moles R.N. Definition and Rule in Legal Theory. L., 1981, p. 135.
[7] Տե՛ս, Freeman M. Standards of Adjudication: judicial Law-Making and Prospective Overruling. Correct legal problems, 1979, p.166
[8] Տե՛ս, Craig P.D. Modes of Constitutional Interpretation. N.Y. 1978, p. 391.

Գրականության ցանկ

1. Blackstone W. Commantaries. L. 1976, p. 88-89.
2. Buckland-Mc.Nair. Roman Law and Common Law. L. 1952, p. 15 XIV.
3. Coke E. First Inditute of the Laws of England N.Y. 1979, p. 97.
4. Craig P.D. Modes of Constitutional Interpretation. N.Y. 1978, p. 391.
5. Freeman M. Standards of Adjudication: judicial Law-Making and Prospective Overruling. Correct legal problems, 1979, p.166
6. Hale M. The History of the Common Law of England. London, 1971, p. 45.
7. Moles R.N. Definition and Rule in Legal Theory. L., 1981, p. 135.
8. Williams v. Baddeley QB 324 p. 326.

Анаит Налбандян
Соискатель Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения

РЕЗЮМЕ
О понятии судебного нормотворчества

В данной статье автор подробно рассмотрел вопросы, связанные с судебным нормотворчеством и судебным усмотрением. В статье также рассмотрены два основных подхода к судебному нормотворчеству: а) судьи создают право, (судебное право), б) судьи не правотворцы, а «провозглашатели права». В научной статье рассматривается подход, при котором судебное усмотрение содержит в себе определенное проявление субъективизма, что также может привести к юридической ошибке. Для того чтобы исключить или минимизировать такой риск правоприменения, требуется ответственная беспристрастность, исключение произвола, обоснованный и взвешенный подход правоприменителя (судьи).

***Ключевые слова**: судья, судебная практика, провозглашатели права, нормотворческая деятельность, судебный прецедент, судебное усмотрение.*

Anahit Nalbandyan
Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY
On the concept of judicial rule-making

In this article, the author has thoroughly discussed the issues related to judicial rule-making and judicial discretion. The article also discussed two main approaches to judicial rule-making a) judges create law, (judicial law), b) judges are not law creators, but “proclaimers of law”. The scientific article discusses the approach by which judicial discretion contains a certain manifestation of subjectivism, which can also lead to legal error. In order to exclude or minimize such a risk of law enforcement, a responsible impartiality, exclusion of arbitrariness, a reasoned and balanced approach of the law enforcement officer (judge) is required.

***Key words**: judge, judicial practice, proclaimers of law, rule-making activity, judicial precedent, judicial discretion.*

Ընդունվել է տպագրության 24.11.25թ.

ՖԻԼԻԱՆԱ ԲԵԼԼՈՒՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի
պաշտպանության վարչության դատախազ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ,
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքում վեր են հանվել տնտեսական սանկցիաների կիրառման պատճառները, կիրառման ոլորտները և դրանց հետևանքները: Հետազոտվել և վերլուծվել են միջազգային տնտեսական հարաբերություններում սանկցիաների կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրները 20-րդ դարի երկրորդ կեսից մինչև 21-րդ դարի սկիզբ, ինչպես նաև ներկայիս ժամանակներում արևմտյան երկրների սանկցիավորված քաղաքականության ուժեղացումը արագ զարգացող երկրների դեմ, այդ ոլորտում առաջացող խնդիրները:

Աշխատանքում բարձրացրած հարցերը և վերլուծությունը նշանակություն ունեն՝հաշվի առնելով այն, որ տնտեսական սանկցիաները գլոբալիզացիայի պայմաններում վնաս են հասցնում ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետության տնտեսությանը, այլև միջազգային տնտեսությանը, ուստի սանկցիաների կիրառման առանձնահատկությունները վեր հանելը կարևոր նշանակություն ունի ազգային տնտեսությունը պահպանելու և տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու տեսանկյունից:

Գլոբալիզացիայի պայմաններում որպես սանկցիաների առանձնահատկություն կարելի է նշել քանակական աճը, արդյունքին հասնելու բարդ լինելը, կոլեկտիվ բնույթը, դրանց կիրառման մեխանիզմների և իրավական հիմքերի բացակայությունը: Գլոբալիզացիայի պայմաններում սանկցիաները վերածվում են զարգացած երկրների և զարգացող, անցումային տնտեսությամբ երկրների միջև մրցակցային պայքարի գործիքի՝ հատկապես 21-րդ դարում, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զարգացած երկրների կողմից ձևավորված համաշխարհային տնտեսական կառուցվածքները, այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, չեն կարողանում ապահովել իրենց բացառիկ գերիշխող դիրքը համաշխարհային տնտեսական համակարգում:

Հիմնաբառեր *- Տնտեսական սանկցիա, զարգացած երկրներ, զարգացող երկրներ, անցումային տնտեսությամբ երկրներ, գլոբալիզացիա:*

Ներածություն

Միջազգային տնտեսական կյանքում ճգնաժամային երևույթները խորանում են բավականին արագ: Դրանք ի հայտ են գալիս ոչ միայն աշխարհի երկրների սոցիալ-տնտեսական զարգացման ոչ համաչափության, ճգնաժամային երևույթների աճի, այլև գերիշխող երկրների կողմից տնտեսական սանկցիաների կիրառման դեպքերի ավելացման հետ զուգընթաց:

Հաշվի առնելով այն, որ տնտեսական սանկցիաները գլոբալիզացիայի պայմաններում վնաս են հասցնում ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետության տնտեսությանը, այլև միջազգային տնտեսությանը, ուստի սանկցիաների կիրառման առանձնահատկությունները վեր հանելը կարևոր նշանակություն ունի ազգային տնտեսությունը պահպանելու և տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու տեսանկյունից:

Աշխատանքի նպատակն է վերհանել տնտեսական սանկցիաների կիրառման պատճառները, կիրառման ոլորտները և դրանց հետևանքները: Դրան համապատասխան՝ աշխատանքի խնդիրներն են հետազոտել միջազգային տնտեսական հարաբերություններում սանկցիաների կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրները 20-րդ դարի երկրորդ կեսից մինչև 21-րդ դարի սկիզբ, ինչպես նաև ներկայիս ժամանակներում արևմտյան երկրների սանկցիավորված քաղաքականության ուժեղացումը արագ զարգացող երկրների դեմ, որոնք արևմտյան անդրազգային կորպորացիաների հետ ազգային տնտեսության ստրատեգիական ոլորտներում մրցակցության մեջ են մտնում: Հետազոտությունն իրականացվել է համեմատական-իրավական, վիճակագրական, համակարգային և վերլուծական մեթոդներով: Ուսումնասիրվել են արևմտյան և արևելյան հետազոտողների գիտական աշխատությունները, ինչպես նաև վիճակագրական տվյալներ:

Աշխատանքում բարձրացրած հարցերը և վերլուծությունը նշանակություն ունեն՝ հաշվի առնելով

այն, որ տնտեսական սանկցիաները գլոբալիզացիայի պայմաններում վնաս են հասցնում ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետության տնտեսությանը, այլև միջազգային տնտեսությանը, ուստի սանկցիայի հասկացությունը բնորոշելը և սանկցիաների կիրառման առանձնահատկությունները վեր հանելը կարևոր նշանակություն ունեն ազգային տնտեսությունը պահպանելու և տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու տեսանկյունից:

a. Տնտեսական սանկցիաների էության և արդյունավետության տեսական հետազոտությունները գրականությունում

«Իր զարգացման ամբողջ ժամանակահատվածում միջազգային տնտեսությունը ձևավորվել է որպես մեկ ամբողջական և բարդ համակարգ, որը բաղկացած է տարբեր, նույնիսկ երբեմն միմյանց բացառող տարրերից: Սինչդեռ այդ տարրերի փոխադարձ կապը և միմյանցից կախվածությունը անքակտելի են և միջազգային տնտեսության գլխավոր նպատակին՝ սոցիալ-տնտեսական առաջընթացին հասնելու համար անհրաժեշտ է դրա տարրերի՝ որոշակի մակարդակում փոխազդելը: Ընդ որում՝ որքան մեծ է փոխազդեցությունը, այնքան արդյունավետությունը բարձր է»[1]:

Գլոբալիզացիայի պայմաններում միջազգային տնտեսական համակարգը հետզհետե դառնում է ավելի անկայուն. դրանում բացակայում է տնտեսական հետաքրքրությունների հավասարակշռությունը, սակայն դրանց բախումը տեղի է ունենում՝ սրելով միջազգային շուկայում մրցակցային պայքարը տնտեսվարող սուբյեկտների, նաև պետությունների միջև[2]:

Գլոբալիզացիան, ամրապնդելով պետությունների փոխկապակցվածությունը և կախվածությունը միմյանցից, միևնույն ժամանակ ավելացնում է ազգային հետաքրքրություններից հրաժարվելու անհրաժեշտությունը՝ տարբեր մեթոդների և գործիքների կիրառմամբ: Դրանց թվում հարկ է նշել զարգացած պետությունների կողմից հաճախակի կիրառվող տնտեսական սանկցիաները:

Եթե 1950-ական թթ. սանկցիաների կիրառման 15 դեպք էր արձանագրվել, 1960-ական թթ.՝ 20 դեպք, 1970-ական թթ.՝ 37, 1980-ական թթ.՝ 23, ապա արդեն 1990-ական թթ.՝ ավելի քան 50 դեպք: Սանկցիաների մեծ մասը ԱՄՆ կողմից միակողմանի էր կիրառվել: Արդեն 21-րդ դարում Արևմտյան Եվրոպայի երկրները ԱՄՆ-ի նախաձեռնությամբ և վերջինիս հովանավորության ներքո ակտիվորեն մասնակցեցին այդ գործընթացներին:

Սանկցիաների կիրառման դեպքերի ավելացման հետ մեկտեղ 1990-ական թթ. հետազոտողների հետաքրքրությունն աճեց այդ երևույթի նկատմամբ, մասնավորապես՝ դրանց խոր տնտեսական էության, արդյունավետության վերլուծության, ինչը իր հերթին ենթադրում է տնտեսական սանկցիաները որպես տնտեսական կատեգորիա բնորոշելու անհրաժեշտություն:

Օտարերկրյա հեղինակները ընդհանուր առմամբ միասնական են տնտեսական սանկցիաների՝ որպես տնտեսական կատեգորիա բնորոշելու հարցում: Ալ-Կուդսում հետազոտությունների ինստիտուտի (Երուսաղեմ) հիմնադիր և տնօրեն Դաուդին սանկցիաները բնորոշում է միջազգային տնտեսական հարաբերությունների մասնակիցների, հատկապես միջազգային կազմակերպությունների կողմից նախաձեռնված պատժիչ գործողություններ, միակողմանի կամ խմբային գործողություններ՝ ուղղված իրենց կարծիքով միջազգային իրավունքը խախտող պետության դեմ և իրավախախտ պետությանը կանոնները պահպանելու, քաղաքականությունը փոխելուն հարկադրելու նպատակ է հետապնդում[3]:

Այս բնորոշմամբ սանկցիաների օբյեկտ-պետությունը «օրենք»-ը խախտողի դերում է հանդես գալիս, թեև հասկանալի չէ, թե ով երբ որտեղ և ում հետաքրքրություններին համապատասխան է ընդունել այդ օրենքը[4]:

Բրզեժինսկին հավաստիացնում է. «Համաշխարհային համաձայնությամբ չգործող միջազգային համակարգին բնորոշ է պետությունների միջև թշնամությունը»[5]:

Իր տեսակետը պաշտպանում են արևմտյան մի շարք հետազոտողներ:

Ամերիկացի քաղաքագետ Քեննեթ Նիլ Ուոլթսի կարծիքով դեռևս 1970-ական թթ. միջազգային մշտական բախումների պատճառն այն է եղել, որ կան բազմաթիվ սուվերեն պետություններ, որոնք չեն ենթարկվում վարքագծի կանոնների և օրենքների միասնական համակարգին և իրենց ձգտումները կամայական չորոշեին և ենթարկվեին օրենքների և վարքագծի կանոնների միասնական համակարգի, ապա միջազգային բախումներ չէին լինի:

Այդ բախումները, ըստ Մարգարետ Դոքսսի մոտեցման, տնտեսական սանկցիաները մեկ կառավարության՝ մյուսի վարքագծի վրա ազդեցության միջոց են դարձնում:

Որպես առանձին հասկացություն՝ օգտագործվում է «ՄԱԿ-ի սանկցիաներ» եզրույթը: Այդ սանկցիաները ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ կարող է կիրառել Անվտանգության խորհուրդը: Դրանք մեկնաբանվում են որպես միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնման կամ պահպանման հարկադրանքի

միջոցներ:

Արդեն 1980-ական թթ. արդիական են դառնում սանկցիաների լեգիտիմության և արդյունավետության հարցերը:

1990-ական թթ. աճեց սանկցիաների արդյունավետությանը վերաբերող գիտական հետազոտությունների քանակը, և սահմանվեց, որ տնտեսական սանկցիան առևտրային, ֆինանսական հարաբերությունները դիտավորյալ խարխլելը կամ դրա սպառնալիքն է, որը նպատակ ունի սանկցիայի օբյեկտ հանդիսացող պետության կենսամակարդակը իջեցնել:

Մասնավորապես՝ նորվեգացի սոցիոլոգ Իոհան Գալթունգը նշում է, որ սանկցիայի օբյեկտ պետության ազգային տնտեսության վրա քիչ թե շատ մասշտաբային տնտեսական ճնշումը այդ երկրի կառավարության քաղաքական ուղղությունը փոխելուն հարկադրելու նպատակ է հետապնդում[6]:

Այդ իսկ պատճառով արևմտյան հետազոտողների մի մասը ձգտում է գործոնները ընդհանրացնել և սանկցիաների արդյունավետության որոշակի չափանիշներ մշակել:

Լոնդոնի ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի փորձագետ Բ.Թեյլորը առանձնացնում է սանկցիաների արդյունավետության վերաբերյալ 3 հիմնական գիտական մոտեցումներ. «սանկցիաները չեն գործում», «սանկցիաները որպես արտաքին քաղաքականության սիմվոլիկ գործիք» և «սանկցիաները կարող են ապահովել դրված նպատակների իրագործումը»:

Առաջին մոտեցումը ներկայացված է «Տնտեսական սանկցիաների վերահիմաստավորումը, պատմությունը և ժամանակակից քաղաքականությունը» Պետերսոնի՝ միջազգային տնտեսության ինստիտուտի հետազոտողների խմբային մենագրության մեջ: Հետազոտողները եկան այն եզրահանգման, որ միջազգային տնտեսական սանկցիաները 100 վերլուծված դեպքից 1/3-ում են հասնում իրենց նպատակին: Ուստի, մնացած 2/3 դեպքերում ոչ արդյունավետ են:

Նույնանման դիրքորոշման կողմնակից է Գալթունգը: Նա նշել էր. «պատժողական քաղաքականության հաջողության հասնելու հավանականությունը ցածր է՝ ուշադրությունը հրավիրելով դրանց հիմնական նպատակի վրա՝ հակառակորդի քաղաքական անկայունությունը, ինչը հարկադրում է վերջինիս իր ազգային շահերը պաշտպանելուց հրաժարվել՝ սանկցիաների հետևանքով առաջացած տնտեսական կորուստների պատճառով[7]:

Մինչդեռ քաղաքական անկայունություն հասունանալու համար այդ կորուստների չափերը որոշելը հնարավոր չէ՝ պայմանավորված մի շարք գործոններով կամ պատճառներով, որոնց թվին առանձնացնում է հետևյալները.

Նախ «դրոշի շուրջ միավորման» տպավորության առաջացումը, ինչպես նաև սանկցիայի օբյեկտ հանդիսացող պետության ինչպես հոգեպես, այնպես էլ տնտեսական առումով նոր պայմաններին հարմարվելու հնարավորությունը, ինչը հաճախ հանգեցնում է քաղաքական էլիտայի շուրջ բնակչության հավաքվելուն՝ ամրապնդելով վերջինիս դիրքը և ազդեցությունը և նույնիսկ ոչ միայն իր երկրում, այլև ամբողջ աշխարհում: Նմանատիպ կարծիք ունեին Ջ. Մեյոլը[8] և Ա.Ադդիսը[9]:

Որպես հաջորդ գործոն, որը էապես նվազեցնում է սանկցիաների արդյունավետությունը, Գալթունգը նշում է դրանց իրագործման բարդ ընթացակարգը և առաջին հերթին միջազգային տնտեսական հարաբերությունների գերիշխող սուբյեկտների կողմից կիրառվող ընդհանուր մեխանիզմը, որը պայմանավորում է նրանց ռազմավարության անհետևողականությունը և սանկցիայի օբյեկտ պետության առջև մեծ հնարավորություն է ստեղծում հակազդման սեփական միջոցների համար: Ընդ որում՝ Գալթունգի կողմից տեսականորեն ներկայացված այդ հնարավորությունը իր հաստատումը ունեցավ:

Այսպես. 2014թ. Ռուսաստանի էներգետիկ ընկերությունների նկատմամբ զարգացած պետությունների կողմից տնտեսական սանկցիաների կիրառումը հանգեցրեց Եվրոպական միության երկրներ ռուսական հեղուկ գազի արտահանման նվազմանը՝ 2012 թվականի 68,2 մլրդ խորանարդից 2015 թվականին իջնելով 55 մլրդ խորանարդի: 2016 թվականին եվրոպական շուկայում հայտնվեց ԱՄՆ-ից արտահանվող հեղուկ գազը, ընդ որում՝ ամերիկյանը տրանսպորտային ծախսերով պայմանավորված 20 %-ով ավելի թանկ էր ռուսականից (ԱՄՆ 6.29 դոլար 4.86-ի դիմաց նույն միավորի համար):

ԱՄՆ-ից նավթի արտահանումը Եվրոպա ևս զգալի աճեց, ընդ որում՝ կրկին 15-20 %-ով ռուսականից բարձր գնով:

Էներգակիրների գնի բարձրացմամբ պայմանավորված՝ եվրոպական արտադրության, բնակարանային-կոմունալ ծառայությունների գինը ևս աճում է և կաճի, ինչը էականորեն կնվազեցնի եվրոպական տնտեսության մրցունակությունը միջազգային շուկայում:

Գլոբալիզացիայի պայմաններում արագ տեմպերով աճում է պետությունների փոխկապակցվածությունը, շուկայական տնտեսությունն ավելի խոցելի է դառնում՝ սերտորեն միախառնվելով գործընկեր պետությունների տնտեսություններին և ձևավորելով մեկ միասնական, ամբողջական համակարգ: Եվ եթե այդ համակարգի տարրերից մեկը բացասական իրավիճակում հայտնվի, ապա ամբողջ համակարգը դժվարություններ կունենա:

Ժամանակակից իրողության վերլուծությունը

հնարավորություն է տալիս առանձնացնել երրորդ գործոնը, որը կրկին էականորեն սանկցիայի արդյունավետությունը նվազեցնում է, այն է՝ տնտեսական կորուստների ձևով բացասական ազդեցությունը ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետության վրա, այլև հենց սանկցիա կիրառող պետությունների վրա, որն էլ ազդում է միջազգային տնտեսության համակարգի վրա: Տնտեսական կապերի խզման, փոխադարձ առևտրի և ներդրումների կրճատման առումով տնտեսական սանկցիաները ավելացնում են միջազգային տնտեսական հարաբերությունների անկայունությունը և անկանխատեսելիությունը, ինչպես նաև իրենց տնտեսական կորուստները կրճատելու միջազգային տնտեսական հարաբերությունների սուբյեկտների ձգտումը:

Քննարկենք 2-րդ տարբերակը՝ «սանկցիաները որպես արտաքին քաղաքականության սիմվոլիկ գործիք»: Այդ տեսակետի ներկայացուցիչները դիտարկում են այդ գործիքը սանկցիայի օբյեկտ հանդիսացող պետությանը, ինչպես նաև միջազգային հանրությանը կոնկրետ նախազգուշացում տալու համատեքստում[10]: Իրենց ուշադրության կենտրոնում մշակութային, սպորտային և քաղաքական սանկցիաներն են:

Սակայն ժամանակակից պայմաններում արևմտյան երկրների կողմից սանկցիաների կիրառումը հաստատում է, որ աշխարհի պետությունների ազգային տնտեսությունների շարունակվող միաձուլման և փոխազդեցության մեծացման պայմաններում քաղաքական սանկցիաները փոխարինվում են գույքային-տնտեսականով, որոնք նաև քաղաքական ոլորտում են պայքարի միջոցի վերածվում:

Դրա հետ մեկտեղ տնտեսական սանկցիաների հիմնական մասը կազմում է առևտրայինը, ընդ որում՝ սանկցիաներ նախաձեռնող պետությունները Առևտրի համաշխարհային կազմակերպության երկրներն են՝ ԱՄՆ, ԵՄ երկրներ: Աշխարհում տարածում գտած այդ պրակտիկան Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոնները խախտում է՝ այդ կերպ խարխլելով այդ կազմակերպության գործունեության հիմունքները: Դա հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ տնտեսական սանկցիաները միջազգային տնտեսությունում մրցակցային պայքարի գործիք են՝ նույնիսկ Առևտրի համաշխարհային կազմակերպության երկրների միջև:

Երրորդ մոտեցումը՝ «սանկցիաները կարող են ապահովել դրված նպատակների իրագործումը», նույնպես համախոհներ ունի: Որոշ հեղինակներ կարծում են, որ սանկցիաների կիրառման աշխարհագրության ընդլայնումը, կիրառման թվաքանակի աճով սանկցիաները վերածում է մրցակցային պայքարի գործիքի՝ շրջանցելով Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոնները:

Ճապոնացի գիտնական Միյագավան, ով մեծ ներդրում ունի սանկցիաների տեսության մշակման և դրանց արդյունավետության ուսումնասիրության գործում, կարծում է, որ արդյունավետության մակարդակը կախված է երեք գործոնից. միջազգային առևտրից կախվածության մակարդակից (ուղիղ կախվածություն), ազգային տնտեսության զարգացվածության մակարդակից (հակադարձ կախվածություն), սանկցիաների կիրառման գործընթացում սանկցիայի օբյեկտ պետության առևտրային գործընկեր երկրների ներգրավվածությունից: Դրա հետ միասին ենթադրվում է, որ պետությունը միջազգային տնտեսական հարաբերություններում հանդես է գալիս որպես ռացիոնալ գործող սուբյեկտ[11]:

Իհարկե, 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Իրանի, ինչպես նաև Իրաքի, ՌԴ փորձերը ցույց տվեցին, որ եթե գխավոր արտաքին տնտեսական գործընկերները տնտեսական սանկցիաներ են կիրառում, ապա պրոգրեսիայով կարող են ավելանալ նաև կորուստները, ընդ որում՝ սանկցիայի կիրառման գործընթացին մասնակցող բոլոր սուբյեկտների համար՝ հատկապես եթե սանկցիայի օբյեկտ պետությունը տնտեսական մեծ պոտենցիալ ունի:

Միևնույն ժամանակ արևմտյան հետազոտողների մի մասը հավաստիացնում է, որ հենց սանկցիաների կիրառման բավական մեծ արդյունավետությունն է դրանց կիրառման թվաքանակի աճը պայմանավորում:

2014-2017թթ. ռուսական գիտական գրականության մեջ ուշադրությունը հրավիրվում է ինչպես գլոբալիզացիայի պայմաններում տնտեսական սանկցիաների կիրառման տեսական կողմի վրա, այնպես էլ արդեն նյութական առումով առանձին երկրների ազգային տնտեսությունների վրա սանկցիաների ազդեցությանը:

Գործող կարծիքների և նյութերի հիման վրա կարելի է ասել, որ գիտական գրականությունը արտահայտում է հեղինակների միասնականությունը սանկցիայի բնութագրման վերաբերյալ՝ **տնտեսական ճնշում, հարկադրանքի միջոց, որը մի պետության կամ պետությունների խմբի կողմից ուղղված է մյուսի դեմ՝ վերջինիս հարկադրելու փոխելու իր տնտեսական քաղաքականությունը առավել քիչ կամ զգալի տնտեսական վնաս հասցնելու միջոցով՝ այն ուղղությամբ, որն առավել շահավետ է սանկցիա կիրառող կողմի համար**:

Դրա հետ մեկտեղ սանկցիաների կիրառման ժամանակակից պրակտիկան ցույց է տալիս, որ տնտեսական սանկցիաները հարկադրելու գործիքներից վեր են ածվում մրցակցային պայքարի գործիքի բոլոր տնտեսական և քաղաքական հետևանքներով ոչ միայն սանկցիայի օբյեկտ պետության համար, այլև միջազգային ողջ տնտեսու-

www.ardaradatutyunjournal.com

թյան, ինչը, ի տարբերություն ռուսական գրականության, արևմտյան հետազոտողների աշխատություններում չի հիշատակվում:

Ռուս և արևմտյան հետազոտողների մոտեցումներում կան տարբերություններ:

Ինչպես երևում է աղյ.1-ից, արևմտյան հեղինակները սանկցիայի հիմնական պատճառ նշում են բազմաթիվ ինքնիշխանությունների առկայությունը, պետությունների միջև թշնամությունը, որը դարեր ի վեր գոյություն ունի և օբյեկտիվ իրականություն է:

Ռուս հեղինակները սանկցիաների խորքային պատճառները բացատրում են որպես սանկցիա կիրառող պետության շահերին չհամապատասխանող քաղաքականության վարում սանկցիայի օբյեկտ պետության կողմից:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ժամանակակից տնտեսությունում սանկցիաների հաճախակի կիրառումը կարող է հանգեցնել սանկցիայի օբյեկտ պետության կողմից տնտեսական պատժի, հարկադրանքի ենթարկելու փորձերին, սանկցիա կիրառած պետության նկատմամբ ոչ ցանկալի գործողությունների կիրառմանը և դրանց հետագա կիրառումը նաև մյուս պետությունների կողմից թույլ չտալուն: Իսկ սանկցիա կիրառող պետությունները վճռականություն են արտահայտում իրենց գործողություններով պաշտպանելու իրենց ազգային տնտեսական, քաղաքական, տարածքային շահերը ազգային և միջազգային մակարդակներում: Դրա հետ մեկտեղ սանկցիաները որպես կանոն ուղղված են սանկցիայի օբյեկտ պետության «թույլ կողմեր»-ին՝ բացառությամբ այն ոլորտների, որոնք սանկցիա կիրառող պետության շահերն են սպասարկում:

«Բացարձակ մրցակցության» պայմաններում, որը հետազոտողները բնութագրում են որպես կապիտալի և խոշոր շահույթների ստացման համար պայքարի ուժեղացում, մեկ սուբյեկտի օգուտը մյուսների կորուստներն են[12]: Գլոբալիզացիայի պայմաններում լայն տարածում ստացան մրցակցության ուժային մեթոդները: Դրանց թվում կարող են օգտագործվել այնպիսի տնտեսական մեթոդներ, ինչպիսիք են հումքի շուկայից, վարկերից մրցակցին զրկելը և այլն:

Դրա համատեքստում գալիս ենք եզրահանգման, որ տնտեսական սանկցիաները պետությունների միջև տարբեր ոլորտներում մրցակցային պայքարի ձև են, որոնք պետությունների, առանձին շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ոչ համաչափ զարգացման գլոբալիզացիայի պայմաններում դուրս են գալիս միջազգային շուկա և առավել նվազ ծախսերի շնորհիվ (օրինակ՝ աշխատանք և բնական ռեսուրսներ) շուկայում առավել մրցունակ են դառնում: Ուստի, գլոբալիզացիայի պայմաններում սանկցիաները մրցակցային պայքարի գործիքի են վերածվում:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին համապատասխան կիրառվող ուժի կիրառման հետ չկապված սանկցիաները օրինական են: Նույնը կարելի է ասել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից թույլատրված առանձին պետությունների կողմից կիրառվող սանկցիաների մասին, եթե այդ թույլտվությունը համապատասխանում է ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխով սահմանված պահանջներին: Նման կերպ պետությունների ինքնիշխանության և գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները տնտեսական սանկցիաներ կիրառելու արգելք չեն դառնում, սակայն ամեն դեպքում տնտեսական սանկցիաների օրինականությունը կախված է լինում համաչափության սկզբունքի պահպանումից և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներից: Նույն սկզբունքները վերաբերում են նաև հակազդման միջոցներին: Եթե հակազդման միջոցներ կիրառած պետությունը հակահիրավական արարքների արդյունքում անմիջականորեն չի տուժել, իրավական վիճակը առավել բարդանում է: Թեև երրորդ պետություններն իրավունք ունեն այլ երկրներին իրենց ստանձնած պարտավորությունները խախտելու համար պատասխանատվության կանչելու, սակայն իրավական դաշտը անորոշ է, այսինքն՝ արգելք կամ թույլտվություն չկա:

b. Միջազգային տնտեսության գլոբալիզացիան և վերջինիս ազդեցությունը տնտեսական սանկցիաների արդյունավետության վրա

Միջազգային տնտեսությունը բնութագրվում է սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությամբ, որի արդյունքն է միջազգային շուկայում պետությունների միջև մրցակցության սրացումը: Միջազգային տնտեսության և առանձին ազգային տնտեսությունների տնտեսական ոչ համաչափ զարգացումը վերջին 45 տարիներին հանգեցրեց նրան, որ զարգացած երկրների տնտեսական գերակայությունը հետզհետե նվազում է, ինչպես երևում է աղյ. 2-ից:

Զարգացած երկրների տնտեսական գերակայության թուլացումը գլոբալիզացիայի պայմաններում դրսևորման մի քանի ձև ունի: Եվ չնայած զարգացած երկրները ներկայումս ևս ապահովում են միջազգային ՀՆԱ-ի 1/2 բաժինը, նրանց մասնաբաժինը կրճատվում է, ինչպես երևում է աղյ. 2-ից և հատկապես առավել արագ՝ 21-րդ դարում: 2017 թվականին 1970 թվականի համեմատությամբ 69,7 %-ից նվազել է 57,7 %-ի: Դրան համապատասխան զարգացող երկրների մասնաբաժինը նույն ժամանակահատվածում երկու անգամ ավելացել է՝ 17,1 %-ից դառնալով 39,7 %:

Եթե զարգացող երկրների ՀՆԱ-ի զարգացման դինամիկան դիտարկենք՝ չներառելով ՉԺՀ-ն, ապա 1970-ից 2017 թվականներին ավելացումը եղել է 14,4 %-ից 24,9%: Դրամային արտահայտությամբ աճը ավելացել է 40,6 անգամ՝ 490,356-ից դառնալով 19,901,938 մլն դոլար:

Ընդհանուր առմամբ միջազգային ՀՆԱ-ն 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ աճել է 5,4 %-ով՝ զարգացած երկրներում 4,9 %-ով, իսկ զարգացող երկրներում՝ բացառելով ՉԺՀ-ն, 5,5 %-ով:

Հետզհետե նվազում է զարգացած երկրների մասնաբաժինը միջազգային առևտրաշրջանառությունում զարգացող երկրների առևտրաշրջանառության աճին համապատասխան՝ բացառությամբ 2015-2017թթ.: Սակայն նշված գործընթացը ոչ գծային է. 1970 թվականին միջազգային առևտրում զարգացած երկրների մասնաբաժինը 76,3 % էր, 2010 թվականին՝ 53,9 %, 2017 թվականին՝ 54,2 %:

Առևտրի միջազգային կազմակերպության փորձագետների գնահատմամբ մոտ 89 զարգացող երկիր 21-րդ դարի առաջին տասնհինգ տարում ավելացրել են իրենք արտաքին առևտրային քվոտան: Դրան նպաստեցին առևտրային արգելքների կրճատումը, կապի և տեղափոխման ծառայությունների գների իջեցումը, զարգացող երկրների՝ հատկապես Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Բրազիլիայի, Սինգապուրի, Կորեայի, Նիգերիայի ազդեցությունը միջազգային և տարածաշրջանային մատակարարումների շղթաներում՝ ինչպես միջանկյալ և ներդրումային ապրանքների ներմուծումների, այնպես էլ մշակված ապրանքների արտահանումների առումով:

Այդ միտումը արդիական է ոչ միայն միջազգային առևտրի ոլորտում, այլև կապիտալի միջազգային միգրացիայի գործընթացներում[13]:

Այդ կերպ նկատելի է դառնում զարգացող երկրների մասնաբաժնի ավելացման միտումը համախառն արտադրանքում, միջազգային առևտրում և կապիտալի միջազգային միգրացիայում, թեև այդ գործընթացը հակասական է՝ միջազգային տնտեսության ընդհանուր միտումներին համահունչ: Միջազգային տնտեսական հարաբերությունների այդ ձևերում էլ կիրառվել և կիրառվում են տնտեսական սանկցիաները: Եվ չնայած զարգացած երկրները գերիշխող են միջազգային ֆինանսական համակարգերում, այդ համակարգերի ճգնաժամը ստիպում է զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին փնտրել և ձևավորել այլընտրանքային հնարավորություններ այդ ոլորտում: Հետևաբար, կարելի է խոսել նրա մասին, որ ԱՄՆ-ը և արևմտյան երկրները գլոբալիզացիայի պայմաններում հետզհետե կորցնում են վերահսկողության և միջազգային տնտեսության, առևտրի, կապիտալի միգրացիայի վրա ազդեցության որոշակի մասը: Եվ հաշվի առնելով, որ տնտեսական սանկցիաների մեծ մասի նախաձեռնողը հենց զարգացած երկրներն են, զարգացող երկրների ներկայությունը և ակտիվությունը ապրանքների, ծառայությունների և կապիտալի միջազգային շուկաներում (և դրան համապատասխան՝ այդ շուկաներում մրցակցության աճը) չէր կարող սանկցիաների կիրառման որակական և քանակական կողմի վրա չանդրադառնալ:

Ըստ էության, 1990-2000-ական թթ. սանկցիաների կիրառման դեպքերի աճը զարգացած երկրների՝ միջազգային տնտեսական համակարգում իրենց գերակայությունը պահպանելու և զարգացնելու, տնտեսական օգուտները և հնարավորությունները կայունացնելու, միջազգային տնտեսական հարաբերությունների այլ սուբյեկտների հաշվին իրենց շահերը պաշտպանելու փորձերի արդյունքն էր: Ընդ որում՝ դա բավականին բարդ է արվել և արվում:

Ընդհանուր առմամբ գլոբալիզացիան նկատելիորեն ազդել է աշխարհում սանկցիաների կիրառման պրակտիկայի, այդ թվում՝ դրանց արդյունավետության վրա, և ձևավորել է դրանց կիրառման առանձնահատկությունների շարք[14]: Օրինակ՝ սանկցիաների կիրառման քանակական աճը: Եթե 1950-ական թթ. արձանագրվել էր սանկցիայի կիրառման 15 դեպք, 1960-ական թթ.՝ 20 դեպք, 1970-ական թթ.՝ 37, 1990-ական թթ.՝ 50 դեպք, ապա 2017 թվականին սանկցիաները կիրառվում էին Երկիր մոլորակի 2/3-ը զբաղեցնող երկրների նկատմամբ: Դրա պատճառը «…գլոբալիզացիայի պայմաններում միջազգային տնտեսությունում հակասությունների աճը և սեփական տնտեսական համակարգերը միջազգային ճգնաժամից պաշտպանելու որոշ երկրների ցանկությունն է, քաղաքական անհամաձայնությունները բացահայտում են ինտեգրացիոն գործընթացների հակասությունները: Այդ հակասությունները հետևյալին են հանգում. մի կողմից գլոբալիզացիան՝ որպես օբյեկտիվ գործընթաց, նպաստում է մեկ ամբողջական շուկայական գլոբալ տարածության ձևավորմանը, որում ներգրավված են համաշխարհային տնտեսության բոլոր սուբյեկտները: Մյուս կողմից գլոբալիզացիան հանդես է գալիս որպես տնտեսական քաղաքականության իրականացման որոշակի ձև, որը գերիշխող պետությունների (ԱՄՆ, Եվրոպական միություն), խոշոր անդրազգային կորպորացիաների, միջազգային ֆինանսական և առևտրային կազմակերպությունների (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Արժույթի միջազգային հիմնադրամ) կողմից է իրականացվում և ուղղված է իրենց շահերի սպասարկմանը[15]:

Արևմտյան երկրների կողմից արագ զարգացող պետությունների և նրանց կառավարողների դեմ սանկցիաների կիրառման քաղաքականության

ուժեղացումը, օրինակ՝ Իրանի և ՌԴ դեմ, ըստ մեզ, բացատրվում է միջազգային տնտեսությունում պետական և տարածաշրջանային մակարդակներում սոցիալ-տնտեսական զարգացման ոչ համաչափ լինելով և որպես դրա հետևանք՝ միջազգային շուկաներում մրցակցային պայքարով, միջազգային տնտեսական կազմակերպությունների՝ միջազգային տնտեսությունում արևմտյան երկրների գերիշխող դիրքը և բարձր եկամուտներն (որոնք 20-րդ դարում ապրանքների և կապիտալի արտահանումից էին քաղել) ապահովելուն անզոր լինելով: ԱՄՆ-ի կողմից սանկցիայի թիրախ հանդիսացող պետությունների մեծ մասը օժտված է նավթի և գազի արդյունահանման պոտենցիալով և նավթագազային անդրազգային կորպորացիաների համար հետաքրքրություն է ներկայացնում[16]:

Ինչ վերաբերում է սանկցիաների տեսակներին, ապա հարկ է նշել, որ առաջին տնտեսական սանկցիաների կիրառումից ի վեր դրանց քանակն ավելացել է: Սանկցիաների կիրառման փաստն արձանագրվել է պատմաբանների կողմից և վերագրվում է դեռևս մ.թ.ա 423 թվականին, երբ աթենացիները արգելեցին մեգարական առևտրականներին[17] մուտք գործել իրենց նավահանգիստներ և առևտուր անել: Սակայն նոր տեսակներ հայտնվելու հիմնական ժամանակաշրջանը 20-րդ դարի վերջ-21-րդ դարի սկիզբն էր: Աղյ.3-ում ներկայացված են, թե ինչպիսի սանկցիաներ են կիրառում գերտերությունները՝ ԱՄՆ և ԵՄ երկրներ: Մասնավորապես՝ ներկայացված է ներկայումս կիրառվող սանկցիաների միայն մի մասը: Սանկցիաների բոլոր առանձին տեսակները կարելի է բաժանել 3 խմբի.

1. Համընդգրկուն - դրանք տնտեսական սանկցիաներ են, որոնք ամբողջությամբ արգելափակում են առևտրային և ֆինանսական բոլոր տեսակի գործընթացները, օրինակ՝ Կուբայի տնտեսական էմբարգոն, որը Միացյալ Նահանգների կողմից էր կիրառվել:

2. Ոլորտային - դրանք տնտեսական սանկցիաներ են, որոնք կիրառվում են տնտեսության առանձին ոլորտների կամ առանձին խմբերի դեմ, օրինակ՝ Միացյալ Նահանգների սանկցիաները ռուսական վարկային կազմակերպությունների դեմ:

3. Հասցեական (կետային) - տնտեսական սանկցիաներ, որոնք սահմանափակում են առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ֆինանսական և առևտրային գործընթացների իրականացման հնարավորությունը: Հասցեական սանկցիաները առավել հաճախ կիրառվող սանկցիաներն են, որոնք իրականացվում են առանձին ֆիզիկական անձանց մուտքն արգելելով, սպառազինության և ռազմական տեխնիկայի մատակարարման արգելքով:

Գլոբալիզացիան, դիվերսիֆիկացնելով արտահանման և ներկրման շուկաները, աշխարհագրական առումով խթանելով աշխարհի երկրների միջև փոխադարձ կապը և փոխազդեցությունը, սանկցիաների կիրառման արդյունավետությունը դարձնում է առավել բարդ, քանի որ յուրաքանչյուր պետության համար հայտնվում են այլընտրանքներ՝ ապրանքների, ծառայությունների և կապիտալի ներկրման և արտահանման համար: Միջազգային տնտեսության գլոբալ բնույթը զարգացած երկրների համար բարդացնում է առևտրի և ծառայությունների, կապիտալի, մտավոր սեփականության արդյունքների հոսքի նկատմամբ սահմանափակումների կիրառումը և պահպանումը[18]: Գլոբալիզացիայի և արտադրության աճը խթանող գործոնների պայմաններում կարող են ձևավորվել նոր արտադրական-իրացման շղթաներ և դրանց օղակներ, այդ թվում՝ առավել կարևոր ճյուղերում: Օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին առևտրի աշխարհագրական բազմազանության շնորհիվ էականորեն մեղմվեցին սանկցիաների բացասական հետևանքները իր ազգային տնտեսության վրա:

Մյուս կողմից գլոբալիզացիայի ֆինանսական, նորարարական և տեղեկատվական բաղադրիչները թույլ են տալիս առավել հեշտ վերահսկել միջազգային վճարումները և ֆինանսական հոսքերը, ինչը զարգացած երկրներին՝ պահեստային վալյուտաների տերերին, հնարավորություն է տալիս խառնվելու միջազգային տնտեսության ֆինանսական և մյուս ոլորտներին և արգելափակել առևտրային գործընթացները ֆինանսական ոլորտի միջոցով[19]:

Բացի այդ, պետությունները փորձում են սանկցիաների կիրառմանը մասնակից դարձնել հնարավորինս շատ թվով պետությունների և կազմակերպությունների: Օրինակ՝ եթե 20-րդ դարում սանկցիաները կիրառվում էին ԱՄՆ-ի կողմից միայն, ապա 21-րդ դարում արդեն ԱՄՆ-ը ձգտում է սանկցիայի կիրառման գործընթացը համաշխարհային դարձնել՝ ներգրավելով նաև միջազգային կազմակերպությունների, ինչպիսին են ՄԱԿ-ը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, որպեսզի վերջիններս ևս սանկցիա կիրառեն սանկցիայի օբյեկտի նկատմամբ:

Գոյություն ունեն նաև այլ օրինակներ: ՉԺՀ-ը, կիրառելով տնտեսական սանկցիաներ, ինքնուրույն է գործում և այդ գործընթացում չի ներգրավում միջազգային տնտեսական հարաբերությունների այլ սուբյեկտների, ինչը նշել են մի շարք հեղինակներ իրենց աշխատություններում: Օրինակ՝ 2012 թվականի գարնանն այն բանից հետո, երբ Սինծիան-ույղուրական ինքնիշխան շրջանի ազգային կառավարության նախագահ Նուր Բերին հանրայնացրեց ույղուրական տեռորիստների և

Պակիստանի միջև սերտ կապը, հետ կանչվեց Իրան-Պակիստան գազամուղի ֆինանսավորման չինական առաջարկը[20]: Նման կերպ են վարվում նաև աշխարհի այլ երկրներ, ինչ արդյունքում կարող ենք եզրակացնել, որ այս կամ այն երկրի նկատմամբ սանկցիաների կիրառման համընդհանուր մոտեցման ձևավորումը օբյեկտիվորեն անհնար է, քանի որ բազմաթիվ տնտեսվարող բազմաթիվ սուբյեկտների շահերին հակասում է: Օրինակ՝ չնայած ԵՄ երկրների կոչերին՝ Լատինական Ամերիկայի երկրներն ակտիվացրին Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը պարենի և գյուղատնտեսական հումքի արտահանման ոլորտում: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, առավել հաճախ են տարաձայնություններ առաջանում դաշնակիցների միջև սանկցիաների կիրառման գործընթացում:

Դրա հետ կապված կարելի է առանձնացնել գլոբալիզացիայի պայմաններում սանկցիաների կիրառման նաև մեկ առանձնահատկություն, այն է՝ սանկցիաների կիրառման գործընթացում միջազգային ընդհանուր մեխանիզմի և իրավական հիմքերի բացակայությունը: Իսկ այդ մեխանիզմի բացակայությունը միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից պահպանվող միջազգային տնտեսական համակարգի վրա է ազդում:

Մինչ ռուս-ուկրաինական պատերազմը թեև ԱՄՆ-ը և Եվրոպական միության երկրները փորձեցին հնարավորինս նույնանման դարձնել ՌԴ նկատմամբ իրենց կողմից կիրառվող սանկցիաների կիրառման գործընթացները, միևնույնն է, ԱՄՆ և Եվրոպական միության կիրառած սանկցիաների միջև գոյություն ունեն մի շարք տեխնիկական տարբերություններ: Առավել ակնառու տարբերություններից է ԵՄ սանկցիաների պայմաններում պայմանագրերի կատարման շարունակականության ապահովումը, ինչը հնարավորություն է տալիս Եվրոպական միության ընկերություններին շարունակել կատարել մինչ սանկցիաների կիրառումը կնքված պայմանագրերը: Դա թույլ է տվել եվրոպական էներգետիկ ընկերություններին, օրինակ՝ Էնի, շարունակելու 2014 թվականից առաջ սկսված նավթային ծրագրերի ուղղությամբ ակտիվ աշխատանքը՝ ի տարբերություն ԱՄՆ ընկերությունների, որոնք ստիպված եղան դադարեցնելու ռուսական ստորջրյա, թերթաքարային նավթի մշակումներին իրենց մասնակցությունը[21]:

Որպես առանձնահատկություն՝ կարելի է նշել նաև սանկցիաների խախտման համար սանկցիա նախաձեռնած պետության կողմից պատասխանատվության միջոցի կիրառումը: Պատժի առավել խիստ մեթոդներ են մշակված ԱՄՆ-ում, ընդ որում՝ այն տարածվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կոնտրագետների վրա: Եթե խոսքը վերաբերում է քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, ապա 250 հազար ԱՄՆ դոլար կամ պայմանագրի գնի կրկնապատիկը, քրեաիրավականի դեպքում՝ 1 մլն դոլար կամ ազատազրկում՝ մինչև 20 տարի ժամկետով, վարչական ներգործության միջոցները կարող են ենթադրել օտարերկրյա ընկերություններին ԱՄՆ-ի կամ ԱՄՆ անձանց մասնակցությամբ առևտրային գործընթացներին մասնակցելուց զրկելը:

2012 թվականին բրիտանական բանկ HSBC-ն վճարեց 1,92 մլրդ դոլար տուգանք ԱՄՆ-ին Իրանի, Լիբիայի, Բիրմայի և Սուդանի փոխանցումների հետ կապված, իսկ այդ երկրները տարբեր պատճառներով (ահաբեկչության ֆինանսավորում, մարդու իրավունքների խախտումներ և այլն) ԱՄՆ սանկցիաների ազդեցության տակ էին գտնվում[22]: 2014 թվականին ֆրանսիական ամենախոշոր բանկը ԱՄՆ-ին վճարեց 8,97 մլրդ դոլար տուգանք՝ Կուբայի, Իրանի և Սուդանի դեմ կիրառված սանկցիայի ռեժիմը խախտելու համար[23]:

Եզրակացություն

Ամփոփելով շարադրվածը՝ կարող ենք եզրահանգել, որ սանկցիաները, թեև միջազգային տնտեսական հարաբերություններում կիրառվող ներգործության միջոցներ են և կիրառվում են հարյուրամյակներ, սակայն միջազգային տնտեսության զարգացման ամեն փուլում ունեն որոշակի առանձնահատկություններ: Գլոբալիզացիայի պայմաններում որպես առանձնահատկություն կարելի է նշել քանակական աճը, արդյունքին հասնելու բարդ լինելը, կոլեկտիվ բնույթը, դրանց կիրառման մեխանիզմների և իրավական հիմքերի բացակայությունը: Գլոբալիզացիայի պայմաններում սանկցիաները վերածվում են զարգացած երկրների և զարգացող, անցումային տնտեսությամբ երկրների միջև մրցակցային պայքարի գործիքի՝ հատկապես 21-րդ դարում, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զարգացած երկրների կողմից ձևավորված համաշխարհային տնտեսական կառուցվածքները, այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, չեն կարողանում ապահովել իրենց բացառիկ գերիշխող դիրքը համաշխարհային տնտեսական համակարգում:

Նաև առանձին սուբյեկտների կողմից սանկցիաներին հակազդելու ուժեղացման միտում է նկատվում, ինչը «ընդգրկվում է» սանկցիայի՝ գլոբալիզացիայի և զարգացման անհամաչափության խորացման պայմաններում «մրցակցային պայքարի ձև» լինելու սահմանման մեջ:

www.ardaradatutyunjournal.com

Աղյուսակ 1

	Արևմտյան մոտեցում	Ռուսական մոտեցում
Սանկցիաների էությունը	Տնտեսական ներգործության միջոց, հարկադրանքի քաղաքական և տնտեսական գործիք	
Նախաձեռնողը	Պետությունը կամ պետությունների խումբը	
Պատճառը	Բազմաթիվ ինքնիշխան պետությունների առկայությունը և պետությունների միջև թշնամությունը	Սանկցիա կիրառող պետության շահերին հակասող քաղաքականության իրականացումը սանկցիայի օբյեկտ պետության կողմից
Նպատակը	Սանկցիայի օբյեկտ պետությանը հարկադրել փոխելու իր ներքին և կամ արտաքին քաղաքականությունը՝ իր տնտեսությանը վնաս պատճառելու եղանակով	
Ուղղվածությունը	Առևտուր, ֆինանսներ, արդյունաբերություն, կորպորացիաներ, ֆիզիկական անձինք	

Համաշխարհային ՀՆԱ և համաշխարհային առևտրաշրջանառության ծավալներ[1]

Աղյուսակ 2

Թվական	1970	1980	1990	2000	2010	2015	2016	2017
ՀՆԱ								
Աշխարհ	3 399 504	12 273 690	22 951 417	33 299 310	65 644 956	74 176 854	76 349 410	80 439 243
Զարգացած երկրներ	2 369 204	8 541 017	18 068 279	25 690 049	41 842 528	43 188 882	44 234 022	46 389 382
Մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում, %	69,7	69,6	78,7	77,1	63,7	58,2	57,9	57,67
Զարգացող երկրներ, այդ թվում՝ ՉԺՀ	580 006	2 720 475	4 005 345	7233 710	21 693 380	29 044 469	30 243 155	31 917 658
ՉԺՀ	89 650	305 346	398 624	1 214 915	6 066 351	11 158 457	11 382 057	12 015 720
Զարգացող երկրներ (բացառությամբ ՉԺՀ)	490 356	2 415 129	3 606 721	6 018 795	15 627 029	17 886 012	18 861 098	19 901 938
Անցումային տնտեսությամբ երկրներ	450 295	1 012 198	877 793	375 551	2 109 048	1 943 503	1 872 234	2 132 203
Մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում, %	13,2	8,2	3,8	1,1	3,2	2,6	2,5	2,7
Առևտրաշրջանառություն								
Աշխարհ	318 153	2 050 129	3 495 675	6 452 318	15 302 138	33 158 213	32 097 863	35 700 386
Զարգացած երկրներ	242 849	1 356 329	2 534 230	4243 212	8 254 560	17 901 955	17 711 396	19 339 613
Մասնաբաժինը համաշխարհային առևտրաշրջանառությունում	76,3	66,2	72,5	65,8	53,9	4.0	55,2	54,2
Զարգացող երկրներ, այդ թվում՝ ՉԺՀ	60 825	608 323	843 068	2 059 532	6 438 434	14 350 067	13 565 946	15 361 338
ՉԺՀ	4 586	38 040	115 436	474 227	2 974 001	3 953 034	3 685 592	4 107 163
Զարգացող երկրներ՝ բացառությամբ ՉԺՀ	56 239	570 283	727 632	1 585 305	3 464 433	10 397 033	9 880 354	11 254 175
Անցումային տնտեսությամբ երկրներ	14 479	85 478	118 378	149 573	609 145	906 190	820 521	999 436
Մասնաբաժինը համաշխարհային առևտրաշրջանառությունում	4,6	4.2	3,4	2,3	4.0	2,7	2.6	2.8

[1] Տե՛ս http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=96 (մուտք 19.08.2023թ.)

ԱՄՆ և ԵՄ կողմից կիրառվող սանկցիաների մի մասը[1]

Աղյուսակ 3

ԱՄՆ	ԵՄ երկրներ
1. Մուտքի արգելք	
Լիբիա, Իրան, Բոսնիա և Հերցեգովինա, Ռուսաստան, Վենեսուելա	Լիբիա, Սուդա, Հարավային Կորեա, Գվինեա, Իրան, Սիրիա, Բոսնիա և Հերցեգովինա, Կոնգո, Ռուսաստան, Մոլդովա, Եմեն, Զմբաբվե, Բուրունդի, Կոտ դ՛Իվուրա, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն,
2. Զենքի և ռազմական տեխնիկայի մատակարարման արգելք	
Հարավային Սուդան	Լիբիա, Մյանմա, Սոմալի, Սուդան, Հարավային Սուդան, Իրաք, Լիբիա, Լիբանան, Լիբերիա, Էրիթրեա, Սիրիա, Բելառուս, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չինաստան, Կոտ դ՛Իվուար, Կոնգո, Ռուսաստան, Զիմբաբվե
3. Ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքային ակտիվների սառեցում	
Լիբիա, Սոմալի, Սուդա, Հարավային Սուդան, Իրաք, Լիբանան, Լիբերիա, Իրան, Բուրունդի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Հյուսիսային Կորեա, Ռուսաստան, Կոնգո, Կոտ դ՛Իվուար, Եմեն, Զիմբաբվե, Վենեսուելա	Բոսնիա և Հերցեգովինա, Եգիպտոս

4. Հաշիվների սառեցում	
Սիրիա, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Ռուսաստան, Սերբիա, Չեռնոգորիա	Լիբիա, Սուդան, Հարավային Կորեա, Իրաք, Էրիթրեա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Իրան, Սիրիա, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Բուրունդի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Հյուսիսային Կորեա, Կոնգո, Կոտ դ՛Իվուար, Ռուսաստան, Եգիպտոս, Եմեն
5. Առևտրի վրա սահմանափակում	
Սուդան, Իրաք	Իրաք, Սիրիա, Հյուսիսային Կորեա, Ռուսաստան
6. Ֆինանսական օգնություն ցուցաբերելու և ներդրումների արգելք	
Մյանմա, Սիրիա, Ռուսաստան, Կուբա	Հյուսիսային Կորեա
7. Թանկարժեք մետաղների ներմուծման արգելք	
Հյուսիսային Կորեա	
8. Գործարքներ կատարելու արգելք	
Լիբիա, Մյանմա, Սուդան, Իրան, Սիրիա	Չկա
9. Պահանջների բավարարման արգելք	
Չկա	Հայիթի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Սերբիա, Չեռնոգորիա
10. Էներգետիկ սեկտորի համար ապրանքների ներկրման և արտահանման արգելք	
Սիրիա	Իրան, Սիրիա, Ռուսաստան
11. Միջուկային արդյունաբերության համար ապրանքների արտահանման արգելք	
Իրան	Իրան
12. Տեխնոլոգիաների արտահանման արգելք	
Ռուսաստան	Հյուսիսային Կորեա, Ռուսաստան

[1] Տե՛ս https://crsreports.congress.gov/ (մուտք 20.08.2023թ.)

[1] Տե՛ս, Гусаков Н.П., Шкваря Л.В., Влияние мировой экономики на развитие межстрановых торгово-экономических отношений в условиях глобализации // Научное обозрение, N 1, 2011թ., էջ 3-17:
[2] Տե՛ս, Гусаков Н.П., Внешнеэкономическая взаимозависимость в системе категорий современного мирового хозяйства. / Интеграция России в мировую экономику, Москва, РУДН, 2009թ., էջ 11:
[3] Տե՛ս, Melanina M., The Role of Sanctions in Modern Conditions of Globalization and their Impact on the Russian Economy // The Genesis of Genius, N 1, 2016թ. էջ 6-19:
[4] Տե՛ս, Кайгородов-Хамошин Р.А., Экономические санкции в мировой экономике и их эффективность в условиях глобализации // Экономика и предпринимательство, N 12-1 (77-1), 2016թ., էջ 161-164:
[5] Տե՛ս, Brzezinski Z., Between Two Ages: America's Role in the Technotronic Era, New York, 1970թ., էջ 282:
[6] Տե՛ս, Galtung J., On the Effects of International Economic Sanctions. With Examples from the Case of Rhodesia // World Politics, Volume 19, N 3, 1967թ., էջ 386:
[7] Տե՛ս, Galtung J., On the Effects of International Economic Sanctions. With Examples from the Case of Rhodesia // World Politics, Volume 19, N 3, 1967թ., էջ 386:
[8] Տե՛ս, Mayall J., The sanctions problem in international economic relations: Reflections in the light of recent experience. // International Affairs, N 60, 1984թ., էջ 631-642.
[9] Տե՛ս, Addis A., Economic Sanctions and the Problem on Evil // Human Rights Quarterly, N 25, 2003թ., էջ 573-623.
[10] Տե՛ս, Berman N., Berthou A., Hericourt J., Export dynamics and sales at home. // Journal of International Economics 96(2) 298-310, 2015թ.:
[11] Տե՛ս, Miyagawa M., Do Economic Sanctions Work? New York: St. Martin's Press, 1992թ., էջ 24-60:
[12] Տե՛ս, Хайек Ф. Конкуренция как процедура открытия. // Мировая экономика и международные отношения, N 12, 1989թ., էջ 10:
[13] Տե՛ս, http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=96 (մուտք՝ 19.08.2023թ.)
[14] Տե՛ս, Кайгородов-Хамошин Р.А., Экономические санкции в мировой экономике и их эффективность в условиях глобализации // Экономика и предпринимательство, N 121 (77-1) 2016թ., էջ 161-164:
[15] Տե՛ս, Меланьина М.В., Экономические санкции в условиях глобализации // Проблемы современной науки и образования, 2016թ. էջ 60-63:
[16] Տե՛ս, Редько Т.И., Осуществление нефтегазовой деятельности в Исламской Республике Иран в условиях режима экономических санкций США // Нефть, газ и право, N 4, 2013թ. էջ 51-54:
[17] Մեզարան Հին հունաստանի քաղաք պետություն էր (պոլիս), որը գտնվել է Աթենքի մերձակայքում:
[18] Տե՛ս, Кайгородов-Хамошин Р.А., Экономические санкции в мировой экономике и их эффективность в условиях глобализации // Экономика и предпринимательство, N 121 (77-1) 2016թ., էջ 161-164:
[19] Տե՛ս, Никитин Н.А., Рыжов И.В., Кротов А.Е. Экономические санкции в международных отношениях: история применения, анализ их результативности и последствий // Экономика и предпринимательство 8 (73), 2016թ., էջ 123-128:
[20] Տե՛ս, Меланьина М.В., Экономические санкции в условиях глобализации // Проблемы современной науки и образования 12 (54), 2016թ., էջ 60-63:
[21] Տե՛ս, Nevskaya A., Russia-EU economic relations: Assessing two years of sanctions, http://www.russia-direct.org/analysis/russia-eu-economic-relations-assessing-two-years- (մուտք՝ 22.08.2023թ.:
[22] Տե՛ս, https://www.independent.co.uk/news/uk/politics/george-osborne-intervened-in-hsbc-money- laundering-prob e-report-says-a7132171. html (մուտք՝ 24.07.2023թ.):
[23] Տե՛ս, https://ria.ru/20140701/1014215242.html (մուտք՝ 24.07.2023թ.):
[24] Տե՛ս, http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=96 (մուտք՝ 19.08.2023թ.)
[25] Տե՛ս, https://crsreports.congress.gov/ (մուտք՝ 20.08.2023թ.)

Գրականության ցանկ

1. Гусаков Н.П., Шкваря Л.В. Влияние мировой экономики на развитие межстрановых торгово-экономических отношений в условиях глобализации // Научное обозрение N 1, 2011.
Gusakov N.P., Shkvarya L.V. The influence of the world economy on the development of international trade and economic relations in the context of globalization //Scientific review N 1, 2011 (In Russian).
2. Гусаков Н.П. Внешнеэкономическая взаимозависимость в системе категорий современного мирового хозяйства. / Интеграция России в мировую экономику, Москва, 2009.
Gusakov N.P., External economic interdependence in the system of categories of the modern world economy. / Integration of Russia into the world economy, Moscow, 2009 (In Russian).
3. Кайгородов-Хамошин Р.А., Экономические санкции в мировой экономике и их эффективность в условиях глобализации // Экономика и предпринимательство, N 12-1 (77-1), 2016.
Kaigorodov-Khamoshin R.A., Economic sanctions in the world economy and their effectiveness in the conditions of globalization // Economics and Entrepreneurship, N 12-1 (77-1), 2016 (In Russian).
4. Хайек Ф., Конкуренция как процедура открытия. // Мировая экономика и международные отношения, N 12,

1989).
Hayek F., Competition as an opening procedure. // World economy and international relations, N12, 1989 (In Russian).
5. Меланьина М.В. Экономические санкции в условиях глобализации // Проблемы современной науки и образования, 2016.
Melanina M.V. Economic sanctions in the conditions of globalization // Problems of modern science and education, 2016 (In Russian).
6. Редько Т.И. Осуществление нефтегазовой деятельности в Исламской Республике Иран в условиях режима экономических санкций США // Нефть, газ и право, N 4, 2013.
Redko T.I. Implementation of oil and gas activities in the Islamic Republic of Iran under the conditions of the US economic sanctions regime // Oil, gas and law, N 4, 2013 (In Russian).
7. Никитин Н.А., Рыжов И.В., Кротов А.Е. Экономические санкции в международных отношениях: история применения, анализ их результативности и последствий // Экономика и предпринимательство 8 (73), 2016.
Nikitin N.A, Rijov I.V., Krotov A.E. Economic sanctions in international relations. история применения, Анализ их отзетивности и последствий // Economy and Entrepreneurship, 2016 (In Russian)
8. Addis A. Economic Sanctions and the Problem on Evil // Human Rights Quarterly, N 25, 2003.
9. Berman N., Berthou A., Hericourt J. Export dynamics and sales at home. // Journal of International Economics 96(2), 298-310, 2015.
10. Brzezinski Z. Between Two Ages: America's Role in the Technotronic Era, New York, 1970.
11. Galtung J. On the Effects of International Economic Sanctions. With Examples from the Case of Rhodesia // World Politics, Volume 19, N 3, 1967.
12. Mayall J. The sanctions problem in international economic relations: Reflections in the light of recent experience. // International Affairs, N 60, 1984.
13. Melanina M. The Role of Sanctions in Modern Conditions of Globalization and their Impact on the Russian Economy // The Genesis of Genius, N 1, 2016.
14. Miyagawa M. Do Economic Sanctions Work? New York: St. Martin's Press, 1992.
15. http://www.russia-direct.org/analysis/russia-eu-economic-relations-assessing-two-years- (վերջին այցելությյուն՝ 22.08.2023թ.):
16. https://www.independent.co.uk/news/uk/politics/george-osborne-intervened-in-hsbc-money- laundering-prob e-report-says-a7132171. html (վերջին այցելությյուն՝ 24.07.2023թ.):
17. https://ria.ru/20140701/1014215242.html (վերջին այցելությյուն՝ 24.07.2023թ.):
18. https://crsreports.congress.gov/ (վերջին այցելությյուն՝ 20.08.2023թ.)
19. http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=96 (վերջին այցելությյուն՝ 19.08.2023թ.):

Филиана Беллуян
Прокурор Управления по защите государственных
интересов Генеральной прокуратуры РА
Юридический факультет ЕГУ,
Кафедра европейского и международного права

РЕЗЮМЕ

Теоретические и практические аспекты применения экономических санкций в международных экономических отношениях

В работе освещены причины применения экономических санкций, сферы применения и их последствия.

Теоретические и практические проблемы применения санкций в международных экономических отношениях со второй половины XX века до начала XXI века, а также усиление санкционной политики западных стран в отношении быстро развивающихся стран, а также проблемы возникающие в этой области, были исследованы и проанализированы.

Вопросы, поднятые в работе и анализ, важны, учитывая тот факт, что экономические санкции в условиях глобализации наносят вред не только экономике санкционированного государства, но и мировой экономике, поэтому подчеркивается специфика применения санкций. имеет важное значение с точки зрения сохранения национальной экономики и определения основных направлений экономической политики.

В условиях глобализации среди особенностей санкций можно выделить количественный рост, рост

трудностей в достижении эффекта, коллективный характер, отсутствие механизма и правовых основ их применения. В условиях глобализации санкции превращаются в инструмент конкурентной борьбы между развитыми странами и развивающимися государствами и странами с переходной экономикой, особенно в XXI веке, когда созданные ими после второй мировой войны глобальные экономические структуры, и прежде всего ВТО, не могут уже обеспечить им безусловно лидирующего положения в системе мирового хозяйства.

***Ключевые слова**: Экономические санкции, развитые страны, развивающие страни, страни с переходной экономикой, глобализация.*

Filiana Belluyan
Prosecutor, Department for the Protection of State Interests,
Prosecutor General's Office of the Republic of Armenia
YSU Faculty of Law,
Department of European and International Law

SUMMARY

Theoretical and practical aspects of the application of economic sanctions in international economic relations

The work highlights the reasons for the application of economic sanctions, the areas of application and their consequences. The theoretical and practical problems of the application of sanctions in international economic relations from the second half of the 20th century to the beginning of the 21st century, as well as the strengthening of the sanctioned policy of Western countries against rapidly developing countries, and the problems arising in this field, have been researched and analyzed.

The issues raised in the work and the analysis are important, taking into account that economic sanctions in the conditions of globalization harm not only the economy of the sanctioned state, but also the international economy, therefore highlighting the specifics of the application of sanctions is important from the point of view of preserving the national economy and determining the main directions of economic policy. :

In the conditions of globalization, the quantitative increase, the complexity of achieving the result, the collective nature, the lack of mechanisms and legal bases for their application can be noted as a feature of sanctions.

In the context of globalization, sanctions are turning into a tool of competitive struggle between developed countries and developing countries with economies in transition, especially in the 21st century, when the global economic structures formed by developed countries after the Second World War, including the World Trade Organization, are unable to ensure their exclusive dominance, position in the world economic system.

***Key words**: Economic sanctions, developed countries, developing countries, countries with economies in transition, globalization.*

Ընդունվել է տպագրության 20.11.25թ.

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ Արդարադատության նախարարության
իրավական ակտերի փորձաքննության
գործակալության դատաիրավական օրենսդրության
փորձաքննության բաժնի պետ

«ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՊԵԿՏԸ

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում վերհանելու «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող «անձեռնմխելիություն» իրավական հասկացության պատմաիրավական զարգացման ասպեկտը, որի հիման վրա էլ ձևավորվել և ներկայումս էլ գոյություն ունի այդ իրավական հասկացությունը:

Սույն հետազոտության շրջանակներում մեր առջև խնդիր է դրված ուսումնասիրել «անձեռնմխելիություն» իրավական հասկացության պատմական ձևավորման հարցերը: Մենք կփորձենք բացահայտել դրա ծագման և ձևավորման օրենքները, ինչպես նաև վերլուծել մարդկային հասարակության զարգացան հիմնական պատմական ժամանակաշրջաններում այդ հասկացությունների կենսագործունեության փուլային առանձնահատկությունները: Կարծում ենք, որ դա հնարավորություն կտա հասկանալու այս երևույթների էական և բովանդակային նշանակությունն այսօր, և գուցե վաղուց հաստատված զարգացման օրինաչափությունները:

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական՝ մատերիալիստական, համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական, սոցիոլոգիական մեթոդները, այնպես էլ տրամաբանական մեթոդները՝ սինթեզը, անալիզը, անալոգիան, ինդուկցիա, դեդուկցիան և մի շարք այլ մեթոդներ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող «անձեռնմխելիություն» իրավական հասկացությունը ունի պատմական խորը արմատներ և առանց ներթափանցելու իրավունքի ծագման ժամանակաշրջանի վերաբերյալ գիտական քննարկման մեջ՝ կարելի է պնդել, որ առավելությունները՝ որպես որոշ մարդկանց մյուսներից տարբերվելու հնարավորություն, ի հայտ են եկել ավելի վաղ, քան իրավունքը:

Հիմնաբառեր *- իրավունք, առավելություն, անձեռնմխելիություն, իմունիտետ, արտոնություն, առանձնաշնորհություն, իրավահավասարություն:*

Ներածություն

Ժամանակակից իրավագիտության զարգացման պայմաններում առավել հաճախ ուսումնասիրվող հարցերից է իրավական առավելությունների՝ որպես իրավական համակարգում ինքնուրույն հասկացության էությունը և դրանց դերը պետաիրավական հարաբերությունների կայացման գործում: Դրանցից առանձնահատուկ նշանակություն ունի **«անձեռնմխելիություն» իրավական հասկացությունը**, որը ոչ միայն հանդիսանում է իրավական կարգավորման յուրահատուկ գործիք, այլև դարձել է հասարակական հարաբերությունների կայունացման կարևոր գործոն: **Անձեռնմխելիություն** փաստացի հանդիսանում է իրավական առավելությունների տեսակներից մեկը, որի պատմաիրավական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու իրավունքի էվոլյուցիայի կարևոր փուլերը:

Հոդվածի **արդիականությունն** պայմանավորված է նրանով, որ անձեռնմխելիության ինստիտուտը շարունակում է մնալ իրավական համակարգերի առանցքային բաղադրիչներից մեկը՝ ապահովելով պետական իշխանության որոշ սուբյեկտների գործունեության անկախությունն ու արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, դրա ծագման և զարգացման պատմաիրավական ընթացքի համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս հասկանալու՝ ինչպես է ձևավորվել իրավական առավելությունների գաղափարը և ինչպիսի նշանակություն ունի այն ժամանակակից իրավունքում:

Հոդվածի **գիտական նորույթը** կայանում է «անձեռնմխելիություն» հասկացության պատմաիրավական զարգացման փուլերի համապարփակ վերլուծության մեջ՝ այն դիտարկելով իրավական առավելությունների համակարգում որպես ինքնուրույն իրավաբանական կատեգորիա: Սույն հետազոտության ընթացքում առաջին անգամ փորձ է արվել համադրել հին իրավունքի, միջնադարյան

www.ardaradatutyunjournal.com

ֆեոդալական կարգերի և նոր շրջանի սահմանադրական համակարգերի համապատասխան նորմերը՝ բացահայտելով անձեռնմխելիության էվոլյուցիոն օրինաչափությունները:

Հոդվածի **նպատակն է** վերհանել և վերլուծել «անձեռնմխելիություն» իրավական հասկացության ձևավորման և զարգացման պատմաիրավական փուլերը՝ բացահայտելով դրա իրավաբանական բովանդակությունն ու նշանակությունը որպես իրավական առավելության տեսակ:

Հետազոտության **կառուցվածքը** ներառում է երեք հիմնական մաս.

- Առաջին մասում ներկայացվում է **իրավական առավելությունների դասակարգումը**, որտեղ առանձնացվում են դրանց հիմնական տեսակները՝ արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ:
- Երկրորդ մասում վերլուծվում է **«անձեռնմխելիություն» և «իմունիտետ» հասկացությունների իմաստային և իրավաբանական նշանակությունը**, ինչպես նաև դրանց տարբերությունը:
- Երրորդ մասում ուսումնասիրվում են **անձեռնմխելիության զարգացման պատմաիրավական փուլերը**՝ սկսած հռոմեական իրավունքի շրջանից մինչև ժամանակակից սահմանադրական համակարգեր:

Հետազոտությունը եզրափակվում է **եզրակացությամբ**, որտեղ ամփոփվում են ստացված արդյունքները և ձևակերպվում են տեսական հետևություններ ու գործնական առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել մի շարք հայրենական և արտասահմանյան գիտնականների տարաբնույթ աշխատությունները, միջազգային և ներպետական օրենսդրությունը: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել համացանցային մի շարք կայքեր և տեղեկատվական այլ աղբյուրներ:

Սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական՝ մատերիալիստական, համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական, սոցոլոգիական մեթոդները, այնպես էլ տրամաբանական մեթոդները՝ սինթեզը, անալիզը, անալոգիան, ինդուկցիան, դեդուկցիան և մի շարք այլ մեթոդներ:

Իրավական առավելությունների դասակարգումը

«Իրավական առավելություններ» հասկացության պատմաիրավական զարգացման ասպեկտին առավել նպատակահարմար ենք համարում անդրադառնալ ըստ դրանց տեսակների, մասնավորապես՝ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական առավելությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ տեսակների.

- արտոնություններ
- առանձնաշնորհություններ
- անձեռնմխելիություններ

Հիմք ընդունելով «իրավական առավելություններ» հասկացության տեսակների վերոնշյալ դասակարգումը՝ սույն հետազոտության մեջ անդրադարձ կկատարենք միայն «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող «անձեռնմխելիություն» իրավական հասկացության զարգացման պատմաիրավական փուլերին:

Ինչ վերաբերում է «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող՝ արտոնությունների և առանձնաշնորհությունների զարգացման պատմաիրավական փուլերին, ապա հարկ է նշել, որ սույն հետազոտությունը անհարկի չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ այդ հարցին անդրադարձ ենք կատարել մեկ այլ հետազոտությամբ:

«Անձեռնմխելիություն» և «իմունիտետ» իրավական հասկացությունների նշանակությունը

Լատիներենից «իմունիտետ» (immunitas) եզրույթը թարգմանվում է որպես ազատագրում, ազատում[1], անկախություն, անհնազանդություն[2]: «Իմունիտետ» հասկացության իմաստային նշանակությունը լայն է և բազմակերպ: Բժշկության մեջ այն հասկացվում է որպես մարմնի հակազդեցությունը պաթոգենների կամ որոշակի թույների, ինչպես նաև ցանկացած վարակիչ հիվանդության նկատմամբ[3]: Իրավաբանական տերմինաբանության մեջ «իմունիտետ», ըստ բառարանների, որոշակի ընդհանուր օրենքներին չհնազանդվելու բացառիկ իրավունք է, որը տրվում է պետության մեջ հատուկ պաշտոն զբաղեցնող անձանց»[4]:

Հայոց լեզվի բացատրական բառարանները «անձեռնմխելիություն» և «իմունիտետ» հասկացությունները ավանդաբար մեկնաբանում են հետևյալ կերպ.

Իմունիտետ, 1. (բժշկ.): Այս կամ այն հիվանդության անընկալունակություն, վարակամերժ հատկություն: 2. (դվնգ.): Անձեռնմխելիություն[5]:

Անձեռնմխելիություն, 1. Անձեռնմխելի լինելը: 2. (իրավաբ.): Պետության մեջ առանձնահատուկ վիճակ՝ դիրք ունեցող անձերի՝ որոշ օրենքների ենթակայությունից ազատ լինելը (իմունիտետ)[6]:

Վերոնշյալի արդյունքում կարելի է հստակ պնդել, որ հայրենական իրավաբանական գրականության մեջ այդ երկու հասկացությունների նույնացումը և միատեսակ կիրառությունը լիովին արդարացված է, ուստի սույն հետազոտության մեջ մեր կողմից կկիրառվի միայն «անձեռնմխելիություն» հասկացությունը:

«Անձեռնմխելիություն» իրավական հասկացության զարգացման պատմաիրավական փուլերը

Սկսած հռոմեական իրավունքի ժամանակնե-

րից անձեռնմխելիությամբ օժտված անձանց թվին, առաջին հերթին, պատկանում են օտարերկրյա պետությունների դեսպանները: Այսպիսով, ըստ Տիտոս Լիվիոսի, թշնամու դեսպանները, նույնիսկ նրանք, ովքեր նկատվել էին թշնամական գործողություններում, հռոմեացիների կողմից համարվում էին անձեռնմխելի՝ աստվածների և միջազգային իրավունքի կողմից իրենց տրամադրված պաշտպանության նկատմամբ հարգանքից ելնելով[7]: Հին հռոմեացի հայտնի իրավաբան Պոմպոնիուսը նույնպես խոսում է դեսպանների անձեռնմխելիության մասին, և այս առնչությամբ նրա խոսքերը հատուկ ուշադրության են արժանի. «Եթե ինչ-որ մեկը իր արարքով վիրավորի թշնամու դեսպանին, ապա նման արարքը ճանաչվում է որպես Միջազգային իրավունքի խախտում, քանզի դեսպանները համարվում են անձեռնմխելի»[8]:

Դեսպանի անձեռնմխելիության գաղափարը մեծապես կապված է իր աստվածների կողմից դեսպանի հատուկ պաշտպանության մասին հնագույն գաղափարների հետ: Դեսպանը շարունակում է օգտագործել իր հավատքը, ուղարկում է իր պաշտամունքը, նրա աստվածները հետևում են նրան օտար երկրներ և պաշտպանում նրան այնտեղ: Դեսպանն ապրում է օտար երկրում, ասես տանը, և դրանից բխում է, որ նրան չի կարելի վիրավորել, և նրան պետք է իրավունք տալ ապրելու իր սովորույթներով[9]:

Ֆեոդալական կազմավորումն առաջ քաշեց դեսպանի անձեռնմխելիության նոր, ավելի իրատեսական հիմնավորում: Դեսպանը դիտվում է որպես իր տիրոջ ներկայացուցիչ կամ մարմնավորում: Մեկ այլ տեր իշխանություն չի կարող ունենալ դեսպանի տիրոջ վրա, ուստի նա չի կարող իշխանություն ունենալ դեսպանի վրա:

Այդուհանդերձ, դեսպանական սովորույթային նորմերը կարելի է ասել, որ ներառում էին նաև երկիր ժամանած օտարերկրյա դիվանագետների անձեռնմխելիության գրավոր որոշ երաշխիքներ: Միևնույն ժամանակ, պատմականորեն դասավորվել է այնպես, որ ընդհանուր առմամբ դիվանագիտական անձեռնմխելիությունը միշտ դիտվում է որպես իրավական սահմանում՝ նախապես ամրագրված միջազգային իրավունքի սովորութային, ապա պայմանագրային նորմերում[10]:

Ֆեոդալիզմի ժամանակաշրջանին բնորոշ է «անձեռնմխելիություն» հայեցակարգի ավելի լայն մեկնաբանությունը:

Արևմտյան Եվրոպայի երկրների ֆեոդալական իրավունքում անձեռնմխելիությունը դիտարկվում էր հատուկ իրավական ինստիտուտ: Դրա բովանդակությունը պետական իրավունքների և գործառույթների ամբողջությունն էր, որ ունեցել է ֆեոդալը:

Նման ինստիտուտի ծագումը և գոյությունը պայմանավորված էր պետության քաղաքական մասնատվածությամբ, ուժեղ կենտրոնացված իշխանության բացակայությամբ, որը ստիպված էր ֆեոդալների համար ճանաչել այն իրավունքները, որոնցից նրանք իրականում օգտվում էին: «...Ֆեոդալական համակարգի բնորոշ առանձնահատկությունն այն ձևով, որով այն առաջացել է Ֆրանկական պետությունում, այնուհետև տարածվել ամբողջ Եվրոպայում (բացառությամբ Շվեդիայի, Նորվեգիայի և Ֆինլանդիայի, նշում է Է. Ապերսը), թե՛ ֆեոդալի, և թե՛ նրա պաշտոնյաների օրինական անձեռնմխելիությունն էր: Դա նույն չափով վերաբերում էր նաև եկեղեցիների ունեցվածքին: Թագավորական պաշտոնյաները նույնիսկ իրավունք չունեին ոտք դնելու ֆեոդալի կամ նրա վասալի հողի վրա: Նրանք նաև իրավունք չունեին նրանց հողերի վրա դատաստան կամ հաշվեհարդար իրականացնելու և նրանց հողերի վրա մահապատիժներ կազմակերպելու, այսինքն՝ իրավունք չունեին կատարել իրենց անմիջական և ծառայողական պարտականությունները այդ հողերում: Ֆեոդալների և նրանց վասալների հողերը ենթակա չէին պաշտոնական հարկերի»[11]:

Ֆեոդալական պետության հետագա զարգացումը նպաստեց անձեռնմխելիության հավատարմագրերի լայն տարածմանը, որի ուժով անձեռնմխելիության տիրոջը պատկանող տարածքը ամբողջությամբ կամ մասամբ հանվեց դատական, հարկային և վարչական գործերով պետական մարմինների իրավասությունից:

Այսպես, «Ռեսբախի վանքին Դագոբերտ Ա թագավորի հավատարմագրում» (635թ.) ուղղակիորեն ասվում է, որ «ոչ մի պետական դատական իշխանություն, ոչ ներկա, ոչ էլ ապագա, իրավունք չուներ մտնել վանքի այն հողերը, որոնց նկատմամբ տիրապետման իրավունքը երբևէ բխել էր (նրա համար) կա՛մ մեր առատաձեռնությունից, կա՛մ պարգևներից... դատական գործերի քննության կամ ինչ-որ բան բռնագրավելու համար...»:

«Մեցի եկեղեցուն Կարլոս Մեծի հավատարմագրի» (775թ.) համաձայն՝ «պետական պաշտոնյաներից ոչ ոք չի համարձակվի մտնել Մեցի եկեղեցու կալվածքը... և այնտեղ որևէ վնաս պատճառել, և նրանցից ոչ ոք չպետք է եկեղեցու ժողովրդին հրավիրի դատական ժողովների կամ չարամտորեն դատապարտի նրանց, գանձի դատական տույժեր և վճարներ, բայց եկեղեցու պաշտոնյաները պետք է գործերի ճիշտ քննություն իրականացնեն նշված եկեղեցականներից յուրաքանչյուրի համար և, միևնույն ժամանակ, իրենց անձնական դատական նիստերում այլ մարդկանցից իրենց օգտին բավարարում ստանան, և այն դեպքերում, երբ եկեղեցու այդ պաշտոնյաները կամ այլ մարդիկ ընդունում են երաշխիքները, դատական տուգանքները պետք է ուղղվեն սրբերի այս վանքը մեծացնելուն, այնպես,

www.ardaradatutyunjournal.com

ինչպես, եթե եկեղեցու մարդիկ ինչ-որ մեկին դատական տուգանք են վճարել իրենց ցանկացած արարքի համար, ապա դատական տուգանքի այն մասը, որի վրա գանձարանը, եկեղեցին կարող է հույս դնել... Եվ թող որ Մեցի եկեղեցուն, իր վանքերին, բերդերին, գյուղերին, թաղերին, ծխերին ու աբբայություններին մեր կողմից շնորհված անձեռնմխելիությունը հավերժ մնա և անսասան պահպանվի»[12]:

Նման անձեռնմխելիության հավատարմագրերն աշխարհիկ և եկեղեցական վերնախավի իշխանության ամրապնդման արդյունք էին, արտոնյալ պայմաններ էին ստեղծում նրանց համար, սահմանափակեցին թագավորական պաշտոնյաների վարչական և դատական հնարավորությունները:

Ուսումնասիրելով անձեռնմխելիության առաջացումը՝ Ն.Պ. Պավլով-Սիլվանսկին քննադատեց այս երևույթի ֆորմալ իրավական հայեցակարգը, որը անձեռնմխելիությունը բխեցնում էր հռոմեական իրավունքի նորմերից կամ կապում այն բացառապես թագավորական պարգևների հետ:

Գիտնականը պնդում էր, որ անձեռնմխելիությունը հարաբերությունների պատմականորեն հաստատված կարգ է, որի դեպքում անձեռնմխելիության հավատարմագրերը ոչ այնքան ստեղծում, որքան ամրագրում էին սովորութային իրավունքի նորմերը:

Ահա թե ինչու «խորհրդարանն իր գոյության առաջին իսկ օրերից հայտնվում է հատուկ պաշտպանության և հատուկ հովանավորության ներքո»[13], այդ թվում՝ թագավորական իշխանության կողմից: Հունգարիայում, օրինակ, եթե թագավորը խախտում էր պատգամավորների երաշխիքները, նա ենթարկվում էր վտարման պրելատների կողմից:

Հ.Պ. Պավլով-Սիլվանսկին միանգամայն իրավացիորեն մատնանշում է անձեռնմխելիության համատարած կիրառությունը, որն ինքնին հանգեցնում է այս երևույթի գոյության օրինաչափության մտքին: Հարաբերությունների նման դասավորվածությունը պատմաբանը կապում է խոշոր հողատիրության հետ, այսինքն՝ փորձում է անձեռնմխելիությունը մեկնաբանել ոչ միայն որպես իրավական նորմ, այլ նաև իրական սոցիալական հարաբերություն՝ արտահայտելով կապը ֆեոդալական իշխանության և խոշոր հողատիրության միջև:

Իսկապես, 8-րդ դարի ագրարային հեղափոխությունը նպաստեց ֆեոդալական պետության հետագա զարգացմանը, այն վարչական համակարգի, որտեղ հիմնական դերը սկսեցին խաղալ հայրենակալվածքային ինքնակառավարման մարմինները: Վարչական ապարատի նոր վերակառուցմանը նպաստեց անձեռնմխելիության հավատարմագրերի տարածումը: Կալվածքատերն, այսպիսով, քաղաքական իշխանություն ձեռք բերեց իր գյուղացիների նկատմամբ: «Անձեռնմխելիության» հավատարմագրերը արդեն սանկցավորում էին գյուղացիների քաղաքական կախվածության արդեն իսկ հաստատված հարաբերությունները իրենց կալվածքատերերից»[14]:

Միևնույն ժամանակ, Ն.Պ. Պավլով-Սիլվանսկու դիրքորոշման խոցելիությունը կայանում է նրանում, որ, չնայած «անձեռնմխելիություն» տերմինի բավականին լայն մեկնաբանությանը, դրա էությունը, ինչպես հռոմեական իրավունքում, մնում է անփոփոխ՝ առանձին սուբյեկտների լրիվ կամ մասնակի ազատումը որոշակի պարտավորություններից (օրինակ՝ հոգևորականության հարկային և դատական անձեռնմխելիությունը Ֆրանկական պետությունում) կամ իրավական պատասխանատվության ենթարկելու հատուկ պայմաններ: Վերջինիս վառ օրինակն են Անգլիայում երկարատև քաղաքացիական պատերազմի ավարտի արդյունքում ընդունված 1215 թվականի Ազատությունների Մեծ արտիայի մի շարք հոդվածներ: Մասնավորապես, 21-րդ հոդվածը նախատեսում էր կոմսերի և բարոնների ընդդատությունը միայն «հավասարների» դատարանին՝ դրանով իսկ հանելով նրանց թագավորական պետենակալների դատարաններ ընդդատությունից[15]:

Խորհրդարանների պատգամավորներին լրացուցիչ արտոնությունների տրամադրումը ակնառու դարձավ առաջին խորհրդարանների ձևավորման ժամանակաշրջանում: Այն հիմնականում կապված էր անկախության երաշխիքներ ապահովելու ցանկությամբ և ներկայացուցչական մարմինների դերի ամրապնդմամբ: Խորհրդարանական անձեռնմխելիության ինստիտուտը, որպես օրենսդիր մարմնի անդամների արտոնություն, որի առկայության պայմաններում պատգամավորները ազատվում էին իրենց արտահայտած կարծիքների համար պատասխանատվությունից, ծագել է Անգլիայում՝ միջին դարերում, համայնքների պալատի գործունեության արդյունքում: Պատգամավորները չէին կարող հետապնդվել առանց օրենսդիր մարմնի համաձայնության[16]:

Հենց Անգլիայում մեծ նշանակություն և զարգացում են ստանում որոշ դասերի անձանց անձեռնմխելիությունն ապահովող իրավական կարգավորումները: «Ինչպես վկայում են հին իրավական հուշարձանները, և՛ դատավորներին, և՛ թագավորական խորհրդականներին տրվել է հատուկ պաշտպանություն և թագավորի խաղաղություն: Այսպիսով, հին անգլիական օրենսդրությունը ընդունեց սկզբնական նորմերը, և Խորհրդարանի ի հայտ գալով նրա անդամներին և նրանց ուղեկցողներին դրեց հատուկ արտոնյալ դիրքում»[17]: Պատմականորեն ձևավորվեց այնպես, որ Համայնքնե-

www.armjournal.am

րի պալատը անմիջապես ձեռք բերեց թագավորական իշխանությանը հակադրվող ուժի նշանակություն: Անձեռնմխելիության անհրաժեշտությունը պայմանավորված էր անվստահությամբ դատական իշխանության անաչառության և անկախության նկատմամբ: Արդեն 1403 թվականին Համայնքների պալատը ձևակերպեց իր պահանջները, որոնցից հիմնականը խորհրդարանի աշխատանքի ընթացքում պատգամավորներին ձերբակալության կամ պատգամավորներին ազատությունից զրկելու այլ միջոցների ի սկզբանե կանխումն էր: Ինչ վերաբերում է Լորդերի Վերին Պալատի անդամներին, ապա նրանք օգտվում էին ցմահ անձեռնմխելիությունից:

Անգլիայի խորհրդարանի անձեռնմխելիության առանձնահատկությունը կայանում էր դրա բավականին նեղ կիրառության ոլորտում: Անձեռնմխելիությունը տարածվում էր միայն խորհրդարանում հնչած պատգամավորների ելույթների վրա՝ դրանով իսկ ապահովելով խոսքի ազատության և անկախության որոշակի չափ, մի միջոց, առանց որի հնարավոր չէր լինի իրականացնել իրենց ընտրողների շահերը պաշտպանելու պարտականությունը: Ընդ որում, խորհրդարանական բանավեճի ազատությունն իր իրավական ճանաչման առաջին իսկ օրերից ստանում է ոչ թե խոսքով կատարված հանցագործությունների անպատասխանատվության բնույթ խորհրդարանական ամբիոնից, այլ հենց իրեն՝ խորհրդարանին, նման արարքների բացառիկ ընդդատության բնույթ, այսինքն՝ նման արարքների քննության բացառիկ իրավունքը պատկանում էր խորհրդարանին: 13-րդ դարի վերջի և 19-րդ դարի առաջին կեսի հեղափոխական ցնցումները ոչ միայն նպաստեցին նրան, որ անձեռնմխելիությունը դարձավ եվրոպական հանրային իրավունքի անբաժանելի մասը, այլև այն բարձրացրեց նոր, որակապես այլ մակարդակի:

Արդեն 16-րդ դարի սկզբից, Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամների դեմ կատարված հանցագործությունների քննումը ճանաչվում էր որպես խորհրդարանի իրավասության տիրույթում գտնվող գործառույթ: Ենթադրվում էր, որ ձերբակալությունից մինչև արդարացում ընկած գործընթացը հիմնված էր այն սկզբունքի վրա, որ թագավորի վստահությունը վայելող անձը պետք է ազատ լինի, և նրա պարտականությունների կատարումը չպետք է ընդհատվի մասնավոր դատավորների կողմից կայացված վճիռներով: 1689 թվականին «Իրավունքների մասին Բիլը» հաստատեց, որ խոսքի ազատությունը և այն ամենը, ինչ տեղի էր ունենում խորհրդարանում, չէր կարող լինել որևէ դատարանի քննության առարկա և դուրս մնալ խորհրդարանի իրավասության տիրույթից: Այսպիսով, «Իրավունքների մասին Բիլը» ապահովեց իրավական առավելությունների այնպիսի տարր, ինչպիսին է անձեռնմխելիությունը, ինչը, մեր կարծիքով, պատմականորեն հանդիսանում է խորհրդարանի իրավական առավելության առաջին տարրը, քանի որ տարբեր սոցիալական խմբերի կարծիքը ազատորեն արտահայտելու համար պատգամավորի կարողությունն ու իրավասությունը խորհրդարանի բնութագրական հատկանիշներից մեկն է:

Խորհրդարանական առավելությունները դիտարկվում են որպես իրավունքների և առավելությունների ամբողջություն, որոնք տրվում են խորհրդարանին իր և իր անդամների սահմանադրական լիազորությունների առավել արդյունավետ և անարգել իրականացման համար: Այդ առավելություններից նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ պատասխանատվություն չկրելու խորհրդարանական սկզբունքին և խորհրդարանական անձեռնմխելիությանը:

Պատասխանատվություն չկրելու խորհրդարանական սկզբունքի համաձայն՝ արգելվում է պատգամավորի հետապնդումը բոլոր այն գործողությունների համար, որոնք կատարվել են նրա կողմից իր պատգամավորական պարտականությունները կատարելիս: Խորհրդարանական անձեռնմխելիության բովանդակությունը հանգում է նրան, որ պատգամավորն առանց խորհրդարանի կամ նրա ղեկավար մարմնի համաձայնության, չի կարող զրկվել անձնական ազատությունից կամ ենթարկվել պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ձերբակալվում է հանցագործության կատարման պահին[18]:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգում ենք այն եզրահանգման, որ ժողովրդական ներկայացուցիչների ինքնիշխանության հաստատումը անձեռնմխելիության առաջին տեսական հիմնավորումներից է:

Պետական իրավունքի երկրորդ սկզբունքը, որը դիտարկվում է որպես առավելության սահմանում, իշխանությունների տարանջատման տեսությունն է: Իրավական առավելությունները հետապնդում են որոշակի նպատակներ՝ օրինակ պատգամավորի համապարփակ պաշտպանությունն իր անձեռնմխելիության սահմանափակման հնարավոր փորձերից: Այս տեսակ առավելության էությունը օրենսդիր մարմնի անդամներին իրենց արտահայտած կարծիքների համար պաշտպանելն է ցանկացած դատական հետապնդումից, ընդհուպ մինչև այն պահը քանի դեռ չկա այդ նույն օրենսդիր մարմնի համաձայնությունը, ուստի և՛ իրենց արտահայտած մտքերի համար հետապնդումներից ազատությունը, և՛ անձեռնմխելիությունը ստեղծված են խորհրդարանը պաշտպանելու համար:

Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ

www.ardaradatutyunjournal.com

պատգամավորական անձեռնմխելիության առաջացումը պատմականորեն կապված է եղել այդ ներկայացուցչական մարմինների առաջացման հետ, ինչպես նաև սահմանադրականության զարգացման ու կայացման քաղաքական և իրավական պրակտիկայում լիազորությունների տարանջատման գաղափարի իրականացման հետ:

Այսպիսով, Ֆրանսիական Մեծ բուրժուական հեղափոխության առաջին փուլերից սկսած՝ քաղաքական պայքարի կենտրոնում գտնվող օրենսդիր մարմինների անդամներին տրվեցին նորմատիվ երաշխիքներ, որոնք զերծ էին պահում նրանց հնարավոր անբարենպաստ հետևանքներից:

Այդ երաշխիքներից ամենակարևորը 1790 թվականի հունիսի 26-ի հրամանագիրն էր, ըստ որի՝ ոչ մի դատարան չէր կարող որոշում կայացնել պատգամավորներին որպես մեղադրյալ ներգրավվել, ձերբակալելու կամ կալանավորելու մասին, քանի դեռ օրենսդիր մարմինը՝ ապացույցների հետաքննության արդյունքները քննելուց հետո, որոշում չկայացներ, որ մեղադրանքի համար բավարար հիմքեր կան: Իր հերթին, 1793 թվականի նոյեմբերի 10-ի հրամանագրում նշվում էր, որ ժողովրդի ոչ մի ներկայացուցիչ չի կարող կալանավորվել, քանի դեռ նախապես նա Կոնվենտի կողմից չէր լսվել[19]:

Հանրապետության երրորդ տարվա Սահմանադրությամբ սահմանվել է գործերը վարելու հատուկ կարգ, որում ընդգրկվել են պատգամավորներ: Նրանք ենթարկվում էին կալանքի միայն այն դեպքում, եթե ձերբակալությունը կատարվում էր հանցագործության վայրում:

Պատգամավորին դատարան կարող էին պատասխանատվության կանչել միայն Հինգ հարյուրականների խորհրդի թույլտվությամբ, ավագանու կողմից համապատասխան որոշում կայացնելու պարագայում: Նման բնույթի գործերի քննությունը Գերագույն դատարանի բացառիկ իրավասությանն էր պատկանում:

Այսպիսով, սահմանադրական համակարգի ներդրմամբ, հիմնականում ֆրանսիական օրենսդրության ազդեցությամբ, անձեռնմխելիությունը վերածվում է հանրային իրավունքի կարևորագույն ինստիտուտի՝ ընդգրկելով բոլոր պատժելի արարքները՝ անկախ դրանց ծանրության աստիճանից:

Գտնում ենք նաև, որ ցանկացած տեսակի իրավական անձեռնմխելիություն կապված է այդ անձեռնմխելիության կրողի հնարավոր հետապնդման խնդիրների հետ և այդ համատեքստում հատկանշական է անդրադառնալ պետության ղեկավարի պատասխանատվության հարցերին նախ և առաջ կառավարման միապետական ձևում:

Բացարձակ միապետության շրջանում, որը բնութագրվում է միապետի կողմից գերագույն իշխանության (օրենսդիր, գործադիր և դատական) լիակատար տնօրինմամբ[20] և այս ինքնիշխանությունը օրինականորեն սահմանափակող մարմնի բացակայության պայմաններում, հարկ չէ խոսել իրավական անձեռնմխելիության ինստիտուտի մասին, քանզի այն ծառայում է որպես միապետի ողջամիտ հետապնդման երաշխիք: Միապետի անձեռնմխելիությունը (արտոնությունը) սկզբունք էր, որը բխում էր պետական կառավարման համակարգի բուն էությունից, քանի որ միապետի պատասխանատվության հարցը բարձրացնելու հնարավորությունն արդեն իսկ վկայում է նրա իշխանության սահմանափակ բնույթի մասին, և «բացարձակ միապետության պայմաններում տիրակալը տեսականորեն սահմանափակվում էր միայն աստվածային և դրանից բխող բնական իրավունքով»[21]: Այս ժամանակահատվածում բնական իրավունքում չեն եղել միապետին պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր, ոչ էլ նմանատիպ գործառույթներ իրականացնող մարմիններ, որոնք կարող էին գնահատել միապետի գործունեությունը: Ըստ այդմ, անհրաժեշտություն չի եղել օրենսդրական մակարդակով նշել միապետի այնպիսի հատուկ իրավունքներ, ինչպիսիք են անձեռնմխելիությունը և անպատասխանատվությունը[22]:

Միապետի օրինական անձեռնմխելիության ինստիտուտի ձևավորումը կարող է քննարկվել միայն այն դեպքում, երբ բացարձակ միապետությունները վերածվում են սահմանադրական կամ խորհրդարանական միապետությունների, երբ մի կողմից, զարգանում են միապետի պատասխանատվության ինստիտուտները, իսկ մյուս կողմից անհրաժեշտ է միապետին պաշտպանել չարդարացված հետապնդումներից:

20-րդ դարի սկզբին միապետի՝ «պատասխանատվությունից ազատ լինելու» սկզբունքը, որպես պետության ղեկավարի բնութագրական հատկանիշ, համընդհանուր ճանաչվեց բոլոր սահմանադրական պետություններում:

Թվարկենք այն պետությունները, որտեղ ուղղակիորեն սահմանվեց սահմանադրության մեջ, օրինակ՝ Հունաստան 1864-ի նոյեմբերի 16-ին (հոդված 29) և Նորվեգիայի Թագավորություն՝ 1814-ի մայիսի 17-ին, փոփոխված 1814 թվականի նոյեմբերի 4-ին (հոդված 5): Թվարկենք նաև այն պետությունների սահմանադրությունները, որոնցում ուղղակիորեն չի նշվել միապետի արտոնությունների մասին և խոսվել է միայն միապետի անձի սրբության և անձեռնմխելիության մասին, օրինակ՝ Բավարիայի Թագավորությունը 1818 թվականի մայիսի 26-ին (հոդված 1), Բադենի Մեծ Դքսությունը 1818 թվականի օգոստոսի 22-ին (հոդված 5), Բուլղարիայի իշխանությունը 1879, հետևյալ փոփոխություններով՝ 1893 թվականի մայիսի 15-ին (հոդված 8), Իսպանիայի միապետությունը 1876 թվականի հունիսի 8-ին (հոդված 48), Իտալիայի Թագավո-

րությունը 1848 թվականի մարտի 4-ին (հոդված 4)[23]:

Չցանկանալով աշխատանքի ուղղվածությունը ուղղորդել դեպի պատմություն՝ նշենք նաև, որ առանձին կատեգորիաների անձանց համար իրավական անձեռնմխելիության առկայությունը սովետական ամբողջ պատմության ընթացքում նույնպես իր տեղն է ունեցել՝ չնայած անհատների հատուկ դիրքը մերժելու փորձերին, որը չէր համապատասխանում պրոլետարական պետության գաղափարախոսությանը:

Օրինակ՝ դիվանագիտական առաքելության ղեկավարի, այնպես էլ նրա աշխատակազմի անդամների արտոնությունների և անձեռնմխելիությունների որոշման հարցում սովետական օրենքը պահպանել էր միջազգային կանոններն ու սովորույթները: Ամենակարևոր արտոնություններից էր դիվանագիտական ներկայացուցչության՝ իր կառավարության և իր պետության այլ դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների հետ ազատ շփվելու իրավունքը: Այդ «արտոնյալ» անձինք վեր էին քրեական և քաղաքացիական դատարանի վճիռների իրավասությունից:

Խորհրդային կառավարման տարիներին առկա է եղել նաև «ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորի կարգավիճակի մասին» օրենք, որ նախատեսում էր, որ ժողովրդական պատգամավորը չի կարող դատական հետապնդման, ձերբակալման կամ վարչական տույժերի ենթարկվել՝ առանց դատական կարգով Գերագույն Խորհրդի և Գերագույն խորհրդի նախագահության համաձայնությունը ստանալու:

Եզրակացություն

Ամփոփելով «իրավական առավելություններ» հասկացության տեսակ հանդիսացող «անձեռնմխելիություն» իրավական հասկացության զարգացման պատմական փորձը՝ մենք հանգում ենք հետևյալին.

«Անձեռնմխելիություն» իրավական հասկացությունը առաջացել է հռոմեական օրենսդրության նորմերից՝ միջազգային իրավահարաբերությունների զարգացման հիմքի վրա: Հնարավոր է փաստել նաև, որ միջազգային իրավական անձեռնմխելիությունները (մասնավորապես՝ դիվանագիտական և հյուպատոսական) սկզբնական ժամանակաշրջանում ամրագրված են եղել միջազգային սովորութային նորմերով, ապա նոր իրենց ամրագրումն են գտել ներքին օրենսդրության մեջ:

Սա է պատճառը, որ պատմական փաստաթղթերի վկայությամբ հյուպատոսական ինստիտուտը համարվում է միջազգային իրավունքի հնագույն ինստիտուտներից: Հյուպատոսական անձեռնմխելիության հայրենիքը, իրավամբ, կարելի է անվանել Հին Հռոմը և Հին Հունաստանը, որի արտաքին քաղաքականությունը հիմնականում ուղղված էր այլ պետությունների հետ առևտրային հարաբերությունների ածին:

Պատմականորեն անձեռնմխելիություններ սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված էր որոշակի կատեգորիայի սուբյեկտների համար հատուկ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ՝ որպես այդ անձանց օրինական իրավունքների և շահերի պաշտպանությունը երաշխավորող լրացուցիչ միջոց:

Սկզբում անձեռնմխելիությունների սահմանումը թելադրվում էր միջազգային քաղաքականության կողմից, իսկ հետագայում՝ այն իր ամրագրումը գտավ որպես միջազգային իրավական սովորույթ: Այնուհետև միջազգային իրավական անձեռնմխելիությունները (մասնավորապես դիվանագիտական և հյուպատոսական) իրենց ամրագրումը գտան նաև ներպետական իրավական տարբեր մակարդակներում:

Անձեռնմխելիությունները առանձնահատուկ տեղ ունեին ֆեոդալիզմի շրջանում՝ լինելով խոշոր ֆեոդալ հողատերերի սեփականության բնութագրական հատկանիշ և արտաքին տնտեսական համակարգի ձևավորման գործընթացում ամենակարևոր գործոններից մեկը:

Հասարակական կյանքի փոփոխությամբ պայմանավորված՝ անձեռնմխելիությունները վերածվում են այլ իրավական միջոցների՝ դառնալով գործիք, որն ազատում է որոշ սուբյեկտներին (դիվանագետներին, հյուպատոսներին, խորհրդարանականներին) որոշակի իրավական պարտականություններից և պատասխանատվությունից իրենց գործառույթները կատարելու ընթացքում:

Ողջ վերոգրյալ բացահայտողական ակնարկից զատ, անշուշտ, պետք է փաստել նաև, որ «անձեռնմխելիություն» հասկացությունն, որպես իրավաբանական կատեգորիա, ունի իրավական նշանակություն և իմաստ, ուստի՝ նաև համապատասխան իրավական հատկություններ: Հետևաբար՝ անձեռնմխելիության հայեցակարգը բացահայտելու համար անհրաժեշտ է բացահայտել ոչ այնքան իր ընդհանուր իմաստը, որքան նրա օրինական հատկանիշները:

Այսպիսով, սույն հետազոտության արդյունքում կարող ենք հստակ պնդել, որ անձեռնմխելիությունը իրավաբանական կատեգորիա է և ներկայացնում է օրինական բացառություն իրավաբանական պատասխանատվության բնագավառում, որը ստեղծվել է անձանց որոշակի հատուկ շրջանակի իրավական պաշտպանության բարձրացման նպատակով և տրամադրվում է այն անձանց, որոնց հատուկ շահերը չեն կարող պատշաճ կերպով պաշտպանվել և պահպանվել համընդհանուր եղանակներով, քանի որ այդ անձինք բնութագրվում են հատուկ բնութագրիչներով՝ պայմանավորված

www.ardaradatutyunjournal.com

իրենց հասարակությունում զբաղեցրած դիրքով և կատարած աշխատանքի բնույթով:

Վերոգրյալից առաջ է գալիս «Ֆունկցիոնալ անհրաժեշտության տեսությունը», որը բխում է այն բանից, որ անձեռնմխելիության տրամադրման հիմնավորվածությունը պայմանավորված է որոշակի հատուկ գործառույթների արդյունավետ իրականացումը ապահովելու անհրաժեշտությամբ, ուստի անձեռնմխելիությունները պետք է տրվեն միայն այն դեպքերում և այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են այդ հատուկ սուբյեկտի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Ոստի հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք պատմական զարգացման որոշակի ժամանակահատվածում, այդ թվում՝ ժամանակակից հասարակություններում, իրավական առավելությունների տեսակ հանդիսացող «անձեռնմխելիություն» իրավական հասկացության դերի և նշանակության հարցը դարձնել ուսումնասիրության առարկա նաև ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ «Իրավագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում դասավանդվող «պետության և իրավունքի տեսություն» առարկայի շրջանակներում, քանի որ պետության և իրավունքի տեսությունը գիտություն է, որն ուսումնասիրում է հասարակական կյանքի պետահրավական երևույթները և դրանց օրինաչափությունները:

---

[1] Տե՛ս, Прохоров А. М., Советский энциклопедический словарь, Москва, 1990, С. 490:
[2] Տե՛ս, Николаев А., Дипломатические привилегии и иммунитеты // Международная жизнь, №.8. 1983, С. 152:
[3] Տե՛ս, Ожегов С.. И., Словарь русского языка, Москва, 1991, С. 248:
[4] Տե՛ս, Современный словарь иностранных слов, Москва, 1993, С. 230:
[5] Տե՛ս, Աղայան Է. Բ.,Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 489:
[6] Տե՛ս, Աղայան Է. Բ.,Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 68:
[7] Տե՛ս, Александренко В. И., Международное право Рима //Древнее право. 1999 N 1(4), С. 212:
[8] Տե՛ս, նույն տեղում:
[9] Տե՛ս, Блищенко, И. П. и Дурденевский В. Н., Дипломатическое и консульское право. Москва, 1962, С. 335:
[10] Տե՛ս, Курс международного права в 6-ти томах, Т.4, Москва, 1990, С. 113:
[11] Տե՛ս, Аннер С., Э., История Европейского права, Москва, 1994, С. 136:
[12] Տե՛ս, Антология мировой мысли в 5-ти томах. Т.2. Европа. V-VII вв., Москва, 1999, С. 76-77:
[13] Տե՛ս, Шалланд Л. А., Иммунитет народных представителей, Т.1. Юрьев, 1911, С. 42:
[14] Տե՛ս, Жидков О. А и Крешенинниковой Т. А., История государства и права зарубежных стран, Москва, 1998, С. 223:
[15] Տե՛ս, Хрестоматия памятников феодального государства и права стран Европы. Москва, 1961, С. 133-137:
[16] Տե՛ս, Крутских, А. В., Всемирная история государства и права, 2001, С. 137:
[17] Տե՛ս, Шалланд Л. А., Иммунитет народных представителей, Т.1. Юрьев, 1911, С. 119:
[18] Տե՛ս, Ս. Ա. Պողոսյան., Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակի իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, սեղմ., Երևան 2014թ., էջ 17:
[19] Տե՛ս, Шалланд Л. А., Иммунитет народных представителей, Т.1. Юрьев, 1911, С. 182:
[20] Տե՛ս, Վաղարշյան, Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն-1, ԵՊՀ հրատ., Երևան 2016թ., էջ 144-145:
[21] Տե՛ս, Лавнисчак А., Ответственность главы государства в монархии и республике Конституционно-правовая ответственность, Москва, 2001, С.149:
[22] Տե՛ս, նույն տեղում:
[23] Տե՛ս, Кравец, И. А., Функции и сферы действия конституции: теоретико-методологические и практические вопросы классификации, Новосибирск, 2011, С. 44-50:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է. Բ.,Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, 1615 էջ:
2. Վաղարշյան, Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն-1, ԵՊՀ հրատ., Երևան 2016թ., 224 էջ:
3. Պողոսյան Ս. Ա., Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակի իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, սեղմ., Երևան 2014թ., 30 էջ:
4. Александренко В. И., Международное право Римаե //Древнее право. 1999 N 1(4), стр. 206-218.
5. Аннерс, Э., История Европейского права, Москва, 1994. с. 397.
6. Антология мировой мысли в 5-ти томах. Т.2. Европа. V-VII вв., Москва, 1999, с. 829.

7. Блищенко, И. П. и Дурденевский В. Н., Дипломатическое и консульское право. Москва, 1962, с. 480.
8. Жидков О. А и Крешенинниковой Т. А., История государства и права зарубежных стран, Москва, 1998, с. 720.
9. Кравец, И. А., Функции и сферы действия конституции: теоретико-методологические и практические вопросы классификации, Новосибирск, 2011, стр. 44-51.
10. Курс международного права в 6-ти томах, Т.4, Москва, 1990, с. 269.
11. Крутских, А. В., Всемирная история государства и права, 2001, с. 397.
12. Лавнисчак А., Ответственность главы государства в монархии и республике Конституционно-правовая ответственность, Москва, 2001, стр. 149-157.
13. Николаев А., Дипломатические привилегии и иммунитеты // Международная жизнь, №.8. 1983, стр. 152-155.
14. Ожегов С. И., Словарь русского языка, Москва, 1991, с. 917.
15. Прохоров А. М., Советский энциклопедический словарь, Москва, 1990, с. 1633.
16. Современный словарь иностранных слов, Москва, 1993, с. 742.
17. Хрестоматия памятников феодального государства и права сран Европы. Москва, 1961, с. 950.
18. Шалланд Л. А., Иммунитет народных представителей, Т.1. Юрьев, 1911. с. 499.

References

1. Aghayan E. B. Ardi hayereni bacatrakan barraran [Modern Armenian Explanatory Dictionary]. Yerevan, 1976, 1615 p. (In Armenian)
2. Vagharshyan A. G. Petut'yan yev iravunk'i tesutyun-1 [Theory of State and Law-1]. Yerevan State University Press, Yerevan, 2016, 224 p. (In Armenian)
3. Poghosyan S. A. Azgayin zhoghovi patgamavori kargavijaki iravakan kargavorman himnakhndirnere HH-um [Legal Issues of Regulation of the Status of a Member of the National Assembly in the Republic of Armenia]. Yerevan, 2014, 30 p. (In Armenian)
4. Aleksandrenko V. I. Mezhdunarodnoe pravo Rima [International Law of Rome]. Drevnee pravo, 1999, No. 1(4), pp. 206–218. (In Russian)
5. Anners E. Istoriya Evropeyskogo prava [History of European Law]. Moscow, 1994, 397 p. (In Russian)
6. Antologiya mirovoy mysli v 5-ti tomakh. T. 2. Evropa. V–VII vv. [Anthology of World Thought in 5 Volumes. Vol. 2: Europe, 5th–7th Centuries]. Moscow, 1999, 829 p. (In Russian)
7. Blishchenko I. P., Durdenevskiy V. N. Diplomaticheskoe i konsulskoe pravo [Diplomatic and Consular Law]. Moscow, 1962, 480 p. (In Russian)
8. Zhidkov O. A., Kreshchennikova T. A. Istoriya gosudarstva i prava zarubezhnykh stran [History of the State and Law of Foreign Countries]. Moscow, 1998, 720 p. (In Russian)
9. Kravets I. A. Funktsii i sfery deystviya konstitutsii: teoretiko-metodologicheskie i prakticheskie voprosy klassifikatsii [Functions and Scope of the Constitution: Theoretical-Methodological and Practical Issues of Classification]. Novosibirsk, 2011, pp. 44–51. (In Russian)
10. Kurs mezhdunarodnogo prava v 6-ti tomakh. T. 4 [Course of International Law in 6 Volumes. Vol. 4]. Moscow, 1990, 269 p. (In Russian)
11. Krutskikh A. V. Vsemirnaya istoriya gosudarstva i prava [World History of State and Law]. Moscow, 2001, 397 p. (In Russian)
12. Lavnischak A. Otvetstvennost' glavy gosudarstva v monarkhii i respublike: Konstitutsionno-pravovaya otvetstvennost' [Responsibility of the Head of State in a Monarchy and a Republic: Constitutional-Legal Responsibility]. Moscow, 2001, pp. 149–157. (In Russian)
13. Nikolaev A. Diplomaticheskie privilegii i immunitety [Diplomatic Privileges and Immunities]. Mezhdunarodnaya zhizn' [International Life], No. 8, 1983, pp. 152–155. (In Russian)
14. Ozhegov S. I. Slovar' russkogo yazyka [Dictionary of the Russian Language]. Moscow, 1991, 917 p. (In Russian)
15. Prokhorov A. M. Sovetskiy entsiklopedicheskiy slovar' [Soviet Encyclopedic Dictionary]. Moscow, 1990, 1633 p. (In Russian)
16. Sovremennyy slovar' inostrannykh slov [Modern Dictionary of Foreign Words]. Moscow, 1993, 742 p. (In Russian)
17. Khrestomatiya pamyatnikov feodal'nogo gosudarstva i prava stran Evropy [Reader of Monuments of the Feudal State and Law of European Countries]. Moscow, 1961, 950 p. (In Russian)
18. Shalland L. A. Immunitet narodnykh predstaviteley [Immunity of People's Representatives]. Yur'ev, 1911, 499 p. (In Russian)

Ашот Оганесян
Соискатель Института философии, социологии и права НАН РА,
Начальник отдела экспертизы судебно-правового законодательства Агентства экспертизы правовых актов
Министерства юстиции Республики Армения,

РЕЗЮМЕ

Историко-правовой аспект развития правовой категории «неприкосновенность»

В настоящей статье поставлена задача выявить аспект историко-правового развития правовой концепции неприкосновенности, которая является разновидностью концепции правовых преимуществ, на основе которой сформировалось и до сих пор существуют это правовое понятие. В рамках данного исследования перед нами стоит задача изучить вопросы исторического формирования юридического понятия «неприкосновенность». Мы постараемся раскрыть законы возникновения и формирования неприкосновенности, а также проанализировать поэтапные особенности жизнедеятельности данного понятия в основные исторические периоды развития человеческого общества. Мы полагаем, что это даст возможность понять существенное и содержательное значение данного явления сегодня, а возможно, и давно сложившихся закономерностей развития.

Методологической основой данного исследования стали общенаучный, материалистический, системно-структурный, сравнительно-правовой, социологический методы, а также логические методы: синтез, анализ, аналогия, индукция, дедукция и ряд других методов.

В результате проведенного исследования можно утверждать, что правовая категория «неприкосновенность», являющееся видом понятия «Правовые преимущества», имеет глубокие исторические корни, и, не вдаваясь в научную дискуссию о периоде возникновения права, можно утверждать, что преимущества, как возможность отличить одних людей от других, появились раньше, чем право.

***Ключевые слова**: право, преимущество, льгота, привилегия, неприкосновенность, иммунитет, равноправие.*

Ashot Hovhannisyan
Ph.D. Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the Republic of Armenia
Head of the Judicial Legislation Expertise Department of the Legal Acts
Expertise Agency of the Ministry of Justice of the Republic of Armenia

SUMMARY

The aspect of the historical legal development of Legal concept of immunity

This article aims to highlight the aspect of the historical and legal development of the immunity that are the type of the concept “Legal advantages”, on the basis of which this legal concept has been formed and continue existing today.

Within the framework of this research, our task is to study the questions of the historical formation of the legal concept “immunity”. We will try to reveal the laws of the origin and formation of the immunity as well as to analyze the phase features of the vital function of this concept during the main historical periods of the development of human society. We believe that it will provide an opportunity to understand the essential and substantive significance of this phenomena today, and perhaps the long-established patterns of development.

The methodological basis of this research has been the universal scientific basis - materialism, system-structural, comparative-legal, sociological methods, as well as logical methods, such as synthesis, analysis, analogy, induction, deduction and a number of other methods.

As a result of the study performed, we can state that the legal concept “ immunity”, which is an aspect of the concept of “Legal advantages”, has profound historical roots, and without entering into the scientific discussion about the period of the origin of the right, we can assert that advantages, as an opportunity for some people to distinguish from others, have appeared earlier than the right.

***Key words**: law, advantage, benefit, privileges, immunity, legal equality.*

Ընդունվել է տպագրության 17.11.25թ.

ՎԱՀԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
Շիրակի պետական համալսարանի պատմության և
իրավագիտության ամբիոնի դասախոս

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՅՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրութունն ուղղված է Ազգային ժողովի կայուն մեծամասնության հիմնախնդրին, որը նպատակ ունի բարձրացնելու կառավարման համակարգի արդյունավետությունը: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված՝ էականորեն փոխվեց օրենսդիր իշխանության մարմնի՝ Ազգային ժողովի իրավասության ծավալը: Հոդվածում վերլուծության են ենթարկվել խորհրդարանում կայուն մեծամասնության օրենսդրական կարգավորման որոշ առանձնահատկություններ՝ միաժամանակ արձանագրելով նշված խնդրի կարգավորման իրավական միջոցներով ապահովելու անհնարինությունը:

Հոդվածում քննարկվում է 2015 խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն դրույթը, ըստ որի Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև իրավաբան-գիտնականների մեկնաբանություններին, որոնք ուղղված են խորհրդարանական մեծամասնության կայունության երաշխավորման նպատակի իրացմանը:

Հեղինակը եզրակացնում է, որ խորհրդարանում կայունություն ապահովելու կարևորագույն երաշխիքներից մեկը կուսակցությունների կայացվածությունն է, գաղափարախոսական-քաղաքական ծրագրի ու տեսլականի առկայությունն ու կուսակցության ներսում որոշումների ընդունման ժողովրդավարական կառուցակարգերի մեխանիզմների ներդնումն է: Միաժամանակ նշվել է, որ ընդունելի կարելի է համարել այնպիսի մեծամասնության առկայությունը, որը մի կողմից Ազգային ժողովին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, իսկ մյուս կողմից սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում է խորհրդարանական կայուն մեծամասնությանը հաշվի առնել նաև ընդդիմության դիրքորոշումները:

Հիմնաբառեր *- Ազգային ժողով, Սահմանադրություն, կայունություն, խորհրդարանական մեծամասնություն, ընտրական համակարգ, պետական կառավարման կարգ:*

Ներածություն

2015 թվականի սահմանադրական փոփոխություններից առանցքայինը պետական կառավարման կարգի փոփոխությունն էր, որի ժամանակ կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգի: Կառավարման ձևի փոփոխությամբ պայմանավորված՝ էականորեն փոխվեց օրենսդիր իշխանության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, հետևաբար նաև փոխվեց օրենսդիր իշխանության մարմնի՝ Ազգային ժողովի իրավասության ծավալը:

Կառավարման ձևի փոփոխության հիմնավորվածությունը ներկայացվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակած «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում (այսուհետ՝ նաև Հայեցակարգ):

Հայեցակարգում մասնավորապես նշվում է, որ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կայուն ընտրական համակարգ ապահովելու համար, դրա հիմնական գծերը պետք է ամրագրվեն հենց Սահմանադրությամբ, իսկ կոնկրետ կանոնակարգումները՝ օրգանական /սահմանադրական/ օրենքով: Այն մասնավորապես, հնարավորություն կտա, որպեսզի ժամանակի ընթացքում ընտրական համակարգը լիովին դրսևորի երկբևեռ քաղաքական համակարգը խթանելու իր ներուժը: որիորդարանի ընտրական համակարգի սահմանադրական ամրագրումը լայնորեն կիրառվում է Եվրոպական միության ինչպես հին (Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Իսլանդիա, Իռլանդիա, Ավստրիա, Իսպանիա, Պորտուգալիա), այնպես էլ նոր անդամ երկրներում (Էստոնիա, Լատվիա, Չեխիա)[1]:

Սույն հոդվածում ներկայացված է «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում ամրագրված հիմնախնդրին, որը վերաբերում է Ազգային ժողովում կայուն խորհրդարանական

www.ardaradutyunjournal.com

մեծամասնության ձևավորմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը. Հետազոտության արդյունքներ և քննարկում.

Հայեցակարգի հեղինակները անհրաժեշտ համարելով կայուն խորհրդարանական մեծամասնության առկայությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրել են, որ Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյանի բնորոշմամբ՝ «Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորում» սահմանադրական դրույթում տեղ է գտել մեթոդաբանական կոպիտ սխալ, որը պարունակում է էական ռիսկեր՝ պետական իշխանության համակարգի հենց կայունություն երաշխավորելու համար: Բանն այն է, որ այս դրույթով ձևակերպված են երկու կարևորագույն, սակայն տարբեր նպատակներ՝ երաշխավորել ա) մեծամասնության ձևավորում և բ) մեծամասնության կայունություն: Ինչ վերաբերում է խորհրդարանական մեծամասնության ձևավորմանը, ապա այդ խնդիրը կարող է արդյունավետ լուծվել իրավական կարգավորման միջոցների կիրառմամբ: Դրա ապահովման սահմանադրական երաշխիք է 2015 խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, որով սահմանված է ոչ թե Ազգային ժողովի պատգամավորների կոնկրետ թվաքանակ, այլ նվազագույն թիվ. «Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից»: Սահմանադրությամբ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակի փոխարեն նվազագույն թվի ամրագրումը սահմանադրական լեգալ հնարավորություն է ստեղծում ընտրական օրենսգրքի միջոցով խորհրդարանում քանակական առումով ցանկացած մեծամասնություն ապահովելու համար: Խնդիրը միայն այն է, թե ինչպիսի մեծամասնությունն է առավել նպատակահարմար[2]:

«Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ» «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) նախնական կարծիքի 78-րդ կետում նշված է, որ այս համակարգում պատգամավորների ընդհանուր քանակը կախված է լինելու մեծամասնությանը որպես բոնուս հատկացված լրացուցիչ տեղերի քանակից[3]: Այսինքն՝ նշված կարծիքում ներկայացվում է, որ Ազգային ժողովում պատգամավորների ընդհանուր թվաքանակի փոխարեն նվազագույն թվի ամրագրումը նպատակ ունի սահմանադրորեն անհրաժեշտ հիմքերի ձևավորման միջոցով ապահովելու խորհրդարանական կայուն մեծամասնություն: Պետք է նշել, որ սույն դեպքում միանշանակ կիսում ենք պրոֆեսոր Վ. Ստեփանյանի կարծիքը և գտնում, որ խորհրդարանում հնարավոր է միայն քանակական առումով ապահովել մեծամասնություն: Իսկ քանակական մեծամասնության առկայությունը խորհրդարանում բնավ չի նշանակում, որ այն կարող է ապահովել նաև որակ:

Ա. Ն. Մեդուշևսկին վերլուծելով տարբեր երկրներում խորհրդարանական կայունության փորձը՝ վստահորեն արձանագրում է, որ ավելի կայուն են այն երկրների խորհրդարանները, որտեղ առկա է հստակ երկուսակցական համակարգ: Սակայն նույնիսկ այդ պարագայում խորհրդարանական մեծամասնության կայունության ապահովման հիմնախնդիրը չի վերանում, և կիրառվում են իրավական կարգավորման միջոցներ, որոնք որոշակիորեն նպաստում են կայունության մակարդակի բարձրացմանը: Որոշ երկրներում քաղաքական անկայունությունը նվազեցնելու նպատակով պետության ղեկավարին նաև վերապահվում են լրացուցիչ լիազորություններ[4]:

Հայեցակարգի հեղինակների կարծիքով Ազգային ժողովում կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը հնարավոր է ապահովել Ընտրական օրենսգրքի միջոցով: Ուստի, ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրվել է, որ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Նշված սահմանադրական նորմի հիման վրա ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանվել է Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ընտրական ցուցակների հետ կապված կարգավորումները: Մասնավորապես, Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) առաջադրում է թեկնածուների մեկ համապետական ընտրական ցուցակ, որը կարող է բաղկացած լինել երկու մասից: Առաջին մասում ընդգրկվում է ոչ պակաս քան 80, և ոչ ավելի քան 300 թեկնածու, իսկ եթե ընտրական ցուցակը ունի երկրորդ մաս, ապա այնտեղ կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազ-

գային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Այսինքն, հիմք ընդունելով սահմանադրական կարգավորումները՝ ներդրվել է համամասնական ընտրակարգը՝ միաժամանակ նախատեսելով նաև տարածքային ընտրական ցուցակներով ընտրություններին մասնակցելու մեխանիզմը:

Միաժամանակ, Օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանվել են համապետական և տարածքային ցուցակներով մանդատների բաշխման առանձնահատկությունները: Այսպես, Ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Օրենսգրքի 96-րդ հոդվածի կարգավորումը ուղղված է փոքրամասնության և մեծամասնության լրացուցիչ մանդատներին: Կարգավորմամբ նախատեսված է, որ եթե որևէ կուսակցությունը ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը:

Այնպիսի իրավիճակում, երբ մեկ քաղաքական ուժը չի կարողանում ձևավորել կայուն խորհրդարանական մեծամասնություն, ապա Օրենսգիրքը նախատեսել է քաղաքական կոալիցիաներ կազմելու միջոցով ունենալ կայուն մեծամասնություն: Օրենսգրքի 97-րդ հոդվածի կարգավորմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին որոշումից հետո՝ 6 օրվա ընթացքում ընտրական արգելապատնեշները հաղթահարած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք) կարող է քաղաքական կոալիցիա կազմել ընտրական արգելապատնեշները հաղթահարած այլ՝ առավելագույնը երկու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ: Նույն կարգավորմամբ նախատեսվում է, որ կոալիցիայի կազմման արդյունքում մանդատների ընդհանուր քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը:

Հայեցակարգի հեղինակները անհրաժեշտ համարելով կայուն խորհրդարանական մեծամասնության առկայությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել են, որ եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Օրենսգրքի 98-րդ հոդվածը կարգավորում է, որ ընտրության երկրորդ փուլին մասնակցում են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ, բացառություն նախատեսելով այն դեպքում, երբ առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) միասին նոր դաշինք են կազմում, ապա ընտրության երկրորդ փուլին մասնակցում է առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած, նոր դաշինքի կազմի մեջ չմտնող, հաջորդ առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը), որի շուրջ ևս կարող է ձևավորվել նոր դաշինք:

Այս համատեքստում գտնում ենք, որ սահմանադրական նորմի հիման վրա ընդունված Օրենսգրքի կարգավորումը՝ ուղղված Ազգային ժողովի գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացման համար մեծամասնության ապահովմանը, այլընտրանք չունի: Ինչպես նշել է Գ. Հարությունյանը, մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները «օրգանական /սահմանադրական/ օրենքների ինստիտուտի բացակայությունը փոքրամասնությանը զրկել է ընդհուպ օրենսդրական քաղաքականության վրա որևէ իրական ներազդեցությունից»[5]: Սակայն կայուն մեծամասնության առկայությունը պետք է խորհրդարանում հնարավորություն ստեղծի հաշվի առնելու խորհրդարանական ընդդիմության կարծիքը: Առավել ընդունելի կարելի է համարել այնպիսի մեծամասնության առկայությունը, որը մի կողմից Ազգային ժողովին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, իսկ մյուս կողմից սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում է խորհրդարանական կայուն մեծամասնությանը հաշվի առնել նաև ընդդիմության դիրքորոշումները: Թերևս կարելի է համարել, որ դա այն մեծամասնությունն է, որը մոտ է, սակայն չի հատում պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը: Միայն այդ դեպքում կլինեն սահմանադրական անհրաժեշտ և կայուն երաշխիքներ խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար[6]:

Համամիտ ենք նշված տեսակետի հետ և գտնում ենք, որ խորհրդարանի կայուն մեծամասնությունը պետք է «բացարձակ» չլինի, քանի որ նման պարագայում ստեղծվում է իրավիճակ, երբ ընդդիմության դիրքորոշումները կառավարող խմբակցու-

թյան կողմից հաշվի չեն առնվում:

Հայեցակարգում նախատեսվում էր, որ օրենսդրության բնագավառում ընդդիմության դերի բարձրացման համար կարևոր գործոն կարող է հանդիսանալ օրգանական /սահմանադրական/ օրենքների ներմուծումը, քանի որ դրանց ընդունման համար անհրաժեշտ է որակյալ մեծամասնություն: Այդ օրենքների ցանկը պետք է սպառիչ կերպով ամրագրվի Սահմանադրությունում[7]: ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի կարգավորմամբ սահմանվում է, որ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Իսկ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Նույն կարգով են ընտրվում ՀՀ գլխավոր դատախազը, Հաշվեքննիչ պալատի նախագահը և անդամները, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» N 184-Ա որոշման համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվել է և մանդատներն բաշխվել են հետևյալ համամասնությամբ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 71 մանդատ, «Հայաստան» դաշինք՝ 29 մանդատ, «Պատիվ ունեմ» դաշինք՝ 7 մանդատ[8]: Այսինքն՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով մանդատների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 54 տոկոսը ստացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը միանձնյա ձևավորել է կայուն մեծամասնություն:

Ինչպես տեսնում ենք կառավարող քաղաքական ուժը Ազգային ժողովում ունի այնպիսի մեծամասնություն, որը հատում է պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը: Իսկ այն պնդումը, թե սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում է խորհրդարանական կայուն մեծամասնությանը հաշվի առնել նաև ընդդիմության դիրքորոշումները չի հաստատվում, քանի որ կառավարող քաղաքական ուժը ունենալով պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը գերազանցող մեծամասնություն, հաճախ սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ հաշվի չի առնում ընդդիմության կարծիքը: Հաճախ սահմանադրական մարմինների ընտրության ժամանակ ընդդիմության պատգամավորները բոյկոտում են Ազգային ժողովի նիստերը և չեն մասնակցում կազմակերպված քննարկումներին և քվեարկություններին: Սակայն դա որևէ խոչընդոտ չի հանդիսանում կառավարող քաղաքական ուժի համար կազմակերպելու քվեարկություն և ընտրելու իրենց կողմից առաջարկված թեկնածուին կարևորագույն պաշտոնում: Այսինքն՝ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ ընդդիմության մասնակցությունը քվեարկություններին դառնում է բացարձակ ձևական բնույթ կրող գործողություն, քանի որ այն քվեարկության արդյունքների վրա որևէ ազդեցություն չի ունենում:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ խորհրդարանում մեկ քաղաքական ուժի պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը գերազանցող մեծամասնությունը իրական վտանգ է իրենից ներկայացնում՝ տվյալ քաղաքական ուժի կողմից «մենիշխանություն» հաստատելու տեսանկյունից:

Վ. Վ. Ստեփանյանը գտնում է, որ խորհրդարանական մեծամասնության (խորհրդարանի) կայունության երաշխավորման նպատակի իրացումը ընտրական օրենսգրքի կարգավորման շրջանակներից դուրս է: Ավելին՝ խորհրդարանական մեծամասնության կայունությունը և հետևաբար խորհրդարանի կայունությունն ընդհանրապես հնարավոր չէ ապահովել զուտ իրավական կարգավորման միջոցներով: Իրավական կարգավորման միջոցները կարող են որոշ չափով նպաստել խորհրդարանական մեծամասնության կայունության մակարդակի բարձրացմանը: Խորհրդարանական մեծամասնության կայունության աստիճանը առաջին հերթին կախված է երկրում քաղաքական ուժերի հարաբերակցությունից, կուսակցությունների համակարգի հասունության աստիճանից, կոնկրետ քաղաքական իրավիճակներից[9]:

Հաշվի առնելով վերընշվածը՝ կարծում ենք, որ խորհրդարանի կայունությունը միայն իրավական մեխանիզմներով ապահովելն անիրատեսական է, քանի որ խորհրդարանում կայունություն ապահովելու կարևորագույն երաշխիքներից մեկը կուսակցությունների կայացվածությունն է, գաղափարախոսական-քաղաքական ծրագրի ու տեսլականի առկայությունը, կուսակցության ներսում որոշումների ընդունման ժողովրդավարական կառուցակարգերի մեխանիզմների ներդնումը և այլն:

www.ardaradatyunjournal.com

Կուսակցությունները խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ժողովրդի իշխանության քաղաքական պատվիրակման շղթայի առաջնային օղակն են[10]: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ եթե կուսակցական համակարգը կայացած չէ, հատակ տարանջատված չեն գաղափարական հոսանքները, կուսակցության ներսում առկա չէ կարգապահությունը, քաղաքական գործիչների մոտ ձևավորված չէ քաղաքական մշակույթը, ապա պետք չէ ակնկալել, որ գործող կառավարման համակարգի պայմաններում խորհրդարանում ձևավորվող կայուն մեծամասնությունը կարող է ապահովել կայուն և գործունակ օրենսդիր ու գործադիր իշխանության մարմինների ձևավորումը:

Հատկանշական է, որ կուսակցությունների խոշորացման խնդրին մեծ կարևորություն է տրվել նաև ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, որում նշվում է երկբևեռ քաղաքական համակարգի ձևավորման կարևորության մասին, որի հնարավորություններն ընձեռում է նոր՝ խորհրդարանական կառավարման համակարգն ու դրա համատեքստում խորհրդարանի դերի բարձրացումն ու կայուն ընտրական համակարգի սահմանումը[11]:

Պետք է արձանագրել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո անցել է ավելի քան ութ տարի, սակայն երկբևեռ քաղաքական համակարգի ձևավորումը դեռևս չի նշմարվում: Եվրոպական երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Գերմանիան և այլն, քաղաքական կուսակցություններին հակազդող մարմին է հանդես գալիս պետության գլուխը, ով որպես կանոն անկուսակցական է: Անկուսակցական պետության գլխի ինտիտուտի առկայությունը հնարավորություն է տալիս հավասարակշռել հանրային ու պետական շահը՝ միաժամանակ ապահովելով սահմանադրական կարգի կենսունակությունը: Սովորաբար կայացած խորհրդարանական կառավարման համակարգերում կուսակցությունների կենսունակությունն արդյունավետ լինելու համար կարևոր է, որ խոշոր կուսակցությունների թիվը չգերազանցի հինգը, որոնք ունենալով կանոնակարգված և ինքնուրույն գաղափարախոսություն և կայուն ընտրազանգված՝ ունակ լինեն առանձին կամ կոալիցիայի միջոցով խորհրդարանում ձևավորելու կայուն մեծամասնություն:

Եզրակացություն

Ամփոփելով վերլուծության արդյունքները՝ պետք է արձանագրենք, որ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, որտեղ ամրագրված է, որ Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը, կենսունակ չէ և չի արդյունավետ ակնկալվող արդյունքը: Մասնավորապես, Սահմանադրության մեջ ամրագրելով Օրենսգրքի միջոցով խորհրդարանում քանակական առումով ցանկացած մեծամասնություն ապահովելու մասին դրույթը, Օրենսգրքին է վերապահվել նպատակահարմարությունից ելնելով սահմանել ցանկացած մեծամասնություն: Սակայն վերընշված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ մեծամասնությունը դեռևս չի նշանակում կայունություն, քանի որ ինչպես նշվել է այն հնարավոր չէ միայն իրավական միջոցներով ապահովել:

Կարծում ենք, որ կայունությանը նպաստող պայմաններ կարող են ստեղծվել միայն Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, այլ ոչ թե Ընտրական օրենսգրքով, քանի որ կայունության ապահովման խնդիրը դուրս է Ընտրական օրենսգրքի կարգավորման շրջանակներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է հաջորդ սահմանադրական փոփոխություններում հրաժարվել «Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը» դրույթից, քանի որ Ընտրական օրենսգրքի փոփոխությունը հանգում է սահմանադրական նորմին՝ հետևաբար, անհրաժեշտ է Սահմանադրության մեջ կատարել նշված փոփոխությունը:

[1] Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջեր 26-36.
[2] Տե՛ս, Վ. Ստեփանյան, «Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 1 (22), էջ 6.
[3] Տե՛ս, http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm (մուտք 18.07.2023).
[4] Տե՛ս, Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, էջ 197-199.
[5] Տե՛ս, Գ. Հարությունյան, «Սահմանադրական մշակույթ.պատմության դասերը և ժամանակակից մարտահրավերները», Երևան, 2016, էջ 210.
[6] Տե՛ս, Գ.Դանիելյան, Վ. Այվազյան, Ա. Մանասյան, «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015, էջ 29:
[7] Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջ 33:
[8] Տե՛ս, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» N 184-Ա որոշում.
https://res.elections.am/images/Decisions/27.06.21/21.184_A.pdf (մուտք 01.12.2022թ.)
[9] Տե՛ս, Վ. Ստեփանյան, «Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 1 (22), էջ 7.
[10] Տե՛ս, Müller W. C. Political parties in parliamentary democracies: Making delegation and accountability European Journal of Political Research 37, 2000, էջ 310:
[11] Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ., էջ 35- 36.

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Դանիելյան Գ., Այվազյան Վ., Մանասյան Ա., ,Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունումե (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015, էջ 29:
2. Հարությունյան Գ., ,Սահմանադրական մշակույթ.պատմության դասերը և ժամանակակից մարտահրավերներըե, Երևան, 2016, էջ 210:
3. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջեր 26-36:
4. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջ 33:
5. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» N 184-Ա որոշում. https://res.elections.am/images/Decisions/27.06.21/21.184_A.pdf (վերջին այցելություն 01.12.2024թ.):
6. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ., էջեր 35- 36:
7. Ստեփանյան Վ., «Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 1 (22), էջ 6:
8. Ստեփանյան Վ., «Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 1 (22), էջ 7:
9. Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, էջ 197-199.
10. Müller W. C. Political parties in parliamentary democracies: Making delegation and accountability European Journal of Political Research 37, 2000, ¿ç 310.
11. http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm (վերջին այցելություն 18.07.2023).

Ваге Багдасарян
Член палаты адвокатов РА, адвокат
Преподаватель кафедры истории и права
Ширакского государственного университета

РЕЗЮМЕ

Проблематика стабильного большинства национального собрания как залог повышения эффективности системы парламентского управления.

Исследование посвящено проблематике стабильного большинства Национального Собрания, целью которого является повышение эффективности системы управления. В связи с конституционными поправками 2015 года существенно изменились рамки юрисдикции органа законодательной власти – Национального собрания. В статье анализируются некоторые особенности правовых полномочий стабильного большинства в парламенте, при этом выявляется невозможность обеспечения регулирования указанной проблемы правовыми средствами.

В статье рассматривается положение, заложенное в части 3-ем статьи 89 Конституции РА 2015 года, согласно которому Избирательный кодекс гарантирует формирование стабильного парламентского большинства. В работе также упоминаются комментарии юристов-ученых, которые направлены на реализацию цели обеспечения стабильности парламентского большинства.

Автор приходит к выводу, что одной из важнейших гарантий обеспечения стабильности в парламенте являются партии, которые уже состоялись, наличие идейно-политической программы и видения, внедрение демократических механизмов принятия решений внутри партии. При этом было отмечено, что наличие такого большинства можно считать приемлемым, что, с одной стороны, дает возможность Национальному Собранию эффективно выполнять свои функции, а с другой - при принятии конституционных законов и формировании одного из важнейших конституционных органов, заставляет стабильное парламентское большинство учитывать и позиции оппозиции.

***Ключевые слова**: Национальное собрание, Конституция, стабильность, парламентское большинство, избирательная система, государственное управление.*

Vahe Baghdasaryan
Member of the RA Chamber of Advocates, Advocat
Lecturer at the Department of History and Law of Shirak State University

SUMMARY

The problem of stable majority of the national assembly as a guarantee of increasing the efficiency of the parliamentary government system

The study within the framework of the article is aimed at the problem of stable majority of the National Assembly, which aims to increase the efficiency of the government system. Due to the constitutional amendments of 2015, the extent of jurisdiction of the legislative power body, the National Assembly, was significantly changed.

Some features of the legislative regulation of stable majority in the Parliament have been analyzed in the article, at the same time recording the impossibility of ensuring the regulation of the mentioned problem by legal means.

In 2015, in alignment with the 89th Amendment to the Constitution, as specified in Section 3 of the Election Law, measures were put in place to ensure the establishment of a stable parliamentary majority.

Moreover, the article explores the inquiries and observations made by legal experts and scholars regarding the achievement of the parliamentary majority's goal of ensuring stability.

The author's ultimate conclusion posits that one of the most crucial means of maintaining stability within the parliament is the formation of political parties that adhere to a well-defined ideological platform and employ democratic decision-making processes within their party structures. It is also stated that this approach may gain widespread acceptance, as it facilitates the National Assembly's effective compliance with its legislative statutes. The adoption and establishment of significant constitutional bodies during this time emphasize the need for a well-informed populace, which includes an understanding of the positions held by the opposition.

***Key words**: National Assembly, Constitution, stability, parliamentary majority, electoral system, state administration system.*

Ընդունվել է տպագրության 21.11.25թ.

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարան,
հայցորդ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Քնապահպանական իրավիճակի նկատելի վատթարացման պայմաններում ավելի ու ավելի ենք մտահոգվում այն մասին, թե որքանով են այսօր պաշտպանված մեր հիմնական իրավունքները: Հատկապես կարևորվում է առողջ միջավայրում ապրելու իրավունքի և անձնական ու ընտանեկան կյանքը պաշտպանելու իրավունքի միջև կապը, քանի որ շրջակա միջավայրի անբարենպաստ պայմանները կարող են անմիջականորեն ազդել մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության, ինչպես նաև անձնական և ընտանեկան բարեկեցության վրա:

Հետազոտության նպատակներ

Աշխատանքի նպատակն է անցկացնել շրջակա միջավայրի ոլորտում իրավունքի և անձնական ու ընտանեկան կյանքի պաշտպանելու անձեռնմխելիության իրավունքի փոխազդեցության իրավական վերլուծություն, բացահայտել միջազգային և ներպետական մոտեցումները ու այդ իրավունքների ապահովման խնդրահարույց ոլորտները:

Մեթոդներ

Հետազոտության մեթոդները ներառում են համեմատական իրավական վերլուծություն, կարգավորող ակտերի համակարգում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և ՀՀ իրավական ակտերի վերլուծություն, ինչպես նաև մարդու իրավունքների և շրջակա միջավայրի ոլորտի միջառարկայական գրականության ուսումնասիրություն:

Եզրակացություններ

Անհրաժեշտ է կատարելագործել կարգավորող կիրառական մեխանիզմները, ապահովել մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ մոտեցում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի գործոնները, և մեծացնել քաղաքացիների մասնակցությունը շրջակա միջավայրի մոնիթորինգի և պաշտպանության հետ կապված որոշումների կայացմանը:

Արդյունքներ

Ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ չնայած շրջակա միջավայրի պայմանների և անձնական կյանքի ու ընտանեկան կյանքի իրավունքի միջև կապի պաշտոնական ճանաչմանը, գործող իրավական մեխանիզմները դեռևս բավարար արդյունավետ չեն:

Բացահայտվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ հստակ իրավական չափանիշների բացակայություն, որոնց միջոցով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարող է համարվել անձնական կյանքին միջամտություն և շրջակա միջավայրի գործոնների անբավարար ինտեգրում քաղաքաշինական որոշումների կայացման և շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգերում:

Վերլուծությունը ցույց տվեց, որ քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ավելի կոնկրետ իրավական գործիքներ և սահմանել թափանցիկ ընթացակարգեր հանրության մասնակցությունն ապահովելու շրջակա միջավայրի կարևոր որոշումներ կայացնելու համար: Արդյունքները ընդգծում են համալիր մոտեցման անհրաժեշտությունը, որը կհամապատասխանեցնի շրջակա միջավայրի չափանիշները անձնական կյանքի անձեռնմխելիության ինստիտուտին:

Հիմնաբառեր *- Շրջակա միջավայրի իրավունք, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք, շրջակա միջավայրի պաշտպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Հայաստանի Հանրապետություն:*

Ներածություն

Շրջակա միջավայրի և մարդու իրավունքների միջև անբաժանելի կապի մասին գաղափարները սկսեցին ի հայտ գալ 20-րդ դարի վերջին: Այսպիսով, դեռևս 1972 թվականին Ստոկհոլմում կայացած ՄԱԿ-ի շրջակա միջավայրի վերաբերյալ կոնֆերանսում հռչակվեց, որ յուրաքանչյուր մարդ ունի «հիմնարար իրավունք ապրելու այնպիսի միջավայրում, որը բավարար է կյանքի և բարեկեցության պատշաճ մակարդակի համար»[1]: Դեռևս 1972 թվականին ամերիկացի իրավագետ Ք. Սթոունը հրապարակեց «Արդյոք պե՞տք է, որ ծառերը կանգուն լինեն» հոդվածը՝ բարձրացնելով այն հարցը, թե արդյոք անտառներն ու այլ բնական օբյեկտները պետք է ունենան օրինական իրավունքներ[2]:

Մարդու անձնական կյանքի իրավունքը պրակտիկորեն իրացվում է միայն բարենպաստ շրջակա միջավայրի պայմաններում: Աղմուկը, թափոնները և թունավոր արտանետումները խաթարում են տան խաղաղությունն ու հարմարավետու-

www.arpatyumjournal.com

թյունը, առաջացնում են առողջության համար մշտական վտանգ և առաջացնում հոգեբանական անհանգստություններ: Սա հաստատվում է Եվրոպական դատարանի դատական նախադեպերով: Օրինակ՝ Case of López Ostra v. Spain (ՄԻԵԴ, 1994 թվականի դեկտեմբերի 9) գործում, որը վերաբերում էր թափոնների վերամշակման գործարանից օդի մշտական աղտոտման հետևանքով դիմողի իրավունքների խախտմանը, Դատարանը գտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ առողջությանը անմիջական սպառնալիքի բացակայության դեպքում «շրջակա միջավայրի լուրջ աղտոտումը կարող է ազդել մարդու բարեկեցության վրա և խանգարել նրան վայելել իր տունը այնպես, որ կարող է տուժել նրա անձնական և ընտանեկան կյանքը»: Ի վերջո, Դատարանը պարտավորեցրել է Իսպանիայի իշխանություններին փոխհատուցել տուժած ընտանիքի բարոյական վնասը[3]: Նմանատիպ մոտեցում է նկատվում նաև Հայաստանում: Լոռու մարզի Թումանյան շրջանի մոտ 70 բնակիչ դատական հայց են ներկայացրել Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի դեմ՝ պնդելով, որ ծանր մետաղների արտանետումները խախտում են իրենց առողջության և անձնական կյանքի իրավունքները[4]:

Մարդու անձնական կյանքի իրավունքի իրացումը միջազգային փաստաթղթերում

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը[5] և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածը[6] պաշտպանում են անձի անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքը: Երկու փաստաթղթերն էլ ենթադրում են ինչպես պետության պարտականությունը՝ ստեղծել այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ են տալիս իրականացնել այս իրավունքը, այնպես էլ պաշտպանություն պետական միջամտությունից:

Վերջին տարիներին Եվրոպական դատարանը 8-րդ հոդվածն ավելի լայնորեն մեկնաբանել է մի քանի գործերի շրջանակներում, որոնք հաջորդիվ կուսումնասիրենք՝ ընդունելով, որ «միջավայրի որակը կարող է ազդել անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի վրա»[7]: Անձնական կյանքի խախտման մեջ են մտնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են աղտոտվածությունը, բարձր աղմուկը և տհաճ հոտերը: Արդյունքում, շրջակա միջավայրի պաշտպանությունը դառնում է իրավական խնդիր, որը պաշտպանում է մարդկանց անձնական, ինչպես նաև քաղաքական կյանքը:

Անձնական կյանքի իրավունքի իրացումը ներպետական իրավական ակտերում

Հայաստանի համար հատկապես կարևոր է շրջակա միջավայրի իրավունքի և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքների ինտեգրման հարցը: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»: (Հոդված 12, կետ 1): Ավելին, այն սահմանում է բոլորի պարտականությունը՝ հոգ տանել շրջակա միջավայրի պահպանման մասին: (Հոդված 12, կետ 2)[8]

Շրջակա միջավայրի և անձնական կյանքի միջև կապը

Ակնհայտ է դառնում, որ շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները անմիջականորեն սպառնում են անձնական կյանքի սահմաններին, եթե մենք այն լայնորեն դիտարկենք որպես անվտանգ վայր՝ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր առումով: Անհնար է քննարկել «անձնական կյանքի իրավունքը», եթե մարդը պետք է ապրի արդյունաբերական գոտու մոտ, որը երեխաների մոտ քրոնիկ հիվանդություններ կարող է առաջացնել, կամ ստիպված է ամեն օր շնչել թույլատրելիից բարձր աղտոտված օդ:

Նման հանգամանքները եվրոպական դատական նախադեպային ակտերում արդեն ճանաչվել են որպես մարդու իրավունքների խախտումներ: Օրինակ՝ Guerra and Others v. Italy (1998) գործում դատարանը նշել է, որ պետությունը պետք է քաղաքացիներին հասանելիություն տա վտանգավոր արտանետումների վերաբերյալ հավաստի տեղեկատվությանը, քանի որ նման տեղեկատվության բացակայությունը վտանգում է նրանց առողջությունն ու անձնական կյանքը[9]: Մեկ այլ՝ Fadeyeva v. Russia (2005) գործում Եվրոպական դատարանը որոշել է, որ դիմորդի անձնական կյանքի և բնակարանի իրավունքը խախտվել է՝ մետալուրգիական գործարանի մոտ ապրելով, որտեղ աղտոտվածության մակարդակը թույլատրելիից բարձր էր[10]:

Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ շրջակա միջավայրի իրավունքների և անձնական կյանքի անձեռնմխելիության միջև գիծը որոշ չափով աղավաղված է: Բնապահպանական հարցերը նախկինում համարվում էին «հանրային», բայց այսօր դրանք դարձել են խիստ անձնական:

Հետազոտության արդիականությունը

Շրջակա միջավայրի ազդեցությունը անձնական կյանքի անձեռնմխելիության վրա դեռևս լավ հետազոտված չէ, չնայած նրա, որ վերջին տարիներին շրջակա միջավայրի անվտանգության հարցերի շուրջ շատ քննարկումներ են եղել թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Իրավական աշխատանքների մեծ մասը վերաբերում է միայն առողջ միջավայրի իրավունքին՝ անտեսելով, դրա կապը

անձնական կյանքի անձեռնմխելիության և մարդու առողջության հետ: Այնուամենայնիվ, այս տարրը հատկապես կարևոր է մարդասիրական իրավական համակարգ ստեղծելու համար:

Մարդու իրավունքների ժամանակակից ընկալում ունենալու համար մարդկանց պետք է դիտարկել որպես անհատներ, որոնք ապրում են որոշակի միջավայրերում, այլ ոչ թե որպես վերացական սուբյեկտներ: Կանաչ տարածքներին, մաքուր ջրին և օդին հասանելիությունը պարզապես հարմարություններ չեն. դրանք անհրաժեշտություն են անձնական կյանքը վայելելու համար: Հետևաբար, շրջակա միջավայրի պաշտպանությունը ոչ միայն պետության պարտականությունն է, այլև միջոց՝ երաշխավորելու, որ բոլորը հնարավորություն ունենան ապրել անվտանգ, խաղաղ և արժանապատիվ կյանքով:

Օրենքի կիրառման հետ կապված խնդիրներ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում անձնական կյանքի պաշտպանության և բարենպաստ միջավայրի իրավունքի իրականացման ոլորտում

ՀՀ իրավական համակարգը բախվում է երկու հիմնական մարտահրավերի՝ մի կողմից՝ կարգավորող մակարդակում ամրագրել հիմնական բնապահպանական պարտավորությունները և կենսապայմանները, մյուս կողմից՝ ապահովել քաղաքացիների արդյունավետ հասանելիությունը այնպիսի միջավայրի, որտեղ կարող է իրականացվել նրանց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը: Չնայած օրենսդրական դրույթների առկայությանը, գործնականում առկա զգալի բացթողումները խոչընդոտում են այդ իրավունքների լիարժեք իրականացմանը:

Իրավական երաշխիքներ և նորմատիվ հիմքեր

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին[11]:

Այս կարգավորումն ամրագրում է քաղաքացիական պարտքը և պետության պարտավորությունը՝ պահպանելու կյանքի որակը: Բացի այդ, ՀՀ օրենսդրության մաս են կազմում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումները կարգավորող հատուկ օրենքները: Այսպիսով, ներկայումս ուժի մեջ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը[12]:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 85.1 հոդվածը սահմանում է պատասխանատվություն շրջակա միջավայրի խախտումների և բնական միջավայրում թափոնների այրման համար[13]:

Այս կանոնները հիմք են հանդիսանում հետևյալի համար՝ ա) շրջակա միջավայրի ճանաչումը որպես կյանքի անհրաժեշտ պայման, բ) հնարավոր վնասը գնահատելու և շրջակա միջավայրը պաշտպանելու գործընթացների առկայությունը, և գ) շրջակա միջավայրի խախտումների համար իրավական պատասխանատվության ապահովումը:

Իրավակիրառման բացերը և քաղաքացիների հասանելիությունը

Հայաստանում շրջակա միջավայրի իրավունքների զարգացումը հետևողական է թվում միայն թղթի վրա: 1990 թվականի Անկախության հռչակագրում բնական պաշարները շատ լայնորեն են հիշատակվում՝ առանց քաղաքացիների համար որևէ կոնկրետ իրավունքների. «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է» (կ.7)[14]: 1995 թվականի Սահմանադրությունը պարզապես սահմանում էր պետության պատասխանատվությունը: Սահմանադրության 10-րդ հոդվածում նշվում էր, որ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»[15]: Սա վերաբերում էր պետության գործառույթին, բայց ոչ քաղաքացիների իրավունքին՝ պահանջել շրջակա միջավայրի չափանիշների պահպանում: Միայն 2005 թվականի բարեփոխման արդյունքում Սահմանադրության մեջ ներդրվեց լիարժեք անհատական երաշխիք: Սահմանադրության 33.2 հոդվածը ամրագրեց, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»[16]: Սակայն գործնականում այս իրավունքը մեծ մասամբ չէր իրացվում: 33.2-րդ հոդվածը չէր համարվում պաշտպանության անկախ հիմք, քանի որ օրենքը չէր սահմանում անհրաժեշտ ընթացակարգեր, չկային վնասի չափանիշներ, շրջակա միջավայրի ռիսկերի գնահատման չափանիշներ, շրջակա միջավայրի մոնիթորինգին քաղաքացիների մասնակցության

www.arpajournal.com

ընթացակարգ կամ խախտումները ապացուցելու մեխանիզմ:

2015 թվականի Սահմանադրությունը վատթարացրեց այս խնդիրը: Անհատական իրավունքները գործնականում անհետացան: 12-րդ հոդվածի նոր տարբերակում միայն նշվում է. «1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: 2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»[17]: Այս դրույթը դարձել է պետական քաղաքականության ընդհանուր սկզբունք՝ առանց քաղաքացիներին դատարանում պաշտպանություն փնտրելու հնարավորություն երաշխավորելու: Հետևաբար, 2015 թվականից ի վեր դատարանները շրջակա միջավայրի վեճերը սկսել են ավելի ու ավելի դիտարկել որպես պետական վարչական հայեցողության հարցեր, այլ ոչ թե որպես սահմանադրական մարդու իրավունքների խախտումներ:

Արդյունքում, քաղաքացիները հայտնվել են կրկնակի դժվարության մեջ՝ չկա ո՛չ շրջակա միջավայրի իրավունքների ուղղակի սահմանադրական երաշխիք, ո՛չ էլ դրանց խախտումը ապացուցելու ընթացակարգային գործիքներ: Սա լրջորեն սահմանափակում է հանրության արդարադատությանը հասանելիությունը և գործնականում անհնար է դարձնում շրջակա միջավայրի շահերի պաշտպանությունը:

Երկրորդ, ըստ «Էկոլուր» հետազոտական կենտրոնի կողմից պատրաստված Հայաստանում շրջակա միջավայրի օրենսդրության վիճակի և հանրության մասնակցության մեխանիզմների վերանայման (2022), քաղաքացիների համար շրջակա միջավայրի ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը դեռևս լիարժեք չէ, իսկ հանրության մասնակցությունը որոշումների կայացմանը հաճախ ֆորմալ է: Այս զեկույցը ընդգծում է, որ շրջակա միջավայրի գնահատման և հանրության մասնակցության ընթացակարգերի համակարգը հետագա կատարելագործում և ուժեղացված վերահսկողություն է պահանջում[18]:

Ազդեցությունը անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի իրացման վրա

Անձնական և ընտանեկան կյանքը գաղտնիության, անվտանգության և բարեկեցության անհրաժեշտ աստիճանով վայելելու կարողությունը անմիջականորեն տուժում է, երբ անձի կենսապայմանները վատթարանում են: Սա նշանակում է, որ ՀՀ-ի համատեքստում շրջակա միջավայրի խախտումները, ինչպիսիք են օդի, ջրի և հողի աղտոտումը, ինչպես նաև արդյունաբերական արտանետումների անբավարար վերահսկողությունը, բացի էկոլոգիական հետևանքներից, ունեն նաև իրավական հետևանքներ անձնական կյանքի պաշտպանության համար:

Խնդիրն ավելի է սրվում այն փաստով, որ եթե քաղաքացին չի տիրապետում իր բնակության վայրի մասին իրական տեղեկատվության, օրինակ՝ ապրում է բարձր աղտոտվածության մակարդակ ունեցող արդյունաբերական տարածքի մոտ, կամ չի կարող ազդել ենթակառուցվածքային նախագծերի մասին որոշումների կայացմանը, արդյունքում, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրականացումը սահմանափակվում է անկախության, ներդաշնակության և ընտանիքի բարեկեցության իմաստով:

Հիմնական իրավական խնդիրները

Հայաստանի իրավական համակարգն ունի հետևյալ հիմնական խնդիրները՝

1. Առողջ շրջակա միջավայրի իրավունքը որպես մարդու հիմնական իրավունք չի երաշխավորվում Սահմանադրությամբ: Բարենպաստ միջավայրի իրավունքի մասին ձևակերպման բացառումը ներկայիս գործող Սահմանադրությունից նվազեցնում է քաղաքացիների համար այս հիմքով ուղղակիորեն իրենց խախտված իրավունքները բողոքարկելու իրավական հնարավորությունները:

2. Մասնակցության և իրազեկման մեխանիզմների անբավարար իրականացում

Հանրային մասնակցությունը թույլատրվում է օրենքով, բայց պրակտիկայում որոշումների վրա ազդելու քաղաքացիների լիազորությունը սահմանափակված է, և շրջակա միջավայրի ռիսկերի վերաբերյալ տվյալները կարող են հեշտությամբ հասանելի չլինել:

3. Անձնական կյանքի իրավունքի և շրջակա միջավայրի իրավունքի միջև կապը լիարժեք ամրագրված չէ: Իրավական համակարգը հստակորեն չի նշում, որ շրջակա միջավայրի խախտումները միշտ դիտարկվում են որպես անձնական և ընտանեկան կյանքի սպառնալիք կամ միջամտություն, չնայած այն դիտարկման, որ միջազգային դատարանների պրակտիկան հաստատում է այս տրամաբանությունը:

Հետևանքներ և կարևորություն

Վերը նշված իրավական հարցերն ունեն կոնկրետ հետևանքներ: Դրանք նվազեցնում են քաղաքացիների գաղտնիության պաշտպանության արդյունավետությունը, երբ կենսապայմանները վտանգավոր կամ անկայուն են: Օրինակներ են մշտական աղմուկը կամ աղտոտումը, որը խաթարում է ընտանեկան կյանքը և հանգիստը, կամ արդյունաբերական արտանետումներով տարածքներում ապրող երեխաների քրոնիկ հիվանդությունները: Այս իրավիճակներում շրջակա միջավայրի գործոնները անհատի կամքի հակառակ, սահմանափակում են անձնական կյանքի իրավունքի իրա-

www.ardaradatutyunjournal.com

կանացումը:

Բացի այդ, մարդիկ կորցնում են որոշումներ կայացնելու, օրինակ՝ տեղափոխվելու, բողոքներ ներկայացնելու հնարավորությունը՝ քաղաքացիների մասնակցության և տեղեկատվության մատչելիության ցածր մակարդակի պատճառով, ինչը նաև սահմանափակում է նրանց ինքնավարությունը, որը անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի բաղադրիչ է:

Կատարելագործման անհրաժեշտ ուղղությունները

Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները.

ա. Օրենսդրական մակարդակով ճանաչում, որ անբարենպաստ միջավայրը կարող է դիտվել որպես անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի խախտում, ինչը ճանապարհ կբացի նման խախտումների դեմ դատական պաշտպանության համար:

բ. Շրջակա միջավայրի փորձագիտական որոշումների կատարման համակարգի ամրապնդում՝ չկատարման համար հստակ պատժամիջոցներով:

գ. Հասարակական մասնակցության և տեղեկատվական հասանելիության մեխանիզմների ուժեղացում, ներառյալ նախագծերի ազդեցության վերաբերյալ պարտադիր իրազեկումը և քաղաքացիների՝ որոշումների վրա ազդելու հնարավորությունը:

Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի և շրջակա միջավայրի հարցերի փոխկապակցվածությունը միջազգային իրավական և դատական մոտեցումներով

1. Միջազգային իրավունքի ուղեցույցները

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 8-րդ հոդվածը երաշխավորում է անձի անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքը: Բացի մարդու անձնական կյանքին միջամտությունից պաշտպանելը, այն պետությանը պարտավորեցնում է այս իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել[19]:

Վերջին տասնամյակներում միջազգային պրակտիկան սկսել է ընդունել, որ անբարենպաստ շրջակա միջավայրի պայմանները, ինչպիսիք են օդի, ջրի և հողի աղտոտումը, ինչպես նաև անցանկալի արդյունաբերական արտանետումները, կարող են հատուկ ազդեցություն ունենալ անհատի անձնական և ընտանեկան կյանքի վրա: Սա ընդլայնում է անձնական կյանքի իրավունքի ավանդական մեկնաբանությունը և հաստատում է դրա և շրջակա միջավայրի պայմանների միջև հստակ կապ:

2. ՄԻԵԴ-ի հիմնական որոշումներ

2.1 López Ostra v. Spain (1994)[20]

López Ostra v. Spain գործում Եվրոպական դատարանը քննել է դիմորդի բողոքը, որը բնակվում էր թափոնների մաքրման գործարանի հարևանությամբ, որի գործունեությունը ուղեկցվում էր ուժեղ հոտերով, աղմուկով և թունավոր արտանետումներով: Այս ազդեցությունները անմիջական ֆիզիկական վնաս չէին պատճառում, բայց նրա տանը ապրելը դարձնում էին չափազանց անհարմար:

Դատարանը պարզել է, որ նման պայմանները վատթարացնում են անձի «կյանքի որակը» իր իսկ տանը, որը ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության հիմնական տարր է: ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ՝

- Շրջակա միջավայրի վրա լուրջ ազդեցությունը կարող է միջամտություն լինել անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքին
- Պետությունն ունի դրական պարտականություն՝ քաղաքացիներին պաշտպանելու արդյունավետ միջոցներ ձեռնարկելու համար, նույնիսկ եթե վնասի աղբյուրը մասնավոր ձեռնարկություն է
- Իսպանական իշխանությունների կողմից անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելը հանգեցրել է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտման:

Այս որոշումը դարձավ ելակետային շրջակա միջավայրի ստանդարտների մշակման համար՝ անձնական կյանքի իրավունքի համատեքստում:

2.2 *Guerra and Others v. Italy* (1998)[21]

Guerra and Others v. Italy գործը վերաբերում էր Մանֆրեդոնիայի քիմիական գործարանի մոտակայքում բնակվող քաղաքացիների խնդրին, որը հաճախակի վթարների և թունավոր արտանետումների պատճառով ավելի մեծ ռիսկ էր ներկայացնում:

Հիմնական խնդիրը իշխանությունների կողմից գործարանի գործունեության հետ կապված ռիսկերի մասին բնակիչներին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն չտրամադրելն էր: Չնայած քիմիական վթարների վերաբերյալ տվյալների առկայությանը՝ պետությունը չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, չի տեղեկացրել հանրությանը կամ չի ապահովել համարժեք պաշտպանություն:

ՄԻԵԴ-ը որոշել է՝

- Պետությունը պարտավոր է քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրել շրջակա միջավայրի ռիսկերի մասին, եթե դա անհրաժեշտ է նրանց առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանելու համար
- Նման տեղեկատվություն չտրամադրելը նաև խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, քանի որ այն անմիջականորեն ազդում է քաղաքացիների անձնական և ընտանեկան կյանքը անվտանգ կազմակերպելու ունակության վրա:

www.arpadatuyjournal.com

Այս դեպքը ամրապնդեց դրական պարտավորությունների հասկացողությունը, որոնք ներառում են տեղեկատվության բացությունը և թափանցիկությունը:

2.3 *Fadeyeva v. Russia* (2005)[22]

Fadeyeva v. Russia գործում դիմորդը բնակվում էր մետաղագործական գործարանի գործունեության պատճառով պաշտոնապես սանիտարական վտանգի ենթարկված տարածքում: Ռուսաստանի իշխանությունները ընդունել էին արտանետումների չափազանց մեծ ծավալը և առողջության համար ռիսկերը, բայց տասնամյակներ շարունակ միջոցներ չէին ձեռնարկել նրան տեղափոխելու կամ աղտոտումը նվազեցնելու համար:

Դատարանը որոշել է՝

- Այս գործում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հաստատված է որպես համակարգային և երկարաժամկետ
- Պետությունը չի կատարել իր դրական պարտականությունը՝ պաշտպանել քաղաքացուն իր իսկ կողմից ընդունված վնասից
- Ռուսաստանին կարելի է պատասխանատու համարել արդյունավետ միջոցառումների բացակայության համար (տեղափոխում, փոխհատուցում, արտանետումների վերահսկում):

ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ նույնիսկ առանց առողջությանը ուղղակի վնաս հասցնելու, կենսամիջավայրի որակի խախտումը կարող է միջամտություն լինել անձնական կյանքին:

2.4 *Duarte Agostinho and Others v. Portugal and 32 Others* (2024)[23]

Այս գործը դարձավ ՄԻԵԴ-ի պատմության մեջ կլիմայական կարևորագույն գործերից մեկը: Երիտասարդ դիմորդների մի խումբ պնդում էր, որ պետությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկում կլիմայական ճգնաժամը կանխելու համար, ինչը կարող է՝

- վատ ազդեցություն ունենալ իրենց առողջության համար,
- սահմանափակել նրանց կենսապայմանները,
- ազդել նրանց հոգեբանական վիճակի վրա,
- խախտել 2-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված նրանց իրավունքները:

<u>Կարևոր է, որ որոշումը չի քննվել ըստ էության:</u>

32 երկրների համար Դատարանը բողոքը անընդունելի է ճանաչել իրավասության բացակայության պատճառով, քանի որ դիմորդները չեն բնակվել այդ երկրներում: Պորտուգալիայի վերաբերյալ Դատարանը նշել է՝

- դիմորդները չեն սպառել ներպետական միջոցները,
- ՄԻԵԴ-ը չի կարող փոխարինել ազգային դատարաններին,
- կլիմայական կարգավորման հարցերը պահանջում են նախնական գնահատում ներպետական մակարդակով:

Ինչու է գործը կարևոր շրջակա միջավայրի վերաբերյալ քննարկման համար

Անկախ մերժման, որոշումն ունի կոնցեպտուալ նշանակություն: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ կլիմայի փոփոխությունը կարող է պոտենցիալ ազդել 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների վրա, սակայն պահանջների ընդունելիության գնահատումը պահանջում է սուբսիդիարության սկզբունքի խիստ պահպանում: Դատարանը ցույց է տվել պետությունների արտատարածքային պատասխանատվության սահմանները կլիմայական գործերով: Ինչպես նաև Դատարանը հստակեցրել է, որ շրջակա միջավայրի և կլիմայական ռիսկերը ավտոմատ կերպով չեն կազմում 8-րդ հոդվածի խախտում՝ անձնական կյանքի վրա ազդեցության վերաբերյալ կոնկրետ և անհատականացված ապացույցների բացակայության դեպքում:

Այսպիսով, Duarte-ն ցույց է տալիս 8-րդ հոդվածի կիրառման շրջանակը և սահմանափակումները գլոբալ շրջակա միջավայրի հարցերում՝ այն դարձնելով ժամանակակից իրավական դաշտի էական տարր:

3. Պրակտիկ հետևանքներ մարդու իրավունքների համար

Այս օրինակները ընդգծում են մի շարք կարևոր կետեր.

Եթե շրջակա միջավայրի խախտումները (օրինակ՝ օդի աղտոտվածությունը, արդյունաբերական արտանետումները, աղմուկը և հոտերը) զգալիորեն վատթարացնում են կենսամակարդակը, դրանք կարող են դիտվել որպես միջամտություն անձնական և ընտանեկան կյանքին:

Պետությունները դրականորեն պարտավոր են վերահսկել նման գործունեությունը և երաշխավորել հեռավորությունը, տեղափոխումը կամ բավարար ռիսկերի մեղմացման միջոցառումները:

Անհատական իրավունքներն ու հանրային շահերը (օրինակ՝ արդյունաբերությունը և տնտեսական գործունեությունը) պետք է բավականին հավասարակշռված լինեն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Fadeyeva v. Russia (2005) գործում նշել է, որ Ռուսաստանը չի պահպանել այս հավասարակշռությունը[24]:

4. Հայաստանի համար կիրառելի մոդել

Այս դեպքերը կարևոր չափանիշ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակը գնահատելու համար, չնայած որ դրանք մեզ համար ուղղակիորեն նախադեպեր չեն ստեղծում: Հաշվի առնելով հայկական համատեքստը, որը ներառում է շրջակա միջավայրի խնդիրներ (օրինակ՝ արդյունաբերական աղտոտվածություն,

տեղեկատվական թափանցիկության բացակայություն և քաղաքացիների մասնակցություն), ակնհայտ է, որ ազգային օրենքներն ու գործելակերպը պետք է հաշվի առնեն այն հնարավորությունը, որ շրջակա միջավայրի քայքայումը կարող է զրկել քաղաքացիներին իրենց անձնական կյանքի իրավունքը լիարժեք իրականացնելու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, կարևոր է հիշել, որ հաճախ ազգային մակարդակով հստակ չի ընդունվում, որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը իրական կերպով խախտում է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Ազգային օրենքները կարող են նախատեսել շրջակա միջավայրի պաշտպանությունը, սակայն պարտադիր չէ, որ այն կապեն որպես այդպիսին անձնական կյանքի իրավունքի խախտման հետ: Այսպիսով, քաղաքացիները բախվում են իրավական բացի. նրանք կարող են ապացուցել բնապահպանական պարտավորության խախտումը, սակայն ոչ միշտ այն կապել անձնական կյանքի որպես ինքնուրույն իրավունքի խախտման հետ:

Հետևաբար, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- Ինչպես միանշանակ հաստատում է միջազգային դատական պրակտիկան, մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը կարող է խախտվել շրջակա միջավայրի գործոններից և կենսապայմաններից:
- Այս ռազմավարությունը պետք է ներառվի հայկական ազգային իրավական համակարգում, որպեսզի պաշտպանվի շրջակա միջավայրն ամբողջությամբ՝ միաժամանակ ընդունելով այն որպես անհատի անձնական կյանքի մի մաս:
- Հայաստանի համար սա ենթադրում է օրենքների, իրավական ընթացակարգերի և քաղաքականության ստեղծում կամ փոփոխություն, որոնք մարդկանց հնարավորություն կտան պահանջել անձնական կյանքի պաշտպանություն, եթե իրենց կենսապայմանները անցանկալի են:

Կարգավորող դրույթները և դրանց կիրառումը Հայաստանի Հանրապետությունում: Մեխանիզմներ, պրակտիկա և օրենքի բացեր

1. Իրավական հիմք

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պահանջում է, որ բոլորս հոգ տանենք բնության մասին և ամրագրում է այն գաղափարը, որ պետությունը պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանման և վերականգնման համար[25]: Այս նորմը սահմանում է շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության սահմանադրական չափորոշիչը և ծառայում է որպես հիմք շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում միջոցառումների ստեղծման համար, որոնք կարևոր են քաղաքացիների անձնական կյանքի պաշտպանության համար:

Նախատեսվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարգավորող հիմնական իրավական և ընթացակարգային գործիքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՇՄԱԳ) օրենքն է, որը սահմանում է պետական փորձագիտական եզրակացությունների, հանրային լսումների և հանրային ծանուցման պահանջներ[26]: 2023 թվականին փոփոխությունների և նոր տարբերակի ընդունումը, որը պարզաբանում է կարծիքներ կիրառող մարմինների լիազորությունները և ընդլայնված հանրային մասնակցության ընթացակարգերը, կարևոր թարմացում է: Այս փոփոխությունները անմիջականորեն ազդում են քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու և իրենց շրջակա միջավայրին ազդող որոշումների կայացմանը մասնակցելու ունակության վրա:

Բնական ռեսուրսների օգտագործման կանոնակարգերը, խախտումների համար պատասխանատվությունը և հատուկ պահպանվող բնական տարածքների պահպանումը կարգավորվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքով և դրան առնչվող օրենքներով[27]: Այս օրենքները, երբ համակցվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» (ՇՄԱԳ) հետ, ապահովում են շրջակա միջավայրի պահպանման իրավական հիմքը:

Միջազգային պարտավորություններ

2001 թվականին Հայաստանը վավերացրել է Օրհուսի կոնվենցիան[28]: Այս պարտավորությամբ ամրապնդվում են շրջակա միջավայրի հարցերում արդարադատության, որոշումների կայացմանը մասնակցության և շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ազգային չափանիշները: Օրհուսի կոնվենցիայի դրույթները պետք է ներառվեն պետական մարմինների ընթացակարգերում:

Օմբուդսմենը (մարդու իրավունքների պաշտպան) քաղաքացիներին հնարավորություն է տալիս բարձրաձայնել իրենց մտահոգությունները պետական կազմակերպությունների կողմից իրավունքների խախտումների վերաբերյալ, ներառյալ տեղեկատվության հասանելիությունը և շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումները: Սովորական դատարաններից դուրս արդարադատություն ստանալու կարևորագույն մեխանիզմներից մեկը Օմբուդսմենն է[29]:

2024 թվականի փետրվարի 19-ին ՄԻՊ-ը ընդունել է բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Հանդիպման նպատակն էր քննարկել բնապահպանական ոլորտում առկա այն

խնդիրները, որոնք առնչվում են մարդու իրավունքների պաշտպանության համակարգին Պաշտպանը նշել է, որ շրջակա միջավայրը, դրա պահպանությունն ու բնագավառում առկա խնդիրներն ուղղակիորեն կապված են մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հետ: Այս համատեքստում ընդգծվել է, որ մաքուր, առողջ, անվտանգ և կայուն զարգացող շրջակա միջավայրի բացակայության պարագայում մարդը զրկվում է իր կենսական մի շարք իրավունքների իրացման հնարավորությունից[30]: Այս ձևակերպումը տրամաբանական ուժ է տալիս իրավական նորմերին, հաստատելով, որ շրջակա միջավայրի վատթարացումը համարվում է մարդու հիմնական իրավունքների իրականացումը սահմանափակող գործոն: Քանի որ առողջությունը, ընտանեկան կյանքը և կենսապայմանները անմիջականորեն կապված են անձնական և ընտանեկան կյանքի ոլորտի հետ, օմբուդսմենի դիրքորոշումը հաստատում է, որ շրջակա միջավայրի խախտումները կարող են նաև ազդել անձնական կյանքի հարգման իրավունքի վրա՝ ազդելով առօրյա կյանքի որակի, տան անվտանգության և ընտանիքի բարեկեցության վրա:

Եզրակացություն

Հայաստանի իրավական համակարգը հիմնաբար է և մեծ մասամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն բաղկացած է շրջակա միջավայրի պաշտպանության օրենքների համակարգից, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին մասնագիտացված օրենքից (2023 թվականի բարեփոխմամբ) և միջազգային պարտավորություններից:

2. *Իրացման մեխանիզմներ՝ հանրայնացում, փորձագիտություն և դիտարկում*

Հանրության մասնակցության և շրջակա միջավայրի վրա (ՇՄԱԳ) ազդեցության գնահատման ընթացակարգեր

ՇՄԱԳ օրենքը հստակորեն նախատեսում է հետևյալ փուլերը՝ նախաձեռնության մասին ծանուցում, գնահատման նյութերի պատրաստում, նյութերի հրապարակում, հանրային քննարկումներ (լսումներ), փորձագիտական եզրակացության ստացում և լիազոր մարմնի կողմից որոշումների կայացում: 2023 թվականի փոփոխությունները կարգավորել են լսումների և նյութերի հրապարակման վերջնաժամկետները և ամրապնդել տեղեկատվության պահանջները: Սա, կարծես, բավականաչափ լավ ռեսուրսներ է ապահովում բնակիչներին՝ իրենց կարծիքը հայտնելու և իրենց շրջապատին ազդող նախագծերի մասին տեղեկանալու համար:

Սակայն, գործնականում, ընթացակարգերի իրացումը հարցեր է առաջացնում: Նյութերի հրապարակումը հաճախ մակերեսային է (տեղեկատվությունը տեղադրվում է կայքերում, բայց ծանուցումները չեն հասնում շահագրգիռ անձանց), քննարկումների ժամկետները միշտ չէ, որ թույլ են տալիս մասնակիցներին լիովին պատրաստվել, և գնահատման որակը (ներառյալ այլընտրանքային տարբերակների և մեղմացնող միջոցառումների ուսումնասիրության ամբողջականությունը) տարբեր է: Օրհուսի ստանդարտների կիրառման վերաբերյալ ինչպես տեղական վերլուծական ակնարկները, այնպես էլ միջազգային զեկույցները փաստաթղթավորում են այս գործնական խնդիրները:

Պետական փորձագետների կողմից վերահսկողություն և կարծիքների կիրառում

ՇՄԱԳ օրենքը նախատեսում է պետական փորձագիտական վերահսկողություն և եզրակացության տրամադրում, որը պետք է հաշվի առնվի նախագծի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Հիմնական խնդիրն այն է, որ փորձագիտական եզրակացության մեջ նշված պայմանների պահպանման մոնիթորինգի հուսալի մեխանիզմը (մոնիթորինգ, չկատարման համար պատժամիջոցներ, հաշվետվություն) միշտ չէ, որ գործում է: Նախարարական և գերատեսչական կանոնակարգերը փորձում են լրացնել այս բացը, սակայն կիրառման պրակտիկան թույլ է[31]: Մոնիթորինգի զեկույցները հազվադեպ են, և վարչական միջոցառումները միշտ չէ, որ կիրառվում են: 2024-2025 թվականներին Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հրապարակել է կանոնակարգերի փաթեթներ, որոնք ուղղված են վերահսկողության ամրապնդմանը, սակայն համակարգային ազդեցության համար անհրաժեշտ է պատժիչ և կանխարգելիչ միջոցառումների հետևողական պրակտիկա:

Օմբուդսմենի դերը և արդարադատության հասանելիությունը

Բնապահպանական հարցերով դատական պաշտպանության հասանելիությունը հնարավոր է դարձել ազգային օրենքների և Օրհուսի կոնվենցիայի շնորհիվ[32]: Իրականում մարդիկ կարող են դատարաններին և Օմբուդսմենին բողոքներ ներկայացնել ընթացակարգային խախտումների կամ իրենց կենսապայմաններին սպառնացող վտանգների վերաբերյալ: Օմբուդսմենը պարբերաբար վերանայում է բնապահպանական բողոքները և առաջարկություններ անում: Այնուամենայնիվ, դատարանները հաճախ դժվարանում են գնահատել փորձագիտական կարծիքները և գիտական ապացույցները, ինչը նվազեցնում է դատական պաշտպանության արդյունավետությունը:

3. *Պրակտիկ բացեր և նորմերի իրացման հետ կապված խնդիրների օրինակներ*

Տեղեկատվության հասանելիություն

www.ardaradatutyunjournal.com

Գործնականում, ոչ բոլոր շահագրգիռ կողմերն են ստանում շինարարական կամ արդյունաբերական գործունեության ծրագրերի մասին ծանուցումներ, չնայած պաշտոնական ծանուցման պարտավորությունները հստակ նշված են: Խոշոր նախագծերի մասին համայնքներին հաճախ հայտարարվում է այն փուլում, երբ դժվար է վիճարկել որոշումը: Օրհուսի կոնվենցիան դեռևս լիովին չի իրականացվել, սակայն դրա իրականացման միջազգային առաջարկությունները ընդգծում են ժամանակին և համապարփակ տեղեկատվության կարևորությունը[33]:

Մոնիթորինգի և գնահատման որակը

ՇՄԱԳ հաշվետվությունների որակը կախված է փորձագետների հմտություններից, հետազոտության ծավալից և այլընտրանքների քննարկման ամբողջականությունից:

Որոշ նախագծեր ստանում են «պաշտոնական» հաստատում, չնայած նրա, որ դեռևս թույլ են իրականացման մոնիթորինգի միջոցառումները: Սա նշանակում է, որ նշված վնասի նվազեցման միջոցառումները կամ չեն իրականացվում, կամ անբավարար են: Սա կարևոր է քաղաքացիների անձնական կյանքի պաշտպանության համար և տեսականորեն նշված պաշտոնական «բնապահպանական» թույլտվությունը չի երաշխավորում ռիսկերի իրական վերացումը:

Դատական պրակտիկա և հասանելիության խոչընդոտներ

Չնայած շրջակա միջավայրի վերաբերյալ դատավարությունները թանկ և ժամանակատար են, քաղաքացիները հաճախ դիմում են դատարաններ: Շահերի բախում կարող է առաջանալ նաև այն պատճառով, որ դատարանները հաճախ հիմք են ընդունում սահմանափակ կամ պետական փորձագիտական գնահատականներ: Չնայած Օմբուդսմենը գործում է որպես կարևորագույն պաշտպան, նրա որոշումները միայն խորհրդատվական են և միշտ չէ, որ կատարվում են:

4. *Հետևանքներ անձնական կյանքի իրավունքի իրացման համար*

Շրջակա միջավայրի կարգավորման իրականացման հետ կապված խնդիրները անմիջական ազդեցություն ունեն քաղաքացիների անձնական իրավունքների վրա: Թերի և ուշացած տեղեկատվությունը, ֆորմալ լսումները, հիմք չունեցող եզրակացությունները և թույլ կիրառումը դժվարացնում են մարդկանց համար իրենց տների, առողջության և ընտանեկան կյանքի պաշտպանությունը: Այլ կերպ ասած՝ կա պաշտոնական իրավական պաշտպանություն, բայց չկան բավարար ընթացակարգեր այն կիրառելու համար, և հենց սա է հանգեցնում այն «իրավական բացի» առաջացմանը:

5. *Առաջարկություններ նորմերի իրացման ամրապնդման համար*

ա. Ամրապնդել տեղեկատվական մեխանիզմները: Պարտադրել կառույցներին ուղղակիորեն շահագրգիռ համայնքներին ծանուցումներ ուղարկել, հրապարակել ՇՄԱԳ-ների համառոտ ամփոփագրեր, այլ ոչ թե պարզապես ծանուցումներ, և երկարաձգել մասնակցության վերջնաժամկետները, մասնավորապես՝ խոցելի խմբերի համար (Օրհուսի պրակտիկա):

բ. Բարձրացնել գնահատումների անկախությունն ու որակը՝ ստեղծելով անկողմնակալ մասնագետների գրանցամատյան:

գ. Բարձրացնել պատասխանատվությունն ու մոնիթորինգը՝ ներդնելով հստակ պատժամիջոցներ փորձագիտական եզրակացության պայմանները չկատարելու համար և մոնիթորինգի զեկույցների պարտադիր հրապարակման մեխանիզմ:

դ. Բարելավել դատական և վարչական ընթացակարգերը՝ դատավորներին սովորեցնելով, թե ինչպես գնահատել շրջակա միջավայրի ապացույցները, ընդլայնելով անհապաղ պաշտպանության (ժամանակավոր արգելքներ, աշխատանքի կասեցում) ծավալը:

Սահմանադրական ուղենիշը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ժամանակակից մեթոդները, Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունները և Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը Հայաստանի իրավական համակարգի էական բաղադրիչներ են, որոնք պաշտպանում են շրջակա միջավայրը և, անուղղակիորեն, քաղաքացիների անձնական կյանքը: Փորձագիտական գնահատականների որակը, իրավապահ մարմինների վերահսկողությունը, տեղեկատվության մատչելիությունը և արդյունավետ դատական պաշտպանության հասանելիությունը՝ բոլորը պետք է անընդհատ ամրապնդվեն, քանի որ իրավական ձևի և պրակտիկայի միջև եղած բացը դեռևս բավականին մեծ է: Իրացման մեխանիզմների ապահովումը միայն բնապահպանական խնդիր չէ, այն Հայաստանի որոշակի համայնքներում ապրող մարդկանց անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության հարց է:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց տվեց, որ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի և շրջակա միջավայրի խնդիրների միջև եղած փոխհարաբերության հարցը վաղուց դուրս է եկել զուտ շրջակա միջավայրի հարցերի շրջանակից:

Մարդու առողջությունը կամ բարեկեցությունը վտանգող շրջակա միջավայրի աղտոտումը համարվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում[34]: Այս դիր-

քորոշումը շարունակաբար ընդունվել է միջազգային պրակտիկայում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում: Արդյունքում, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի առողջ շրջակա միջավայրի իրավունքը պաշտպանելու համար, որը դառնում է անձնական կյանքի էական բաղադրիչ:

Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել այս հարաբերությունները ճանաչելու հարցում՝ վավերացնելով կարևոր միջազգային պայմանագրեր, ինչպիսին է Օրհուսի կոնվենցիան[35], և ամրագրելով շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքները[36]: Սակայն այս չափանիշների կիրառումը ցույց է տալիս, որ դրանց իրացման մեխանիզմները դեռևս բավարար չափով արդյունավետ չեն՝ հանրության մասնակցությունը քիչ է, շրջակա միջավայրի տեղեկատվության հասանելիությունը միշտ չէ, որ երաշխավորված է, և այդ իրավունքները պաշտպանելու համար իրավական մեխանիզմների կիրառումը հազվադեպ է:

Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման թափանցիկությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներին քաղաքացիների իրական մասնակցությունը և դատական և վարչական ընթացակարգերի մշակումը, որոնք շրջակա միջավայրի ռիսկերը դիտարկում են որպես հանրային շահերի խախտում և անհատի անձնական կյանքի անձեռնմխելիության խախտում, կարևոր են իրավական պաշտպանությունը ամրապնդելու համար:

Հետևաբար, շրջակա միջավայրի պաշտպանությունը և անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանությունը նույն գործընթացի երկու կողմերն են, որոնք ապահովում են մարդկային արժանապատվության պաշտպանությունը և կայուն ապագայի ստեղծման նախադրյալները: Ժամանակակից պայմաններում այս իրավունքների արդյունավետ իրացումը հնարավոր է միայն դրանց համատեղ քննարկման և փոխադարձ ամրապնդման միջոցով:

---

[1] Stockholm 1972 - Declaration of the United Nations Conference on the Human Environment https://www.ipcc.ch/apps/njlite/srex/njlite_download.php?id=6471#:~:text=Principle%201%20Man%20has%20the,and%20he%20bears%20a%20solemn

[2] SHOULD TREES HAVE STANDING?- TOWARD LEGAL RIGHTS FOR NATURAL OBJECTS, CHRISTOPHER D. STONE https://iseethics.wordpress.com/wp-content/uploads/2013/02/stone-christopher-d-should-trees-have-standing.pdf

[3] ECHR, Case of Lopez Ostra v. Spain (1994)

[4] https://ru.aravot.am/2021/06/30/360118/

[5] Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights)

[6] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (Universal Declaration of Human Rights)

[7] ECHR, Fadeyeva v. Russia, Case of Lopez Ostra v. Spain, Guerra and Others v. Italy

[8] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015

[9] ECHR, Guerra and Others v. Italy, 1998

[10] ECHR, Fadeyeva v. Russia, 2005

[11] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015), հոդված 12

[12] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-110-Ն, 21.06.2014թ.; 03.05.2023թ. փոփոխություններով)

[13] ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 85.1

[14] Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագիր, 1990թ.

[15] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995

[16] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2005

[17] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015

[18] Ecolur Research Center. Review of Environmental Legislation and Public Participation Mechanisms in Armenia, Yerevan, 2022.

[19] ECHR, Article 8, European Convention on Human Rights

[20] ECHR, Lopez Ostra v. Spain, 1994

[21] ECHR, Guerra and Others v. Italy, 1998

[22]
[23] ECHR, Fadeyeva v. Russia, 2005
[24] ECHR, Duarte Agostinho and Others v. Portugal and 32 Others, 2024
[25] ECHR, Fadeyeva v. Russia, 2005
[26] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, (2015), 50-52 հոդվածներ
[27] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-110-Ն, 21.06.2014թ.; 03.05.2023թ. փոփոխություններով)
[28] «Քնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև հատուկ բնական տարածքների վերաբերյալ հարակից ակտերը
[29] Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), 2001թ. վավերացված ՀՀ կողմից
[30] «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը - 2016թ.
Լրատվական հոդված ՄԻՊ կայքից՝
https://ombuds.am/am/site/ViewNews/2870#:~:text=%D5%8A%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A8%20%D5%B6%D5%B7%D5%A5%D5%AC%20%D5%A7%2C%20%D5%B8%D6%80%20%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1,%D5%B4%D5%AB%20%D5%B7%D5%A1%D6%80%D6%84%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%AB%D6%80%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%B6%D5%A1%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81
[31] «Օրենքը կիրարկող հիմնական իրավական ակտերը» - ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, 2024 թ. մայիսի 10
[32] Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), 2001թ. վավերացված ՀՀ կողմից
[33] UNECE. Reports on Implementation of Aarhus Convention, վերջին հասանելի հրատարակությունը
[34] ECHR, Article 8, European Convention on Human Rights, key cases: Lgpez Ostra v. Spain (1994); Fadeyeva v. Russia (2005)
[35] Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), 2001թ. վավերացված ՀՀ կողմից
[36] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, (2015)

Օգտագործված գրականություն

1. Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), 2001թ. վավերացված ՀՀ կողմից
2. UNECE. Reports on Implementation of Aarhus Convention
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, (2015), 50-52 հոդվածներ
5. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը - 2016թ.
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-110-Ն, 21.06.2014թ.; 03.05.2023թ. փոփոխություններով)
7. «Քնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև հատուկ բնական տարածքների վերաբերյալ հարակից ակտերը
8. «Օրենքը կիրարկող հիմնական իրավական ակտերը» - ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, 2024 թ. մայիսի 10
9. ECHR, Case of Lopez Ostra v. Spain, 1994
10. ECHR, Guerra and Others v. Italy, 1998
11. ECHR, Fadeyeva v. Russia
12. ECHR, Article 8, European Convention on Human Rights
13. ECHR, Duarte Agostinho and Others v. Portugal and 32 Others, 2024
14. Լրատվական հոդված ՄԻՊ կայքից՝
https://ombuds.am/am/site/ViewNews/2870#:~:text=%D5%8A%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A8%20%D5%B6%D5%B7%D5%A5%D5%AC%20%D5%A7%2C%20%D5%B8%D6%80%20%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1,%D5%B4%D5%AB%20%D5%B7%D5%A1%D6%80%D6%84%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%AB%D6%80%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%B6%D5%A1%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81

Карен Туманян
Международный университет Евразия, аспирант

РЕЗЮМЕ

Влияние окружающей среды в контексте права на неприкосновенность частной жизни

В условиях заметного ухудшения экологической ситуации мы все больше обеспокоены степенью защиты наших основных прав. Связь между правом на жизнь в благоприятной окружающей среде и правом на защиту личной и семейной жизни имеет особое значение, поскольку неблагоприятные экологические условия могут напрямую влиять на физическое и психическое здоровье человека, а также на его личное и семейное благополучие.

Цели исследования

Цель работы – провести правовой анализ взаимодействия права на неприкосновенность частной жизни и права на защиту личной и семейной жизни в сфере охраны окружающей среды, выявить международные и внутригосударственные подходы и проблемные области обеспечения этих прав.

Методы

Методы исследования включают сравнительно-правовой анализ, систематизацию нормативных актов, анализ судебной практики Европейского суда по правам человека и нормативных актов Республики Армения, а также изучение междисциплинарной литературы в области прав человека и окружающей среды.

Выводы

Необходимо совершенствовать механизмы применения нормативно-правового регулирования, обеспечивать комплексный подход к защите прав человека с учетом экологических факторов, а также расширять участие граждан в принятии решений, связанных с мониторингом и охраной окружающей среды.

Результаты

В результате исследования мы пришли к выводу, что, несмотря на официальное признание связи между состоянием окружающей среды и правом на частную и семейную жизнь, существующие правовые механизмы по-прежнему недостаточно эффективны.

Были выявлены следующие основные проблемы: отсутствие четких правовых критериев, по которым воздействие на окружающую среду может считаться вмешательством в частную жизнь, и недостаточная интеграция экологических факторов в системы принятия градостроительных решений и мониторинга окружающей среды.

Анализ показал, что для обеспечения эффективной защиты прав граждан необходима разработка более конкретных правовых инструментов и установление прозрачных процедур обеспечения участия общественности в принятии важных экологических решений. Результаты подчеркивают необходимость комплексного подхода, который позволит согласовать экологические стандарты с институтом неприкосновенности.

***Ключевые слова**: Экологическое право, право на неприкосновенность частной жизни, охрана окружающей среды, защита прав человека, Европейский суд по правам человека, Республика Армения.*

Karen Tumanyan
Eurasia International University, Applicant

SUMMARY

The Impact of the Environment in the Context of the Right to Privacy

In the context of the noticeable deterioration of the environmental situation, we are increasingly concerned about the extent to which our fundamental rights are protected today. The connection between the right to live in a healthy environment and the right to protect personal and family life is of particular importance, since adverse environmental conditions can directly affect a person's physical and mental health, as well as personal and family well-being.

Research objectives

The aim of the work is to conduct a legal analysis of the interaction between the right to privacy and the right to protect personal and family life in the environmental sphere, to identify international and domestic approaches and problematic areas of ensuring these rights.

Methods

Research methods include comparative legal analysis, systematization of regulatory acts, analysis of the case law of the European Court of Human Rights and RA legal acts, as well as a study of interdisciplinary literature in the

field of human rights and the environment.

Conclusions

It is necessary to improve regulatory application mechanisms, ensure a comprehensive approach to the protection of human rights, taking into account environmental factors, and increase citizen participation in decision-making related to environmental monitoring and protection.

Results

As a result of the study, we came to the conclusion that despite the official recognition of the connection between environmental conditions and the right to private and family life, the existing legal mechanisms are still not sufficiently effective.

The following main problems were identified: the lack of clear legal criteria by which the impact on the environment can be considered an interference with private life and insufficient integration of environmental factors into urban planning decision-making and environmental monitoring systems.

The analysis showed that in order to ensure the effective protection of citizens' rights, it is necessary to develop more specific legal instruments and establish transparent procedures for ensuring public

Key words: *Environmental law, right to privacy, environmental protection, human rights protection, European Court of Human Rights, Republic of Armenia.*

Ընդունվել է տպագրության 28.11.25թ.

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՎԱՐՈՒՅԹԻ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածում հանգամանորեն քննարկվում են դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի օբյեկտային նախադրյալները, այսինքն՝ այն դատական ակտերի շրջանակը, որոնց կատարման և հետագայում վերադաս ատյանի կողմից բեկանման դեպքում կարող է առաջանալ շրջադարձի իրականացման հարց: Հոդվածում հեղինակը վերլուծում է նշված հարցի վերաբերյալ առկա գիտական մոտեցումները, օրենսդրական կարգավորումները և դատական պրակտիկան: Հեղինակը եկել է այն եզրահանգման, որ կատարման շրջադարձի իրականացման վարույթի օբյեկտ կարող են լինել ինչպես վճիռները, այնպես էլ այլ եզրափակիչ դատական ակտեր: Զարգացնելով այն գաղափարը, որը դատական ակտի կատարման շրջադարձը դատավարական ինստիտուտ է և դրա վերաբերյալ կարգավորումները պետք է տեղ գտնեն Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ոչ թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում՝ հեղինակը փաստել է, որ կատարման շրջադարձ կարող է իրականացվել ոչ միայն կատարողական վճիռների, այլև վճիռների այլ տեսակների դեպքում, որոնց հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվում: Միաժամանակ՝ հեղինակը եզրահանգել է, որ շրջադարձի իրականացման համար որևէ նշանակություն չունի դատական ակտը կատարվել է հարկադիր կարգով, թե կամավոր, քանի որ դատական ակտը կամավոր կատարած բարեխիղճ անձը չի կարող նվազ բարենպաստ վիճակում գտնվել, քան այն անձը, ում նկատմամբ կիրառվել են հարկադիր միջոցներ: Ըստ հեղինակի՝ հատուկ վարույթի գործերով, երբ չկան հակադիր շահերով օժտված կողմեր, հետևաբար՝ նաև պարտապան, ևս կարող է իրականացվել դատական ակտի կատարման շրջադարձ:

Հիմնաբառեր *– վճռի կատարման շրջադարձ, դատական ակտի կատարման շրջադարձ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդված, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 27-րդ հոդված, դատական ակտի կատարման շրջադարձի օբյեկտային նախադրյալներ:*

Ներածություն

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետ կոնվենցիոն չափանիշների կիրարկումը ենթադրում է ինչպես դատական ակտով հաստատված իրավունքի իրացման հնարավորությունը, այնպես էլ կատարված կամ իրավունքի իրացման հետևանքների շրջադարձը, եթե առաջացել է նման անհրաժեշտություն: Դատական ակտի կատարման շրջադարձի նպատակն է՝ վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ վերականգնել այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել շահագրգիռ կողմի խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) սահմանում է ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքների վերացման կառուցակարգը, հիմքերը և դատավարական ընթացակարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է նոր դատական ակտ կայացրած դատարանը:

Եթե դատարանը չի լուծել բեկանված վճռի կատարման շրջադարձի հարցը, պարտապանն իրավունք ունի դիմել նոր դատական ակտ կայացրած դատարան:

2. Դատարանը վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

3. Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

4. Դատարանի որոշումը կարող է բողոքարկ-

www.ardaradatutyunjournal.com

վել:

5. Սույն հոդվածը տարածվում է նաև քրեական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտերի վրա:»:

Խնդրո առարկայի համակարգային վերլուծությունը պահանջում է առանձին և միմյանցից տարանջատված ուսումնասիրել դատական ակտի կատարման շրջադարձի՝ որպես սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության դատավարական հստակ կառուցակարգի ծագման նախադրյալները:

Սույն հետազոտության շրջանակում կարևորվում է շրջադարձի օբյեկտների շրջանակը պարզելը և համակողմանի վերլուծելը, ինչն առաջնահերթ ուղղված է վարույթի այս տեսակի օբյեկտային նախադրյալները ձևակերպելուն:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունն իրականացնելիս կիրառվել է դոկտրինալ և համեմատական-իրավական մեթոդները: Աշխատանքում վերլուծվել է այն դատական ակտերի շրջանակը, որոնցով հնարավոր է քննարկել կատարման շրջադարձի հարցը, ուսումնասիրվել են գործող օրենսդրական կարգավորումները և դատական պրակտիկան: Դատական պրակտիկայի, օրենսդրական կարգավորումների և մասնագիտական գրականության մեջ արտահայտված գիտական վերլուծությունների համադրման արդյունքում՝ առաջարկվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Շրջադարձի հարցի քննարկման ժամանակ դատարանի քննության օբյեկտն այն դատական ակտն է, որը կատարվել և հետագայում բեկանվել է, իսկ նոր քննության ժամանակ հայցը լրիվ կամ մասնակի մերժվել է, թողնվել է առանց քննության կամ վարույթը կարճվել է:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (այսուհետ՝ դատարաններ) դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

Նշված ձևակերպումից ակնհայտ է, որ հիշատակված օրենքը կարգավորում է դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող հարաբերությունները: Շրջադարձի վերաբերյալ դրույթների զետեղումը նշված օրենքում հուշում է, որ շրջադարձի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ դատական ակտը պահանջում է կատարում և կատարվում է հարկադիր կարգով՝ դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա: Ընդ որում՝ հարկ է ուշադրության արժանացնել, որ օրենքում կիրառվում է «վճռի կատարման շրջադարձ», այլ ոչ թե «եզրափակիչ դատական ակտի կատարման շրջադարձ» արտահայտությունը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝

ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը,

բ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները.

2) վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները.

3) Վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշումները:»:

Եզրափակիչ դատական ակտերից՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի, առաջնահերթ հարկ ենք համարում անդրադառնալ վճռի կատարման շրջադարձին:

Օրինական ուժի մեջ մտնելու պահից վճիռը դառնում է վերջնական, ձեռք բերում անհերքելիության, բացառիկության, նախադատելիության, պարտադիրության և կատարելիության հատկանիշներ:

Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար:

Վճռի պարտադիրության հատկանիշը ուղղված է անորոշ թվով անձանց և վճռով սահմանված իրավունքի իրացումը չի ենթադրում որոշակի գործողությունների կատարում: Ինչ վերաբերում է կատարելիության հատկանիշին, այն ենթադրում է, որ սուբյեկտիվ իրավունքի իրացումը կարող է տեղի ունենալ միայն պարտապանի կողմից որոշակի գործողությունների կատարմամբ:

Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը դատավարագիտության մեջ բաժանվում են վճռող, ճանաչողական և վերափոխիչ վճիռների[1]:

Վճռի տեսակներից առավել տարածված են վճռող կամ կատարողական վճիռները, որոնց հիման վրա հարուցվում են նաև կատարողական վարույթներ: Նման վճիռներ կայացվում են բոլոր այն դեպքերում, երբ հարուցվում է վճռող հայց, որով հայցվորը խնդրում է ճանաչել իր և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը (օրինակ՝ փոխառության, դելիկտային, ռեստիտուցիոն և այլն) և պարտավորեցնել պատասխանողին իր օգտին կատարել որոշակի գործողություններ (օրինակ՝ վերադարձնել փոխառության գումարը և վճարել հաշվարկված տոկոսները, հատուցել պատճառված վնասը, վերադարձնել անվավեր գործարքով փոխանցված իրերը) կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից (օրինակ՝ չօգտագործել հայցվորին պատկանող ապրանքային նշանը, չիրացնել հեղինակային իրավունքների խախտմամբ հրատարակված ստեղծագործությունը և այլն): Այս վճիռները կամովին չկատարելու դեպքում ենթակա են կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: Սինչդեռ ճանաչողական և կոնստրուկտիվ վճիռների հիման վրա կատարողական վարույթներ չեն հարուցվում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի կարգավորման առարկայից և վերը հիշատակված հոդվածներից բխում է, որ կատարման շրջադարձ հնարավոր է միայն այն վճիռներով, որոնց հիման վրա տրվել է կատարողական թերթ և հարուցվել կատարողական վարույթ:

Հետևաբար՝ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք բացի կատարողական վճիռներից, վճռի այլ տեսակներով ևս հնարավոր է քննարկել կատարման շրջադարձի իրականացման հարցը: Նշված վճիռներով սահմանված իրավունքի իրացումը կապված չէ պարտապանի կողմից որոշակի գործողությունների կատարման հետ, չի հարուցվում կատարողական վարույթ: Ճանաչողական վճռով, օրինակ՝ ճանաչվում է անձի սեփականության իրավունքը, որի ծագման համար անհրաժեշտ է հայցվորի կողմից ակտի ներկայացում իրավասու մարմին և վերջինիս կողմից պետական գրանցման կատարում: Վերափոխիչ վճռով, օրինակ՝ վճռվում է էական փոփոխության կապակցությամբ վարձակալության պայմանագիրը լուծել, իսկ պայմանագրից ծագող իրավունքը դադարեցնելու համար անհրաժեշտ է հայցվորի կողմից ակտի ներկայացում իրավասու մարմին և վերջինիս կողմից պետական գրանցման կատարում: Նույն կերպ՝ ամուսնալուծության վերաբերյալ վճռի հիման վրա ամուսնության դադարեցումը գրանցվում է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ դիրքորոշումներ առկա չեն: Չկա նաև միասնական դատական պրակտիկա:

Սի խումբ գիտնականներ, վերլուծելով Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համանման կարգավորումները, եզրահանգել են, որ շրջադարձի ժամանակ պարտապանին պետք է վերադարձվեն ոչ միայն դրամական միջոցները և այլ գույքը, այլև պետք է վերացվեն նախկինում ուժի մեջ եղած դատական ակտի հիման վրա ընդունված ոչ դատական մարմինների ակտերը, օրինակ՝ անշարժ գույքի, արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցումները[2]: Առկա է նաև հակառակ տեսակետն առ այն, որ դատական ակտի կատարման շրջադարձն անհնար է գույքի կամ դրամական միջոցների փոխանցման հետ կապ չունեցող դատական ակտերի դեպքում[3]: Որոշ հեղինակներ գտնում են, որ դատական ակտի կատարման շրջադարձ պետք է իրականացվի ինչպես գույքային վեճերով, այնպես էլ ոչ գույքային վեճերով: Մեկ այլ հեղինակ՝ հակառակը գտնում է, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման նպատակը կողմերի նախկին գույքային դրության վերականգնում է, ուստի՝ ոչ գույքային վեճերով հնարավոր չէ իրականացնել շրջադարձ[4]:

Մուրանովի կարծիքով դատական ակտի կատարման շրջադարձի նպատակը դատական սխալի վերացումն է, հետևաբար՝ գործի ոչ գույքային բնույթը չպետք է անձի իրավունքների իրավունքների վերականգնման մերժման հիմք լինի, քանի որ մերժելը կնշանակի, որ անձի իրավունքի խախտում չի եղել կամ վերականգնելու անհրաժեշտություն չկա[5]:

Անհնար է չհամաձայնել նման տեսակետի հետ, քանի որ, մեր կարծիքով, դատական ակտի կատարման շրջադարձը արդար դատաքննության իրավունքի տարր է, դատական ակտի բեկանման իրավական հետևանք, որի արդյունքում պետք է վերականգնվի մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած իրադրությունը: Ուստի՝ որևէ նշանակություն չունի բեկանված դատական ակտի հիման վրա փոխանցվել է գույք, թե ոչ:

Անհրաժեշտ է նշել, որ ներպետական դատական պրակտիկան միատեսակ չէ: Ոչ գույքային

www.ardaradatutyunjournal.com

պահանջներով հայցերի դեպքում առկա են ինչպես շրջադարձի իրականացման դեպքեր, այնպես էլ մերժումներ: Ստորև կներկայացվեն դատական պրակտիկայից մի քանի օրինակներ.

Թիվ ԿԴ-1/0244/02/17 քաղաքացիական գործով Շ. Հ.-ն 24.02.2017 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ համայնքի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին:

Դատարանի 11.09.2017 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Հողամասի նկատմամբ գրանցվել է հայցվորի սեփականության իրավունքը:

Դատարանի նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձած անձինք՝ բողոքի հիմքում վկայակոչելով այն հանգամանքը, որ կողմերի միջև հաշտության համաձայնության մեջ նշված հողամասի մեջ ներառված է նաև պետական սեփականություն հանդիսացող հողամասը (ջրային գոտի), որի նկատմամբ գրանցվել է հայցվորի սեփականության իրավունքը:Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ Վերաքննիչ բողոքը բավարարվել է և դատարանի թիվ ԿԴ-1/0244/02/17 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Գործի նոր քննության փուլում բողոք ներկայացրած անձինք ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք: Գործի նոր քննության ընթացքում պատասխանողը որևէ առարկություն չի ներկայացրել:

Հայցվորի ներկայացուցչի կողմից Դատարան է մուտքագրվել հայցից հրաժարվելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն: Դատարանի 25.02.2021 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է և դատարանը չի անդրադարձել վճռի կատարման շրջադարձի հարցին: Պատասխանողը, նույն ինքը՝ պարտապանը վճռի կատարման շրջադարձի դիմում չի ներկայացրել:

Արդյունքում՝ ոչ իրավաչափ, բեկանված դատական ակտի հիման վրա մնացել է գրանցված սեփականության իրավունք:

Տվյալ դեպքում հայցվորի անվամբ գրանցվել էր սեփականության իրավունք այն գույքի նկատմամբ, որի մի մասը պետական սեփականություն էր: Բնականաբար՝ նույնիսկ, եթե վճռի հիման վրա չի հարուցվել կատարողական վարույթ, կա վճռի շրջադարձի անհրաժեշտություն:

Քննարկվող գործով 27.03.2024 թվականին հրապարակվել է վճռի շրջադարձ կատարելու վերաբերյալ որոշում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի դիմումի հիման վրա: Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Թիվ ԱՐԱԴ/0180/02/13 քաղաքացիական գործով կատարվել է դատարանի 07.10.2013 թվականի վճռի կատարման շրջադարձ, այն է՝ անվավեր է ճանաչվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

Տեսականորեն և պրակտիկայում կարող է լինել նաև հետևյալ իրավիճակները.

Դատարանում հայցային վարույթի կարգով քննվել է հայրության ճանաչման պահանջ: Հայցը բավարարվել է: Վճռի հիման վրա հայցվորը գրանցվել է որպես երեխայի հայր, տրվել է պետական գրանցման վկայական: Հետագայում՝ դատական ակտը բեկանվել է, իսկ նոր քննության փուլում հայցը մերժվել է: Գտնում ենք, որ այս դեպքում ևս պետք է իրականացվի վճռի կատարման շրջադարձ: Կարծում ենք՝ վճռի կատարման շրջադարձի հարցը անպայմանորեն պետք է քննարկվի դատարանի նախաձեռնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման վարույթի օբյեկտ կարող են լինել ինչպես կատարողական վճիռները, այնպես էլ վճիռների այլ տեսակները, որոնց հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի այն դեպքերը, երբ դատական ակտը պարտապանի կողմից կատարվել է կամավոր, կատարումից հետո բեկանվել է և նոր քննության փուլում վարույթը կարճվել է, հայցը թողնվել է առանց քննության կամ հայցը լրիվ կամ մասնակի մերժվել է:

Օրինակ՝ կայացվել է վճիռ հայրության ճանաչման և ալիմենտի բռնագանձման մասին, որը հետագայում բեկանվել և ուղարկվել է նոր քննության, իսկ առաջին ատյանի դատարանում գործի վարույթը կարճվել է, հայցը թողնվել է առանց քննության կամ հայցը լրիվ կամ մասնակի մերժվել է: Պատասխանողը, չնայած այն հանգամանքին, որ բողոքարկել է դատական ակտը, գիտակցելով, որ նման ակտը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից, խուսափելով հետագայում հնարավոր ալիմենտային պարտավորությունների կուտակումից, սկսել է վճարել ալիմենտ՝ սկսած հայցադիմումի ներկայացման պահից: Կարող են լինել նաև այլ դեպքերը. ա) դատարանը կայացրել է վճիռ հօգուտ հայցվորի գումարի բռնագանձման, ինչպես նաև մինչև պարտավորության կատարումը որոշակի տոկոսների հաշվեգրման և բռնագանձման մասին: Պատասխանողը, բողոքարկելով դատական ակտը, միևնույն ժամանակ կատարել է պարտավորությունը՝ խուսափելով տոկոսների ավելացումից: Հետագայում դատական ակտը բե-

կանվել է և նոր քննության ժամանակ գործի վարույթը կարճվել է, հայցը թողնվել է առանց քննության կամ հայցը լրիվ կամ մասնակի մերժվել է: բ) Դատարանը կայացրել է վճիռ բավարարելով հայցը, Պատասխանողը կատարել է դատական ակտի պահանջը, հետագայում գործին մասնակից չդարձած անձի կամ գործին մասնակցող այլ անձի կողմից դատական ակտը բողոքարկվել և բեկանվել է, իսկ դատարանը հայցը մերժել է:

Հարկ ենք համարում նշել, որ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարումը պայմանավորված է ոչ այնքան դատական ակտի հետ համաձայնությամբ, որքան դատական ակտի՝ իր համար տվյալ պահին պարտադիրությամբ: Վճռի կատարելիությունը, այդ թվում՝ դրա հարկադիր կատարման հնարավորությունը, վերջնական վճիռի բնութագրիչներից մեկն է, ինչպես և պարտադիրությունը: Հետևաբար, վերջնական վճիռը կատարելու պատասխանողի պարտավորությունը բխում է այդ վճիռի պարտադիր լինելուց, այլ ոչ թե հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով դրա կատարման հնարավորությունից:

Գտնում ենք, որ վերջնական և պարտադիր կատարման ենթակա վճիռը կամավոր կատարող անձը չի կարող ավելի վատ վիճակում հայտնվել, քան այն անձը, որի նկատմամբ կիրառվել են հարկադիր միջոցներ: Նա չի կարող կրել նաև դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը մերժելու բացասական հետևանքները՝ միայն իր բարեխիղճ վարվելակերպի պատճառով: Կատարողական թերթի հիման վրա հարկադիր կատարումը վճռի կատարման մեկ տարբերակ է, որը չի խոչընդոտում պարտապանին ինքնուրույն կատարել վճիռը:

Դատական ակտի կատարման շրջադարձի էության ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ դատական ակտի հիման վրա չի կարող ծագել որևէ իրավունք, քանի որ այսպիսի իրավիճակը կհանգեցնի քաղաքացիաիրավական հարաբերությունների անկայունության և չի բխի արդարության սկզբունքից:

Հետևաբար՝ անկախ նրանից դատական ակտը կատարվել է կամավոր, թե հարկադիր կարգով՝ դատական ակտի կատարման շրջադարձի հիմքերի առկայության դեպքում շրջադարձը պետք է կատարվի: Դատական ակտը կամավոր կատարած անձը պետք է հնարավորություն ունենա դիմել դատարան՝ շրջադարձի իրականացման խնդրանքով:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վճռի կատարման շրջադարձի կարգավորմանը վերաբերող դրույթները չպետք է տեղ գտնեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում: Այս հարցի կարգավորումը պետք է սահմանվի Քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այդպիսի մոտեցումը արդարացված չէ նաև իրավական տեխնիկայի տեսանկյունից, ինչպես նաև տերմինաբանության տեսանկյունից. Մասնավորապես՝ օրենքում կիրառվում է «պարտապան» հասկացությունը, իսկ օրենքի իմաստով պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից: Ստացվում է՝ պարտապանը գործին մասնակցող այն անձն է, որը վճռի հիման վրա պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից և որի վերաբերյալ տրվել է կատարողական թերթ: Սինչդեռ՝ արդեն իսկ հիմնավորվեց, որ վճռի կատարման շրջադարձի հարցը քննարկվում է նաև այն դեպքերում, երբ գործով տրված չէ կատարողական թերթ և չկա նաև պարտապան:

Վերը նշված բոլոր օրինակներում քննարկվեցին հայցային վարույթի կարգով քննվող գործեր: Ընդ որում՝ հարցի քննարկումն իրականացվեց հաշվի առնելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի կարգավորումները, որոնց համաձայն վճռի կատարման շրջադարձը հնարավոր էր միայն հայցային վարույթի կարգով գործերի դեպքում, այսինքն, երբ կա պարտապանը, այն էլ, եթե հարուցվել է կատարողական վարույթ: Սինչդեռ՝ գտնում ենք, որ վճռի կատարման շրջադարձի հարց կարող է քննարկվել նաև հատուկ վարույթի կարգով քննվող գործերով:

Հատուկ վարույթի գործերով բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգիռ անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում: Այսինքն՝ հատուկ վարույթի գործերով բացակայում է դատարանի քննությանը ենթակա (նրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը: Քանի որ գործով չկան հայցվոր և պատասխանող կողմեր, չի էլ կարող որևէ կողմի օգտին տրվել կատարողական թերթ և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի իմաստով չեն կարող լինել պահանջատեր և պարտապան անձինք:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված են հատուկ վարույթի կարգով քննվող գործերը:

Հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերի ցանկի ուսումնասիրությունից բխում է, որ տեսականորեն որոշակի գործերով հնարավոր է վճռի կատարում, հետագայում բեկանում և նոր քննության արդյունքում վարույթի կարճում, դիմումն առանց քննության թողնելու որոշման կայացում կամ դիմումի մերժում: Հետևաբար՝ կարող է առաջանալ նաև վճռի կատարման շրջադարձի հարց:

Դատական պրակտիկայում վերը հիշատակված գործերից առավել տարածված են իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաս-

տատման վերաբերյալ գործերը: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերի շարքին օրենսդիրը դասել է իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստերի հաստատման վերաբերյալ գործերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Նման գործերով ևս հնարավոր է առաջանա վճռի կատարման շրջադարձի հարց:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը հանգում է հետևյալին.

Թիվ ԳԴ4/0076/02/13 քաղաքացիական գործով իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին դիմումը բավարարվել է, վճռվել է.

«Հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թերակղզու տարածքում գտնվող 1086,56 քմ ընդհանուր մակերեսով շինությունը սեփականության իրավունքով տիրապետվում է «Արսեն-96» ՍՊ ընկերության կողմից:

Հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թերակղզու տարածքում գտնվող 7750 քմ մակերեսով հողամասն օգտագործվում է ընկերության կողմից: Պարտավորեցնել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սևանի տարածքային ստորաբաժանմանն ընկերության անունով կատարել Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թերակղզու տարածքում գտնվող 1086,56 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:

Պարտավորեցնել ընկերությանն օրենքով սահմանված կարգով «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքել Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թերակղզու տարածքում գտնվող 7750 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:»: Նշված վճիռն ի կատար է ածվել, տրվել է անշարժ գույքի վկայականը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ բավարարել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2007 թվականի օգոստոսի 13-ի վճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վերաքննիչ բողոքը, նշված վճիռը բեկանվել է, և դիմումը թողնվել է առանց քննության: Որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Վերոհիշյալ փաստարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալը դիմում է ներկայացրել վճռի կատարման շրջադարձ կատարելու մասին: Կայացվել է դատական ակտ՝ հետևյալ բովանդակությամբ. «Կատարել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 13-ի թիվ 2-99/2007 վճռի շրջադարձ. Չեղյալ համարել Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թերակղզու տարածքում գտնվող 1086,56 քմ ընդհանուր մակերեսով շինության նկատմամբ «Արսեն-96» ՍՊ ընկերության սեփականության, իսկ շինությամբ զբաղեցված 7750 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ կառուցապատման իրավունքները:»:

Թիվ ԵԿԴ2545/02/13 քաղաքացիական գործով դատարանի 30.06.2004թ. վճռով ամբողջությամբ բավարարել է պահանջը. «...հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Նինա Չալտիկյանը սեփականության իրավունքով տիրապետում է Երևանի Մաշտոցի պողոտա 50 շենքի տանիքի թիվ 14 և 15 բնակարանների վրա չափագրված, ըստ հատակագծի 168,4քմ. մակերեսով տարածքին, այդ մասին կատարել պետական գրանցում: Վճիռը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:»: 2011թ. հոկտեմբերին գործին մասնակից չդարձած անձ Ա. Օ-ի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել, որը բավարարվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012թ. որոշմամբ. բեկանվել է վճիռը և դիմումը թողնվել է առանց քննության: Ա. Օ-ն խնդրել է լուծել վճռի կատարման շրջադարձի հարցը: Դատարանը գտել է, որ պետք է կատարել վճռի շրջադարձ, և վերացնել վերջինիս համար առաջացած բացասական հետևանքները:

Թիվ ԿԴ2/1872/02/19 քաղաքացիական գործով Ս.Խ.-ի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել դատարան՝ Հ. Հ.-ին մահացած ճանաչելու պահանջի մասին:

Շ. Հ.-ի կողմից 08.06.2021 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, և թիվ ԿԴ2/1872/02/19 դատական գործով 23.11.2020 թվականին կայացված վճիռն ամբողջությամբ բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության: Դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 13-ին կայացրել է քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշում: Ներկայացվել է դատական ակտի շրջադարձ կատարելու դիմում:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է որոշում, որում հստակ նշվել է, որ վճռի կատարման շրջադարձ չի կարող կատարվել, քանի որ դիմումով ներկայացված պահանջները վճռի շրջադարձով լուծման ենթակա հարցեր չեն, իսկ Վերաքննիչ դատարանը նշել է, որ հատուկ վարույթի գործերով ընդհանրապես հնարավոր չէ վճռի շրջադարձի հարցի քննարկում:

Մեր կարծիքով, մահացած ճանաչելու դեպքում էլ հնարավոր է առաջանա վճռի կատարման շրջադարձի հարց: Իհարկե, յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել գործում ներկայացված փաստերը, որոշել արդյոք վճռի կատարման շրջա-

դարձը ենթադրում է դրա անմիջական հետևանքի վերացում և արդյոք դիմող անձը շահագրգիռ անձ է: Քննարկվող դեպքում վճռի կատարման շրջադարձի դիմում ներկայացնող անձը ակնկալում էր ոչ թե վճռի անմիջական կատարման հետևանքների վերացում, այլև այլ հետևանքների վերացում, ինչը, մեր կարծիքով, ևս հիմնավորված չէ:

Վերոշարադրյալի լույսի ներքո կարելի է արձանագրել, որ դատական պրակտիկան միատեսակ չէ. առկա են ինչպես դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման դեպքեր, այնպես էլ առկա են մերժումներ այն հիմքով, որ հատուկ վարույթի գործերով անհնար է շրջադարձի իրականացումը:

Գտնում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձ կարող է իրականացվել նաև հատուկ վարույթի գործերով, երբ չկան հակադիր շահերով օժտված կողմեր:քանի որ հակառակ դեպքում՝ կունենաք վերացված դատական ակտի հիման վրա ծագած իրավունք, ինչն անընդունելի է:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այլ եզրափակիչ դատական ակտերի, որոնց կատարման շրջադարձի իրականացումը, մեր կարծիքով, ևս հնարավոր է:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի համաձայն՝ դատական ակտի շրջադարձ հնարավոր է միայն վճռի դեպքում, իսկ օրենսդիրը որպես առանձին դատական ակտի տեսակ նախատեսել է նաև վճարման կարգադրությունները: Այսպես.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝

ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը»:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն.

«1. Առաջին ատյանի դատարանը կայացնում է վճիռներ և որոշումներ:

2. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առաջին ատյանի դատարանն արձակում է վճարման կարգադրություններ:»:

Վճարման կարգադրությունը պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու վերաբերյալ առերևույթ (prima face) հիմնավոր պահանջով առանց դատական նիստ հրավիրելու, բանավոր ապացույցներ հետազոտելու և պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու, դատարանի կողմից դիմողի ներկայացված առերևույթ արժանահավատ ապացույցների հիման վրա կայացվող դատական ակտ է, որը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ՝ օրենքով սահմանված ժամկետում դրա վերաբերյալ պարտապանի կողմից առարկություններ չներկայացնելու դեպքում: Չնայած նրան, որ կարգադրության վարույթը հայցային ու մյուս վարույթների համեմատ ինքնուրույն, պարզեցված վարույթ է և անմիջականորեն ուղղված չէ գործի փաստական հանգամանքները պարզելուն ու վեճն ըստ էության լուծելուն, այն կատարում է գործն ըստ էության լուծող դատական ակտի գործառույթներ, քանի որ վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալուց հետո վիճելի իրավահարաբերությունը դառնում է անվիճելի, կարգադրությամբ սահմանված դրամական պարտականությունը՝ ենթակա հարկադիր կատարման, և միաժամանակ բացառվում է տվյալ պահանջով ու միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու հնարավորությունը, ինչի հետևանքով նախկինում վիճելի նյութահիրավական հարաբերությունը խստորեն որոշակիացվում է՝ ձեռք բերելով կայունություն և համապարտադիրություն: Ընդ որում՝ վճարման կարգադրությունը բողոքարկման ենթակա դատական ակտ է:

Վերոշարադրյալից պարզ է, որ վճարման կարգադրության կատարման, վերաքննիչ դատարանի կողմից այն վերացնելու դեպքում ևս կարող է առաջանալ կատարման շրջադարձի հարց:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում է դրա մասին: Օրինակ՝ թիվ ԵԴ-2/0033/03/23 գործով դատարանի կողմից արձակվել է վճարման կարգադրություն՝ «Արփա-Սևան» ԲԲ ընկերությունից 4.616.857 ՀՀ դրամ գումար գանձելու մասին: Դիմումի հիման վրա 09.04.2024 թվականին տրվել է կատարողական թերթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2024 թվականի որոշմամբ «Արփա-Սևան» ԲԲ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի կողմից 19.05.2023 թվականին արձակված վճարման կարգադրությունը վերացվել է:

«Արփա-Սևան» ԲԲ ընկերության ներկայացուցիչը Դատարան է ներկայացրել դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու մասին դիմում: 06.09.2024 թվականին կայացված որոշմամբ պարտապան «Արփա-Սևան» ԲԲ ընկերության դիմումը՝ դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու մասին, բավարարվել է, պարտապան «Արփա-Սևան» ԲԲ ընկերությանը պարտավորեցվել է լրիվ վերադարձնել թիվ 12114979 կատարողական վարույթով «Արփա-Սևան» ԲԲ ընկերությունից հօգուտ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության բռնագանձված գույքը՝ 4.616.857 ՀՀ դրամը:

Ստացվում է, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման վարույթի օբյեկտ կարող են լինել ոչ միայն վճիռները, այլև վճարման կարգադրությունները:

Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի օբյեկտային նախադրյալների ուսումնա-

www.ardaradatutyunjournal.com

սիրության շրջանակում ծագում է ևս մեկ հարց: Այսպես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռի կատարման շրջադարձի ժամանակ իրավասու դատարանը կայացնում է դատական ակտ, այսինքն՝ վճիռ կամ որոշում, գույքը (շարժական, անշարժ) շահագրգիռ կողմին՝ պարտապանին (այսինքն՝ դատական նախկին ակտին համապատասխան շահագրգիռ մյուս կողմի հանդեպ պարտականություն կրած անձին) լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան: Ստացվում է, որ վճռի կատարման շրջադարձի հարցը ծագում է միայն, երբ վճռով տեղի է ունեցել գույքի փոխանցում:

ՀՀ սահմանադրական դատարանի 28 հունիսի 2013 թվականի ՍԴՈ-1102 որոշմամբ ևս արձանագրել է, որ. «Նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, <u>իսկ օբյեկտը՝ գույքային իրավունքն է</u> և դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակներում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, <u>նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու</u> (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաև արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է»:

Դատական պրակտիկայում ևս առկա են նման մեկնաբանություններ, երբ մերժվել է վճռի կատարման շրջադարձի դիմումը և նշվել է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կոչված է կարգավորելու քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ կապված դատական սխալի (նոր կամ նոր ի հայտ եկած կամ այլ հանգամանքների) արդյունքում կայացված դատական ակտի կատարմամբ անձին (անձանց) պատճառված նյութական վնասի վերականգնման (հատուցման) հետ և ուղղված է սեփականության իրավունքի խախտման վերացմանը: Նման որոշումներում հղում է կատարվում նաև Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշմանը՝ տառացի մեկնաբանությամբ:

Այս մեկնաբանությունն է առկա նաև թիվ ԿԴ-2/1872/02/19 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 29.01.2024 թվականին կայացված որոշման մեջ, որն արդեն իսկ շարադրվել է սույն աշխատանքում:

Թիվ ԵԿԴ/2167/02/09 քաղաքացիական գործով 20.03.2009թ.-ին վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ Արմենուհի Հովհաննիսյանին՝ նրա ընտանիքին ք.Երևան, Չարենցի 2-րդ նրբանցք, թիվ 17 հասցեում գտնվող տնից վտարելու վերաբերյալ: 12.10.2009թ.-ին Դատարանը, քննելով Արմենուհի Հովհաննիսյանի դիմումը, որոշել է՝ Արմենուհի Հովհաննիսյանի դիմումը վճռի կատարման շրջադարձ կատարելու մասին բավարարել Արմենուհի Հովհաննիսյանին և նրա երեխաներին՝ Ռուբեն և Ավետիք Գրիգորյաններին վերաբնակեցնել ք.Երևան, Չարենցի 2-րդ նրբանցք, թիվ 17 հասցեում գտնվող նրանց կողմից զբաղեցրած առանձնացված բնակելի տարածքում:

Սույն հոդվածում ներկայացված գործերով կայացված դատական ակտերը ևս վկայում են այն մասին, որ վճռի կատարման շրջադարձի հարցը ծագում է նաև այն դեպքերում, երբ վճռի հիման վրա գույքի փոխանցում տեղի չի ունեցել:

Վերոշարադրյալի լույսի ներքո գտնում ենք, որ պետությունն՝ ի դեմս դատարանի պարտավոր է ապահովել ոչ իրավաչափ դատական ակտի հիման վրա անձի համար առաջացած ցանկացած բացասական հետևանքների վերացումը՝ անկախ նրանից այն ենթադրում է գույքի վերադարձ, թե որևէ իրավունքի գրանցման վերացում և նախկին վիճակի վերականգնում: Ավելին՝ գտնում ենք, որ միշտ չէ, երբ վճռի շրջադարձի նպատակը սեփականության իրավունքի պաշտպանություն է:

Ի հավելումն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների՝ իրենց լիազորություններն իրականացնելու արդյունքում կայացված որոշ դատական ակտերի դեպքում ևս հնարավոր է առաջանա դատական ակտի կատարման շրջադարձի հարց: Ընդ որում՝ կարծում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձ պետք է իրականացնեն հենց այս դատարանները: Նշվածի վերաբերյալ առավել մանրամասն անդրադարձ է կատարվել այլ աշխատանքում:

Եզրակացություն

Սույն աշխատանքում կատարված վերլուծությունների արդյունքում կատարվեցին հետևյալ եզրահանգումները.

- Կատարման շրջադարձի իրականացման վարույթի օբյեկտ կարող են լինել ինչպես կատարողական վճիռները, այնպես էլ վճիռների այլ տեսակները, որոնց հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվում:

- Վճռի կատարման շրջադարձի իրականացման համար որևէ նշանակություն չունի այն կատարվել է հարկադիր կարգով, թե կամավոր:

- Դատական ակտի կատարման շրջադարձ կարող է իրականացվել նաև հատուկ վարույթի գործերով, երբ չկան հակադիր շահերով օժտված կողմեր:

- Դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման վարույթի օբյեկտ կարող են լինել ոչ միայն վճիռները, այլև վճարման կարգադրությունները:

- Պետությունն՝ ի դեմս դատարանի պարտավոր է ապահովել ոչ իրավաչափ դատական ակտի հիման վրա անձի համար առաջացած ցանկացած բացասական հետևանքների վերացումը՝ անկախ նրանից այն ենթադրում է գույքի վեադարձ, թե որևէ իրավունքի գրանցման վերացում և նախկին վիճակի վերականգնում:

[1] Տե՛ս, Ս. Մեղրյան «Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», ԵՊՀ հրատ., Երևան, 2020, էջ 23:

[2] Տե՛ս, Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный) / Под ред. д.ю.н., профессора В.В. Яркова. 2-е изд., исправленное и дополненное. – М.: «Волтерс Клувер», 2004. էջ 697:

[3] Տե՛ս, Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации / Под ред. д.ю.н. П.В. Крашенинникова. – М.: Статут, 2003. էջ 683:

[4] Տե՛ս, Антонова С.А. Поворот исполнения решения как способ восстановления прав должника / С.А. Антонова // Арбитражная практика. - 2006. - № 5. - էջ 88:

[5] Տե՛ս, Макаров И.А. Восстановление прав ответчика, необоснованно понужденного к заключению договора. // Арбитражная практика. 2008. № 2 (83). - էջ 21:

Գրականության ցանկ

1. Տեր-Վարդանյան Հ. Մ., Արդար դատաքննության իրավունքի սահմանադրահիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009:
2. Հովհաննիսյան Վ.Վ. ,Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունումե, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 3 (30□:
3. Մեղրյան Ս.Գ. « Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», ԵՊՀ հրատ., Երևան, 2020:
4. Анотонова С.А. Поворот исполнения решения как способ восстановления прав должника // Арбитражная практика. – 2006.- № 5:
5. Аболонин В.О. Недостатки законодательного регулирования поворота исполнения судебных актов в гражданском процессе/ Исполнительное право. - 2012. - № 4:
6. Макаров И.А. Восстановление прав ответчика, необоснованно понужденного к заключению договора. // Арбитражная практика. 2008. № 2 (83):
7. Муранов А.И. Поворот исполнения судебных актов: некоторые вопросы толкования и применения //Актуальные проблемы международного частного и гражданского права. – М. : Статут, 2006. – С. 182-201:
8. Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации / Под ред. д.ю.н. П.В. Крашенинникова. – М.: Статут, 2003:
9. Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный) / Под ред. д.ю.н., профессора В.В. Яркова. 2-е изд., исправленное и дополненное. – М.: «Волтерс Клувер», 2004:
10. Սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի ՍԴՈ-1102 որոշում:
11. Վճռաբեկ դատարանի՝ թիվ 2-4247/2004 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշումը:
12. Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական 07.10.2022 թվականի որոշումը:
13. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների համապարփակ ուսումնասիրություն:

Анаит Антонян
Судья суда первой инстанции Котайского района РА

РЕЗЮМЕ

Объективные предпосылки производство о повороте исполнения судебного акта

В данной научной статье подробно рассматриваются объективные предпосылки производства по повороту исполнения судебного акта, то есть сфера тех судебных актов, исполнение и последующая отмена которых могут повлечь за собой вопрос о применении поворота. В статье автор анализирует существующие научные подходы, законодательные нормы и судебную практику по указанному вопросу. Автор пришёл к выводу, что объектом производства по повороту исполнения могут быть как судебные решения, так и иные судебные акты, разрешающий дело по существу. Развивая мысль о том, что поворот исполнения судебного акта является процессуальным институтом и регулирование его должно быть включено в Гражданский процессуальный кодекс, а не в Закон «О принудительном исполнении судебных актов», автор доказывает, что поворот исполнения может быть осуществлён не только в отношении судебных актов, подлежащий принудительному исполнению, но и в отношении иных видов судебных актов, на основании которых исполнительное производство не возбуждается. При этом автор приходит к выводу, что для осуществления поворота исполнения судебного акта не имеет значения, исполнен ли он под принуждением или добровольно, поскольку добросовестное лицо, добровольно исполнившее судебный акт, не может находиться в менее выгодном положении, чем лицо, к которому применены меры принуждения. По мнению автора, в делах особого производства, когда отсутствуют стороны с противоборствующими интересами, а следовательно, и должник, поворот исполнения судебного акта также может быть осуществлен.

***Ключевые слова**: Поворот исполнения решения суда, поворот исполнения судебного акта, статья 26 Закона «О принудительном исполнении судебных актов» РА, статья 27 Закона «О принудительном исполнении судебных актов» РА, объективные предпосылки производство о повороте исполнения судебного акта.*

Anait Antonyan
Judge of the first instance court of kotayk region of the RA

SUMMARY

Objective prerequisites of the proceeding on the reversal of the execution of a judicial act

This research article examines in detail the objective prerequisites for proceedings to reverse the execution of a judicial act, that is, the scope of those judicial acts whose execution and subsequent annulment may give rise to the question of whether to reverse the execution. In the article, the author analyzes existing scientific approaches, legislative norms, and judicial practice on this issue. The author concludes that the object of proceedings to reverse the execution may be both court decisions and other judicial acts resolving the case on the merits. Developing the idea that the reversal of the execution of a judicial act is a procedural institution and its regulation should be included in the Civil Procedure Code, and not in the Law "On the Enforcement of Judicial Acts," the author demonstrates that reversal of execution can be carried out not only with respect to judicial acts subject to compulsory execution but also with respect to other types of judicial acts on the basis of which enforcement proceedings are not initiated. The author concludes that, for the purpose of reversing the execution of a judicial act, it does not matter whether it was executed under duress or voluntarily, since a bona fide person who voluntarily complies with a judicial act cannot be in a less advantageous position than a person against whom coercive measures were applied. According to the author, in special proceedings, where there are no parties with competing interests, and therefore no debtor, reversal of the execution of a judicial act can also be accomplished.

***Key words**: reversal of the execution of a judgment, reversal of the execution of a judicial act, Article 26 of the Law "On the Compulsory Execution of Judicial Acts", Article 27 of the Law "On the Compulsory Execution of Judicial Acts", objective prerequisites of the proceeding on the reversal of the execution of a judicial act.*

Ընդունվել է տպագրության 27.11.25թ.

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
հայցորդ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՄԻԵԿ-Ի 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ՄԻԵԴ-Ի ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերի ուսումնասիրությանը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համատեքստում: Հեղինակը հանգամանորեն վերլուծում է արդար դատաքննության իրավունքի կառուցվածքային տարրերը՝ դատարանի անկախությունն ու անաչառությունը, ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը, դատաքննության հրապարակայնությունը, կողմերի հավասարության սկզբունքը, դատական պաշտպանության իրավունքը, մեղադրյալին հասկանալի լեզվով տեղեկացնելու իրավունքը և անմեղության կանխավարկածը: Հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձվում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, որը զարգացրել և ամրապնդել է արդար դատաքննության չափանիշները: Հոդվածի եզրակացությունում ներկայացվում են առաջարկություններ՝ ուղղված արդար դատաքննության իրավունքի ապահովման երաշխիքների համակարգի կատարելագործմանը Հայաստանի Հանրապետությունում՝՝ համաձայն ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի չափանիշների:

Հիմնաբառեր *- Արդար դատաքննություն, ՄԻԵԿ 6-րդ հոդված, ՄԻԵԴ, դատական անկախություն, անաչառություն, ողջամիտ ժամկետ, հրապարակայնություն, կողմերի հավասարություն, դատական պաշտպանություն, անմեղության կանխավարկած, մարդու իրավունքներ, իրավունքի գերակայություն, դատական բարեփոխումներ:*

1. Ներածություն

Անձի՝ դատարան դիմելու, դատարանի առջև ներկայանալու և դատական կարգով իր իրավունքների պաշտպանության իրավունքի ապահովումը հանդիսանում է յուրաքանչյուր իրավական պետության պարտավորությունը:

Արդար դատաքննության գաղափարը բխում է պետության դրական պարտավորությունից՝ հարգելու մարդու արժանապատվությունը և անհատի ազատությունը՝ որպես արդարության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներ[1]:

Երբ դատարանների ընթացակարգերը համապատասխանում են հավասարության, անաչառության և արդար մրցակցության սկզբունքներին, ձևավորվում է Ֆուլերի կոչած՝ «օրենքի ներքին բարոյականությունը»[2]:

Ինչպես նշել է Հեգելը իր «Իրավունքի փիլիսոփայությունը» աշխատությունում՝ իրավունքի փիլիսոփայությունը պահանջում է, որ իրավունքը չմնա միայն վերացական սկզբունք, այլ ունենա իր իրական իրագործումը՝ դատարանի և դատական համակարգի միջոցով[3]:

Արդար դատաքննության իրավունքն առաջին անգամ իր ամրագրումն է ստացել դեռևս 1215 թվականին Անգլիայում ընդունված «Մագնա Կարտայում»[4], հետագայում արդեն 1679 թվականին՝ Անգլիայի Հաբեաս Կորպուս ակտում[5], 1789 թվականին՝ Ֆրանսիայի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրության 1791 թվականի 5-րդ, 6-րդ և 7-րդ փոփոխություններում[6]: Արդար դատաքննության իրավունքը, սակայն, իր ամբողջական ձևը ստացավ միայն 20-րդ դարում՝ Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ նաև ՄԱԿ) 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրով[7] և 1976 թվականի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով[8], ինչպես նաև 1950 թվականի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով[9]:

Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքն առաջին անգամ ամրագրվել է 1995 թվականի Սահմանադրության 39-րդ հոդվածով, համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:»[10]:

Հայաստանի Հանրապետությունը 2002 թվականին դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ և վա-

www.ardaradatutyunjournal.com

վերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ նաև Կոնվենցիա կամ ՄԻԵԿ)՝ պարտավորվելով հարգել և ապահովել դրանում ամրագրված իրավունքները և ազատությունները: Այս պահից սկսված Կոնվենցիայի նորմերը դարձան անմիջականորեն կիրառելի ներպետական իրավունքում, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ պարտադիր կատարման ենթակա:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) կատարված 2005 և 2015 թվականների փոփոխություններով արդար դատաքննության իրավունքը ընդլայնվեց՝ համահունչ դառնալով Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի չափանիշներին:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք…»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, 63-րդ հոդվածի հիմքով, նույնպես սահմանում է արդար դատաքննության իրավունքը: Հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Նույն հոդվածը սահմանում է նաև հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման արգելքը:

Արդար դատաքննության իրավունքն ամրագրող միջազգային և ներպետական իրավական ակերը կարևոր գործիք են հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների դատական պաշտպանության համար:

Սույն հոդվածն անդրադառնում է արդար դատաքննության իրավունքին՝ վերլուծելով վերջինիս կառուցվածքային դրույթները ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի համատեքստում: Հոդվածը անդրադառնում է նաև արդար դատաքննության իրավունքի կիրարկմանը Հայաստանի Հանրապետությունում և դրա լիակատար ապահովման իրավական մարտահրավերներին:

2. Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունը հիմնված է իրավական հետազոտության համալիր մոտեցման վրա՝ ուղղված արդար դատաքննության իրավունքի տեսական և գործնական ասպեկտների խորը վերլուծությանը: Հետազոտության մեթոդաբանությունը համատեղում է իրավաբանական դոգմատիկ, համեմատական իրավական և իրավական վերլուծության մեթոդները՝ ստեղծելով բազմակողմանի մոտեցում արդար դատաքննության իրավունքի ուսումնասիրության համար: Հետազոտության մեթոդաբանական սինթեզը հնարավորություն է տվել ուսումնասիրել ոչ միայն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի տեքստային բովանդակությունը, այլև դրա կիրարկման պրակտիկան ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի միջոցով: Սույն մեթոդաբանական մոտեցումը թույլ է տվել իրականացնել արդար դատաքննության իրավունքի համապարփակ վերլուծություն՝ համատեղելով տեսական և գործնական ասպեկտները: Կիրառված մեթոդների համալիրը ապահովել է հետազոտության գիտական հիմնավորվածությունը և արդյունքների վստահելիությունը: Հետազոտության արդյունքները նպաստում են արդար դատաքննության իրավունքի ավելի լայն ըմբռնմանը և դրա արդյունավետ իրականացման ուղիների բացահայտմանը Հայաստանի Հանրապետությունում:

3. Հետազոտության արդյունքեր և քննարկում

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու

համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, +եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:»:

Այսպիսով, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը երաշխավորում է անձի արդար դատաքննության իրավունքը, երբ որոշվում են վերջինիս քաղաքացիական իրավունքները և երբ ներկայացվում է քրեական մեղադրանք: Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սույն իրավունքի առանցքային նշանակությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) իր դատական պրակտիկայով ընդլայնել է արդար դատաքննության իրավունքի տարրերը, օրինակ, «Golder v. United Kingdom» գործով նշելով, որ 6-րդ հոդվածը ենթադրում է նաև դատարան դիմելու իրավունք[11]:

ՄԻԵԴ-ը մեկ այլ՝ «Delcourt v. Belgium» գործով արձանագրել է. «Կոնվենցիայի տրամաբանությամբ ժողովրդավարական հասարակությունում արդար դատաքննության իրավունքն այնքան առանցքային նշանակություն ունի, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի սահմանափակող մեկնաբանությունն անհամատեղելի կլիներ սույն դրույթի նպատակների և նշանակության հետ (…)[12]»:

Դատարանի անկախությունն ու անաչառությունը

Արդար դատաքննության կարևորագույն երաշխիքներից մեկը անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննությունն է: Անկախության և անաչառության չափանիշները սերտորեն կապված են միմյանց հետ: Դատական անկախությունը ենթադրում է դատարանի ինստիտուցիոնալ անկախություն՝ ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանություններից, ինչպես նաև դատավորների անհատական անկախություն՝ գործի քննության ընթացքում արտաքին ազդեցություններից: Դատարանի անկախությունն ու անաչառությունը մեկնաբանվում է ՄԻԵԴ կողմից վերջինիս դատական պարկտիկայի միջոցով: Այսպես, ՄԻԵԴ-ը Delcourt v. Belgium գործում նշել է. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից»[13]:

Անաչառության չափանիշին անդրադառնալիս ՄԻԵԴ-ը «Piersack v. Belgium» գործով տարանջատեց անաչառության երկու ասպեկտ՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ[14]: Սուբյեկտիվ անաչառությունը կապված է դատավորի անձնական կողմնակալության բացակայության հետ: Ենթադրվում է, որ դատավորը սուբյեկտիվ առումով անաչառ է, եթե չի ապացուցվում հակառակը[15]: Օբյեկտիվ անաչառությունը, ընդհակառակը, պահանջում է, որ դատարանը անաչառ երևա արտաքին դիտորդի համար[16]: Այս համատեքստում կարևոր է հիշյալ սկզբունքը. «արդարությունը պետք է ոչ միայն իրականացվի, այլև տեսանելի լինի, որ իրականացվում է» (justice must not only be done, it must also be seen to be done)[17]:

Ինքնաբացարկի ինստիտուտը ևս կարևոր դեր է խաղում անաչառության երաշխավորման գործում: «*De Cubber v. Belgium*» (1984) գործով ՄԻԵԴ-ը փաստեց, որ դատավորը, որը նախկինում կապված էր նույն կամ հարակից գործերի հետ, պետք է ինքնաբացարկ հայտարարի[18]: Ավելին, ինքնաբացարկի վերաբերյալ որոշումը պետք է պատճառաբանված լինի, քանի որ դա ազդում է արդար դատաքննության իրավունքի ապահովման վրա:

Դատական համակարգի ինստիտուցիոնալ անկախության խնդրին անդրադառնալիս ՄԻԵԴ-ը «Campbell and Fell v. the United Kingdom» գործով նշում է, որ դատական անկախությունը պահանջում է, որպեսզի դատարանի կազմը, լիազորությունները, նշանակման և պաշտոնաթողության կարգը սահմանվեն օրենքով, և դատավորները պաշտպանված լինեն արտաքին ճնշումներից[19]:

Ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը

Գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը արդար դատաքննության իրավունքի կենտրոնական տարրն է: H. v. France (1989)[20] գործով ՄԻԵԴ-ը սահմանեց չորս հիմնական չափանիշ՝ ողջամիտ ժամկետի գնահատման համար.

1. գործի բարդությունը. բարդ գործերը, որոնք պահանջում են բազմաթիվ փորձաքննությունների անցկացում, մեծ քանակությամբ վկաների հարցաքննում կամ միջազգային իրավական օգնություն, կարող են ավելի երկար ժամանակ պահանջել:

2. դիմողի վարքագիծը. եթե դիմողն ինքն է հետաձգում վարույթը, օրինակ՝ առանց հարգելի

www.ardaradatutyunjournal.com

պատճառի չներկայանալով դատական նիստերին կամ ներկայացնելով անհիմն միջնորդություններ, հետևապես, ակնհայտորեն չարաշահելով իրավունքը, ապա դա նվազեցնում է նրա բողոքի արդյունավետությունը:

3. պետական մարմինների վարքագիծը. սա առանցքային գործոն է, քանի որ պետությունը պատասխանատու է դատավարության արդյունավետ կազմակերպման համար: Անհարկի հետաձգումները, գործի քննության անհիմն կասեցումները կամ որոշումների ուշացած ընդունումը պետական մարմինների կողմից խախտում են ողջամիտ ժամկետի պահանջը:

4. գործի կարևորությունը դիմողի համար և ռիսկի աստիճանը. եթե գործը վերաբերում է անձի կարևոր իրավունքների պաշտպանությանը՝ օրինակ, զբաղվածությանը, խնամակալությանը, աշխատանքին կամ առողջական վիճակին, դատավարությունը պետք է իրականացվի առավել արագ ընթացակարգով[21]:

«Kudla v. Poland» (2000) գործով ՄԻԵԴ-ը շեշտեց, որ «ողջամիտ ժամկետի պահանջը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ինքնուրույն երաշխիք, և դատավարության անհարկի երկարաձգումը կարող է վնաս պատճառել արդարադատության իրականացմանը և հանրային վստահությանը դատական համակարգի նկատմամբ»:

Հայաստանի Հանրապետությունում ողջամիտ ժամկետի պահանջի խախտումները կրկնվող խնդիրներից են, ինչը արտացոլվել է ՄԻԵԴ-ի բազմաթիվ վճիռներում: «Lmntsyan and Sloyan v. Armenia»[22], «Vassilyan and others v. Armenia»[23] և «FIL LLC v. Armenia»[24] գործերով Դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումներ՝ կապված դատավարության անհարկի երկարաձգման հետ: Այս գործերում դատավարությունը տևել է տարիներ՝ առանց հիմնավոր պատճառների:

ՄԻԵԴ-ը, անդրադառնալով դատավարական ժամկետների խնդրին, արձանագրել է, որ օրենսդիրը պետք է սահմանի հստակ ժամկետներ և երաշխիքներ՝ դատավարության ողջամիտ ժամկետում ավարտելու համար: Միաժամանակ, դատարանները պետք է ապահովեն, որ վարույթի յուրաքանչյուր փուլ իրականացվի առանց անհարկի հետաձգումների[25]:

Դատաքննության հրապարակայնությունը

Դատաքննության հրապարակայնությունը ապահովում է դատական գործընթացների թափանցիկությունն ու հանրային վերահսկողությունը: Ինչպես նշել է Դատարանը «Axen v Germany» գործով «Դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը, որին հղում է կատարում 6-րդ հոդվածի 1-ին կետը, դիմողներին պաշտպանում է արդարադատության գաղտնի, առանց հասարակության հսկողության իրականացումից: Դա նաև հանդիսանում է ինչպես վերադաս, այնպես էլ ստորադաս ատյանների դատարանների գործունեության նկատմամբ վստահության ամրապնդման միջոցներից մեկը: Արդարադատության իրականացման ընթացքը դարձնելով թափանցիկ՝ հրապարակայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակին հասնելուն, այն է՝ արդար դատաքննության ապահովումը, որի երաշխիքը հանդիսանում է ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ Կոնվենցիայի լույսի ներքո»[26]:

Հրապարակայնության սկզբունքն ունի երկու հիմնական ասպեկտ՝ դատական նիստի հրապարակայնությունը և դատական ակտի հրապարակայնությունը: Առաջին դեպքում հրապարակայնությունը ապահովվում է նրանով, որ հասարակությունը և մամուլը կարող են ներկա գտնվել դատական նիստերին, իսկ երկրորդ դեպքում՝ դատական ակտերի հրապարակման միջոցով[27]:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ամրագրում է հրապարակայնության սկզբունքը, սակայն թույլ է տալիս բացառություններ՝ հասարակական կարգի, անչափահասների շահերի, կողմերի մասնավոր կյանքի պաշտպանության կամ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով: Այդուհանդերձ, ՄԻԵԴ-ը դատական պրակտիկայում ընդգծվում է, որ այս բացառությունները պետք է խստակ մեկնաբանվեն, և ցանկացած սահմանափակում պետք է լինի պատճառաբանված: Օրինակ, «Campbell and Fell v the United Kingdom» գործով[28] ՄԻԵԴ-ը նշել է, որ չի կարելի հաշվի չառնել այն փաստերը, որոնք վերաբերում են հասարակական կարգին և անվտանգության հարցերին, երբ նման քննությունն իրականացվում է դռնբաց: Դա աներևակայելի դժվարություններ կստեղծեր պետական իշխանության համար:

Դատարանը որոշել է, որ չնայած հրապարակային քննությունների իրականացման լիովին արգելումը չի կարող արդարացված լինել, այնուամենայնիվ, պրոֆեսիոնալ կարգապահական քննությունը, հանգամանքներից կախված, կարող է իրականացվել դռնփակ: Հրապարակային դատաքննության անհրաժեշտության հարցը որոշելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են մասնագիտական գաղտնիքի պահպանումը և այցելուների կամ հիվանդների մասնավոր կյանքի պաշտպանությունը[29]:

Հայաստանի պարագայում ՄԻԵԴ-ը մի քանի գործերով անդրադարձել է հրապարակայնության խնդրին: Օրինակ, *«Gevorgyan and Others v. Armenia»*[30] գործով Դատարանը արձանագրել է, որ վերաքննիչ ատյանի դատական նիստերի անցկացումը փակ դռների հետևում՝ առանց համապա-

տասխան հիմնավորման, խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները:

Կողմերի հավասարությունը (equality of arms)

Արդար դատաքննության իրավունքի տարր կողմերի հավասարության չափորոշիչը ենթադրում է, որ դատավարության կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորել իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու հնարավորություն, որոնք, ի տարբերություն հակառակ կողմի, նրան չեն դնում էականորեն անբարենպաստ դրության մեջ: Կողմերի դրությունը դատաքննության ժամանակ պետք է լինի արդարացիորեն հավասար[31]: Արդար դատաքննության իրավունքը նույնպես ենթադրում է վարույթի մրցակցային բնույթ, որը նշանակում է կողմերի համար ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով, սկզբունքային հնարավորություն տեղեկացված լինելու բոլոր ներկայացված ապացույցների կամ արձանագրված դիտողությունների մասին, և դրանք մեկնաբանելու հնարավորություն[32]:

Օրինակ, «Յեսպերսն ընդդեմ Բելգիայի» գործով Հանձնաժողովը հայտարարել է, որ հոդված 6(3)b-ի հետ համատեղ դիտարկվող կողմերի հավասարության սկզբունքին համապատասխան դատախազության մարմինների վրա պարտականություն է դրվում ներկայացնել ցանկացած նյութեր, որոնք գտնվում են նրանց տնօրինության տակ կամ հասու են նրանց, որոնք կարող են մեղադրյալին օգնել ազատվելու պատասխանատվությունից կամ ստանալու նվազ խիստ պատիժ: Նշված սկզբունքի գործողությունը տարածվում է այն նյութերի վրա, որոնք կարող են կասկածի տակ դնել մեղադրանքի վկայությունների արժանահավատությունը: Մեկ այլ, «Ֆուշեն ընդդեմ Ֆրանսիայի» գործով[33] Դատարանը վճռել է, (...) քանի որ դատարանում ինքն իրեն պաշտպանել ցանկացող մեղադրյալին դատախազի կողմից մերժվել է օգտվել գործի նյութերից և պատճենահանել գործում եղած փաստաթղթերից (որն էլ նրան զրկել է պատշաճ կերպով պատրաստել իր պաշտպանությունը), ապա տեղի է ունեցել 6(3)b հոդվածի հետ համատեղ դիտարկվող կողմերի հավասարության սկզբունքի խախտում:

«Դուռն և Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով[34] երկու դիմողները և մեկ այլ երրորդ անձ մեղադրվում էին սպանության, ծանր մարմնական վնասվածք հասցնելու և երեք կետով կատարված կողոպուտ կատարելու մեջ: Մեղադրանքը գլխավորապես հիմնվում էր անձանց մի փոքր խմբի կողմից տրված ցուցմունքների վրա, որոնք ապրում էին դիմողների հետ, և որոնցից մեկը հանդիսանում էր դիմողներից մեկի ընկերուհին: Երեք անձինք դատապարտվել էին այդ մեղադրանքներով, և Վերաքննիչ դատարանն անփոփոխ էր թողել դատավճիռները: Դատարանը որոշում է կայացրել նյութը չհրապարակելու մասին:

Եվրոպական դատարանը նշել է, որ կարևոր ապացույց հրապարակելը բացարձակ իրավունք չէ, և որ կարող են լինել հակասող շահեր, այնպիսիք. ինչպիսիք են վկաների պաշտպանությունը կամ հանցագործության քննության գաղտնի ոստիկանական մեթոդները պահպանելը: Այդուհանդերձ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով թույլատրվող իրավունքները սահմանափակող միակ միջոցները նրանք են, որոնք խիստ անհրաժեշտ են: Դատարանը վճռել է, որ քողարկված տեղեկության կարևորության մեղադրանքի գնահատականը չի համապատասխանել դատաքննության մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքներին: Վերաքննիչ դատարանում գործի քննությունը բավարար չէր շտկելու տեղի ունեցած անարդարությունն այն պատճառով, որ դատավորները քողարկված նյութի հնարավոր կարևորությունը հասկանալու համար կաշկանդված էին առաջին ատյանի դատարանում դատաքննությամբ և գործի վերաբերյալ միայն մեղադրանքի կողմից տրամադրված նյութերի պատճեններով: Հետևաբար, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում[35]:

Դատական պաշտպանության իրավունքը

Դատական պաշտպանության իրավունքը արդար դատաքննության իրավունքի անքակտելի մասն է: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետը երաշխավորում է. «պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը»:

«Artico v. Italy» (1980) գործով ՄԻԵԴ-ը սահմանեց, որ պաշտպանի իրավունքն իրավական արդյունավետ իրավունք է, այլ ոչ թե տեսական կամ ձևական: Դատարանը նշեց. «Կոնվենցիան նպատակաուղղված է երաշխավորելու իրավունքներ, որոնք գործնական են և արդյունավետ, այլ ոչ թե տեսական կամ պատրանքային»[36]: Սա նշանակում է, որ պետությունը պարտավոր է ոչ միայն նշանակել պաշտպան, այլև ապահովել, որ նշանակված պաշտպանն իրականում արդյունավետ պաշտպանություն տրամադրի:

ՄԻԵԴ-ը, մեկ այլ, *S. v. Switzerland* գործով նշեց պաշտպանի և մեղադրյալի միջև գաղտնի հաղորդակցության իրավունքի կարևորությունը: Դատարանն արձանագրեց, որ «պաշտպանի և իր հաճախորդի միջև գաղտնի շփումների իրավունքը պաշտպանության իրավունքի հիմնական բաղադրիչն է, և ցանկացած սահմանափակում պետք է լի-

www.ardaradatutyunjournal.com

նել բացառիկ և հիմնավորված»[37]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, իր վճիռներում բազմիցս անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի սահմանադրական երաշխիքներին՝ շեշտելով մասնավորապես դրանց կարևորությունը անձի հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում: Օրինակ Սահմանադրական դատարանի 1998 թվականի նոյեմբերի 13-ի թիվ ՍԴՈ-138 որոշմամբ դատարանը արձանագրել է հետևյալը. «Մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների լիակատար և համապարփակ պաշտպանության կարևոր երաշխիք է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38 հոդվածով նախատեսված դատական պաշտպանության իրավունքը:

Ելնելով միջազգային իրավունքի նորմերից և սկզբունքներից, առաջնային համարելով մարդու անօտարելի իրավունքները և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 38 հոդվածի երկրորդ մասը, առանց բացառության, ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, ՀՀ Սահմանադրությունն այդ իրավունքի սահմանափակման հնարավորություն է նախատեսել միայն Սահմանադրության 45 հոդվածի հիմքերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45 հոդվածն ընդհանրապես արգելում է որևէ կերպ սահմանափակել յուրաքանչյուր անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվածում (խախտված իրավունքներ վերականգնման իրավունք) ամրագրված իրավունքը:[38] »

ՍԴՈ-1295 գործով սահմանադրական դատարանն արձանագրել է. «Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ անձի՝ լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում:»

Սահմանադրական դատարանը մեկ այլ գործով շեշտել է անձի լսված լինելու իրավունքի կարևորությունը՝ որպես արդար դատաքննության բաղադրատարր[39]: Այս գործով հղում է արվել նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, որում ասվում է, որ կալանավորված անձի լսվելու հնարավորությունը, անձամբ կամ ներկայացուցիչի միջոցով համարվում է ազատությունից զրկման գործերով հիմնարար երաշխիք[40]:

Մեղադրյալին հասկանալի լեզվով տեղեկացնելու իրավունքը

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետը սահմանում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի «իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին»:

Այս դրույթն ունի երեք հիմնական տարր. Նախ՝ տեղեկացումը պետք է լինի «հասկանալի լեզվով»: Սա ենթադրում է, որ եթե մեղադրյալը չի խոսում դատավարության լեզվով, ապա տեղեկատվությունը պետք է տրամադրվի նրա մայրենի լեզվով կամ այն լեզվով, որին նա տիրապետում է[41]: Երկրորդ՝ տեղեկացումը պետք է լինի «անհապաղ»: Սա նշանակում է, որ մեղադրյալը պետք է տեղեկացվի մեղադրանքի մասին հնարավորինս կարճ ժամանակահատվածում՝ իր իրավունքներն արդյունավետ իրականացնելու համար: Եվ երրորդ՝ տեղեկացումը պետք է լինի «հանգամանորեն»: Սա ենթադրում է, որ մեղադրյալը պետք է ստանա բավարար տեղեկատվություն՝ հասկանալու իրեն ներկայացված մեղադրանքի էությունը և պատրաստելու իր պաշտպանությունը: «Pélissier and Sassi v. France» գործով ՄԻԵԴ-ը շեշտեց, որ «մեղադրանքի մասին տեղեկացումը պետք է լինի բավականաչափ մանրամասն՝ մեղադրյալին հնարավորություն տալու արդյունավետորեն պաշտպանվել»:

Միաժամանակ կարևոր է, որ տեղեկացումը իրականացվի իրավապահ մարմինների, այլ ոչ թե քաղաքացիական անձանց կողմից[42]:

Անմեղության կանխավարկածը

Անմեղության կանխավարկածը ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված հիմնարար սկզբունք է, համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Այս սկզբունքն ունի մի քանի կարևոր հետևանք.

Առաջին՝ ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Երկրորդ՝ կասկածի դեպքում որոշումը պետք է կայացվի մեղադրյալի օգտին (in dubio pro reo):

Երրորդ՝ անմեղության կանխավարկածը պահանջում է, որ պետական պաշտոնատար անձինք և դատարանները ձեռնպահ մնան այնպիսի հայտարարություններից, որոնք ենթադրում են մեղադրյալի մեղավորությունը՝ մինչև դրա օրինական ապացուցումը:

«Lutz v. Germany» գործով[43] Դատարանը նշել է, որ չի կարելի վնասի հատուցման գործով ընդունված որոշման մեջ օգտագործել այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում այն ան-

ձին, որի նկատմամբ գործի վարույթը կարճվել է:

Եվրոպական դատարանը մեկ այլ «Minelli v. Switzerland» գործով[44] կայացրած վճռով այն կարծիքն է հայտնել, որ մեղադրյալի անմեղության կանխավարկածը կարող է խախտվել միայն դատարանի ոչ վերջնական որոշմամբ: Մասնավորապես ասված է. «Դատարանի կարծիքով, անմեղության կանխավարկածը կխախտվի, երբ առանց մեղադրյալի մեղավորությունը՝ օրենքին համապատասխան նախապես ապացուցելու, և հատկապես առանց նրան հնարավորություն տալու օգտվելու իր պաշտպանվելու իրավունքից, նրան վերաբերող դատական որոշումն արտահայտում է այն կարծիքը, որ նա մեղավոր է (...): Չնայած պաշտոնական եզրահանգման բացակայությանը, չնայած որոշակի զգուշավոր արտահայտություններին («ամենայն հավանականությամբ», «շատ հավանական է. ըր») օգտագործմանը. Պալատը տվել է գնահատականներ, որոնք անհամատեղելի են անմեղության կանխավարկածի հետ»[45]:

4. Եզրակացություն

Արդարադատության համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքը ամրագրված է թե՛ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային պարտավորություններով, մասնավորապես ՄԻԵԿ 6-րդ հոդվածով, և որ այս իրավունքների իրականացման երաշխիքները հաճախ վերահսկվում են ՄԻԵԴ նախադեպերով: Դատարանների անկախությունը, անաչառությունը, դատավարության ողջամիտ ժամկետները, կողմերի հավասարությունն ու դատական նիստերի հրապարակայնությունը կազմում են արդար դատաքննության կենտրոնական տարրերը, որոնց առնչությամբ դեռևս առկա են մարտահրավերներ:

ՄԻԵԴ որոշումները Հայաստանի դեմ գործերով ոչ միայն բացահայտել են այս խնդիրները, այլև հանդիսացել են ազգային դատական համակարգի բարեփոխումների շարժիչ ուժ: Դրանց ազդեցությամբ ձեռնարկվել են քայլեր դատական գործընթացների արագացման, անվճար իրավաբանական օգնության համակարգի կատարելագործման և էլեկտրոնային արդարադատության ներդրման ուղղությամբ: Այնուամենայնիվ, որոշ ոլորտներում դեռևս առկա են համակարգային խնդիրներ, որոնք պահանջում են լրացուցիչ ինստիտուցիոնալ երաշխիքների և արդյունավետ մեխանիզմների ներդրում, մասնավորապես դատական իշխանության անկախության ամրապնդման, դատական պրոցեսների ողջամիտ ժամկետների պահպանման և դատարանների նկատմամբ հանրային վստահության բարձրացման համար:

Կարծում եմ, որ Հայաստանում արդար դատաքննության իրավունքի ապահովման երաշխիքների համակարգի հետագա զարգացումը պետք է ընթանա մի քանի ուղղություններով: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել.

1. Դատավարության ողջամիտ ժամկետների խիստ պահպանումը՝ սահմանելով հստակ ժամկետներ և պատասխանատվության մեխանիզմներ դրանց խախտման դեպքում:

2. Դատական ակտերի որակի բարձրացումը՝ ապահովելով պատճառաբանումների համապատասխանությունը ՄԻԵԴ-ի չափանիշներին:

3. Անվճար իրավաբանական օգնության համակարգի արդյունավետության բարձրացումը՝ երաշխավորելով, որ նշանակված պաշտպանները իրականում տրամադրեն արդյունավետ պաշտպանություն:

4. Դատական անկախության երաշխիքների ամրապնդումը՝ պաշտպանելով դատավորներին արտաքին ազդեցություններից և ապահովելով նրանց անկախությունը:

5. Էլեկտրոնային արդարադատության զարգացումը՝ բարձրացնելով դատական գործընթացների արդյունավետությունն ու հասանելիությունը:

6. Զարգացնել դատական համակարգի կարողությունները, բարձրացնել իրավաբանական կրթության որակը՝ միջազգային առաջավոր փորձի հիման վրա:

Այս միջոցառումների համալիր իրականացումը կնպաստի արդար դատաքննության իրավունքի լիարժեք ապահովմանը Հայաստանի Հանրապետությունում՝ համաձայն ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի չափանիշների:

www.ardaradatutyunjournal.com

[1] Ստոյանովա, Վ. (2023). Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրավունքի ներքո դրական պարտավորությունների շրջանակավորում. անբացատրելիից դեպի կոնկրետը: Human Rights Law Review:
[2] Ֆուլեր, Լ. Լ. (1969). Իրավունքի բարոյագիտությունը. Նյու Հեյվեն՝ Յեյլի Համալսարան:
[3] Հեգել, Գ. Վ. Ֆ. (1991). Իրավունքի փիլիսոփայություն (թարգմ. Հ. Բ. Նիսբեթ, խմբ. Ա. Վ. Վուդ). Քեմբրիջ՝ «Cambridge University Press»:
[4] National Archives and Records Administration, Magna Carta Translation/Transcription, trans. Nicholas Vincent (Washington, DC: NARA, 1297; pdf accessed [date you viewed it]), https://www.archives.gov/files/press/press-kits/magna-carta/magna-carta-translation.pdf
[5] Habeas Corpus Act 1679, բաժին I (‚That the writ of habeas corpus may be more effectually obtainedե), ըստ՝ Legislation.gov.uk, https://www.legislation.gov.uk/aep/Cha2/31/2:
[6] Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրություն (1791) Սահմանադրության լրացումներ 5, 6, 7». https://www.senate.gov/about/origins-foundations/senate-and-constitution/constitution.htm#amendments
[7] ՄԱԿ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (1948), Հոդվածներ 10–11, https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights
[8] ՄԱԿ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (ICCPR, 1966, ուժի մեջ՝ 1976), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights
[9] Եվրոպայի Խորհուրդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա» (1950), https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/005
[10] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995), 39-րդ հոդված:
[11] Golder v. United Kingdom, European Court of Human Rights, judgment of 21 February 1975, para.36
[12] Delcourt v. Belgium, European Court of Human Rights, judgment of 17 January 1970, para. 25.
[13] Delcourt v. Belgium, European Court of Human Rights, judgment of 17 January 1970, para. 25
[14] Piersack v. Belgium, European Court of Human Rights, judgment of 1 October 1982, para. 30.
[15] Hauschildt v. Denmark, European Court of Human Rights, judgment of 24 May 1989, para. 47.
[16] Piersack v. Belgium, European Court of Human Rights, judgment of 1 October 1982, para. 30
[17] R v. Sussex Justices, ex parte McCarthy [1924] 1 KB 256.
[18] De Cubber v. Belgium, European Court of Human Rights, judgment of 26 October 1984, para. 24-30.
[19] Campbell and Fell v. the United Kingdom, European Court of Human Rights, judgment of 28 June 1984, para. 78-81.
[20] H. v. France, European Court of Human Rights, judgment of 24 October 1989, para. 50-59.
[21] König v. Germany, European Court of Human Rights, judgment of 28 June 1978
[22] Lmnatsakanyan and Sloyan v. Armenia, European Court of Human Rights, judgment of 20 July 2023
[23] Vassilyan and Others v. Armenia, European Court of Human Rights, judgment of 8 September 2022
[24] FIL LLC v. Armenia, European Court of Human Rights, judgment of 31 October 2019
[25] Zimmermann and Steiner v. Switzerland, European Court of Human Rights, judgment of 13 July 1983, para. 29.
[26] «Axen v Germany» European Court of Human Rights, judgment of 8 December 1983, para. 25
[27] «Axen v Germany» European Court of Human Rights, judgment of 8 December 1983, para. 29-32
[28] «Campbell and Fell v the United Kingdom» European Court of Human Rights, judgment of 28 June 1984, para. 87
[29] Arbert and Le Compte v. Belgium, European Court of Human Rights, judgment of 10 February 1983
[30] Gevorgyan and Others v. Armenia, European Court of Human Rights, judgment of 30 November 2023
[31] De Haes and Gijsels v. Belgium, European Court of Human Rights, judgment of 24 February 1997.
[32] Jespers v. Belgium, 27 DR 61, European Court of Human Rights, judgment of 23 June 1993, para 63.
[33] Foucher v. France, European Court of Human Rights, judgment of 18 March 1997.
[34] Rowe and Davis v. the United Kingdom, European Court of Human Rights, judgment of 16 February 2000.
[35] Ibid
[36] Artico v. Italy, European Court of Human Rights, judgment of 13 May 1980, para. 33.
[37] S. v. Switzerland, European Court of Human Rights, judgment of 28 November 1991, para. 48.
[38] Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-138, 13 նոյեմբերի 1998 թ.:
[39] Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-1295, 2 սեպտեմբերի 2016 թ.
[40] Mamedova v. Russia. European Court of Human Rights. Judgment of 1 June 2006, para. 89.
[41] Brozicek v. Italy, European Court of Human Rights, judgment of 19 December 1989, para. 41.
[42] Pélissier and Sassi v. France, European Court of Human Rights, judgment of 25 March 1999, para. 48
[43] Lutz v. Germany, European Court of Human Rights. Judgment of 25 August 1987
[44] Minelli v. Switzerland, European Court of Human Rights. Judgment of 25 March 1983
[45] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու: Երեւան. 2004, էջ 265:

Գրականության ցանկ /Bibliography / Библиографический список

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 1995թ:
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա՝ ընդունված 1950թ. նոյեմբերի 4:
3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված 1948թ. դեկտեմբերի 10:
4. ,Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասինե միջազգային դաշնագիր՝ ընդունված 1966թ. դեկտեմբերի 16:
5. «ԱՄՆ Սահմանադրություն» (1971 թ.), 5-րդ, 6-րդ և 7-րդ փոփոխություններ:
6. Habeas Corpus Act (1679), 31 Car. II c. 2.

ՄԻԵԴ-ի նախադեպեր

7. Golder v. United Kingdom. European Court of Human Rights. Judgment of 21 February 1975
8. Delcourt v. Belgium. European Court of Human Rights. Judgment of 17 January 1970.
9. Piersack v. Belgium. European Court of Human Rights. Judgment of 1 October 1982.
10. Hauschildt v. Denmark. European Court of Human Rights. Judgment of 24 May 1989.
11. De Cubber v. Belgium. European Court of Human Rights. Judgment of 26 October 1984.
12. Campbell and Fell v. the United Kingdom. European Court of Human Rights. Judgment of 28 June 1984.
13. H. v. France. European Court of Human Rights. Judgment of 24 October 1989.
14. König v. Germany. European Court of Human Rights. Judgment of 28 June 1978.
15. Lmnatsakanyan and Sloyan v. Armenia, European Court of Human Rights. Judgment of 20 July 2023.
16. Vassilyan and Others v. Armenia, European Court of Human Rights. Judgment of 8 September 2022.
17. FIL LLC v. Armenia, European Court of Human Rights. Judgment of 31 October 2019.
18. Zimmermann and Steiner v. Switzerland. European Court of Human Rights. Judgment of 13 July 1983.
19. «Axen v Germany» European Court of Human Rights. Judgment of 8 December 1983.
20. Arbert and Le Compte v. Belgium, European Court of Human Rights. Judgment of 10 February 1983.
21. Gevorgyan and Others v. Armenia, European Court of Human Rights. Judgment of 30 November 2023.
22. De Haes and Gijsels v. Belgium, European Court of Human Rights, judgment of 24 February 1997.
23. Jespers v. Belgium, 27 DR 61, European Court of Human Rights. Judgment of 23 June 1993.
24. Foucher v. France, European Court of Human Rights. Judgment of 18 March 1997.
25. Rowe and Davis v. the United Kingdom, European Court of Human Rights. Judgment of 16 February 2000.
26. Artico v. Italy, European Court of Human Rights. Judgment of 13 May 1980.
27. S. v. Switzerland, European Court of Human Rights. Judgment of 28 November 1991.
28. Mamedova v. Russia. European Court of Human Rights. Judgment of 1 June 2006.
29. Brozicek v. Italy. European Court of Human Rights. Judgment of 19 December 1989.
30. Pélissier and Sassi v. France. European Court of Human Rights. Judgment of 25 March 1999.
31. Lutz v. Germany, European Court of Human Rights. Judgment of 25 August 1987
32. Minelli v. Switzerland, European Court of Human Rights. Judgment of 25 March 1983

ՍԴ Որոշումներ

33. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-1295, 2 սեպտեմբերի 2016 թ.
34. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-138, 13 նոյեմբերի 1998 թ.:

Գիտական գրականություն

35. Սթոյանովա, Վ. (2023). Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրավունքի ներքո դրական պարտավորությունների շրջանակավորում. անբացատրելիից դեպի կոնկրետը: Human Rights Law Review
36. Ֆուլեր, Լ. Լ. (1969). Իրավունքի բարոյագիտությունը. Նյու Հեյվեն՝ Յեյլի Համալսարան:
37. Հեգել, Գ. Վ. Ֆ. (1991). Իրավունքի փիլիսոփայություն (թարգմ. Հ. Բ. Նիսբեթ, խմբ. Ա. Վ. Վուդ). Քեմբրիջ՝ «Cambridge University Press»:
38. National Archives and Records Administration. Magna Carta Translation/Transcription. Translated by Nicholas Vincent. Washington, DC: NARA, 1297. PDF.

Այլ նյութեր

39. R v. Sussex Justices, ex parte McCarthy. 1924. 1 KB 256.

Анаит Абраамян
Соискатель ученей степени кандидата юридических наук
факультета права Евразийского международного университета

РЕЗЮМЕ

Право на справедливое судебное разбирательство в контексте статьи 6 ЕКПЧ и прецедентного права ЕСПЧ

Настоящая статья посвящена исследованию важнейших аспектов права на справедливое судебное разбирательство в контексте статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод (ЕКПЧ) и прецедентного права Европейского суда по правам человека (ЕСПЧ). Автор подробно анализирует структурные элементы права на справедливое судебное разбирательство: независимость и беспристрастность суда, право на разбирательство в разумный срок, публичность судебного разбирательства, принцип равенства сторон, право на юридическую защиту, право на уведомление на понятном языке и презумпцию невиновности. В статье особое внимание уделяется прецедентному праву ЕСПЧ, которое развило и укрепило критерии справедливого судебного разбирательства. В заключении статьи представлены рекомендации, направленные на совершенствование системы гарантий обеспечения права на справедливое судебное разбирательство в Республике Армения в соответствии со стандартами ЕКПЧ и ЕСПЧ.

***Ключевые слова**: Справедливое судебное разбирательство, статья 6 ЕКПЧ, ЕСПЧ, судебная независимость, беспристрастность, разумный срок, публичность, равенство сторон, юридическая защита, презумпция невиновности, права человека, верховенство права, судебные реформы.*

Anahit Abrahamyan
PHD Candidate of the Law Faculty of Eurasia International University

SUMMARY

The right to a fair trial in the context of ECHR article 6 and the case law of the ECtHR

This article examines the essential aspects of the right to a fair trial under Article 6 of the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (ECHR) and the case law of the European Court of Human Rights (ECtHR). The author provides a detailed analysis of the structural elements of the right to a fair trial: judicial independence and impartiality, the right to trial within a reasonable time, publicity of proceedings, the principle of equality of arms, the right to legal representation, the right to be informed in an understandable language, and the presumption of innocence. Particular attention is given to the case law of the ECtHR, which has developed and strengthened the criteria for fair trial. The conclusion presents recommendations to improve the system of guarantees for the right to a fair trial in the Republic of Armenia, in accordance with ECHR and ECtHR standards.

***Key words**: Fair trial, ECHR Article 6, ECtHR, judicial independence, impartiality, reasonable time, publicity, equality of arms, legal representation, presumption of innocence, human rights, rule of law, judicial reforms.*

Ընդունվել է տպագրության 28.11.25թ.

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարան,
հայցորդ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական քաղաքականության բարելավման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում՝ եվրոպական երկրների փորձի համատեքստում: Վերլուծվում են միջազգային փաստաթղթերի (Ռիոյի հռչակագիր, Aarhus-ի կոնվենցիա, Փարիզյան համաձայնագիր, ԵՄ Դիրեկտիվ 2008/99/EC) ազդեցությունը ՀՀ-ի իրավական համակարգի վրա, գնահատվում են գործող քրեական օրենսդրության բացերը, իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի զարգացման խնդիրները, ինչպես նաև հանրային վերահսկողության և դատական մասնագիտացման անհրաժեշտությունը: Հոդվածի գիտական նորույթը կայանում է էկոլոգիական քրեաիրավական քաղաքականության եռամակարդակ (միջազգային-ազգային-համայնքային) ինտեգրացված մոդելի առաջարկման մեջ, որը միավորում է կանխարգելիչ, պատժիչ և վերականգնող մեխանիզմները և կարող է ծառայել որպես Հայաստանի Հանրապետությունում նոր իրավաքաղաքական ռազմավարության հայեցակարգային հիմք:

***Հիմնաբառեր** - շրջակա միջավայր, էկոլոգիական հանցագործություն, քրեաիրավական քաղաքականություն, միջազգային պարտավորություններ, հանրային վերահսկողություն, բնապահպանական արդարադատություն, կանխարգելում, իրավաբանական անձանց պատասխանատվություն, վերականգնող մեխանիզմներ:*

Ներածություն

Շրջակա միջավայրի պաշտպանության իրավական համակարգը վերջին տասնամյակներում դարձել է պետությունների կայուն զարգացման ռազմավարության առանցքային ուղղություններից մեկը: Մարդու տնտեսական գործունեության ինտենսիվացումը, արդյունաբերական աղտոտման աճը, բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը և գլոբալ կլիմայական փոփոխությունները հանգեցրել են այն գիտակցմանը, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը միայն բնապահպանական, «բնության պահպանման» խնդիր չէ: Այն ուղղակիորեն առնչվում է մարդու կյանքի, առողջության և անվտանգության իրավունքների իրացմանը և, հետևաբար, համարվում է ազգային և միջազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ [16]: Ժամանակակից իրավական գիտությունը ընդգծում է, որ այս ոլորտում պետության պարտավորությունները չեն կարող սահմանափակվել միայն վարչական կամ տնտեսական կարգավորումների միջոցով: Երբ շրջակա միջավայրին հասցված վնասը ձեռք է բերում բարձր հասարակական վտանգավորություն, այն ստանում է քրեաիրավական որակավորում և առաջանում է էկոլոգիական հանցագործությունների արդյունավետ քրեականացման և դրանց դեմ ուղղված քրեաիրավական քաղաքականության ձևավորման անհրաժեշտություն: Եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ էկոլոգիական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն հանցակազմերի լայն շրջանակով կամ պատժաչափերի խստությամբ, այլև իրավական մտածողության որակական փոփոխությամբ: Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունները ընկալվում են որպես մարդու իրավունքների երրորդ սերնդի խախտումներ, քանի որ բնական միջավայրի դեգրադացումը խաթարում է հասարակության բարեկեցությունը, տնտեսական կայունությունը և առողջ կյանքի հնարավորությունը: Ռիոյի հռչակագիրը (1992), Օրհուսի կոնվենցիան (1998) և Փարիզյան համաձայնագիրը (2015) ձևակերպում են այն հիմնարար սկզբունքները, ըստ որոնց՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը պահանջում է ոչ միայն պետական իրավական արձագանք, այլև հանրային մասնակցություն, թափանցիկություն և միջսերնդային պատասխանատվություն [14, 17, 18]:

Այս փաստաթղթերը պարտադրում են պետություններին վերանայել իրենց քրեաիրավական քաղաքականությունը՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, որոնց հիմքում դրված են նախազգուշացման, կանխարգելման և վնասի վերականգնման սկզբունքները: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրվել են դրական տեղաշարժեր բնապահպանական իրավունքի զարգացման ոլորտում.

www.ardaradatutyunjournal.com

ձևավորվել է նոր քրեական օրենսդրություն, վերաձայվել են մի շարք բնապահպանական նորմատիվ ակտեր, իսկ միջազգային փաստաթղթերի մի մասը ինտեգրվել է ազգային օրենսդրության մեջ: Գործող համակարգը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ անցումային: Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցակազմերի մի շարք ձևակերպումներ շարունակում են մնալ չափազանց ընդհանրական կամ ինտուիտիվ, իսկ դրանց սահմանումներն ամբողջությամբ չեն ապահովում իրավական կանխատեսելիության և հստակության պահանջը: Արդյունքում, իրավակիրառ պրակտիկայում քրեականացված մի շարք արարքներ բավարար չափով չեն կիրառվում, քանի որ օրենսդրական նորմերը հաճախ չունեն իրական իրականացում ապահովող ինստիտուցիոնալ և կազմակերպական մեխանիզմներ: Այս բացը հանգեցնում է նրան, որ նույնիսկ զգալի բնապահպանական վնասի պարագայում գերակշռում է ոչ թե քրեական, այլ վարչական պատասխանատվության կիրառումը, ինչը նվազեցնում է քրեաիրավական պաշտպանության արդյունավետությունը և խաթարում է պատժի անխուսափելիության ու կանխարգելման սկզբունքների իրագործումը [1]:

Եվրոպական երկրների համապատասխան իրավակարգավորումների համեմատական վերլուծությունը փաստում է, որ էկոլոգիական հանցագործությունների ոլորտում կիրառվում են տարբեր մոդելներ, որոնք, սակայն, ունեն ընդհանուր արժեքային հիմք: Գերմանիայում գործում է Umweltstrafrecht-ի համակարգը, որտեղ բնապահպանական իրավունքը ինտեգրված է քրեական իրավունքի կառուցվածքի մեջ, իսկ էկոլոգիական գործերով դատավարությունները հաճախ քննվում են մասնագիտացված բաժիններում՝ համապատասխան գիտատեխնիկական փորձագիտական կարողություններով [5]: Ֆրանսիայում շրջակա միջավայրի պաշտպանությունը կարգավորվում է Code de l'environnement-ով, որտեղ հստակ ամրագրված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սկզբունքը և կիրառվում են ինչպես պատժիչ, այնպես էլ վերականգնող միջոցառումներ [9]: Նիդեռլանդներում ձևավորված «ոլորտային պատասխանատվության մոդելը» պարտավորություններ է սահմանում ոչ միայն արտադրական կառույցների, այլև պետական մարմինների համար՝ ընդգծելով կանխարգելման և վերահսկման պարտադիր բնույթը [3]: ԵՄ Դիրեկտիվ 2008/99/EC-ը, որը պահանջում է ապահովել էկոլոգիական հանցագործությունների քրեականացումը և իրավաբանական անձանց պատասխանատվությունը, դարձել է այս մոդելների համընդհանուր նորմատիվ հիմքերից մեկը [6]:

Այս համակարգերում ընդհանուր է այն միտումը, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը չի դիտվում միայն որպես բնապահպանական խնդիր, այլ ընկալվում է որպես պետական և հանրային համատեղ պատասխանատվություն: Քրեաիրավական քաղաքականության արդյունավետությունն այստեղ պայմանավորված է այն հանգամանքով, որ այն կառուցված է բազմամակարդակ ձևով՝ միավորելով միջազգային նորմատիվ պարտավորությունները, ազգային օրենսդրության ինստիտուցիոնալ հենքը և համայնքային վերահսկողության գործիքները [10, 14, 17, 18]: ՀՀ-ի փորձը, սակայն, դեռևս հիմնականում կենտրոնացած է միայն երկրորդ մակարդակի՝ ազգային օրենսդրության վրա: Չնայած Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Օրհուսի կոնվենցիան, նրա առանցքային սկզբունքները՝ տեղեկատվության մատչելիություն, հանրային մասնակցություն և արդարադատության հասանելիություն, ամբողջականորեն չեն իրականանում ազգային մակարդակում [14]: Հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների ներգրավվածությունը բնապահպանական որոշումների կայացման և իրավախախտումների բացահայտման գործընթացում սահմանափակվում է հիմնականում խորհրդատվական կամ բողոքարկման մակարդակով, ինչի հետևանքով հանրային վերահսկողության արդյունավետությունը զգալիորեն սահմանափակվում է:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը Հայաստանի Հանրապետության համար համեմատաբար նոր երևույթ է: Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը, ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին և ուժի մեջ մտած 2022 թվականի հուլիսի 1-ից, նախատեսում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդրում՝ այդ թվում նաև շրջակա միջավայրին վնաս պատճառող արարքների դեպքում: Սակայն իրավակիրառ պրակտիկան փաստում է, որ այս ինստիտուտը գտնվում է ձևավորման նախնական փուլում. գործնականում գրեթե բացակայում են նախաքննչական գործեր, չկա մշակված մեթոդաբանություն իրավաբանական անձանց մեղավորության գնահատման, կառավարման կամ վերահսկողության բացակայության իրավական արժևորում իրականացնելու համար: Սա ցույց է տալիս, որ իրավական հիմքի առկայությունը դեռևս ինքնին չի երաշխավորում ինստիտուտի լիարժեք գործարկումը, և Հայաստանի Հանրապետության քրեաիրավական քաղաքականության հաջորդ փուլում անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն նորմատիվ, այլև ինստիտուցիոնալ բաղադրիչի վրա [1, 2]:

Քրեաիրավական քաղաքականության կատարելագործման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ձևավորած դատական նախադեպային պրակտիկան: López Ostra v. Spain (1994) և

Tătar v. Romania (2009) գործերում Եվրոպական դատարանը հաստատել է այն հիմնարար սկզբունքը, ըստ որի պետությունը պարտավոր է ապահովել քաղաքացիների իրավունքը առողջ և անվտանգ շրջակա միջավայրի նկատմամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ ուղղակի ֆիզիկական վնասը դժվար է ապացուցել կամ դա դրսևորվում է երկարաժամկետ հեռանկարում [7, 8]: Այս նախադեպերը էական նշանակություն ունեն ազգային դատական համակարգերի համար, քանի որ դրանք բարձրացնում են շրջակա միջավայրի պաշտպանության պահանջը մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր համակարգի մակարդակ: Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում նման մոտեցումը դեռևս կայուն կերպով չի ձևավորվել. դատարանները հիմնականում կենտրոնանում են վնասի անմիջական և մատչելի ապացույցների վրա՝ հաճախ անտեսելով կանխարգելման, նախազգուշացման և միջսերնդային պատասխանատվության սկզբունքները [2, 8]:

Այս համատեքստում ակնհայտ է դառնում, որ շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում պահանջում է ոչ միայն մասնակի փոփոխություններ, այլև համակարգային վերանայում: Անհրաժեշտ է անցում կատարել զուտ պատժիչ մոտեցումից դեպի կանխարգելիչ և վերականգնող մոդել, որտեղ քրեական պատասխանատվությունը դիտվում է ոչ թե որպես ինքնանպատակ պատիժ, այլ որպես ավելի լայն, համակողմանի քաղաքականության մաս՝ ուղղված վնասի կանխմանը, պատճառված հետևանքների նվազեցմանը և էկոհամակարգի վերականգնմանը [15, 17, 18]:

Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջարկվում է էկոլոգիական հանցագործությունների կանխարգելման և պատժման համակարգային եռամակարդակ մոդել, որը միավորում է միջազգային, ազգային և համայնքային իրավական մեխանիզմները միասնյա, ինտեգրացված կառուցվածքի մեջ: Այս մոդելն ընդգրկում է միջազգային պարտավորությունների բովանդակային կիրառումը, ազգային քրեաիրավական քաղաքականության ինստիտուցիոնալ վերակազմավորումը և համայնքային մակարդակում հանրային վերահսկողության ակտիվացումը՝ ձևավորելով նոր տեսլական, որի շրջանակում շրջակա միջավայրի պաշտպանությունը դառնում է ոչ միայն իրավական, այլև քաղաքակրթական պարտավորություն՝ ներկայիս և ապագա սերունդների հանդեպ [14, 16–18]:

Այս մոդելը չի սահմանափակվում միայն նորմատիվ փոփոխություններով. այն ենթադրում է նաև ինստիտուցիոնալ և սոցիալ-քաղաքական խորքային վերափոխումներ, որոնք ապահովում են համակարգի կենսունակությունը և արդյունավետությունը: Եռամակարդակ կառուցվածքը դրսևորվում է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր մակարդակ ունի իր առանձնահատուկ գործառույթը, ռիսկերն ու ազդեցության մեխանիզմները, սակայն դրանք միասին ձևավորում են միասնական էկոլոգիական քրեաիրավական քաղաքականություն:

Առաջին մակարդակը՝ միջազգային իրավական, ներկայացնում է այն նորմատիվ և արժեքային շրջանակը, որը ձևավորվել է համաշխարհային բնապահպանական իրավունքի զարգացման արդյունքում: Ռիոյի հռչակագիրը, Օրհուսի կոնվենցիան, Փարիզյան համաձայնագիրը, ինչպես նաև ԵՄ Դիրեկտիվ 2008/99/EC-ը ստեղծել են ընդհանուր պարտավորությունների համակարգ, որը պահանջում է պետություններից հստակ քրեական-իրավական արձագանք այն գործողությունների նկատմամբ, որոնք էական վնաս են հասցնում էկոհամակարգին [6, 14, 17, 18]: Այս փաստաթղթերում ամրագրված են միջսերնդային արդարության, նախազգուշացման (precautionary principle), կանխարգելման, «աղտոտողը վճարում է» և հանրային մասնակցության սկզբունքները, որոնք միասին ձևավորում են իրավաքաղաքական նոր փիլիսոփայություն. շրջակա միջավայրի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը դիտվում է ոչ միայն որպես ահաբեկիչ ռիսկ, այլ որպես իրավական խախտում՝ գլոբալ հետևանքներով [14, 17, 12, 15]:

Միջազգային մակարդակի ներգործությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի վրա տեսանելի է, սակայն դեռևս մասնակի և ոչ ամբողջական: Թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Օրհուսի կոնվենցիան և միացել է մի շարք այլ բնապահպանական և կլիմայական փաստաթղթերի, այդ նորմերի ուղղակի կիրարկելիության մեխանիզմները լիարժեք չեն ձևավորված: Օրինակ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջած հանրային վերահսկողության և արդարադատության հասանելիության գործիքները ամբողջական կերպով չեն արտացոլվում Հայաստանի Հանրապետության քրեական կամ վարչական օրենսգրքերում՝ որպես հստակ կիրառելի ընթացակարգեր [11, 14]: Միջազգային պարտավորությունների արդյունավետ իրականացումը պահանջում է ոչ միայն դրանց ընգրկումը ներքին օրենսդրության մեջ, այլև Սահմանադրության մակարդակով դրանց առաջնայնության ամրագրում և իրավասու մարմինների կողմից այդ նորմերի իրատեսական կիրառման կարողությունների ձևավորում [2, 14]:

Երկրորդ մակարդակը ազգային իրավական համակարգն է, որտեղ կոնկրետ ձևակերպվում են էկոլոգիական հանցագործությունների հանցակազմերը, պատժաչափերը, իրավաբանական անձանց պատասխանատվության հիմքերը և դատական կիրառության չափանիշները: Հայաստանի

www.ardaradatutyunjournal.com

Հանրապետության նոր քրեական օրենսգրքի 366–392-րդ հոդվածները սահմանում են շրջակա միջավայրի և բնության օգտագործման կանոնների դեմ ուղղված հանցագործությունների շրջանակը՝ ներառյալ մթնոլորտի աղտոտումը, հողի, ջրային ռեսուրսների վնասումը, անտառների ապօրինի հատումը, կենդանական և բուսական աշխարհի պահպանման կանոնների խախտումը և այլ արարքներ [1]: Այնուամենայնիվ, գործնականում այս հոդվածների կիրառման դեպքերը սահմանափակ են, իսկ իրավապահ մարմինների կողմից դրանք հաճախ դիտարկվում են որպես «ծայրահեղ միջոց», որի փոխարեն նախընտրելի է օգտագործել վարչական պատասխանատվության գործող ձևերը:

Այս իրողությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ շրջակա միջավայրին հասցված վնասի սոցիալական վտանգավորության չափորոշիչները բացակայում են ամբողջական գիտական և մեթոդաբանական ձևակերպումից, ինչի հետևանքով իրավապահ մարմիններն անհավասար ձևով են մոտենում գնահատականների հարցին: Երկրորդ՝ էկոլոգիական վնասի տարածական և ժամանակային երկարացված բնույթը բարդացնում է պատճառական կապի ապացուցումը. հաճախ իրավախախտման հետևանքներն ի հայտ են գալիս տարիներ անց, կամ լինում են տարածված մեծ տարածաշրջանում: Այս պայմաններում դասական քրեաիրավական գործիքակազմը, որը սովորաբար հենվում է անմիջական կապի և ակնհայտ վնասի վրա, երբեմն անարդյունավետ է դառնում: Երրորդ՝ իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի թերի զարգացումը թույլ չի տալիս պատշաճ ձևով գնահատել կազմակերպությունների կառավարման կամ վերահսկողության բացակայության հետևանքով առաջացած վնասները [1, 3, 6]:

ԵՄ Դիրեկտիվ 2008/99/EC-ը առաջարկում է իրավաբանական անձանց պատասխանատվության ընդլայնված մոդել, ըստ որի՝ կազմակերպությունը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության այն դեպքերում, երբ վնաս պատճառող արարքը կատարվել է ոչ միայն նրա պաշտոնատար անձանց կողմից, այլ նաև այն ժամանակ, երբ այդ արարքը հնարավոր է դարձել ներքին վերահսկողական մեխանիզմների բացակայության կամ անգործության հետևանքով [6]: Այդ մոդելը կարևորում է կառավարման մշակույթի բարելավումը՝ պարտադրելով իրավաբանական անձանց գնահատել շրջակա միջավայրի նկատմամբ իրենց գործունեության ռիսկերը և ներդնել կանխարգելիչ վերահսկողական համակարգեր: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը իրավաբանական անձանց պատասխանատվության հարցում դեռևս չի հասել նման մեթոդաբանական խորության. պատասխանատվությունը հիմնականում կապվում է ուղղակի գործողությունների հետ, իսկ կառավարման կամ վերահսկողության բացակայությունը հազվադեպ է դառնում ինքնուրույն գնահատման առարկա [1, 2, 3]:

Էկոլոգիական հանցագործությունների ոլորտում արդի միտումներից մեկը վերականգնողական մեխանիզմների լայն կիրառումն է, երբ քրեական պատժի հետ մեկտեղ կամ դրա փոխարեն պարտադիր է դառնում վնասված էկոհամակարգի վերականգնումը: Շվեդիայի և Ֆինլանդիայի դատական պրակտիկան վկայում է, որ բնությանը հասցված վնասի վերականգնումը դիտվում է ոչ միայն որպես լրացուցիչ միջոց, այլ հաճախ՝ որպես հիմնական իրավական արդյունք. դատարանները պարտավորեցնում են կազմակերպություններին իրականացնել հողի և ջրի մաքրում, անտառների վերատնկում, կենսաբազմազանության պահպանման ծրագրերի ֆինանսավորում և այլ կոնկրետ գործողություններ [3]: Այս մոդելը թույլ է տալիս ոչ միայն արձանագրել մեղավորությունը, այլև իրականում վերականգնել վնասված միջավայրը և նվազեցնել նոր իրավախախտումների ռիսկը: Հայաստանի Հանրապետության համար նման մոտեցման ներդրումը կարող է դառնալ էկոլոգիական քրեաիրավական քաղաքականության բարեփոխման առանցքային ուղղություններից մեկը՝ հատկապես հաշվի առնելով, որ ներկայումս հիմնականում կիրառվում են տուգանքներ կամ այլ դասական պատժամիջոցներ, որոնք միշտ չէ, որ ապահովում են վնասի իրական փոխհատուցում [1, 3, 15]:

Ազգային մակարդակի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման է նաև դատավորների ոլորտային մասնագիտացումը: Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների գնահատումը պահանջում է բազմամասնագիտական մոտեցում, ներառյալ իրավական, բնապահպանական, տեխնիկական, ինժեներական և սոցիոլոգիական գիտելիքներ: Այս դիտարկումով մի շարք եվրոպական երկրներում արդեն ձևավորվել են մասնագիտացված դատական միավորներ կամ առնվազն դատավորների մասնագիտացված վերապատրաստման ծրագրեր: Գերմանիայի մի շարք շրջաններում, օրինակ՝ Բոննի տարածաշրջանում, բնապահպանական գործերով զբաղվող դատավորները անցնում են հատուկ վերապատրաստումներ, համագործակցում են անկախ փորձագիտական կառույցների հետ և ներգրավվում են էկոլոգիական վնասների գնահատման մեթոդաբանության մշակման գործընթացում [5]: Նման փորձը ցույց է տալիս, որ դատական մասնագիտացումը բարձրացնում է իրավական որոշումների որակը, նվազեցնում է սխալների հավանականությունը և նպաստում է կայուն նախադեպային պրակտիկայի ձևավորմանը:

Եռամակարդակ մոդելի երրորդ բաղադրիչը համայնքային և հասարակական վերահսկողության մակարդակն է, որը ժամանակակից էկոլոգիական արդարադատության տեսության մեջ դիտվում է որպես համակարգի հիմնարար օղակ: Օրհուսի կոնվենցիան ամրագրում է, որ առանց հանրային մասնակցության և տեղեկատվության մատչելիության անհնար է ապահովել արդյունավետ բնապահպանական կառավարում: Համայնքային մակարդակը ներառում է հասարակական կազմակերպությունների, անկախ լրատվամիջոցների, մասնագիտական միավորումների և շարքային քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը շրջակա միջավայրի նկատմամբ որոշումների կայացման, իրավախախտումների հայտնաբերման և վերահսկման գործընթացներում [11, 13, 14]:

Հայաստանի Հանրապետությունում այս ինստիտուտը դեռևս գտնվում է զարգացման նախնական փուլում: Բազմաթիվ բնապահպանական ՀԿ-ներ գործնականում հանդես են գալիս դիտորդի կամ հակակշռի ոչ պաշտոնական դերակատարությամբ՝ առանց իրավաբանորեն ամրագրված միջամտության մեխանիզմների: Քաղաքացիների մասնակցությունը շատ դեպքերում սահմանափակվում է բողոքների ներկայացմամբ կամ հանրային քննարկումներին մասնակցությամբ, որոնք միշտ չէ, որ հանգեցնում են իրավական հետևանքների կամ որոշումների վերանայման [2, 11]: Այս իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է սահմանել հանրային միջամտության իրավական ինստիտուտ, որով բնապահպանական ՀԿ-ները և քաղաքացիների նախաձեռնողական խմբերը կարող են հանդես գալ որպես դատավարական կողմեր՝ ներկայացնելով հասարակական բնապահպանական շահը ոչ միայն խորհրդատվական, այլև պաշտպանական կարգավիճակով: Նման մոտեցումը կիրառվում է, օրինակ, Ֆրանսիայում և Իտալիայում, որտեղ բնապահպանական ՀԿ-ները կարող են հանդես գալ որպես partie civile (քրեական գործի քաղաքացիական կողմ)՝ մասնակցելով քրեական գործերին և պահանջելով ոչ միայն պատիժ, այլև վնասի վերականգնում [9]:

Ձևավորվող եռամակարդակ մոդելը ենթադրում է ոչ միայն իրավական դաշտի բարեփոխում, այլև կառավարիչ մտածողության և հասարակական ընկալումների փոփոխություն: Եթե նախկինում շրջակա միջավայրը ընկալվել է որպես ,հավելյալե ոլորտ՝ զիջելով տեղը տնտեսական և քաղաքական առաջնահերթություններին, ապա նոր մոտեցմամբ այն դառնում է ազգային անվտանգության, մարդու հիմնական իրավունքների և սոցիալական արդարության առանցքային բաղադրիչ [4, 10, 15]: Այս իմաստով էկոլոգիական արդարադատությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես պատժի, այլև որպես համագործակցության, փոխհատուցման և համատեղ պատասխանատվության համակարգ:

Ներկայացված մոդելի սոցիալական նշանակությունը կայանում է նրանում, որ այն վերահմաստավորում է «էկոլոգիական արդարադատություն» հասկացությունը: Եթե դասական պատկերացումով արդարադատությունը հիմնականում կապվում էր պետություն-մեղավոր հարաբերության վրա հիմնված պատժի կիրառման հետ, ապա նոր մոդելով այն փոխակերպվում է բազմակողմ փոխգործակցության հարթակի. քաղաքացին այլևս միայն պահանջատեր չէ, այլ դառնում է համանախագահող գործընթացի մասնակից՝ իր մասնակցությամբ ձևավորելով շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը [4, 14]: Այս տեսանկյունից շրջակա միջավայրի դեմ հանցագործությունը հանգամանքորեն գնահատվում է ոչ թե որպես «աբստրակտ» իրավախախտում, այլ որպես հարձակում հենց այդ նույն հասարակության արժանապատվության, առողջության և անվտանգության վրա [4, 10, 16]:

Ներկայացված վերլուծության գործնական նշանակությունն այն է, որ այն ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական քաղաքականությունը չի կարող զարգանալ մեկուսացված՝ անտեսելով տնտեսագիտական, քաղաքական, սոցիալական և միջազգային գործոնների փոխազդեցությունը: Այն իր բնույթով միջդիսցիպլինար երևույթ է, որտեղ իրավունքը, կառավարման գիտությունը, տնտեսագիտությունը, միջազգային հարաբերությունները և սոցիալական գիտությունները փոխկապակցված են և միասին են ձևավորում պատասխանատվության համակողմանի համակարգ [10, 13, 15]: Այս համակարգը, իր հերթին, պահանջում է միջգերատեսչական համագործակցություն, տեղեկատվության փոխանակման կայուն մեխանիզմներ և որոշումների կայացման թափանցիկ ընթացակարգեր:

Հայաստանի Հանրապետությունում գործող համակարգը դեռևս անցումային է. այն իր մեջ ներառում է քրեաիրավական բաղադրիչներ, սակայն դրանցից բացակայում են երկարաժամկետ ռազմավարական և կանխարգելիչ հիմքերը: Այս իրավիճակի պատճառը ոչ միայն օրենսդրական բացերն են, այլև պետական կառավարման մտածողության որոշակի իներտությունը, երբ բնապահպանական ոլորտը շարունակում է դիտվել որպես երկրորդական ուղղություն՝ տնտեսական աճի և կարճաժամկետ շահույթի ֆոնին [2, 10, 13]: Այս մոտեցման փոփոխությունը պետք է դառնա պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը, քանի որ շրջակա միջավայրի կայունությունը անմիջականորեն պայմանավորում է քաղաքացիների կյանքի որակը, հանրային առողջությունը, տնտեսական մրցունակությունը և պե-

www.ardaradatutyunjournal.com

տության միջազգային հեղինակությունը [11, 13, 15, 16]:

Ներկայացված եռամակարդակ մոդելը հնարավորություն է տալիս համակարգել իրավական դաշտի տարբեր բաղադրիչները՝ ձևավորելով միասնական պետական ռազմավարություն: Միջազգային մակարդակի պարտավորությունների կիրարկումը՝ Ռիոյի, Օրհուսի և Փարիզի փաստաթղթերի հիման վրա, ապահովում է արժեքային այն հենքը, որի վրա կարելի է կառուցել արդյունավետ ազգային օրենսդրություն [14, 17, 18]: Ազգային մակարդակում բարեփոխումները պետք է ուղղված լինեն քրեաիրավական կատեգորիաների վերաձայմանը, «էկոլոգիական վնաս» հասկացության վերարժևորմանը, իրավաբանական անձանց ընդլայնված պատասխանատվության և վերականգնողական մեխանիզմների ներդրմանը [1, 2, 3, 6]: Դատական իշխանության շրջանակում անհրաժեշտ է ստեղծել ենթահամակարգ, որը մասնագիտացած կլինի բնապահպանական գործերի քննության ոլորտում՝ ապահովելով պրոֆեսիոնալ դատաքննություն և կայուն նախադեպային պրակտիկա [5]: Համայնքային մակարդակի զարգացումը, իր հերթին, պետք է ամրապնդի հանրային վերահսկողությունը, քաղաքացիների և ՀԿ-ների մասնակցության իրական հնարավորությունները, ինչպես նաև ստեղծի իրավական հիմքեր դատարաններում հասարակական բնապահպանական շահի ներկայացման համար [9, 11, 13, 14]:

Կանխարգելիչ մեխանիզմների ուժեղացումը մոդելի կարևորագույն առավելություններից է, քանի որ այն նվազեցնում է քրեական գործերի իրական ծավալը՝ հանցագործության առաջացման փուլից առաջ ապահովելով իրավական և սոցիալ-կրթական ազդեցություն: Երբ համակարգը ապահովում է տեղեկատվության հասանելիություն, հանրային վերահսկողություն, իրավաբանական պատասխանատվության արդյունավետ կիրարկում և բնապահպանական կրթություն, հանցագործության վտանգը փոքրանում է դեռևս իրավախախտման փուլին չհասած: Այս մոտեցումը համահունչ է Ռիոյի հռչակագրում ամրագրված նախազգուշացման սկզբունքին և ԵՄ բնապահպանական քաղաքականության հիմք հանդիսացող TFEU-ի 191-րդ հոդվածին, համաձայն որոնց՝ իրավունքը պետք է գործի վնասի կանխման փուլում, այլ ոչ թե վնասի առաջացումից հետո [12, 17]:

Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում էկոլոգիական կրթության և իրավագիտակցության զարգացումը: Եթե քաղաքացին գիտակցում է, որ բնության դեմ հանցագործությունը իրականում հանցագործություն է նաև սեփական կյանքի, առողջության և ապագա սերունդների հանդեպ, ապա ձևավորվում է իրավական պետության ամենաամուր հիմքը [4, 10, 15]: Պետությունը պետք է ներդնի լայնածավալ կրթական ծրագրեր՝ ուղղված թե՛ դպրոցական համակարգին, թե՛ պետական ծառայության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, որպեսզի շրջակա միջավայրի նկատմամբ իրավական պատասխանատվության մշակույթը դառնա հասարակության ընդհանուր արժեքային կողի մասը:

Բացի այդ, անհրաժեշտ է ստեղծել միջգերատեսչական մեխանիզմներ, որոնք կապահովեն տեղեկատվության փոխանակման միասնական հարթակ բնապահպանական, առողջապահության, տնտեսական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, ինչը կաջակցի նաև արդարադատություն իրականացնմանը [13, 15]: Այս նպատակով հնարավոր է ձևավորել, օրինակ, Էկոլոգիական անվտանգության խորհրդի նման կառուցվածք, որը կհամադրի պետական մարմինների քաղաքականությունը, կհետևի միջազգային պարտավորությունների կատարմանը և կծառայի որպես միջնորդ պետության և հասարակության միջև, ապահովելով նաև գիտական համայնքի ներգրավվածություն քաղաքական որոշումների մշակման գործընթացում:

Եզրափակելով՝ կարելի է արձանագրել, որ առաջարկվող եռամակարդակ մոդելը նոր գիտական ուղղություն է, որը միավորում է իրավական, կառավարչական և հասարակական բաղադրիչները մեկ միասնական համակարգի մեջ: Այն կարող է ծառայել որպես էկոլոգիական քրեաիրավական քաղաքականության բարեփոխման ռազմավարական ծրագիր, որի նպատակն է ոչ միայն պատժել արդեն կատարված հանցագործությունները, այլև կանխել դրանք, նվազեցնել ռիսկերը և ապահովել վնասված էկոհամակարգերի վերականգնումը: Այս մոդելը համահունչ է եվրոպական իրավական մշակույթի արժեքներին՝ կանխարգելիչ քաղաքականությանը, բազմակողմ պատասխանատվությանը և հանրային վերահսկողությանը: Հայաստանի Հանրապետությունը, հիմնվելով այս մոդելի վրա, կարող է ոչ միայն կատարել միջազգային պարտավորությունները, այլև ձևավորել սեփական ազգային մոտեցումը՝ ապահովելով իրավական համակարգի կայունություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և հասարակության գիտակցական զարգացում: Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքը, այս տեսանկյունից, դառնում է ոչ միայն իրավական պահանջ, այլև քաղաքակրթական պարտավորություն՝ ներկայիս և ապագա սերունդների հանդեպ:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.): Երևան, ՀՀ Արդարադատության նախարարություն, պաշտոնական հրատարակություն, 2022, հոդվածներ 366–392:
2. Տիգրանյան Ն. Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքը Հայաստանի սահմանադրական համակարգում: Երևան, «Լույս» հրատարակչություն, 2021, 256 էջ:
3. Beijer, A. Environmental Criminal Law in the EU Member States. European Environmental Law Review, 2020.
4. Bullard, R. Dumping in Dixie: Race, Class, and Environmental Quality. Boulder: Westview Press, 1990.
5. Bundesministerium für Umwelt, Naturschutz und nukleare Sicherheit (BMU). Umweltrecht und Umweltgerichtsbarkeit in Deutschland. Berlin, 2019.
6. Directive 2008/99/EC of the European Parliament and of the Council on the Protection of the Environment through Criminal Law. Brussels, OJ L 328/28, 6 December 2008.
7. European Court of Human Rights. López Ostra v. Spain, Application No. 16798/90, Judgment of 9 December 1994. HUDOC database.
8. European Court of Human Rights. Tătar v. Romania, Application No. 67021/01, Judgment of 27 January 2009. HUDOC database.
9. Jolivet, R. Droit pénal de l'environnement: principes et perspectives européennes. Paris: Éditions Dalloz, 2019.
10. Meadowcroft, J. Environmental Political Theory and Environmental Governance. Journal of Environmental Policy and Planning, 2007.
11. OECD. Environmental Performance Reviews: Public Participation and Environmental Governance. Paris, OECD Publishing, 2019.
12. Treaty on the Functioning of the European Union (TFEU). Article 191 – EU Environmental Policy Principles.
13. UNDP. Environmental Governance for Sustainable Development. New York: United Nations Development Programme, 2018.
14. UNECE. Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention). Aarhus, 1998.
15. UNEP. Environmental Security: A Global Assessment. Nairobi: United Nations Environment Programme, 2016.
16. United Nations. Report of the World Commission on Environment and Development: "Our Common Future". New York, Oxford University Press, 1987.
17. United Nations. Rio Declaration on Environment and Development. Rio de Janeiro, 1992.
18. United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). Paris Agreement. Paris, United Nations, 2015.

Карен Туманян
Международный университет Евразия, аспирант

РЕЗЮМЕ

Пути совершенствования уголовно-правовой политики по борьбе с преступлениями против окружающей среды: формирование армянской модели в контексте европейского опыта

В статье рассматриваются проблемы совершенствования уголовно-правовой политики в сфере защиты окружающей среды в Республике Армения в контексте европейского опыта и международных обязательств. Анализируются влияние ключевых международных документов (Декларация Рио, Орхусская конвенция, Парижское соглашение, Директива ЕС 2008/99/ЕС) на национальную правовую систему, а также существующие недостатки действующего уголовного законодательства и практики его применения. Особое внимание уделяется вопросам уголовной ответственности юридических лиц, роли судебной специализации и развитию механизмов общественного контроля. Научная новизна работы заключается в обосновании интегрированной трёхуровневой модели экологической уголовной политики (международный – национальный – общественный уровни), объединяющей превентивные, карательные и восстановительные механизмы и предлагающей концептуальные ориентиры для реформирования экологической уголовно-правовой политики Армении.

***Ключевые слова**: экологическое преступление, охрана окружающей среды, уголовно-правовая политика, международные обязательства, общественный контроль, экологическая справедливость, устойчивое развитие, ответственность юридических лиц.*

Karen Tumanyan
Eurasia International University, Applicant

SUMMARY

Pathways for Improving Criminal Policy Against Environmental Offenses: Developing an Armenian Model in the Context of European Experience

This article examines the improvement of criminal policy on environmental protection in the Republic of Armenia in the context of European experience and international obligations. It analyses the impact of key international instruments – such as the Rio Declaration, the Aarhus Convention, the Paris Agreement and EU Directive 2008/99/EC - on the national legal system, and identifies the main gaps in the current criminal legislation and its enforcement practice. Particular attention is paid to the development of corporate criminal liability, the need for judicial specialisation in environmental cases and the strengthening of public oversight mechanisms. The scientific novelty of the study lies in substantiating an integrated three-level model of environmental criminal policy (international, national and community levels), which combines preventive, punitive and restorative mechanisms and may serve as a conceptual framework for reforming Armenia's environmental criminal law in line with European legal standards and the principles of sustainable development.

***Key words**: environmental crime, criminal policy, environmental law, international obligations, public participation, environmental justice, sustainable development, corporate criminal liability.*

Ընդունվել է տպագրության 25.09.25թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ղ.. Թադևոսյանը

Shushanik Ghukasyan
Lecturer at the Chair of Civil Law, Yerevan State University
PhD in Law, Associate Professor

Arpine Hovhannisyan
Lecturer at the Chair of Civil Law, Yerevan State University
PhD in Law, Associate Professor

THE NEED FOR THE IMPROVEMENT OF THE LEGAL FRAMEWORK IN THE CONTEXT OF ENSURING THE EFFECTIVENESS OF CHARITABLE ORGANIZATIONS' ACTIVITIES

Abstract. The article provides a comprehensive legal analysis of the regulation of charitable organizations' activities. It explores the normative framework governing the establishment and approval of charitable programs and projects, emphasizing procedural requirements and institutional oversight mechanisms. Special consideration is given to the range of state-endorsed measures designed to incentivize and promote charitable activity. The study identifies systemic challenges and barriers hindering the effective implementation of philanthropy, including legislative ambiguities, administrative inconsistencies, and deficiencies in enforcement practices. The article proposes targeted legislative amendments and policy initiatives aimed at strengthening transparency, accountability, and public trust in the charitable sector.

Ultimately, it argues for the development of a coherent and enabling legal environment that not only facilitates the growth of charitable organizations but also ensures the sustainable realization of their social mission. First, it is essential to broaden the legal definition of "charity," aligning it with contemporary social needs and socio-economic challenges. Clarifying the requirements for charitable programs would, in turn, ensure consistency and transparency in their development and approval procedures. Moreover, it is necessary to recognize the implementing party of a charitable program as a contracting party even when acting as a payer. To strengthen accountability, charitable organizations should be obliged to submit only annual and consolidated reports, thereby simplifying and systematizing reporting obligations. The legal framework should also allow for transactions to be qualified as charitable in extraordinary or emergency situations, even in the absence of an approved program. In addition, administrative liability measures must be established for charitable foundations conducting activities inconsistent with their statutory purposes. Finally, legal preconditions should be introduced to encourage individual charitable contributions, fostering civic engagement and promoting the development of a culture of philanthropy.

***Key words**: charitable organization, funds, nonprofit organizations, charity, taxation schemes, philanthropy, taxes, incentives.*

Introduction

Nonprofit organizations have long been integral parts of the social, economic, and political developments in many countries[1]. Nonprofits have the ability to give voice to the voiceless and call important matters of policy to the attention of governmental authorities[2]. They can serve as a social safety valve, providing a way to bring group concerns to broader public attention and to push for policy or broader social change[3].

A growing recognition exists among scholars and policymakers-perhaps even among the general public-that the nonprofit sector is much broader than charities and that charities provide a wide variety of services, not just human services[4].

One of the important characteristics of nonprofit- and especially charitable-organizations is that they view their activities as a mission that can bring significant changes in the life of society.

Considering the importance of charitable organizations' activities in the social-economic, cultural, educational, and healthcare spheres, the state must also pay due attention to the legal regulation of this sector.

From the perspective of legal regulation, in our opinion, it is crucial that no obstacles are created for the implementation of various charitable programs, and that the necessary conditions are ensured for their promotion-through tax incentives, simplified procedures, and the application of effective mechanisms for state-charitable organization cooperation.

In addition to this, it is also necessary to ensure a "soft oversight" over the activities of charitable organizations, which would contribute to financial transparency and strengthen public trust in their operations.

In the Republic of Armenia as well, charitable organizations play an important role in addressing a number of issues faced by both society and the state. It

www.ardaradatutyunjournal.com

is enough to mention the significant contributions of several organizations in the fields of education and healthcare, as well as in the implementation of various social programs. This is expressed through the provision of free, non-formal educational programs for the population, the establishment of healthcare institutions, schools, and other similar facilities[5].

Particularly noteworthy is the role of charitable organizations in rural communities, where the programs they implement lead to profound qualitative changes-offering opportunities for self-expression, fostering shifts in thinking and worldview, and ultimately contributing to the empowerment and development of those communities.

In our view, the ideology of balanced national development is implemented most effectively through charitable organizations, given the targeted nature of their programs and their alignment with local needs. Of particular importance is their contribution to the development of infrastructure-through the establishment of schools, sports fields, healthcare, and other institutions-which has a long-term impact on communities by laying the foundation for sustainable development.

In the Republic of Armenia, the sphere of charity is primarily regulated-among other legal acts-by the Law of the Republic of Armenia "On Charity" (hereinafter referred to as "the Law") and Decision No. 66-N of the RA Government dated January 16, 2003. It should be noted that the Law was adopted in 2002, and since its adoption, only minor amendments have been made.

An examination of the Law shows that it no longer aligns with the current trends in the development of social relations. Many of its provisions are outdated and therefore not applied in practice. Certain articles of the Law raise concerns in terms of legal clarity, and existing legislative regulations often impose unjustified obligations and requirements on charitable organizations. This, in turn, negatively affects the promotion and development of charitable activities.

1. The Narrow Scope of the Concepts of "Charity" and "Charitable Purposes"

Article 3, Part 1 of the Law defines charity as the voluntary, altruistic provision of material and spiritual assistance—within the limits permitted by law-by natural and legal persons to individuals, healthcare institutions, and nonprofit organizations for the implementation of the purposes outlined in Article 2 of the same Law. Article 2, in turn, defines the "charitable purposes." An analysis of Article 3, Part 1 and Article 2, reveals that the existing definitions of "charity" and "charitable purposes" are narrow, restrictive, and do not align with current trends in the field of philanthropy.

In academic literature, charity is often defined in broader terms-specifically, as private giving for public purposes[6].

In our view, alongside the purposes currently listed in the Law, it is crucial to include additional objectives such as: the prevention or alleviation of poverty, the promotion of the development of the healthcare system , the improvement and development of community life, the protection of human rights, the promotion of conflict resolution and reconciliation, the protection, restoration, and improvement of the natural environment, and the promotion of the sustainable use of natural resources.

2. Lack of clarity in the process of qualifying projects as charitable and the requirements for that process

A study of Article 13 of the Law of the Republic of Armenia "On Charity" reveals that charitable organizations are required to submit their charitable programs to the Office of the Deputy Prime Minister in order to qualify for certain benefits-particularly exemptions from taxes, other mandatory payments (and in some cases, for other purposes defined by law).

While it is widely acknowledged in the literature that tax benefits are not the primary motivation for engaging in charitable work, they do serve as an important additional incentive by creating a favorable environment for making such decisions[7].

1) Lack of Clear Legal Requirements for Charitable Programs

From the perspective of program development, a significant issue is that the Law does not sufficiently specify the requirements for charitable programs[8], a list of mandatory information, issues related to submitting and discussing applications for transactions related to charitable programs.

This lack of clarity has led to noticeable inconsistencies: charitable programs approved by the Deputy Prime Minister often differ significantly in both content and structure. Consequently, charitable organizations frequently face varying demands from authorities during program submission and approval processes, which complicates the preparation, circulation, and implementation of such programs.

We propose that legislation should clearly stipulate the mandatory components of a charitable program, including:

1) the objective and purpose of the program,
2) the location, sector, and duration of implementation,
3) the donors and beneficiaries,
4) planned activities, timelines, and required financial resources,
5) a brief description and expected cost of any goods, services, or works involved (including imported goods),
6) the administrative costs associated with program implementation,
7) a list of partner state or local government bodies, organizations, or individuals involved,
8) and the expected outcome/ impact of the program.

2) Absence of Exceptional Procedures for Emergency Situations

Another problem is that the legislation lacks specific regulations to exempt a transaction concluded for charitable purposes in exceptional cases, such as emergencies, war, or other extraordinary circumstances, without the existence of a charitable program. Under the current legal framework, it is not possible to claim tax exemptions for a charitable transaction unless it is included in a pre-approved charitable program. This limitation could deter charitable organizations from acting swiftly in emergencies, as they may be unable to secure the necessary financial resources without tax relief or may incur unforeseen additional costs.

In exceptional situations-such as emergencies, natural disasters, technological accidents, pandemics, or wartime-legislation should allow charitable organizations to submit a post-facto application to the authorized body requesting that a transaction be recognized as charitable. This should be permitted without a prior approved charitable program, provided the application includes: a justification explaining why the transaction should be deemed charitable, an explanation of why it was impossible to submit a full charitable program beforehand. In such cases, the authorized body should be required to issue a decision within three working days.

3) Issues Related to Transactions Accompanying Charitable Programs

Another common problem arises when charitable organizations engage in supporting transactions solely as funders, without acting as contractors or clients. For example, a charitable organization may wish to fund a construction contract without formally becoming the contractor.

In current practice, such transactions are often denied tax exemption on the grounds that mere financing is insufficient. Authorities demand that the charitable organization must also be the formal party to the contract (e.g., the client or purchaser)[9], which may expose the organization to unnecessary risks and administrative burdens it is unwilling or unable to assume.

This approach is based on a rigid interpretation that "in order for tax exemptions to apply to the delivery of goods, services, or works under a qualified charitable program, the implementing organization must be a formal party to the contract."

This restrictive practice should be reconsidered. A charitable organization should be allowed to act solely as a funder of a transaction and still be eligible for tax exemption-even if it is not the direct acquirer of goods, works, or services. Forcing organizations to assume legal roles beyond funding creates unnecessary obstacles to charitable work.

4) Lack of Legal Clarity on "Charitable Cargo" in Customs Law

In the case of importing goods, charitable organizations may be exempt from customs duties and related charges. However, in practice, this exemption depends on the classification of goods as "charitable cargo." Notably, this concept is not legally defined in any normative act, and there is no formalized procedure for recognizing goods as such.

There is also no clarity regarding what documentation must be attached to the application-e.g., invoices, bills of lading, shipping documents, etc.

The State Revenue Committee (SRC), in its interpretation, refers to:

1) Clause 6 of the Appendix to the 2014 Treaty on the Eurasian Economic Union, which provides duty exemptions for goods imported by third countries, international organizations, and governments as humanitarian or charitable assistance (excluding excisable goods),

2) and Article 64(2)(10) of the RA Tax Code, which exempts from VAT the import and delivery of goods, as well as the provision of works and services, within the framework of humanitarian and charitable programs, or where such goods and services are directly related to and significant for such programs[10].

Even though certain practices have developed to fill these legal gaps, the absence of clearly defined legal procedures continues to cause uncertainty and challenges for charitable organizations attempting to benefit from customs-related exemptions.

3. Reporting Requirements and the Complexity of Filing Procedures

A review of the Law on Charity and RA Government Decision No. 66-N of January 16, 2003, reveals another critical issue: the excessive reporting burden placed on charitable organizations. In practice, the requirement to submit various types of reports is often not consistently enforced-precisely because it proves to be an unreasonable burden on charitable organizations. Moreover, the purpose and legal legitimacy of these excessive reporting obligations remain unclear.

An analysis of the reporting templates approved by Decision No. 66-N shows that:

1) The required formats are complex and unclear, particularly in terms of what specific information must be included.

2) In some cases, the differences between report types are not well defined, making it difficult for organizations to comply accurately.

This situation highlights the urgent need to simplify reporting obligations, clarify the scope and content of reports, and create a more enabling environment for charitable activities.

We propose that legislation require only- one annual report, and one final summary report upon the completion of a charitable program.

The annual report should include information on: The programs implemented by the charitable organization, sources of funding, total financial resources used during the fiscal year and the portion allocated to statu-

www.ardaradatutyunjournal.com

tory goals, key results of the organization's activities during the reporting year, any inspections or reviews conducted by authorized bodies, including identified violations and measures taken to correct them.

The final program report should include implementation period of the program,total funds spent, main sources of funding, summary of key activities carried out, list of transactions subject to tax exemptions, key outcomes and impact of the program.

4. Lack of Incentives for Individual Philanthropy

While there is clear evidence that individual philanthropic behavior and its motivations are, to some extent, universal, research also shows that people across the world do not equally demonstrate this behavior[11].

The legislation of the Republic of Armenia does not provide prerequisites for encouraging philanthropy by individuals. Meanwhile, international experience demonstrates that many states establish specific tax benefits for individuals as well, in order to stimulate their willingness to engage in charitable giving.

According to USAID, Armenia's taxation laws tend to be more favorable for businesses than for CSOs. Unlike businesses, CSOs cannot benefit from simplified taxation schemes such as turnover tax or microenterprise options. Fiscal incentives to encourage donations to CSOs are limited. While commercial organizations may deduct up to 0.25 percent of their gross annual income for donations to eligible CSOs, individual donors are not entitled to tax deductions. CSOs, however, tend to undergo fewer tax inspections compared to businesses[12].

Studies of the charitable sector reveal a common pattern among countries that provide tax incentives for philanthropy. Developed countries tend to offer broader benefits both to individuals and organizations. In such cases, individuals are allowed to deduct all or part of their charitable contributions from their income tax before it is collected. This benefit is widespread in almost all European countries[13].

We believe that similar tax incentives should also be introduced in Armenia to encourage charitable giving by individuals.

5. Absence of Effective Mechanisms for Monitoring the Activities of Charitable Organizations

The OECD encourages greater transparency in the philanthropic sector by establishing annual reporting requirements that mandate the online publication of philanthropic activities and by strengthening the capacity of national statistical offices to monitor development finance from foundations, ODA providers, and other sources within their territories. In the absence of mandatory reporting requirements, networks of foundations or other organizations can help collect and disclose data on philanthropic giving[14].

The legislation in Armenia does not provide effective frameworks to ensure accountability and transparency in the activities of charitable organizations.

Thus, according to Part 3 of Article 11 of the Law, charitable organizations may be established as public associations, foundations, or in other forms provided by law. From this perspective, the lack of mechanisms to impose responsibility on foundations that engage in activities contradicting their statutory objectives is problematic.

For example, if a charitable organization carries out activities not aligned with its statutory goals, legal consequences may arise only in cases where such conduct occurs systematically. Specifically, under Part 3 of Article 34 of the Law on Foundations of the Republic of Armenia, this may result in the dissolution of the foundation if it has repeatedly engaged in activities contradicting its statutory objectives.

However, the legislation does not provide preventive mechanisms in cases where a foundation engages in activities inconsistent with its statutory purposes. In contrast, such preventive measures exist for non governmental organizations. For instance, Article 169.27 of the Code of Administrative Offenses establishes liability for non governmental organizations engaging in activities that contradict their statutory objectives.

Considering that foundations may also act as charitable organizations, it is necessary to adopt a similar approach in their regard as well, and to introduce the possibility of applying administrative liability measures when charitable organizations engage in activities contradicting their statutory purposes.

Conclusion

An analysis of the legal framework regulating the activities of charitable organizations in the Republic of Armenia reveals that targeted legal reforms are necessary to enhance the effectiveness of the charity sector.

1) First and foremost, it is essential to broaden the legal definition of "charity" and the scope of charitable purposes, aligning them with current social demands and socio-economic challenges. At the same time, clarifying the scope of required information in charitable programs would ensure greater consistency and transparency in the processes of program development, submission, and approval, while promoting a unified approach to evaluating charitable initiatives.

2) Within the framework of charitable programs, tax exemptions should be granted to any party implementing a charitable program, including those who, while being a party to a transaction, only assume the financial (funding) obligation, without being the direct acquirer or contractor.

3) It is necessary to establish legal mechanisms allowing transactions to be recognized as charitable in emergency or exceptional circumstances, even in the absence of a pre-approved charitable program.

4) To improve the accountability of charitable organizations, the law should require only two reports:

an annual report, and a final summary report upon program completion - both of which must include clearly defined content requirements to reduce ambiguity and administrative burden.

5) In order to enhance oversight of charitable foundations, it is necessary to introduce administrative liability for foundations that engage in activities inconsistent with their statutory purposes, thus ensuring compliance with their charitable mission.

6) Finally, the law should include incentives to promote individual giving, which would expand civic engagement and contribute to the development of a stronger culture of philanthropy in Armenia.

Conflict of Interests

The authors declare no ethical issues or conflicts of interest in this research.

Ethical Standards

The authors affirm this research did not involve human subjects.

[1] Anheier, H. K., & Toepler, S. Nonprofit organizations: Theory, management, policy (3rd ed.), New York: Routledge, 2023. p.13:

[2] Salamon, L. M., & Toepler, S. Government–Nonprofit Cooperation: Anomaly or Necessity? Voluntas, 26(6), 2015, p. 2171:

[3] Pekkanen, R., Smith, S. R., & Tsujinaka, Y. Nonprofits and advocacy: Engaging community and government in an era of retrenchment. Baltimore: Johns Hopkins University Press., 2014:

[4] Grønbjerg, K. A., & Smith, S. R. (2021). The Changing Dynamic of Government–Nonprofit Relationships: Advancing the Field(s). Cambridge University Press.
https://www.researchgate.net/publication/348714703_The_Changing_Dynamic_of_Government-Nonprofit_Relationships_Advancing_the_Fields (10.09.2025):

[5] Important charitable programs are being implemented, for example, by the Children of Armenia Charitable Fund, Teach For Armenia Fund, TUMO Center for Creative Technologies, and other similar organizations.

[6] Barman, E. The social bases of philanthropy. Annual Review of Sociology, 43, 2017, p.272:

[7] How to Promote Philanthropy in Armenia: Policy Analysis of Reforms, Conclusions and Recommendations," Yerevan, p. 12.

[8] According to Part 4 of Article 13 of the Law, a charitable program shall describe the program's objectives, planned activities, indicate their implementers and beneficiaries. The program shall also include a preliminary estimate of projected revenues and expenses, and define the stages and timelines for implementation.

[9] Letter of the Deputy Chairman of the State Revenue Committee of the Republic of Armenia, dated 28.02.2024, addressed to the Chairman of the Advisory Commission for the Coordination of Charitable Programs.

[10] Letter No. 03/3-2/68144-2024 of the Deputy Chairman of the State Revenue Committee of the Republic of Armenia, dated 28.10.2024.

[11] Wiepking, P., The global study of philanthropic behavior. Voluntas: International Journal of Voluntary and Nonprofit Organizations, 32(5), 2020, p.1:

[12] 2022 Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia. 26th ed. Washington, DC: United States Agency for International Development, 2023, p.9:

[13] "How to Promote Philanthropy in Armenia: Policy Analysis of Reforms, Conclusions and Recommendations," Yerevan, p. 13.

[14] Private Philanthropy for Development - Second Edition: Data for Action (The Development Dimension). OECD Publishing, 2021, p. 15:

Reference list

1) Anheier, H. K., & Toepler, S. Nonprofit Organizations: Theory, Management, Policy (3rd ed.). New York: Routledge, 2023, p. 13.
2) Barman, E. The Social Bases of Philanthropy. Annual Review of Sociology, 43, 2017, p. 272.
3) Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia. 26th ed. Washington, DC: United States Agency for International Development, 2023, p. 9.
4) Grønbjerg, K. A., & Smith, S. R. The Changing Dynamic of Government–Nonprofit Relationships: Advancing the Field(s).

Cambridge University Press, 2021. Available at:
https://www.researchgate.net/publication/348714703_The_Changing_Dynamic_of_Government-Nonprofit_Relationships_Advancing_the_Fields (Accessed 10.09.2025).
5) “How to Promote Philanthropy in Armenia: Policy Reform Analysis, Conclusions and Recommendations.” Yerevan, p. 12.
6) “How to Promote Philanthropy in Armenia: Policy Reform Analysis, Conclusions and Recommendations.” Yerevan, p. 13.
7) Letter of the Deputy Chairman of the State Revenue Committee of the Republic of Armenia to the Chairman of the Advisory Commission for the Coordination of Charitable Programs, dated 28.02.2024.
8) Letter of the Deputy Chairman of the State Revenue Committee of the Republic of Armenia, dated 28.10.2024, No. 03/3-2/68144-2024.
9) OECD. Private Philanthropy for Development–Second Edition: Data for Action (The Development Dimension). OECD Publishing, 2021, p. 15.
10) Pekkanen, R., Smith, S. R., & Tsujinaka, Y. Nonprofits and Advocacy: Engaging Community and Government in an Era of Retrenchment. Baltimore: Johns Hopkins University Press, 2014.
11) Salamon, L. M., & Toepler, S. Government–Nonprofit Cooperation: Anomaly or Necessity? Voluntas, 26(6), 2015, p. 2171.
12) Wiepking, P. The Global Study of Philanthropic Behavior. Voluntas: International Journal of Voluntary and Nonprofit Organizations, 32(5), 2020, p. 1.

Շուշանիկ Ղուկասյան
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Արփինե Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ամփոփագիր

Իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը բարեգործական կազմակերպությունների արդյունավետության ապահովման համատեքստում

Հոդվածում համապարփակ անդրադարձ է կատարվում բարեգործական կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Ուսումնասիրվում է բարեգործական ծրագրերի հաստատման և իրականացման գործընթացը՝ շեշտադրում կատարելով նշված ծրագրերին առաջադրվող ընթացակարգային պահանջների ու ինստիտուցիոնալ վերահսկողության մեխանիզմների վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պետության կողմից կիրառվող խթանիչ միջոցառումներին, որոնք նպատակ ունեն զարգացնելու և խրախուսելու բարեգործական գործունեությունը: Հետազոտության ընթացքում բացահայտվում են բարեգործության արդյունավետ իրագործմանը խոչընդոտող համակարգային խնդիրներ՝ օրենսդրական անհստակություններ, իրավակիրառ պրակտիկայի խնդիրներ: Հեղինակը ներկայացնում է մի շարք օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկներ, որոնք միտված են բարեգործական ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վստահության ամրապնդմանը:

Եզրափակիչ մասում հիմնավորվում է համահունչ և խթանող իրավական միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը, որը միաժամանակ կապահովի բարեգործական կազմակերպությունների կայուն զարգացումն ու նրանց սոցիալական առաքելության լիարժեք իրականացումը:

Նախ և առաջ անհրաժեշտ է ընդլայնել ,բարեգործությունե հասկացության իրավական սահմանումը՝ այն համապատասխանեցնելով արդի սոցիալական պահանջներին և սոցիալ-տնտեսական մարտահրավերներին: Հիմնավորում է, որ բարեգործական ծրագրերի պահանջների հստակեցումը կնպաստի դրանց մշակման և հաստատման ընթացակարգերի հետևողականությանն ու թափանցիկությանը: Բացի այդ, նպատակահարմար է բարեգործական ծրագիր իրականացնող կողմին ճանաչել որպես պայմանագրի կողմ, նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս տվյալ պայմանագրի շրջանակում հանդես է գալիս որպես վճարող: Հաշվետվողականության բարձրացման նպատակով առաջարկվում է սահմանել միայն տարեկան և ամփոփ հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջ, ինչը կպարզեցնի և կհստակեցնի հաշվետվողականության գործընթացները: Միաժամանակ անհրաժեշտ է իրավական հնարավորություն ամրագրել՝ արտակարգ կամ հրատապ

իրավիճակներում որոշ գործարքներ բարեգործական որակելու համար՝ անկախ նախապես հաստատված բարեգործական ծրագրի առկայությունից: Կարևոր է նաև նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ այն հիմնադրամների համար, որոնց գործունեությունը շեղվում է նրանց կանոնադրական նպատակներից: Վերջապես, նպատակահարմար է ձևավորել իրավական մեխանիզմներ, որոնք կնպաստեն անհատական բարեգործությունների խրախուսմանը, կխթանեն բարեգործության մշակույթի ձևավորումը:

Հիմնաբառեր *- բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, ոչ առևտրային կազմակերպություններ, բարեգործություն, հարկային համակարգ, բարեգործականություն, հարկային խթաններ, ֆինանսական դրդապատճառներ:*

Шушаник Гукасян
Преподаватель кафедры гражданского права Ереванского государственного университета
Кандидат юридических наук, доцент

Арпине Оганесян
Преподаватель кафедры гражданского права Ереванского государственного университета
Кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Необходимость совершенствования правовой базы в контексте обеспечения эффективности деятельности благотворительных организаций

В статье представлено всестороннее правовое исследование регулирования деятельности благотворительных организаций. Рассматривается процесс реализации и порядок утверждения благотворительных программ и проектов, с акцентом на процедурные требования и механизмы институционального контроля. Особое внимание уделено государственным мерам по стимулированию и поддержке благотворительной деятельности. В ходе исследования выявлены системные проблемы, препятствующие эффективной реализации филантропии, в том числе законодательные неопределенности и недостатки правоприменительной практики. Автор формулирует ряд целевых законодательных изменений направленных на укрепление прозрачности, подотчетности и общественного доверия в благотворительном секторе.

В заключение обосновывается необходимость формирования целостной и стимулирующей правовой среды, которая будет способствовать устойчивому развитию благотворительных организаций и обеспечит полноценное выполнение их социальной миссии. Прежде всего, необходимо расширить правовое определение понятия «благотворительность», приведя его в соответствие с современными социальными потребностями и социально-экономическими вызовами. Уточнение требований к благотворительным программам будет способствовать последовательности и прозрачности процедур их разработки и утверждения. Кроме того, целесообразно признать исполнителя благотворительной программы стороной по договору, даже в случаях, когда он выступает в роли плательщика в рамках данного контракта. В целях повышения подотчетности предлагается установить обязанность предоставления только годовых и консолидированных отчетов, что упростит процессы отчетности. Одновременно необходимо юридически закрепить возможность признания отдельных сделок благотворительными в чрезвычайных или неотложных ситуациях, даже при отсутствии утвержденной программы. Также следует предусмотреть меры административной ответственности для фондов, осуществляющих деятельность, не соответствующую их уставным целям. Наконец, важно сформировать правовые механизмы, стимулирующие индивидуальные благотворительные пожертвования, формирование культуры филантропии.

Ключевые слова*: благотворительная организация, фонд, некоммерческие организации, благотворительность, налоговая система, филантропия, налоговые льготы, стимулирование.*

Ընդունվել է տպագրության 25.09.25թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ.Ղ.. Թադևոսյանը